

ԼՐԱԳՐՈՂԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՅԱՆ ՄԵՅՍ

# ԲԱՑ ԴՈՒՌ

Ընթերցողների խմբագիրը՝  
ընթերցողներին



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ



United Nations  
Educational, Scientific and  
Cultural Organization

Երեւան 2006

---

Յան Մեյսը բրիտանական «Գարդիան» թերթի Օմբուդսմանն է՝ Ընթերցողների խմբագիրը: Նրա պարտականությունները սահմանող պաշտոնական հրահանգում ասված է. «Օմբուդսմանը պարտավոր է՝ թերթում զբաղեցնելով անկախ դիրք, ընդունել, օպերատիվ կերպով քննարկել, հետաքննել ընթերցողների դիտողությունները, առարկությունները եւ բողոքները ու ժամանակին պատասխանել դրանց, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ընդունել համապատասխան որոշում»: Օմբուդսմանի պարտականություններից մեկը, ըստ նույն հրահանգի, պարբերաբար, իսկ եթե հնարավոր է՝ ամեն շաբաթ, հասարակության ուշադրությունը գրաված կամ ընթերցողների առարկություններին ու դիտողություններին արժանացած հրապարակումներից բխող՝ թերթի գործունեության մեկ կամ մի քանի կողմերին անդրադարձող հոդվածներով հանդես գալն է:

Այս ժողովածուում հավաքված են «Գարդիանում» Յան Մեյսի հեղինակային «Քաց դուռ» խորագրով ամենշաբաթյա սյունակի տարբեր տարիների հոդվածները, որոնք ամենալայն ընդգրկում ունեն՝ բարոյականությունից ու լրագրողական էթիկայից մինչեւ թերթի ներքին խոհանոցի հարցերը: Ժողովածուի հավելվածում բերված են «Գարդիանում» հրապարակված ուղղումների օրինակներ: Հոդվածները տեղադրված են ժամանակագրական կարգով՝ հետադարձ հաջորդականությամբ:

Գիրքը նախատեսված է համալսարանների ժուռնալիստիկայի բաժինների ուսանողների, լրագրողների ու մամուլի ինքնակարգավորման խնդիրներով զբաղվող հետազոտողների համար:

Գիրքը հրատարակվում է «Լրատվամիջոցների օմբուդսման. տեսություն, պրակտիկա, հատուկ դասընթացի ներդրում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացնում է Երեւանի մամուլի ակումբը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մոսկովյան գրասենյակի աջակցությամբ:

**Թարգմանիչ՝ Մարինե Պետրոսյան**  
**խմբագիր՝ Մեսրոպ Հարությունյան**

**Համակարգչային ձեւավորումը եւ էջադրումը՝ Նարա Մենդեյանի**  
**Ծրագրի ղեկավար՝ Բորիս Նավասարդյան**



# Նախաբան

Ուրախ եմ, որ արժանի համարվեց այս սյունակները Հայաստանում հրատարակելը: Դրանք մի մասն են այն 400-ի, որ ես գրել եմ 1997թ. նոյեմբերից ի վեր՝ այն օրից, ինչ նշանակվեցի բրիտանական լրագրության պատմության մեջ առաջին «Ընթերցողների խմբագիր», կամ որ նույնն է թե՛ ռեզիդենտ անկախ օմբուդսման: Նման պաշտոն ստեղծվեց այն բանից հետո, երբ «Գարդիանի» խմբագիր Ալան Ռասբրիջերը հարց տվեց իրեն. ինչո՞ւ պետք է թերթը, որ համաձայն իր կոչման ուրիշներից անվերջ հաշվետու լինել է պահանջում, ինքը հաշվետու չլինի իր արածի համար: Սրան հետեւեց մյուս հարցը. ինչպե՞ս կարող է խմբագիրը անկանխակալ դատավոր լինել, երբ բողոքները իր իսկ դեմ են:

Անցած ինը տարիներին ես աշխատել եմ թերթում՝ ունենալով կատարյալ անկախություն: Ըստ «Գարդիանի» սեփականատիրոջ՝ Սքոթ Թրասթի կողմից երաշխավորված պայմանագրի, խմբագիրը չի կարող հեռացնել ինձ, ոչ էլ կարող է արգելել ինձ գրել ընթերցողի բարձրացրած որեւէ հարցի մասին կամ այլ կերպ միջամտել իմ աշխատանքին: Իմ պաշտոնի ու պայմանագրի վերաբերյալ մանրամասն տեղակատվությունը տեղ է գտնում «Գարդիանի» յուրաքանչյուր համարում՝ թե թերթում, թե Guardian Unlimited կայքում: Կայքում նշված է նաեւ իմ լիազորությունների մասին: Այս կերպ ապահովվում են երկու կարեւոր պայման՝ անկախությունն ու թափանցիկությունը:

Իմ աշխատանքը երկու հիմնական մասերից է բաղկացած: Ես դիտարկում եմ իրականացնում եւ հանդես գալիս ուղղումների ամենօրյա սյունակով: Այն տեղ է գտնում թերթի ամենից ազդեցիկ էջերից մեկում՝ առաջնորդող նյութերի կողքին: Բոլոր ուղղումները նույն այս սյունակում են տեղ գտնում՝ անկախ այն բանից, թե սխալ պարունակող նյութը որ էջում է եղել: Այս գրքում ներկայացված է հիշյալ ուղղումների մի ծաղկաքաղ, թեւ հասկանալի է, որ առավել լուրջ սխալների մի մասը դրանում տեղ չէր կարող գտնել՝ իրավական պատճառներով: Որպես հիմնական կանոն՝ սխալված լրագրողի անունը չի նշվում ուղղումների սյունակում: Այս կանոնից բա-

ցառություն է արվում սակավ այն դեպքերում, երբ լրագրողը առանձնապես նողկալի հանցանք է կատարել, ասենք՝ գրագողություն, կամ էլ ավելի փոքր հանցանքը պարբերաբար կրկնվել է:

Աշխատանքիս մյուս հիմնական մասը «Բաց դուռ» շաբաթական սյունակներն են: Դրանք երեք հիմնական բնույթի են. «Գարդիանի» հրապարակումների էթիկական կողմերին վերաբերող նյութեր, «Գարդիանի» տարբեր բաժինների աշխատանքը պարզաբանող նյութեր, եւ ավելի քիչ հանդիպող՝ «Գարդիանի» նյութերում անգլերենի ճիշտ ու սխալ օգտագործմանն ամնչվող նյութեր:

Սա իհարկե ինքնակարգավորման մի ձեւ է, ընթերցողին մատչելի առաջին հանգրվանը՝ «Մամուլի դեմ բողոքների հանձնաժողովին» (ՄԲՀ) կամ իրենց իրավաբանին դիմելուց առաջ: «Ընթերցողների խմբագրի» գոյությունը մեծապես նվազեցնում է թե՛ թերթին դատի տալ ցանկացողների, թե՛ ՄԲՀ-ին դիմողների թիվը: Հիշյալ համակարգը մտցնելուց ի վեր, մոտ 70 հազար ընթերցող է արդեն դիմել իմ գրասենյակ, եւ «Գարդիանն» իր ուղղումների սյունակում հրապարակել է ավելի քան 12 հազար ծանոթագրություն: Գնալով ավելի ու ավելի շատ ընթերցողներ են օգտվում ոչ թե պարզապես քննադատելու, այլ ակտիվ մասնակից դառնալու՝ իրենց տրված այս հնարավորությունից: Այնպես որ, աշխատանքիս այս արդեն անցած՝ 2006թ. նոյեմբերին լրացած տարում ես ստացա մոտ 18 հազար էլեկտրոնային ու սովորական նամակ եւ հեռախոսազանգ:

Նշեմ սակայն, որ հիշյալ համակարգը ինքնակարգավորման ձեւ լինելուց ավելին է նաեւ: Շաբաթական սյունակը թերթի եւ ընթերցողի միջեւ շարունակական զրույցի մի հնարավորություն է, իսկ օմբուդսմանն այդ զրույցում միջնորդի դեր է խաղում: Որքան էլ կրքերը շիկանան, այդ միջնորդ-դատավորը պետք է հանգիստ ու անկողմնակալ մնա (առնվազն փորձի դա անել): Կողմնակալ օմբուդսմանն արդեն օմբուդսման չի: Ուզում եմ հույս ունենալ, որ ընտրված նյութերում առկա է բանավեճի քաղաքակիրթ եղանակը, ինչը, դարձյալ հուսով եմ, ցույց կտա որ բանավեճի այդ կերպը գործնականում

հնարավոր է... եթե ոչ միշտ, զոհն դեպքերի մեծ մասում:

Սա մի համակարգ է, որ կարող է հարմարեցվել զանազան իրավիճակների՝ տարբեր լրատվամիջոցների շրջանակներում (խոսքը թե՛ մամուլի, թե՛ ռադիո-հեռուստատեսության մասին է): Ամենամեծ սխալը կլիներ այն կոսմետիկ նպատակով օգտագործելը: Իսկ ճիշտ կիրառվելու դեպքում համակարգը մեծացնում է վստահությունը լրատվամիջոցի եւ դրա ընթերցողի, ունկնդրի կամ հեռուստադիտողի միջեւ:

Այսօր, երբ համակարգի կիրառման տասներորդ տարին է արդեն սկսվել, ես դարձյալ այն կարծիքին եմ, որ այն հաղորդակցման ու բավարարման վայր է ընթերցողի համար՝ իրապես բաց մի դուռ:

*Յան Մեյս  
Լոնդոն,  
Նոյեմբեր, 2006թ.*

# ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ... «ԳԱՐՂԻԱՆԻ» ԳՈՐԴՈՆ ՐԱՄՋԻ ՍԻՆԴՐՈՄԻ ՄԱՍԻՆ

*Երկուշաբթի, 26 հունիսի, 2006*

Դուք պատրաստվում եք կամ չեք պատրաստվում (մենք ազատ երկրում ենք ապրում) կարողալ վերջին ինը տարիներին իմ գրած չորրորդ նյութը՝ «Գարդիանում» հայիոյական բառերի օգտագործման մասին: Ուշադրություն: Խնդիրը հետեւյալն է. արդյո՞ք կեղտոտ լեզվի օգտագործումը թերթում վերահսկողությունից դուրս է գալիս, թե՞ այն վերահսկելու փորձն իսկ (ինչը «Գարդիանն» անում է խմբագրության կանոնագրով ) անհարկի է: Հնարավոր է պնդել, եւ ոմանք հենց այդպես էլ անում են, որ «Գարդիանն» ուղղակի ավելի համաքայլ է մեր ժամանակների ամենօրյա խոսքում հայիոյանքի առատությանը, քան մյուս թերթերը:

Անկասկած է մի բան՝ աշխարհիս լուրջ լրագրերի մեջ հայիոյական բառերը «Գարդիանում» ամենից հաճախ են օգտագործվում, արդյունքում՝ որոշ ընթերցողներ այնքան են վրդովվում, որ մտածում են ընդհանրապես հրաժարվել թերթից՝ թողնելով, որ այն ինքն իր համար մենության մեջ հայիոյի: Երբ անցած անգամ ես «Գարդիանին» հիշյալ ասպարեզում համաշխարհային առաջատար էի անվանել, որոշ ընթերցողներ այն սխալ տպավորությունն էին ստացել, թե իմ խոսքերի մեջ հավանություն կա, անգամ հպարտություն: Բնավ այդպես չէ:

Ահա ընդամենը մի քանիսը՝ վերջին բողոքներից: «Կարո՞ղ էիք հայտնել ինձ, խնդրեմ, թե ի՞նչ քաղաքականություն է վարում խմբագրությունը հայիոյական բառերի եւ այլ կոպիտ լեզվի հարցում, երբ դրանք մեջբերում չեն (բերվում են օրինակներ): Հնարավոր է, ես ժամանակից շուտ ծերացել եմ, սակայն սա բավական վիրավորական լեզու է՝ ենթադրյալ ազգային լուրջ լրագրի համար: Ես երեւի սխալ լրագիր եմ ընտրել»:

Մեկ այլ ընթերցող գրում է. «Ես ուզում եմ իմ հիասթափությունն արտահայտել «Գարդիանից»՝ օգտագործված հայիո-

յական բառերի պատճառով ... Գուցե բարի գտնվեիք փոխհատուցելու իմ իզուր ծախսած դրամը...»:

Իրականում միայն ընթերցողները չէ, որ կարծում են, թե նման բառեր օգտագործելով, «Գարդիանը» փչացնում է լեզուն եւ իր իսկ ոճը: Ահա մի գրութիւն, որ ստացել են «Գարդիանի» հարգարժան մի վետերանից՝ այս սյունակը վարել սկսելուց ոչ շատ անց. «{Մեր հեռուստատեսային քննադատներից մեկն} այսօր բողոքում է, թե Գորդոն Րամզին f բառը շատ է գործածում, ինչի համար անվանում է վերջինիս «կեղտոտ բերան»: Եվ ո՞վ է խոսողը: Կարծում են վերջին տասնօրում «Գարդիանը» ռեկորդ է խփել ժամանակին արգելված բառերն օգտագործելու հարցում: (Գավաթի աշխարհի առաջնութիւնը գուցե կապ ունի սրա հետ): Ամուր նյարդերով մեկը եթէ գտնվեր, գուցե դրանք հաշվեր: Ըստ երեւոյթին, հին կանոնն այն մասին, թե երբ կարելի է եւ երբ չի կարելի դրանք կիրառել, այլեւս չի գործում: Ծիշտ չէ՞ր լինի ընթերցողին տեղյակ պահել այդ մասին»:

[guardian.co.uk/styleguide](http://guardian.co.uk/styleguide), ապա ընտրել Swearwords (հայհոյական բառեր): Այն սկսվում է մի զգուշացմամբ, որին ես երկու ձեռքով կողմ եմ. «Առաջին՝ հիշիր ընթերցողի մասին եւ հարգիր այն պահանջը, որ սովորաբար չպետք է օգտագործել նրա համար վիրավորական բառեր»: Այստեղ ես հեզնական ծիծաղ եմ լսում:

Եվ ապա՝ «Երկրորդը՝ նման բառերն օգտագործիր միայն այն դեպքում, երբ դա խիստ անհրաժեշտ է կոնկրետ նյութից ելնելով, կամ երբ դրանցով պետք է համապատասխան կերպար բնութագրել: Հիշիր՝ համարյա երբեք անհրաժեշտութիւն չկա հայհոյական բառն օգտագործել ուղղակի մեջբերումից դուրս»:

Բայց վերադառնանք «Գարդիանի» լրագրողի դիտարկմանը: Ոչինչ չի խոսում այն մասին, թե վերջին մի քանի օրերին հիշյալ բառերի օգտագործումը նոր չափերի է հասել կամ թե Աշխարհի գավաթն այս հարցում սրացում է մտցնում: Իրականութիւնն այն է, որ «Գարդիանն» արդեն իսկ վերջին 3 տարիներին կայուն բարձր ցուցանիշներ է արձանագրում այս հարցում՝ տարեկան 700-770 հոդված, որոնցում f բառը գործածված է ամնվազն 1 անգամ (կար հոդված, ուր այն գործածված



եր 13 անգամ): Սա նշանակում է այն հանդիպում է միջինը յուրաքանչյուր համարի 2,5 հոդվածում: Իսկ c բառը հանդիպում է միջինը շաբաթական մեկ հոդվածում, եւ այս վիճակը պահպանվում է արդեն մի քանի տարի:

Այս ամենից հետո բավական ծիծաղելի է , որ «Գարդիանը» Գորդոն Րամզիի հեռուստատեսային ելույթների առնչությամբ հայիոյական բառերի առատության դեմ է գրում: Ինչպես «Թայմսի գրական հավելվածի» NB սյունակում էին վերջերս գրել, դա իմաստազրկում է լեզվի մեջ չափավորության այն գովելի կոչերը, որ «Գարդիանի» կողմից արվում են «Մեկնաբանությունն ազատ է» բլոգի անանուն այցելուներին: Սրա մասին շատ վաղուց ու շատ լավ է ասված: Ինչպե՞ս էր: Ձեր միջի անմեղը նախ թող քար գցի.... եւ այլն:

Հիշիր ընթերցողին:

# *ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ... ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԵՐԲ Է ՊԵՏՔ ԳՐՈՂԻՆ ԹՈՒՅԼ ՏԱԼ ԿԵՂԾԱՆՈՒՆ ԿՐԵԼ*

*Երկուշաբթի, 5 հունիսի, 2006*

Վերջերս, խմբագրի մոտ առավոտյան խորհրդակցություններից մեկի ժամանակ, երբ բաժնի խմբագիրները ներկայացնում են հաջորդ օրվա համարում իրենց էջի նախնական պլանը, հերթական ցանկն ընթերցելիս մեկնաբանությունների խմբագիրը համարյա պատռեց «Գարդիանի» ֆելիետոնիստ Նորման Ջոնսոնի ինքնությունը ծածկող քողը: Նա արդեն արտասանել էր լրագրողի իրական անունը, բայց ազգանունն ասելուց առաջ ուշքի եկավ եւ ուղղեց իրեն:

Նորման Ջոնսոնի շաբաթական սյունակի վերջում չի նշվում այն մասին, թե հեղինակը կեղծանունով է: Իսկ ստորագրության կողքի նկարը հմուտ կեղծիք է՝ երեք թե չորս տարբեր մարդկանց լուսանկարների միակցում, ընդ որում՝ հատուկ թույլտվությամբ այս դեպքի համար բացառություն է արված «Գարդիանում» հնարովի նկարների առանց ծանուցման օգտագործումն արգելող կանոնից:

Հիշյալ սյունակն ինքը, իմ համոզմամբ, բացառություն է ընդհանուր կանոնից, որն ասում է թե՛ կեղծանուն կրելը կարելի է թույլատրել միայն այն դեպքում, երբ դրա համար կան հիմնավոր պատճառներ, ընդ որում՝ անգամ այդ դեպքում կեղծանուն օգտագործելու փաստը պետք է նշված լինի հոդվածի վերջում, եթե միայն դա ինքնին հասկանալի չէ: Սա մի կանոն է, որ եթե անգամ խմբագրի հրամանագրով չի հաստատված, գործնականում կիրառվում է:

Իսկ ահա Նորման Ջոնսոնի անունն այսօր էլ գաղտնիքի աղոտ շղարշով է պատած (անգամ «Գարդիանի» ներսում), թեւ յուրաքանչյուր ցանկացողը խնդրին մի քիչ ժամանակ հատկացնելու դեպքում կարող էր հեշտությամբ բացահայտել հեղինակի իրական անունը: Նորմանը, թույլ տամ ինձ ասել, հետեւում է անանուն սատիրիկների գարդիանական ավան-

դույթին, որին պատկանում է նաեւ վերջին տարիներս լավ հայտնի Բել Լիթլջոնը:

Ընթերցողին մնում է ժամանակի ընթացքում հասկանալ, որ ինքը մասնակիցն է թերթ-ընթերցող խաղի: Շատ քչերն են նրանցից տխրում, երբ գաղտնիքն ի վերջո բացվում է: Դրա համար հաճախ ժամանակ է պահանջվում: Ինչ վերաբերում է Նորման Ջոնսոնին, նա ստանում է երեկույթների մասնակցելու, գիրք գրելու, հեռուստատեսությամբ ելույթ ունենալու բազմաթիվ հրավերներ (բոլորովին վերջերս նրան հրավիրել էին «BBC Նախաճաշ»-ում խոսելու ամուսնալուծությունների շուրջ, քանի որ նա իր սյունակում արտահայտվել էր «սովահար անող հարպիաների» մասին), եւ բոլորն էլ քաղաքավարի մերժում է՝ իր ինքնության մասին ոչինչ չասող էլեկտրոնային մամակներով:

Մի կողմ թողնելով մնան նյութերը, ինձ համար պարզ է, որ կեղծանունն արդարացված է հեղինակի անվտանգության հետ կապված խնդիրները կամ էլ նրա գործունեությունը պաշտպանելու անհրաժեշտության դեպքում: Օրինակ՝ Բաղդադի ցանկացած քաղաքացի, որ կգրի «Գարդիանի» համար, իրավունք ունի պաշտպանված լինելու համար կեղծանուն գործածել: Հայտնի «Բաղդադի բլոգերը», որ թերթի համար սկսեց գրել քաղաքի անկմանը նախորդող շրջանում՝ Սալամ Փաքս անվան տակ, որեւէ այլ կերպ չէր կարող մեզ հաղորդակից դարձնել իր շուրջը կատարվածին: Նմանապես բաղդադցի ատաննաբույժ Ջեյադ Ա-ն՝ «Գարդիանի» «Մեկնաբանությունն ազատ է» բլոգի ներկա մասնակիցը, լրիվ չի բացահայտում իր ինքնությունը, քանի որ այդ դեպքում նրա հետ մեր կապն անհնարին կդառնար:

Երվին Ջեյմսը, որ սպանության համար մահապատիժ ստացած լինելով սկսեց «Գարդիանին» գրել իր բանտային կյանքի մասին՝ չէր կարող դա անել իրական անվան տակ, քանի որ դրանով առնվազն կբարդացներ բանտակիցների հետ իր հարաբերությունները:

Բոլոր հիշյալ դեպքերում՝ այն դեպքերում երբ կեղծանունը անհրաժեշտ ազատություն էր տալիս հեղինակին, անվան կեղծանունն լինելը կամ վայրկենապես ակնհայտ էր դառնում կամ էլ նշված էր սյունակի ներքեւում:

Անթույլատրելիւն այն է, երբ հեշտ ու հանգիստ կեղծանուն է շնորհվում, այսինքն, թե իր ինքնությունը թաքցնել է թույլատրվում մեկ այլ անհատի մասին ակնհայտ բացասական կամ նվաստացուցիչ նյութեր գրող լրագրողի: Հենց սա էր, որ վերջերս պատահեց «Գարդիանի» Մեդիա էջերում, եւ նման նյութի թիրախն ինքը հենց հողվածագիր ու բլոգեր էր, որը կեղծանվան տակ թաքնված՝ շատերի կարծիքով անընդունելի հայացքներ էր արտահայտել, եւ ահա հիմա նա իր հասցեին գրվածի ոչ թե փաստական բովանդակությունն էր հարցականի տակ դնում, այլ գրելու շարժառիթը: Արդյո՞ք կատարվածի մեջ չարությունը մաս չունի՝ հիմնավորված կերպով հարցնում էր նա, արդյո՞ք ինքն ու անանուն հեղինակն անցյալում իրար դեմ սուր չէին ճոճել:

Ի վերջո ես պարզեցի, որ, բարեբախտաբար, կատարվածի մեջ չարություն կամ նախապատմություն չկար: Հեղինակն ու նրա հերոսը երբեք չէին հանդիպել: Ու ես հանոզվեցի նաեւ, որ ոչ մի համոզիչ պատճառ չկար հեղինակին կեղծանվան թույլտվություն տալու համար: Հիմնական կանոնը պետք է հետեւյալը լինի. ասելու բան ունես, առաջ եկ եւ ասա:

# ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ... ԱՆՍԻԱԼԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՆԱՅԱՆՋԻ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Երկուշաբթի, 8 մայիսի, 2006*

Ինչպես երեւում է՝ սեփական սխալն ընդունելուն եւ ուղղուն կատարելուն հակադրվելու ավանդույթը բրիտանական թերթերում աստիճանաբար տեղի է տալիս: Բայց թե ո՞ր չափով՝ վիճելի հարց է: «Գարդիանի» խմբագիրը House Magazine-ում («Համայնքների պալատի հանդեսում») տպագրվելիք իր հոդվածում բերում է այն պարզ պատճառը, որն իրեն դրդեց 1997թ. թերթում «Ընթերցողների խմբագրի» հաստիք ստեղծել. «Մենք չենք ուզում մեզ կատարյալ ձեւացնել ու սխալ գործելու դեպքում պատրաստ ենք ուղղել այն»:

Եվ ապա անմիջապես էլ ավելացնում է՝ «Սա բավական համեստ դիրքորոշում է, այնինչ խմբագիրների մեծ մասը զայրույթով հակառակվում է սխալն ընդունելուն եւ ամեն ինչ անում դրանից խուսափելու համար»: Այնուհետեւ խմբագիրը հիշատակում է այն խիստ փոքրաքանակ բրիտանական թերթերը, որ հետեւել են իր օրինակին. «Օբզերվերը»՝ «Գարդիանի» քույր թերթը, իրապես միակն է, որ համազոր համակարգ է ներդրել, թեւեւ եւս երկու լրագիր «Ընթերցողների խմբագիր» ունի:

«Գարդիանում» հիշյալ ավանդույթի նահանջի նշաններից մեկն էլ այն է, որ գնալով ավելի շատ լրագրողներ հնարավոր բողոքները կանխելու համար նշում են իրենց իսկ սխալները՝ այնպիսիք, որպիսիք համարի տպագրման հենց նույն գիշերը մենք բոլորս ենք հայտնաբերում եւ դրանից քրտնում:

Գիտե՞ք, թե ու՞ր տարի առաջ «Գարդիանում» ամենօրյա ուղղումների եւ պարզաբանումների սյունակ բացելուց ի վեր քանի գրառում է այնտեղ տպագրվել, հարց է տալիս խմբագիրը: Պատասխանը տպավորիչ է՝ 12 000 գրառում: Համարյա ոչինչ չի խոսում այն մասին, թե ուղղում կատարելու նման պատրաստակամությունը կարող է թերթի նկատմամբ անվստահություն առաջացնել ընթերցողի մեջ: Ճիշտ հակառակը: Նույն հանդեսում տպագրված իր հոդվածում խմբագիրը

հղում է անում «Գարդիանի» 3 000 ընթերցողների շրջանում վերջերս անցկացված հարցման արդյունքներին, որոնց համաձայն մասնակիցների 86%-ը թերթի լրատվությունը հիմնականում վստահելի էր համարել: Իսկ 77%-ն ասել էր, թե ընթերցողական խմբագրի գոյությունն իրենց զգացնել է տալիս, որ թերթն անտարբեր չէ ընթերցողի հայացքների ու մեկնաբանությունների (նաեւ բողոքների) նկատմամբ:

Վերադառնանք սակայն նշաններին, որ խոսում են փոփոխությունների առավել լայն ընդգրկման մասին: Բնագավառի կարգավորողը՝ «Մամուլի դեմ բողոքների հանձնաժողովը» (ՄԲՀ) վերլուծություն է անցկացրել, պարզելու համար, թե թերթերն ինչպես են կատարում բողոքների հիման վրա հանձնաժողովի եզրակացությանը հանձնարարված ուղղումներն ու պարզաբանումները: Ամբողջ վերլուծությունը տեղ կգտնի ՄԲՀ-ի տարեկան զեկույցում, որ հանձնաժողովի նախագահ Քրիստոֆեր Մեյերը հրապարակելու է մայիսի 25-ին: Վերլուծությունը ցույց է տալիս, որ հիշյալ ուղղումների 22%-ը տպագրվում է դրանց համար նախատեսված հատուկ սյունակում, ինչի գոյությունը, իմ տպավորությամբ, ՄԲՀ-ն հիմնականում ողջունում է: Մնացած ուղղումների 76%-ը թերթում տպվում է կամ նույն էջում ինչ սկզբնական նյութը կամ էլ ավելի առաջ: Նկատենք, որ սա հակասում է այն պատկերացմանը, թե թերթերը միշտ ուղղումները իրենց վերջին՝ աչքից հեռու էջերում են տպագրում:

Ուղղումի որտեղ տեղադրելը միշտ վիճահարույց հարց է: Անցած տարի իր ձեռնաչափը փոխելուց ի վեր, «Գարդիանը» ուղղումները տեղադրում է առաջնորդող էջի վերելում, խմբագրականի կողքին: Բոլոր ուղղումները հատուկ այս սյունակում են դրվում:

Սրա հետ կապված հետաքրքիր մամակագրություն տեղի ունեցավ վերջերս: Ընթերցողներից մեկը գրեց. «Այսօրվա {փետրվարի 7-ի} «Գարդիանում» դուք 32-րդ էջում {կարող էր ասել՝ առաջնորդող էջում} ուղղում եք տպագրել փետրվարի 2-ի առաջին էջում տեղ գտած մի նյութի հետ կապված, ուր հաղորդվում էր Իրանի միջուկային գործունեության մասին այդ երկրի ղեկավարության ասածը: Խիստ տարօրինակ է, որ դուք հարկ չեք համարել ուղղումը նույնպես տպագրել թերթի առաջին էջում, ինչպես որ վարվել էիք սխալ տեղեկատվություն պարունակող սկզբնական նյութի դեպքում...»:

Խոսքն իրապես նշանակալի սխալի մասին է, որն ի դեպ Իրանի ոչ թե «միջուկային գործունեությանն», այլ «միջուկային զենքի հետ կապված գործունեությանն» էր առնչվում, եւ ինձ համոզմամբ ուղղումից եւ դրա տեղադրումից սա հասկացվում էր: Սակայն ընթերցողն այլ կարծիքի էր եւ դիմեց ՄԲՀ-ին: Հանձնաժողովը մերժեց նրա բողոքը, ասելով որ ուղղումը տպագրվել է «աչքի ընկնող ձեւով» եւ «բավարար փոխհատուցում» է հանդիսանում: Պատասխանում շեշտվում էր, որ ուղղումը տեղադրված էր սյունակի վերելում եւ հստակորեն տեսանելի էր թերթի ընթերցողներին, մեծապես նաեւ այն պատճառով, որ դա ուղղումների տեղադրման հաստատագրված վայրն էր: Նշենք, որ ուղղումներն արվում են նաեւ կայքէջում. խխունջի պատկերով նրանք փակցվում են այն նյութերի վերելում, որոնց վերաբերում են:

Վերելում հիշատակված սխալը «քրտինք բերողների» թվին էր պատկանում: Լրագրողներից մեկը, որի անունը հիշատակվում էր հաղորդման մեջ, եկավ ինձ մոտ եւ խնդրեց, որ ուղղում գրեմ: Իրանյան կառավարությունը, ասաց նա ինձ, հաղորդել է իրեն, թե բավարարված է նյութի թե՛ բովանդակությամբ, թե՛ աչքի ընկնող տեղադրմամբ: Դե լավ, հերիք է այս մասին:

*ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ...  
ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՅԱՂՈՐԴԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԻ  
ԹԱՐՄԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Երկուշաբթի, 24 ապրիլի, 2006*

«Սամուլի դեմ բողոքների հանձնաժողովը» վերջերս հաղորդեց, որ «չի պաշտպանել» (մերժումն անվանելու ինչ գեղեցիկ ձեւ) բողոքները՝ կապված երեք թերթում Լոնդոնի հյուրանոցներից մեկի չորրորդ հարկից իրեն ցած նետող կնոջ լուսանկարների հրապարակման հետ: ՄԲՅ-ն եզրակացրել էր, որ «Սանը», «Իվնինգ Ստանդարտն» ու «Թայմսը», տպագրելով լուսանկարները, չեն խախտել խմբագիրների կանոնագրի 5-րդ կետը, որ վերաբերում է սգի կամ ցնցումի պահին մարդկանց կյանքի մեջ ներխուժելուն:

Սա բնավ զարմանալի չէ: Ինչպես արդեն մի անգամ գրել եմ (դա այս տարվա հունվարի 16-ին էր, նույն այս սյունակում), կանոնագիրն այնպես է ձեւակերպված, որ ինքասպանությունների դեպքի համար լիովին անբավարար է: Այն չի նշում ինքնասպանության մասին: Արդեն ասել եմ՝ այն ամենի լույսի ներքո, ինչ այսօր գիտենք կամ պետք է, որ իմանանք ինքնասպանությունների, մասնավորապես նմանակող կամ կապկող ինքնասպանությունների մասին, հիշյալ երեք թերթերը սխալ են գործել լուսանկարները հրապարակելով, իսկ չհրապարակողները, մասնավորապես «Գարդիանը», ճիշտ են վարվել:

Շատ կազմակերպություններ, մասնավորապես «Սամարացիները», վաղուց է, ինչ ջանում են հասկացնել լրատվամիջոցներին, որ ինքնասպանության մասին հաղորդելիս պետք է հատուկ զգուշություն ցուցաբերել: Այս առումով ավելի լավ չես ասի, քան ձեւակերպված է «Սամարացիների» կանոնագրում. «Հնարավորինս խուսափիր ինքնասպանությունների հետ կապված հուզական լուսանկարներից կամ նկարներից»:



«ՄեդիաՎայզը»՝ լրագրության բարոյական չափանիշներով մտահոգ բարեգործական մի կազմակերպություն, հետևողական, եւ իմ կարծիքով արդարացի կերպով, փորձում է հասնել նրան, որ ինքնասպանությունների լուսաբանման ներկայումս ընդունված ձեւը փոխվի՝ խնդրի շուրջ կատարված ուսումնասիրությունների հիման վրա: Այն մեջբերումներ է կատարում, մասնավորապէս, Օքսֆորդի համալսարանի «Ինքնասպանությունների ուսումնասիրության կենտրոնի» աշխատակիցներ Քաթրին Վիլյամսի եւ Քիթ Յոթոնի «Ինքնասպան վարքագիծը եւ լրատվամիջոցները. գիտական աշխատություններից քաղված [www.mediawise.org.uk](http://www.mediawise.org.uk) կայքում: Բացի դա, «ՄեդիաՎայզը» նաեւ թրեյնինգ ծրագրեր է առաջարկում լրատվամիջոցներին, որոնք պատրաստ են ընդունել, թե խնդիրը հատուկ մոտեցում է պահանջում:

«ՄեդիաՎայզը» քննադատեց վերոհիշյալ լուսանկարների հրապարակումը որպէս «անպատասխանատու եւ դատապարտելի»: Եվս մեկ անգամ ուշադրություն հրավիրելով հիշատակված ուսումնասիրության վրա, այն նկատում էր. «Այս ողբերգական մահվան լուսաբանման հարուցած բողոքները ... պետք է հասկացնեն խմբագիրներին, թե որքան կարելոր է կանոնագրում հատուկ կետ ունենալն ու պատասխանատու լուսաբանման հարցում հստակ ներքին քաղաքականություն վարելը»:

«Գարդիանն» իր խմբագրության կանոնագրում նման հատուկ կետ ունի: Ահա այն ամբողջությամբ. «Ինքնասպանություն. լրագրողը պետք է հատուկ ուշադիր լինի ինքնասպանություն կամ ինքնասպանությանն առնչվող դեպք հաղորդելիս, միշտ մտքում ունենալով ուրիշների կողմից դրա նմանակման վտանգը: Ասվածը վերաբերում է ինքնասպանությունը ներկայացնելուն, այդ թվում լուսանկարների օգնությամբ, եւ դրա կատարման միջոցը նկարագրելուն: Ամեն ինչ պետք է հաղորդել ընդհանուր ձեւով, ոչ թե կոնկրետ մանրամասներով: Հարկ եղած դեպքում կարելի է տալ նաեւ օգնության հեռախոս (օրինակ՝ «Սամարացիներինը». 0845 790 9090): Հարազատների զգացումները միշտ պետք է նրբանկատ կերպով հաշվի առնել»:

Ես չեմ նկատել, որ «Գարդիանի» նյութերը տուժած լինեն հիշյալ կանոններին հետեւելու արդյունքում: «Մեդիավայզի» առաջարկած հատուկ կետը դրանցից առանձնապես չի տարբերվում:

Այս հարցում վերջապես որոշ շարժ է նկատվում: ՄԲՀ-ի Կանոնագրային կոմիտեն, որի անդամ է նաև «Գարդիանի» խմբագիրը, հանձնաժողովի կողմից հանձնարարություն է ստացել քննելու այն հարցը, թե արդյոք կանոնագիրը «իր ներկայիս ձևով բավարա՞ր է ինքնասպանություն կամ որեւէ այլ հանկարծակի մահ լուսաբանելու առումով: Ներառյալ այն հանգամանքը, թե պե՞տք է արդյոք կանոնագրում «կապկող» ինքնասպանություններին վերաբերող հատուկ լրացում մտցնել...»

Կանոնագրային կոմիտեն հավաքվելու է այս շաբաթ: Շաբաթներ առաջ «Փրես գազեթը», որ լրագրողների համար նախատեսված շաբաթական հանդես է, հարցի առիթով իր խմբագրական մեկնաբանությունն արեց: Նրա եզրակացությունն այն էր, թե թերթերը սխալ էին վարվել՝ հրապարակելով օդում ճախրող կնոջ լուսանկարը (հետո «Սանի» օրինակով ցույց էր տրվում, թե ինչպես է թերթը դա արել): «Սրանով պարզ է դառնում,- գրում էր հանդեսը,- որ խմբագիրների կանոնագրային կոմիտեն պետք է մանրամասն քննության առնի այն հարցը, թե կանոնագիրն ինչպես է կանոնակարգում ինքնասպանությունների լուսաբանումը: Երբ բացը ի հայտ է գալիս, այն պետք է ուղղվի: Ինքնակարգավորումը հենց այս կերպ պետք է գործի»:

Ավելացնելու շատ քիչ բան կա, այնպես չէ՞:

*Կանոնագրային կոմիտեն իր խոսքն ասաց: Խմբագիրների կանոնագրում ավելացվեց հետեւյալը. «Ինքնասպանության դեպք հաղորդելիս պետք է ուշադիր լինել՝ խուսափելու համար օգտագործված մեթոդի մասին ավելորդ մանրամասներ հիշատակելուց»:*

# ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ... ԲԼՈԳՈՍՖԵՐԱՅՈՒՄ ՏԵՂ ԳՐԱՎԵԼՈՒ «ԳԱՐՂԻԱՆԻ» ՆԵՐԿԱՅԱՅՐԱԾ ՀԱՅՏԻ ՄԱՍԻՆ

*Երկուշաբթի, 3 ապրիլի, 2006*

Երեք շաբաթ առաջ «Գարդիանը» վճռականորեն մուտք գործեց բլոգոսֆերա՝ իր Guardian Unlimited կայքում ստեղծելով մեկնաբանությունների նոր հանրային բլոգ, որ կոչվում է «Մեկնաբանությունն ազատ է»: Անցած տարիներին շատ բան էր արվել այս իրադարձությունը հնարավոր դարձնելու համար. նախ նորությունների բլոգ էր ստեղծվել, հետո մի ամբողջ շարք մասնագիտական բլոգեր, որոնք մեկնաբանության ու վիճաբանության լայն հնարավորություններ էին տալիս եւ մեծաթիվ մասնակիցների էին գրավել:

Նոր ֆորումը (թեեւ մրցասպարեզ բառը գուցե ավելի ճիշտ պատկերացում տար այստեղ ընթացող բուռն բախումների մասին) կտրուկ մեծացրեց առկա փոխգործակցությունը «Գարդիանի» հեղինակների եւ ընթերցողների միջեւ՝ շատ ավելի մեծ թվով մարդկանց հնարավորություն տալով արտահայտել իրենց կարծիքը «Գարդիանի» անթելադիր օգնությամբ: Թերթը գովազդում էր այն իբրեւ «մեկնաբանության առաջին անընդմեջ բլոգը՝ բրիտանական բոլոր թերթերի մեջ»:

Երբ դու կկարդաս այս տեքստը, «Մեկնաբանությունն ազատ է» բլոգի այցելությունների թիվն արդեն մոտեցած կլինի երկու միլիոնի սահմաններին՝ երկու անգամ շատ, քան «Գարդիանի» բոլոր մյուս բլոգերի այցելությունները միասին վերցրած՝ նույն ժամանակում: Օրական լինում է միջինը մոտ 80 000 այցելություն, իսկ օրական առավելագույն ցուցանիշը առայսօր եղել է 200 000:

Հանդիսատեսը, ինչպես տեսնում ենք, քչություն չի անում: Ասենք, «հանդիսատես» բառը իրավիճակը ճիշտ չի արտահայտում՝ չափազանց պասիվ է: Ավելի կոնկրետ եթե խոսելու

լինենք՝ մինչեւ անցած շաբաթվա կեսերը կայքում եղած մոտ 700 նյութերի՝ անհատական հոդվածների առիթով ստացվել էր ավելի քան 4 000 մեկնաբանություն: Բերված թվի մեջ չեն մտնում մոտ 70 այն գրառումները, որ թերթի տպագիր տարբերակի մեկնաբանությունների էջերից են գալիս: Տարբերությունը տպավորիչ է՝ 70 մեկնաբանական գրառում տպագիր տարբերակում, 700-ը՝ հանրային բլոգում:

«Գարդիանի» խմբագիրը մի որոշ ժամանակ ուղղորդում էր իր լրագրողների քայլերը դեպի այս նոր աշխարհ: «Մեկնաբանությունն ազատ է» բլոգի բացվելուց մի քանի օր առաջ նա դրա հետ կապված գրույց ունեցավ հիմնական աշխատակազմի հետ, եւ խմբագրի արտահայտած հիմնական միտքն այն էր, թե «Գարդիանը» միշտ այնտեղ պետք է լինի, ուր բանավեճ է ընթանում: Նա ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ ԱՄՆ-ում որոշ բլոգեր այսօր արդեն ավելի շատ այցելուներ ունեն քան կայացած լրագրերն ու նորությունների հանդեսները, եւ արդեն նվաճում են նաեւ աճող հեղինակություն:

Նրա բերած օրինակներից էր HuffingtonPost.com-ը, որի համահիմնադիրն ու խմբագիրը՝ Արիանա Յաֆինգթոնը, «Մեկնաբանությունն ազատ է» բլոգի բացման օրը «Գարդիանում» գրեց. «Բլոգերները մասնակցում են մեկը մյուսի աշխատանքին, բանավիճում են իրար հետ եւ վերջնական պատմությունը կազմվում է դիալեկտիկ կերպով: Ահա թե ինչու բլոգոսֆերան Ամերիկայում այսօր նորությունների ամենից կենսական նոր աղբյուրն է»: Բլոգի բացումից մի քանի օր առաջ, որպեսզի թերթի դիրքորոշման հարցում ոչ մեկը որեւէ կասկած չունենա, «Գարդիանը» առաջնորդող տպագրեց՝ «Գովք բլոգոսֆերայի»: Այնտեղ ասվում էր. «Գլոբալ գյուղն արդեն վարում է իր սեփական անընդհատ խոսակցությունը»: Ապա հիշատակվում էր, որ բլոգերների՝ էլեկտրոնային հանդեսների համար գրող մարդկանց թիվը, technorati.com-ի տվյալներով, տվյալ շաբաթ արդեն հասել էր 30 միլիոնի:

Արիանա Յաֆինգթոնը նշել էր բլոգային հեղափոխության «կրքոտ ու արագ արձագանքող» բնույթի մասին: Ջորջինա Յենրիին՝ «Մեկնաբանությունն ազատ է» բլոգի խմբագիրը, մարտի 18-ի համարում պատմում է, թե 16 տարի «Գարդիանի» տպագիր տարբերակի խմբագիր լինելուց հետո ինչպիսի

ցնցում է ապրել ինքը՝ բլոգի անմիջականությունն ու արագությունը տեսնելով: Նրա կարծիքով, այնտեղ լրագրողներն ավելի անպաշտպան են, քան այլուր. «Ղա մի ագրեսիվ, ինքնասածի միջավայր է: Ուղարկվող մեկաբանությունները բոլորի աչքի առաջ են, եւ դա լրագրողի համար խիստ տհաճ փորձառություն կարող է լինել»:

Guardian Unlimited-ի խմբագրի տեղակալներից մեկը կարծում է, որ բլոգի մասնակիցներին տրված՝ անանուն լինելու իրավունքը նրանց դարձնում է ագրեսիվ: Գրողի եւ ընթերցողի միջեւ մտքերի փոխանակումը հակում ունի դառնալու ավելի սուր: Ինչպես տարածված անեկղոտն է ասում՝ էլեկտրոնային բոլոր բանավեճերի վերջում հայտնվում է Հիտլերը: Լրագրողներից մեկը, նման պատմության մեջ ընկնելուց հետո, դրան մի քիչ այլ ձեւակերպում էր տվել. «Բլոգ մտնելը հաճախ վերջանում է ճանապարհատրանսպորտային վեճով»: Լրագրողին քննադատելու համար «Մեկնաբանությունն ազատ է» բլոգում «հեղինակային համաձայնություն» չի պահանջվում, ինչպես որոշ այլ թերթերի կայքերում: Այլ կերպ ասած՝ լրագրողն այստեղ վետոյի իրավունք չունի:

Իհարկե, գոյություն ունի զրպարտության մասին օրենք, կան նաեւ բանավեճի կանոններ, որոնք ենթադրվում է թե բոլորը պետք է կարդան, սակայն «Գարդիանի» կարծիքով բլոգոսֆերայի ոգուն ավելի համապատասխան է համոզելը քան կարգադրելը: Որեւէ բլոգի կամ հոդվածի մասին մեկնաբանություն ուղարկելուց առաջ պետք է կատարել գրանցվելու հոգեբանական քայլը. սա իհարկե պարիսպ չէ, բայց շեն է, որ պետք է անցնել: Հույսն այն է, որ սա բավարար կլինի բարձր մակարդակի բանավեճ խրախուսելու համար, ուր բացառվում են չարաշահումները:

Ամեն դեպքում, բլոգոսֆերայի լեզուն ավելի կարճ է, սուր եւ ուղղակի՝ ավելի մտերմիկ, ինչպես Արիանա Յաֆինգթոնն է ասում: Հարց է մնում՝ արդյո՞ք այս լեզուն կտեղափոխվի նաեւ տպագիր տարբերակ, թե՞ հակառակը՝ վերջինիս լեզուն, հակադրվելով, առավել ֆորմալ կդառնա: Մեկ ուրիշ հարց էլ կարելի է տալ՝ արդյո՞ք տպագիր թերթը ընդհանրապես ապագա ունի: Մեկնաբանությունն ազատ է:

# ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ... ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ Է ՊԱՏՄՈՒՄ ԿԱՏԱԿ ԱՆՈՂ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՄԱՍԻՆ

*Երկուշաբթի, 27 մարտի, 2006*

Անցած երկուշաբթի «Գարդիանը» Դորսեթի պարապուտներում բռնկած հրդեհի մասին մի թղթակցություն տպագրեց՝ դրամատիկ լուսանկարով: Թղթակցությունն այսպես էր սկսվում. «Քենֆորդի պարապուտը հաճախ է բոցերի մեջ հայտնվում, բայց շատ սակավ դեպքերում՝ սրա նման»: Իսկ իրականում Քենֆորդի պարապուտը երբեք նման բոցերի մեջ չէր հայտնվել. լուսանկարում պատկերված էր ոչ թե Դորսեթը, այլ Կանադային սահմանակից ամերիկյան Մոնտանա նահանգի անտառներում վեց տարի առաջ բռնկած հրդեհը:

Ինչպես էր լուսանկարը հայտնվել «Գարդիանում»: Կիրակի ուշ ժամին ցանկանալով պատկերագրողել նյութը, երբ Դորսեթից դեռ ոչ մի լուսանկար չկար, նկարների բաժինը Sky News-ի պատվով լուրերից ճարել էր մի քանի լուսանկար: Երբ խնդրո առարկա լուսանկարը երեւացել էր էկրանին, ներկայացնողը եթերում ասել էր՝ «Մենք մեր հեռուստադիտողներից ստացել ենք մի քանի բավականին դրամատիկ նկար»:

«Գարդիանի» հաղորդման մեջ լուսանկարի առնչությամբ ասվում էր. «Վայրի կենդանիները, որ տեղական բնակիչներից մեկի կողմից արված լուսանկարում ուրվագծվում են վառ բոցերի ֆոնին, թողնվել են իրենք իրենց գլխի ճարը տեսնելու»: Հիշատակվող վայրի կենդանիները իրականում որմզդեղներ են, որոնք, ինչպես ընթերցողներից մեկը հայտնեց ինձ նույն երեկոյան, Դորսեթում խիստ հազվադեպ են պատահում:

Ես կարող եմ հասկանալ թե՛ Sky News-ին, թե՛ «Գարդիանի» նկարների բաժինն, որոնք ցանկացել էին դեպքի ամենաթեժ պահին նկար ցուցադրել: Ինչպես «Գարդիանի» հաղորդումից

պարզ էր դառնում, Դորսեթի հրդեհը շատ լայն ծավալ ուներ, բնակիչներին ստիպված էին էվակուացնել, եւ միայն 170 հրշեջների օգնությամբ, որ եկել էին նաեւ հարեւան Յամփշիրից, հնարավոր եղավ այն հսկողության տակ վերցնել:

Sky-ը կիրակի երեկոյան երկու անգամ ցույց տվեց խնդրո առարկա լուսանկարը: Sky-ի ներկայացուցիչը ավելի ուշ ինձ ասաց. «Դա հեռուստադիտողների կողմից ուղարկված մի քանի լուսանկարներից մեկն էր: Հենց որ պարզեցինք կեղծ է, այն եթերից հանեցինք: Մենք ամեն ինչ անում ենք հեռուստադիտողի կողմից իմակով<sup>1</sup>ուղարկված նկարների իսկությունը ճշտելու համար, սակայն արտակարգ լուրերի դեպքում, հակառակ մեր նախազգուշական բոլոր միջոցներին, նման դեպքեր կարող են պատահել»:

Կեղծիքն այնքան արագ չբացահայտվեց, որ «Գարդիանը» դրան զոհ չգնար: Ահա ընթերցողական մի նամակ, ուղարկված էսեքսի համալսարանից. «Ես զարմացա տեսնելով, որ դուք {այդ հաղորդման կողքին} տպագրել եք մի լուսանկար, ուր երկու կենդանի, որ կարծես թե որմզդեղներ են, գետի ապահով հեռվից նայում են այրվող անտառին: Ջարմանալին ոչ միայն վայրի որմզդեղների եւ մշտականաչ անտառների հայտնությունն էր Դորսեթում, այլեւ այն ապշեցնող նմանությունը, որ կա «Գարդիանի» լուսանկարի եւ դոկտորական թեզիս համար իմ օգտագործած գրքերից մեկ կազմի վրա եղած լուսանկարի միջեւ»:

Իսկապես որ՝ նույն լուսանկարը կա Քաս Սանսթայնի «Վախի օրենքներ» գրքի կազմին, իսկ գիրքը հեշտությամբ կարելի է գտնել «Ամազոնի» օգնությամբ: Այնտեղ նկարն անգամ անուն ունի՝ «Որմզդեղների լոգանքը», եւ ասված է, որ այն արված է 2000թ. օգոստոսի 6-ին, Մոնտանայի Բիթերրուք գետի արեւելյան ճյուղավորման մոտ: Լուսանկարիչը՝ Ալյասկայի հրշեջ ծառայության հրդեհների վերլուծաբան Ջոն Մաք-Քոլզանն է:

[www.snopes.com](http://www.snopes.com)-ը՝ Բարբարա եւ Դեյվիդ Միքելսոնների վարած կայքը, նվիրված է «ուրբան լեգենդներին» եւ շատ

<sup>1</sup> **Իմակ** - էլեկտրոնային նամակ: Անգլերեն e-mail-ը այս նորաբանությամբ են անվանում սփյուռքում: Բառը որոշեցինք օգտագործել՝ նկատի ունենալով կարծությունն ու բարեհնչունությունը - ծան. քարգ.

կարելուր գործ է անում՝ փաստն ու կեղծիքը զատելով: Այնտեղ ահագին տեղեկություններ կային: Պարզվում է՝ Սաքթուզանը լուսանկարն արել է թվային խցիկով եւ տեղափոխել այն իր աշխատանքային համակարգիչի վրա, ուր ընկերներից մեկը տեսել է այն եւ ուղարկել իր մեկ այլ ընկերոջը... Այսպես այն տարածվել է Համացանցով, անտառային հրդեհի նման, ճանապարհին կորցնելով սկզբնական բացատրությունները եւ ձեռք բերելով նորերը: Snopes.com-ը տեղեկացնում է, որ նկարի մասին ասվել է, թե այն պատկերում է Յելոսթունի Ազգային այգու 1988 թվի հրդեհը, նաեւ՝ 2003թ. Բրիտանական Կոլումբիայի անտառներում բռնկած հրդեհը, ի թիվս այլոց... Բոլորն էլ, ինչպես տեսնում ենք, Թոմաս Հարդիի հայրենի Դորսեթից շատ հեռու են:

Այս ամենը ես պատմում եմ իբրեւ մեր ժամանակների նախազգուշական հեքիաթ: Նկարների խմբագիրը գտնում է, որ այս պատմությունը «քաղաքացիական» լրագրության հետ կապված խնդիրն է մատնանշում: Նա հիշեցնում է, որ նկարների գործակալությունները, ինչպիսիք AP-ն եւ «Ռոյթերն» են (նաեւ «Գարդիանը»), դրակոնյան կանոններ ունեն՝ նկարները վերածելու կամ դրանք ուրիշ անվան տակ տարածելու վերաբերյալ. եղել են լուսանկարիչներ, որ աշխատանքից հեռացվել են նման արարքի համար: Սակայն քաղաքացիների համար նման կանոններ չկան, եւ դրանց բացակայության պայմաններում մենք չենք կարող վստահ լինել, թե մեր տեսածն ու դրա մասին ասվածը իրար համապատասխանում են:

Sky News-ը, «Գարդիանը», եւ ընդհանրապես լրատվամիջոցները, աշխատում են աչալուրջ լինել՝ խուսափելու համար կեղծիքներից: Բայց լիովին վստահ երբեք չեն կարող:



# ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ... ՈՐՈՇ ԵՏՅ-ՆԵՐԻ՝ ԵՐԲԵՄՆ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

*Երկուշաբթի, 13 մարտի, 2006*

Ընթերցողներից մեկը հարցնում է՝ ի՞նչ է ՀՏՅ-ն: ՀՏՅ-ն «Հաճախ տրվող հարցն» է, թեև այս մի կոնկրետ դեպքում այն ինձ մի անգամ է տրվել: Ահա մի քանի ԵՏՅ-ներ՝ «Երբեմն տրվող հարցեր»՝ «Գարդիանի» ընթերցողների խմբագրի դերի մասին:

**Դուք ձեզ ներկայացանում եք իբրև «Գարդիանի» «անկախ ներքին օմբուդսման»: Ինչպե՞ս կարող եք դուք անկախ լինել, եթե «Գարդիանը» ձեզ վճարում է:**

[www.guardian.co.uk](http://www.guardian.co.uk) եւ սեղմեք ընթերցողների խմբագրի կոճակը՝ հիմնական էջի ներքեւում, աջից: Առաջին կետն ասում է. «Հավաքել եւ քննել ընթերցողի մեկնաբանությունները, մտահոգություններն ու բողոքները, պատասխանել դրանց ու եթե անհրաժեշտ է՝ եզրակացություն գրել դրանց մասին, եւ այս ամենն անել արագ ու ժամանակին, անկախ դիրքորոշմամբ»:

Մի քիչ ներքեւ ասվում է, որ շաբաթական սյունակի բովանդակությունը «պետք է որոշվի անկախ կերպով, առանց նախապես համաձայնեցնելու խմբագրի կամ աշխատակազմի այլ անդամի հետ»:

**Եթե «Ընթերցողների խմբագրի» գաղափարն այդքան լավն է, ինչո՞ւ մյուս թերթերը չեն հետեւում դրան:**

Ես չգիտեմ ինչու: Բայց պահանջվող ծախսն ակնհայտորեն նշանակություն ունի: «Գարդիանն» այս հարցում առաջինն էր. 1997թ. ես նշանակվեցի հիշյալ պաշտոնում: Հաջորդը «Օբզերվերն» էր, ուր «Ընթերցողների խմբագրի» դերը համարյա նույնն է՝ նա պատասխանատու է ուղղումների եւ դրանց ամենամսյա սյունակի համար: Կիրակնօրյա «Ինդիփենդենթում» նույնպես համանման մի անկյուն կա: «Դեյլի Միրորը» եւս «Ընթերցողների խմբագիր» ունի, որը պատասխանատու է ուղղումների ամենօրյա սյունակի համար:

Փաստը, որ այսքան քիչ լրագրեր են դիմել համանման քայլերի, կարծում են խոսում է բողոքները հանրությանն ի ցույց դնելուց եղած վախի մասին, որ մի քիչ նման է 11 մետրանոցից դարպասապահի վախին: Եվս մեկ դեմք դաշտ հանելը, որն ավելի շուտ դատավորին է հիշեցնում, քան դարպասապահին, շատերի կողմից դեռ համարվում է չափազանց հեռուն գնացող քայլ:

**Արդյո՞ք միայն բրիտանական մամուլն է, որ դանդաղորեն է հետետում հիշյալ գաղափարին:**

Ոչ, գաղափարը ողջ աշխարհում էր դանդաղ ընդունվում, բայց այժմ հետաքրքրությունը դրա նկատմամբ նկատելի աճել է: Նախորդ հարցը վերջին անգամ Ադրբեյջանից են ստացել: Վերջերս հարցեր են ստացել նաեւ Քենիայից ու Բելառուսից: Այս տարի են Յնդկաստան այցելեցի, ուր «Յինդուն» օմբուդսման է նշանակել. այս անսվա սկզբին նա սկսեց իր աշխատանքը, առաջին օրը ստանալով շուրջ 50 բողոք ու հարց (ավելի շատ՝ վերջինը): Իսկ անցած շաբաթ Արգենտինայում էի, ուր ելույթ ունեցա հեռուստավարների, հրատարակիչների ու լրագրողների համար: «Լուրերի օմբուդսմանների կազմակերպությունը» (ԼՕԿ) ողջ աշխարհում 100 անդամ ունի, իսկ ամենից շատ՝ Միացյալ Նահանգներում, ուր այն հիմնվել է 25 տարի առաջ: Վերջերս Լոնդոն այցելած մեկն ինձ ասաց, որ իր երկրում լրատվամիջոցների հանդեպ հանրային վստահությունը վերականգնելու խիստ կարիք է զգացվում:

**Ինչպե՞ս է հնարավոր շատ ուղղումներ տպագրելով հասնել դրան:**

Միայն դա բավարար չէ, իհարկե, թեև որոշ փաստեր խոսում են այն մասին, որ պարբերական ուղղումներ հրապարակող լրատվամիջոցների հանդեպ վստահությունն աճել է: Եվ միայն շատ քչերն են ասում, թե հակառակը՝ ուղղումներ տպագրելու պատճառով իրենց վստահությունը թերթի հանդեպ թուլացել է: Ինչպես են բազմիցս նշել են իմ ելույթներում դա ինքնակարգավորման միակ ձեւն է, որ այսչափ վստահություն է բերում: Սակայն դա լինում է միայն այն դեպքում, երբ պարզ երեւում է, որ համակարգը ներդրվել է լրջորեն եւ կոսմետիկ բնույթ չունի:

**Ինչո՞ւ դուք ուղղումները չեք դնում առաջին էջում, եթե սխալը այդ էջում է արվել:**

Հենց սկզբից, ութ տարի առաջ, «Գարդիանն» ընդունեց իմ կարծիքով ճիշտ որոշում՝ հրաժարվել ուղղումները «հանցանքի վայրում» դնելուց եւ դրանք բոլորը ամեն օր հրապարակել նույն լավ տեսանելի տեղում: Մի քանի ամիս առաջ թերթի ֆորմատը փոխելուց ի վեր դրանք դրվում են թերթի խմբագրականի սյունակի կողքին՝ մի էջում, որ հրավամբ կարելի է անվանել դրոշակակիր էջ: Ուղղումները թաքցնելու մասին ոչ մի խոսք չի կարող լինել: «Գարդիանին» դույզն ինչ ծանոթ մեկը հստակ գիտի որտեղ դրանք փնտրել եւ գիտի նաեւ, որ այս թերթում լուրջ հարցերին լուրջ են վերաբերվում:

# ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ... ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԳՈՐԾ ԱՆՈՂՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԸՍՏ ԱՐԺԱՆՎՈՒՅՆ ՀԻՇԱՏԱԿՎԵՆ

*Երկուշաբթի, 6 մարտի, 2006*

Մի ընթերցող Բարսեղունայից գրում է. «Ինձ հետաքրքրում է՝ ինչո՞ւ ձեր թերթում «Ռոյթերի» լուրերը կրկնող շատ հոդվածների տակ դրված է ձեր այս կամ այն խմբագրի կամ թղթակցի ստորագրությունը: Ես գիտեմ որ {գործակալությունները} ձեզ օրինակներ են ուղարկում, բայց ուզում են հասկանալ, թե հոդվածը ո՞ւմը պետք է համարվի: Պարզ է, որ հեղինակ պետք է համարվի այն գրողը: Մի՞թե {գործակալության} ուղարկած նյութի մեջ մի երկու տող խմբագրելով՝ կարող ես անունդ նյութի տակ գրել:

Ապա նա օրինակ էր բերում՝ «Ռոյթերի» հաղորդումներից մեկը եւ դրա քիչ թե շատ նույնական տարբերակը, որ ստորագրված էր «Գարդիանի» լրագրողի կողմից եւ դրված էր Guardian Unlimited կայքում:

«Որպես ձեր թերթի տպագիր եւ էլեկտրոնային տարբերակների մշտական ընթերցող, ես պարզապես կուզենայի իմանալ, թե ո՞րն է թերթի մոտեցումն այս հարցում», - հարցնում էր ընթերցողը, ապա լիովին պարզ դարձնում իր սեփական մոտեցումը. «Ես ուզում եմ հստակ իմանալ, թե ով է գրում այն նյութը, որ ես կարդում եմ»:

Սա փաստարկված, հիմնավոր պահանջ է, որ ընթերցողը կարող է ունենալ թերթից, այնպես չէ՞: Սա հաստատապես այսպես է լուրերի դեպքում եւ ընդհանրապես պետք է պահանջվի նաեւ թեմատիկ հոդվածների դեպքում (բացառություն կարող էին լինել կեղծանունով գրված սատիրական նյութերը՝ մի բան որ «Գարդիանը» հաճախ է արել եւ այժմ էլ անում է):

Ընթերցողի բերած օրինակը «Գարդիանի» վերջին տարիներս որդեգրած ուղղությանը հակառակ գնացող անցանկալի

քայլ է, եւ ուզում ենք հուսալ, բացառություն: Լրագրողին այդ մասին ասվել է: Նրա անունը արագորեն հանվեց, հենց որ իր խմբագիրը տեղեկացավ կատարվածի մասին, եւ «Ռոյթերի» հեղինակությունը ըստ հարկին նշվեց:

Իրավիճակը փոխվել է եւ իմ կարծիքով՝ դեպի լավը, այն ժամանակներից ի վեր, ինչ ես յոթը տարի առաջ գրեցի, թե գործ անողները պետք է ըստ արժանվույն հիշատակվեն: Իմ խոսքն այն ժամանակ մասնավորապես վերաբերում էր Press Association-ին (PA)՝ Միացյալ Թագավորության եւ Իռլանդիայի Հանրապետության թերթերին տեղական լուրեր մատակարարող խոշորագույն գործակալությանը: Ես այն անվանել էի «մեր անտեսանելի բարեկամը»: Այն ժամանակ դեռ շատ տարածված էր PA-ի լուրը «Գարդիանի» թղթակցի ստորագրությամբ տպելը, երբ վերջինիս միջամտությունը նյութին աննշան էր լինում կամ էլ էական չէր լինում, ընդ որում՝ գործակալության մասին ընդհանրապես չէր նշվում: Արդարացումն այն էր, թե լրագիրը գործակալությունից գնել է լուրերը, ուրեմն կարող է անել դրանց հետ ինչ ցանկանա:

«Մենք ինքներս մեզ հարց էինք տալիս,- գրել եմ ես այն ժամանակ,-արդյո՞ք դա ճիշտ է»: Թերթում ավելի ու ավելի էինք համոզվում, որ պատասխանը բացասական է: «Գարդիանի» քաղաքականությունն է՝ հիշատակել ոչ միայն գործակալություններին, այլեւ այն թերթերի անունները, որ իրեն եզակի նյութ են մատուցել՝ ասենք, այնպիսի նյութ, որ տեղ չի գտել լուրերի ընդհանուր թողարկման, հաղորդման կամ հեռարձակման մեջ: (Անբնականն այն է, որ Միացյալ Թագավորությունում տեղական գործակալությունների անունը դեռ մինչեւ հիմա էլ չի հիշատակվում նրանց ուղարկած լուրերի տակ, մի հանգամանք, որ նրանց բողոքների հիմնական առարկան է՝ թերթի իրավունքների մեներջերի հավաստմամբ: Վերջինս պարզաբանում էր նաեւ, որ ավելի մեծ միջազգային գործակալությունների դեպքում դրանց անվան հիշատակումը պայմանագրային պահանջ է):

Ընդհանուր առմամբ, ինչպես ինձ ասաց «Գարդիանի» խմբագրի տեղակալը, «մեր քաղաքականությունն է՝ ազնիվ լինել նյութի աղբյուրները եւ ստացման եղանակը նշելու հարցում»: Գործակալությունից ստացված հաղորդման տակ գարդիա-

նական ստորագրություն պետք է դրվի միայն այն դեպքում, եթե թերթի լրագրողը նյութի վրա էական լրացուցիչ աշխատանք է կատարել: Եթե այս կամ այն գործակալությունը կամ թերթը մասնակցել են «Գարդիանի» այս կամ այն նյութի ստեղծմանը, դրա մասին պետք է նշվի:

Պատահում է, որ նյութի տակ նշվում է «Գարդիանի» լրագրողի անունը «եւ գործակալություններ»: Սա ոչ բոլորին է դուր գալիս: Ավագ լրագրողներից մեկը, որ աղբյուրները նշելու հարցում առանձնապես բժախնդիր է, կարծում է, որ նման դեպքերում ճշգրտությունը տուժում է, ուստի դրանից հնարավորինս պետք է խուսափել:

Իմ փորձը հուշում է, որ բոլոր թերթերի քաղաքականությունն էլ հակում ունի խախտվելու: Եվ եթե թերթերն այսօր ստիպված են ավելի շիտակ լինել իրենց աղբյուրները նշելու հարցում, պատճառն այն է, որ ընթերցողը, ինչպես այս նյութի սկզբում նշվեց, պահանջում է այդ. շեշտենք, որ հենց ընթերցողն էր, ոչ թե գործակալությունը, որ այս կոնկրետ անփութության վրա հրավիրեց թերթի ուշադրությունը: Աղբյուրի ջանասեր հիշատակումը ընկալվում է իբրեւ ազնվության, ոչ թե թերության վկայություն:

*ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ...  
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՈՒ ՉԵՆ  
ԽՐԱԽՈՒՄՎՈՒՄ ԱՐԽԻՎԸ  
ՓՈՓՈԽԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՆԵՐԸ*

*Երկուշաբթի, 27 փետրվարի, 2006*

Լուրերի էլեկտրոնային արխիվի առավելություններից մեկը դրանից օգտվելու արագությունն ու հեշտությունն է: Այսօր սակավ է հարկ լինում գնալ հանրային գրադարան, ուր կարված թերթերի ծանրությունից դարակները ճկվում են: Եթե ոչ թե պատմության խորքերն ենք ուզում գնալ, այլ մոտ անցյալով ենք հետաքրքրվում, ստեղնաշարից հեռանալու հարկ չկա. անցյալը, թող որ անգամ մռայլ ու շփոթեցնող, բառացիորեն մեր ձեռքի տակ է:

Նման մատչելիությունն անշուշտ, եւ իրավացիորեն, արագ ուղղումների ցանկությունն է հարուցում: Այն նաեւ ավելի ու ավելի շատ այնպիսի խնդրանքներ է հարուցում, որոնց նպատակը հաճախ, իմ կարծիքով, ընդամենը կոսմետիկ փոփոխություններն են:

Նման խնդրանքները չեն խրախուսվում: Վերջերս լրագրողներից մեկն ինձ հարցրեց ինչ անել. մեկը, ում խոսքն այդ լրագրողը «Գարդիանի» նյութերից մեկում ճշգրիտ կերպով մեջբերել էր, խնդրում էր փոխել իր օգտագործած մի արտահայտություն. հավանաբար իր ղեկավարը քննադատական դատողություն էր արել դրա հետ կապված:

Իմ պատասխանն այդ լրագրողին հստակ էր՝ ոչ մի բան չանել: Եթե խնդրվող փոփոխությունը ուղղումների սյունակում դրվելուն չի բավարարում (իսկ այնտեղ դրվելու պայմանները կարող եք մեծահոգի կամ խիստ համարել՝ նայած ձեր դիրքորոշմանը), ուրեմն արխիվին պետք չի ձեռք տալ: Այն փաստը, որ էլեկտրոնային դարաշրջանի սկսվելով արխիվը զարմանալիորեն մատչելի ու կենդանի է դարձել, ոմանց հնարավոր

րութիւնն է տալիս չափազանց հեշտորեն կարկատել այն՝ ի շահ իրենց:

Սկզբունքորեն արխիվը աննկատ կերպով չպետք է նորոգվի: Թղթակիցներն ու խմբագիրները այսօր շարունակ խնդրանքներ են ստանում իրենց նյութերի էլեկտրոնային տարբերակները փոփոխելու խնդրանքով: Սակայն նրանք այդպիսի փոփոխությունների լիազորություն չունեն: Խնդրանքները պետք է փոխանցվեն կամ «Գարդիանի» իրավական բաժին, կամ եթե իրավական խնդիր չի ենթադրվում՝ իմ բաժինը: Արխիվն այս կերպ վերահսկվում է, որպեսզի որեւէ նյութ կարդացող ընթերցողը վստահ լինի, թե իր կարդացած էլեկտրոնային տարբերակը լիովին համապատասխանում է տպագրիին՝ եթե նյութը նախ այնտեղ է հրապարակվել, կամ էլ դրա տակ հստակորեն նշված լինի, որ այն ուղղված է:

«Գարդիանի» արխիվներն իրար հանգուցվող շղթաների են նման: Ընթերցողի առջեւ լիովին բաց արխիվը Guardian Unlimited-ի՝ կայքէջի արխիվն է, որ 1998-ից այս կողմ լրիվ է, եւ ունի նաեւ ավելի վաղ շրջանի որոշ նյութեր: Այն նաեւ ընդգրկում է հիշյալ ժամանակաընթացքում «Գարդիանի» նյութերում արված մոտ 12 000 ուղղում: Դրանք ավելացված են նյութերի վերելում եւ հստակորեն տեսանելի են:

«Գարդիանի» լրագրողների կողմից ամենից հաճախ օգտագործվող եւ ընթերցողներին ոչ մատչելի արխիվը թերթի էլեկտրոնային տեքստերի արխիվն է, որն այսօր միացած է «Ֆայնանշել թայմսից» բացի մյուս բոլոր ազգային օրաթերթերի ու կիրակնօրյա թերթերի արխիվներին: «Գարդիանի» տեքստային արխիվը դրանց մեջ ամենահինն է, նյութեր է պարունակում դեռ 1984-ից, իսկ լրիվ է արդեն 1980-ականների վերջից («Օբզերվերի» արխիվը սկսվում է 1993-ից):

Այս արխիվում ուղղումներն արվում են շաբաթը մեկ անգամ, եւ նախապատվությունը տրվում է «Գարդիանի» իրավաբանների կողմից արվող՝ փոփոխությունների ու ջնջումների խնդրանքներին: Ուղղումները, մասնավորապես այնպիսիք, որ ունեն իրավական բնույթ, կանոնավոր կերպով փոխանակվում են այս արխիվի բոլոր մասնակիցների միջեւ: Կարծում են այս նամակագրության ծավալը կգարնացներ այն թերթերի ընթերցողներին, որ ուղղումների սյունակ չունեն:



Սրանից բացի, «Գարդիանը» բաժանորդն է LexisNexis հսկա առեւտրային արխիվի, ինչի համար տարեկան վեցամիշմի գումար է վճարում: «ԼեքսիսՆեքսիսը» հնարավորություն է տալիս օգտվել մոտ 15 000 անգլալեզու թերթերի, ամսագրերի ու լրատվական գործակալությունների նյութերից, եւ պարունակում է նաեւ ավելին: Այն օգտագործվում է «Գարդիանի» հետազոտական բաժնի կողմից եւ ուղղակիորեն մատչելի է նաեւ սահմանափակ քանակով լրագրողների:

Մի քանի օր առաջ առիթ ունեցա տեսնելու «ԼեքսիսՆեքսիսի» Copy-Guard համակարգի տպավորիչ ներկայացումը. այն բացահայտում է գրագողությունն ու հեղինակային իրավունքի խախտումները: Համակարգը տեքստերում փնտրում ու գտնում է համանման հատվածները եւ ընդգծում դրանք: Ես այն օգտագործեցի մի դեպք պարզաբանելու համար, որի հետ գործ էի ունեցել անցյալում. ամսագրերից մեկը պնդել էր, թե իրենից գրագողություն են արել, ու ես պաշտպանել էի այդ պնդումը: Համակարգը ցույց տվեց, որ ամսագրից գրագողություն եղել էր, բայց մյուս կողմից՝ բողոքած հեղինակն ինքը մեկ այլ ամսագրից էլ ավելի ծավալուն գրագողություն էր կատարել: Գրագողեր, զգուշացե՛ք:

Մի վերջին խոսք արխիվների մասին: Սենք աշխատում ենք, որ դրանք անխաթար մնան ու լինեն վստահելի: Աշխատեք զերծ մնալ դրանք անհարկի խաթարելուց: Փորձեք անհարկի խնդրանքներ չանել:

# ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ... ԻՍՐԱՅԵԼԻ ԵՎ ՀԱՐԱՎԱՖՐԻԿՅԱՆ ԱՊԱՐՏԵԻԴԻ ՇՈՒՐՋ ԲԱՆԱՎԵՃԻ ՄԱՍԻՆ

*Երկուշաբթի, 13 փետրվարի, 2006*

Անցած շաբաթ «Գարդիանն» իր երկրորդ բաժնուն՝ G2, երկու հոդված տպագրեց՝ յուրաքանչյուրը մի քանի հազար բառ՝ գրված թերթի երուսաղեմյան թղթակից Քրիս ՄաքԳրիլի կողմից, ուր քննվում էին հնարավոր զուգահեռները Իսրայելի եւ ապարտեիդի ժամանակների Հարավային Աֆրիկայի միջեւ: Հոդվածները հրապարակվեցին երկուշաբթի եւ երեքշաբթի: Երրորդ օրը G2-ը չորս էջ նվիրեց հիմնականում հակառակ դիրքորոշմանը. ենթադրվող նմանությունը կտրուկ մերժվում էր, բայց միաժամանակ ներառվել էին մի քանի կարծիք, որ պաշտպանում էին թղթակցի համոզումը, թե թեման արժանի է քննության: Համարյա բոլոր կարծիք հայտնողները՝ թե՛ կողմ, թե՛ դեմ, Իսրայելից էին եւ արտահայտվում էին «Գարդիանի» հրավերով:

Այդ ընթացքում ընթերցողներից ստացվող արձագանքներին հետեւում էր հոդվածագիրների աշխատակազմի մի ավագ անդամ: Նրա կարծիքով, որին ես համամիտ եմ, որքան վիճելի է հարցը, այնքան մեծ տեղ ենք պարտավոր հատկացնել արձագանքներին ու բանավեճին:

Հիշյալ հարցը G2-ի երկուշաբթի օրվա հիմնական նյութն էր. ողջ առաջին էջը նվիրված էր Արեւելյան Երուսաղեմից մի պաղեստինցու եւ մի սեւ հարավաֆրիկացու իրար կողք դրված նկարներին. յուրաքանչյուրի ձեռքին իր փաստաթղթերն էին: Առաջին հոդվածին հատկացված 12 էջերից առաջին երկուսով ձգվող գլխագիրն ասում էր. «... անգամ Իսրայելի ներսում շարունակվում են այն մեղադրանքները, թե պաղեստինցու կյանքի բոլոր կողմերը ներառող հսկողությունը անհանգստացնող նմանություն ունի ապարտեիդի հետ»:

Այն, որ երկու հասարակությունների փորձառությունն ունեցող մարդկանց կողմից զուգահեռների անցկացումը համառորեն շարունակվում է, իմ տպավորությամբ, հստակորեն ցույց էր տրված ՄաքԳրիլի հողվածում: Այնտեղ ակնհայտ երեւում էր նաեւ, թե ինչ դժվարությամբ է թղթակիցը մեկնաբանություններ, եւ առանձին դեպքերում՝ նաեւ խնդրին առնչվող տեղեկատվություն ստացել Իսրայելի ղեկավարությունից: ՄաքԳրիլն ինքը նշանակալի փորձառություն ունի երկու հասարակություններից էլ: Նա տասներկու տարի թղթակից է եղել Հարավաֆրիկյան Հանրապետությունում, եւ այդ տասներկու տարիներից վերջին չորսը այդ երկրում նաեւ ապարտեիդի վերջին տարիներն էին: Իսկ 2002թ. ՄաքԳրիլը դարձել է «Գարդիանի» թղթակիցը Երուսաղեմում:

Ես հարցրի ՄաքԳրիլին, թե ինչպես առաջացավ նրա հետաքրքրությունն այս խնդրով, որի վրա աշխատել էր, ընդմիջումներով, երեւի 18 ամիս: «Ես Իսրայել չեմ եկել նման նախատրամադրվածությամբ,- ասաց նա,- թեւս անգամ այն ժամանակ տեղյակ էի, որ ապարտեիդի հետ նմանության մասին կարծիքը տարածված է: Բայց ես ինքս այդ զուգահեռը չէի տեսնում: Թվում էր, թե Իսրայելը բոլորվին տարբեր մի վայր է»:

ՄաքԳրիլը պատմում է, որ իր ամենօրյա փորձառությունն է իրեն աստիճանաբար մղել մտածելու խնդրի մասին, մասնավորապես՝ Արեւմտյան Երուսաղեմից Արեւելյան Երուսաղեմ անցնելով նա տեսել է այն «հսկա անհավասարությունը», որ կա երկուսի միջեւ: Նա հասկացել է նաեւ, թե ինչպես է օրենքը, օրինակ բնակությանը վերաբերող հարցերում, օգտագործվում բնակչության մի մասի շահերը խրախուսելու եւ մյուսինը ոտնահարելու համար:

«Աստիճանաբար ես հասկացա, որ զուգահեռների մասին առնվազն պետք է մտածել ու դրանք քննել: Միաժամանակ, ես հասկացա նաեւ, որ հարցը հստակորեն տաբու էր»:

Իր երկու հողվածներում ՄաքԳրիլը եզրակացություններ չի անում: Ոչ էլ «Գարդիանի» առաջնորդող էջն էր որեւէ մեկնաբանություն պարունակում: ՄաքԳրիլի նպատակը խնդրի շուրջ բանավեճ բացելն էր, եւ հողվածները տպագրելով՝ թերթը ցույց էր տվել, որ ողջունում է այդ գաղափարը:

Թերթի հրավերով ստացված պատասխանների մեջ առաջինը Բենջամին Փոգրունդի տեքստն էր, ուր ՄաքԳրիլի հողվածները հիմնականում դատապարտվում էին: Փոգրունդը նախկինում Յոհանեսբուրգի «Րանդ դեյլի մեյլ»-ի փոխխմբագիրն է եղել, իսկ վերջին ութ տարիներին ապրում է Իսրայելում, ուր նրա գործունեությունը նվիրված է քաղաքական եւ էթնիկ հակամարտության կողմերի միջեւ երկխոսության խրախուսմանը: Նրա կարծիքով՝ հողվածում արվող կամ ենթադրվող համեմատությունները հիմնականում անտեղի են:

Պատասխանների մեջ ՄաքԳրիլին արվող հիմնական դիտողությունն այն էր, որ նա հարկ եղածին պես չի շեշտել անվտանգության խնդիրը՝ որպես հողվածում հիշատակվող՝ Իսրայելի կողմից կատարվող քայլերի հիմնական պատճառ: Որպես ամենից ակնհայտ օրինակ բերվում էր անվտանգության պատի կառուցումը:

Երեքշաբթի օրը «Գարդիանի» նամակների բաժնուն խնդրին վերաբերող արձագանքները դարձյալ բացվում էին մի նամակով, ուր ոչ միայն ՄաքԳրիլի հողվածներն էին խստորեն քննադատվում, այլևս ասվում էր, որ «Իսրայելի վրա հարձակվողների թվով կարելի է դատել Բրիտանիայում հակասեմականության տարածվածության մասին»: Մինչեւ չորեքշաբթի ներառյալ, հիշյալ էջն արդեն հարցի շուրջ 100 նամակ էր ստացել, որոնց մեջ հարցի քննարկման դեմ հանդես եկող ամեն երկու նամակագրի բաժին էր ընկնում քննարկման երեք ողջունող, իսկ մնացածների մեծ մասն ընդհանրապես մերժում էր ապարտեիդի հետ որեւէ զուգահեռ:

G2-ի բացած հատուկ հասցեով ավելի քան 100 ընթերցող հայտնեցին իրենց կարծիքը, եւ չորեքշաբթի կեսօրին կարծիքների հարաբերակցությունը երեքը մեկի էր՝ հօգուտ խնդիրը արձարծելու կողմնակիցների: Շատերն իրենց հիացմունքն էին արտահայտում ՄաքԳրիլի «խիզախությամբ»՝ մի բառ, որ հաճախ էր հանդիպում արձագանքներում, եւ շնորհավորում էին «Գարդիանին» հողվածները տպագրելու համար:

# ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ...

## «ԳԱՐԴԻԱՆԻ» ԿՈՂՄԻՑ

### «ԱՍՏՂԱՅԻՆ ԱՎԱԳ ԵՂԲՈՐ»

#### ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

*Երկուշաբթի, 6 փետրվարի, 2006*

Մի շաբաթ առաջ «Գարդիանի» շուրջ մեծ աղմուկ բարձրացավ այն բանից հետո, երբ թերթի մեդիա բաժնուն հրապարակված մի աղյուսակից հայտնի դարձավ, որ այն, «Օբզերվերի» հետ միասին, բրիտանական բոլոր թերթերի մեջ ամենից շատ է անդրադարձել *Celebrity Big Brother* «Աստղային Ավագ եղբայր» վավերական հեռուստաշոուին (*reality show*): Հրապարակման մեջ սկզբուն չափազանցված էր անդրադարձի ծավալը. դրա վերելուն սխալմամբ գրված էր «աղյուսակային մատնաչափով», եւ «Գարդիանի» ու նրա քույր կիրակնօրյա «Օբզերվերի» անդրադարձների ընդհանուր երկարությունը այդ կերպ ներկայանում էր իբրեւ 15 687 մատնաչափ՝ հավասար մոտ մեկ քառորդ մղոնի: Անգամ շոուի ամենաթունդ երկրպագուները, որոնք լավ հայտնի են թերթի ներսում, սկսել էին մտածել, թե արդյո՞ք սա իսկապես չափազանց չէ:

Խնդիրն այն է, որ հակառակ աղյուսակի վերելուն եղած նշման, արդյունքները հաշվված էին բառերով, ինչն ուղղումների սյունակում շատ շուտով բացատրվեց: Սրանով անդրադարձումների չափը մեծապես նվազեց, բայց հարաբերակցությունը չփոխվեց՝ «Գարդիանն» ու «Օբզերվերը» դարձյալ միասին առջելուն էին:

Ընթերցողը, եթե դատենք թղթակցությունների համեստ ծավալով, հիմնականում հանդարտ մնաց, թեւ արձագանքների պակասը մեկնաբանելը միշտ վտանգավոր է. լռությունը շատ տարբեր իմաստներ կարող է ունենալ՝ հավանությունից մինչեւ անտարբերություն կամ հուսահատություն: Ավելի ուշ որոշ ընթերցողների զայրացնողը հունվարի 28-ի կիրակնօրյա համարի առաջին էջում «Ավագ եղբայր» շոուի հաղթող Շանթել Հո-

թոնի լուսանկարի տպագրումն էր, որը կից հինգերորդ սյունակում ներկայացված էր իբրև «Էսեքսի անուշ աղջիկ»:

Ընթերցողներից մեկը գրեց. «Մեդիա Գարդիանում» բերված աղյուսակը հաստատեց իմ արդեն իսկ ունեցած տպավորությունը, թե թերթը շուրջն չափից դուրս մեծ ուշադրություն է հատկացնում, բայց իրապես ցնցողը ձեր կիրակնօրյա առաջին էջն էր, ուր ճանաչման ձգտող սովորական մեկի նկարը ուղեկցվում էր ողջ էջի երկարությամբ տեքստով»:

Մեկ այլ ընթերցող, որի մոտ կարծես նոր համախտանիշի՝ «Ավագ եղբոր տագնապի», նշաններ կան, գրեց. «Ես հիմա ամեն առավոտ տագնապով եմ «Գարդիան» գնում, վախենալով թե {կիրակի օրվա} երեսի նկարը կարող է կրկնվել: Ամեն անգամ մտածում եմ՝ կարո՞ղ է հանկարծ հանդգնեն նորից նման բան անել»:

Խնդրո առարկա հարցին իմ անդրադարձներից մեկում ես աշխատակազմի բոլոր անդամներին հարց ուղղեցի՝ «Արդյո՞ք «Գարդիանն» այս հարցում ճիշտ է»: Խմբագրիւրն ու փոխխմբագիրը դրական պատասխանեցին հարցին, ընդ որում՝ երկուսն էլ պաշտպանեցին առաջին էջին Շանթել Հոթոնի լուսանկարի տպագրումն ու դրա կողքին դրված տեքստը: Խմբագիրն իր հերթին հարց էր տալիս՝ «Դուք ուզում եք ներկայացնել աշխարհն ինչպես կա՞, թե՞ ինչպես ուզում եք, որ լինի»: Նա հիշատակում էր «Ավագ եղբոր» մասնակիցների համար քվեարկած միլիոնավոր մարդկանց, ապա էլ ավելի շատ միլիոնավորների, որոնք դիտել էին նրանց, եւ լրացուցիչ միլիոնավորների, որ խոսում էին այդ շուրջ մասնակիցների մասին, թեւ ոչ դիտել էին այն, ոչ էլ քվեարկել:

Սակայն շատ լրագրողներ, այդ թվում այնպիսիք, որոնց թերթի կողմից խնդրի ընդհանուր լուսաբանումը խելամիտ էր թվում, գտնում էին, որ Շանթելի նկարը առաջին էջին տպագրելը, իրենց արտահայտությամբ, «մի քիչ չափն անցնող քայլ էր»: Օգտագործվող մյուս բառերն էին՝ «շփոթեցնող», «նվաստացուցիչ», «ընկճող»:

Անդրադարձումների աղյուսակին եւս մեկ անգամ դիմելը օգտակար կլիներ: Նախ ասենք, որ վերլուծության արդյունքներում սկզբնապես ամեն թերթ առանձին էր նշված: Խմբագրությունն էր, որ որոշեց «Գարդիանի» եւ նրա քույր կիրակ-

նօրյա «Օբզերվերի» համապատասխան բաժինները միասին ներկայացնել: Օրաթերթերի մեջ «Գարդիանը» բոլոր լուրջ թերթերից ամենաշատ բառերն է նվիրել շոուին, բայց ավելի քիչ, քան «Դեյլի միորդ» թաբլոյիդը, որը, հիշենք, ավելի շատ լուսանկարներ է օգտագործում: Կիրակնօրյա թերթերի մեջ առաջին տեղում «Օբզերվերն» էր, եւ հենց նրա ցուցանիշները «Գարդիանի» ցուցանիշներին գումարելու արդյունքում էր, որ վերջինս հայտնվեց հրապարակված ցուցակի առջեւում:

«Գարդիանի» լրագրողներից մեկն ուշադրություն է հրավիրել այն բանի վրա, որ փետրվարի 26-ին նախորդող շաբաթվա ընթացքում կատարված վերլուծությունը վերաբերում էր «Գալովեյի ժամանակին», որի ընթացքում պատգամավոր Ջորջ Գալովեյը ուշադրության կենտրոնում էր: Մեծ մասի կարծիքով՝ այդ ուշադրությունն արդարացված էր:

Ընթերցողների նամակների մեծ մասը վերաբերում էր «Շանթելի ժամանակին»՝ հունվարի 28-ի շաբաթ օրվանից մինչեւ հունվարի 30-ի կիրակին: Եթե համեմատենք հունվարի 26-ին նախորդող 7 օրերի ընթացքում տարբեր թերթերում Ջորջ Գալովեյին նվիրված նյութերի բառերը, «Գարդիանը» ազգային թերթերի մեջ յոթերորդն է («Դեյլի միորդը» գլխավորում է ցուցակը): Իսկ եթե «Շանթելի ժամանակում» համեմատենք «Ավագ եղբայր» շուուի լուսաբանումը, «Գարդիանը» 12-րդն է:

Մինչ ինձ կմեղադրեիք ռեւիզիոնիզմի մեջ, ասեմ որ ամեն դեպքում «Գարդիանի» կողմից շուուի լուսաբանումը իսկապես մեծածավալ է: Հարցին վերաբերող բոլոր մեղմացնող հանգամանքները հաշվի առնելուց հետո էլ (Ջորջ Գալովեյի ու ավելի պակաս չափով Մայքլ Բարիմորի հանգամանքը, «Գարդիանի» արդյունքները հաշվելիս մշակութային մեծածավալ վերլուծությունների ու մեկնաբանությունների, մասնավորապես Մարկ Լոսոնի ու Ջերմեյն Գրիթի հոդվածների ներառումը) հարցը դեռ մնում է՝ ինչո՞ւ այդքան շատ:

«Գարդիանի» խմբագիրներից մեկն ասել է. «Արբանյակային, կաբելային ու թվային հեռուստատեսության սկզբնավորումից եւ ալիքների անհաշիվ դառնալուց ի վեր դեռ ոչ մի հեռուստահաղորդում [«Աստղային Ավագ եղբոր» նման] չի կարողացել դառնալ համազգային խոսակցության առանցք...

Այն մարդկային բնավորության զարմանալի համայնապատկեր է. մենք ականատեսն ենք դառնում փառասիրության, ազահության, ստախոսության ու տգիտության, սակայն այնտեղ նաեւ, պարադոքսալ կերպով, գովաբանվում է առաքինությունը, եւ բարի ու ազնիվ բնավորությունները հաղթանակ են տանում»: Ասվածը լրագրողն ամփոփում էր այսպէս՝ «Իմ միակ հարցն այս է՝ արդյո՞ք մենք բավարար չափով ենք դրա մասին գրում»:

Որոշ այլակարծներ պնդում են, որ «Գարդիանը» պետք է շոուն արհամարհելու ինքնավստահություն ունենար: Այդ միտքը մեկն այսպէս ձեւակերպեց. «Ես երբեք «Ավագ եղբայր» չեմ նայել: Ես երբեք «Ավագ եղբայր» չեմ նայի: Ես ստիպված չեմ «Ավագ եղբայր» նայել: Բայց ես ուզում եմ «Գարդիան» կարդալ»:

Իսկ մեկ ուրիշն էլ ավելի կարճ է արտահայտվել՝ With CBB we went OTT՝ «Աստղային Ավագ եղբոր հարցում մենք չափն անցանք»: Սիրելի ընթերցող, իրականում մեզ քո կարծիքն այս հարցում այնքան էլ լավ հայտնի չէ: Շատ հնարավոր է, ինչպէս ավագ լրագրողներից մեկն է ասում, որ «բոլորը մի քիչ գժվում են, հետո ամեն ինչ ավարտվում է ու մի շաբաթ անց միայն պնդաճակատ ֆանատներն են հիշում դրա մասին: Աշխարհը կբուժվի...»:



# ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ... ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՍԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽՍՏԱՑՆԵԼՈՒ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Երկուշաբթի, 16 հունվարի, 2006*

Երկու ազգային թերթեր՝ «Թայման» ու «Սանը», ինչպես նաև Լոնդոնի «Իվնինգ Ստանդարտը», այս ամիս տպագրել էին Քենսինգթոնի հյուրանոցներից մեկից դեպի իր մահը ցատկող կնոջ թռիչքը պատկերող լուսանկարներ: Մեկ այլ լուսանկար պատկերում էր նրան ցատկից առաջ՝ պատուհանագոգին կանգնած: Մյուս թերթերի մեծ մասի նման, «Գարդիանը» հարցը ծանրութեթեւ անելուց հետո որոշել էր հրաժարվել լուսանկարները որեւէ կերպ օգտագործելուց, ինչը ճիշտ որոշում էր:

Մինչ ես գրում եմ այս տողերը, Մամուլի դեմ բողոքների հանձնաժողովի (ՄԲՀ) սեղանին բողոքներ են շարված, մասնավորապես «Սամարացիներից»: Այս կազմակերպության գործադիր ղեկավարը «Գարդիան Մեդիա» կայքում ավստսանք է արտահայտում «անհարկի ցավ պատճառող լուսաբանման» առնչությամբ՝ մի գնահատական, որի հետ ես համաձայն եմ:

«Սամարացիները» պնդում են, որ հիշյալ նկարների օգտագործումով խախտվել է ՄԲՀ-ի կողմից վերահսկվող հմբագիրների կանոնադրի 5-րդ կետը: Մեջբերենք կետն ամբողջությամբ. «Անձնական վիշտ կամ ցնցում ներառող դեպքերում մարդկանց պետք է հարցեր տալ ու դիմել մեղմորեն ու տակտով, եւ նյութերը հրապարակելիս զգույշ լինել: Ասվածը չպետք է հասկանալ իբրեւ դատական քննությունները լուսաբանելու սահմանափակում»:

Ես արդեն գրել եմ, որ այս կետը անբավարար է ինքնապանությունների լուսաբանումը կանոնակարգելու առումով, մասնավորապես այն հաշվի չի առնում նմանակող ինքնա-

պանությունների երեւոյթը: Ո՛չ կանոնագրում, ոչ էլ որպէս դրա լրացում կանոնագրային հանձնաժողովի կողմից հրատարակված «Խմբագիրների կանոնագրքում» ինքնասպանությունը չի հիշատակվում իբրեւ հատուկ ուշադրություն պահանջող հարց:

Այսպիսով, այն անտեսում է խնդրին մոտ կանգնած կազմակերպությունների, մասնավորապէս՝ «Սամարացիների» խորհուրդը: Վերջիններիս կանոնագրում լրատվամիջոցների առնչությամբ ասվում է. «Չաղորդումներում պետք է խուսափել ինքնասպանության մեթոդի մանրամասն հիշատակումից... եւ հնարավորության դեպքում՝ հուզական լուսանկարների ու պատկերների օգտագործումից: Չետադարձ հաղորդումներում ու վերապատմումներում պետք է խուսափել ինքնասպանության ձեւը նկարագրելուց...»: Սրա նպատակը նմանակող ինքնասպանություններից խուսափելն է:

«Ինքնասպանությունը... հատուկ դեպք է», - ասում է «Ինդիփենդենթի» համար գրող հողվածագիր Ջոուն Սմիթը. նա չէր անդրադարձել ինքնասպանության հիշյալ դեպքին ոչ բառերով, ոչ նկարով:

[Mediawise.org.uk](http://mediawise.org.uk) կատարած ուսումնասիրությունը: Դրանում ներառված են Օքսֆորդի համալսարանի հոգեբուժության ֆակուլտետի ինքնասպանությունների ուսումնասիրության կենտրոնի անցկացրած «ինքնասպան վարքն ու զանգվածային լրատվամիջոցները» հարցման արդյունքները:

«ՄեդիաՎայզը», վերոհիշյալ լուսանկարների հրապարակումից անմիջապէս հետո, հայտարարեց. «Ինքնասպան ցատկի» լուսանկարները չպետք է հրապարակվեին: Տարիներ շարունակ կատարված վստահելի ուսումնասիրությունները վկայում են, որ նման լուսաբանումը նմանակող ինքնասպանությունների խրախուսման ռիսկ է պարունակում»:

«ՄեդիաՎայզը» մեզ հիշեցնում է նաեւ այն կետի մասին, որն իր հանդգնմամբ պետք է ավելացնել խմբագիրների կանոնագրում. «Ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի մասին հաղորդելիս պետք է խուսափել աղմուկ բարձրացնելուց եւ անհարկի մանրամասներից, եւ հատուկ պետք է հաշվի առնել հաղորդման հավանական ազդեցությունը ընտանիքի.. առանձնապէս երեխաների վրա»:

Ես ինքս պաշտպանել եմ համանման մի կետ, որն այսօր արդեն «Գարդիանի» սեփական խմբագրական կանոնագրի մաս է կազմում: Ահա այն. «Գարդիանի» լրագրողը պետք է հատուկ ուշադիր լինի ինքնասպանություն կամ ինքնասպանությանն առնչվող դեպք հաղորդելիս, միշտ մտքում ունենալով ուրիշների կողմից դրա նմանակման վտանգը: Ասվածը վերաբերում է ինքնասպանությունը ներկայացնելուն, այդ թվում լուսանկարների օգնությամբ, եւ դրա կատարման միջոցը նկարագրելուն: Ամեն ինչ պետք է հաղորդել ընդհանուր ձեւով, ոչ թե կոնկրետ մանրամասներով: Հարկ եղած դեպքում կարելի է տալ նաեւ օգնության հեռախոս (օրինակ՝ «Սամարացիներինը»): Հարազատների զգացումները պետք է հաշվի առնել»:

Քանի որ «Սամարացիները» երրորդ կողմ են, հնարավոր է նրանց բողոքը համարվի ՄԲՀ-ի լիազորությունների սահմաններից դուրս: Սակայն ՄԲՀ-ն, բազմաթիվ այլ բողոքների թվում, երկու բողոք է ստացել իրեն ցած նետած կնոջ մտերիմ ընկերներից: Հանձնաժողովը քննություն է սկսել բոլոր երեք թերթերի դեմ եղած բողոքների կապակցությամբ: Հետաքրքիր է՝ արդյո՞ք այս դժբախտ դեպքը կկարողանա արագացնել կանոնագրում նշանակալի փոփոխություններ կատարելու գործը:

*Տես նաեւ նույն այս խնդրին վերաբերող հաջորդ հոդվածը, հրապարակված 2006թ. ապրիլի 24-ի համարում:*

# ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ... ՀԱՎԱՏԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ «ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՏԱՐԱԾՔԻ» ՄԱՍԻՆ

*Երկուշաբթի, 19 դեկտեմբերի, 2005*

Պաշտոնաթող մի անգլիկան քահանա՝ «Գարդիանի» 50 տարվա ընթերցող, արձագանքելով թերթում կրոնի լուսաբանման մասին շաբաթներ առաջվա իմ նյութին, գրում է. «Իմ տպավորությանը, վերջին տարիներս ավելի շատ տեղ է հատկացվում թե՛ քրիստոնեական, թե հակաքրիստոնեական նյութերին: Վերջինները շատ ավելի քինոտ բնույթ ունեն քան առաջինները, սակայն քրիստոնյաները պետք է կարողանան դիմանալ հայիոյանքին...»

Նա իր հիացմունքն է արտահայտում («հիմնականում») «Գարդիանի» հոդվածագիր Փոլի Թոյնբիի հանդեպ. «Քանի դեռ նրա գրիչը գործում է, աշխարհիկության պաշտպանները ձայնի պակաս չեն ունենա ձեր թերթում»: Սրա հետ կհամաձայնեն բազմաթիվ ընթերցողներ:

Ես այս ընթերցողի մասին գրում եմ, որովհետև իմ փոստարկղից դատելով, նա տարածված կարծիք է արտահայտում. «Նիստ ափսոս կլիներ, եթե ձեր թերթի տոնայնությունն այնքան անզիջուն հակաքրիստոնեական դառնար, որ քրիստոնյաների համար անհնար դառնար դրան դիմանալը: Այսօրվա վիճակով՝ քրիստոնեության հանդեպ մշտական հարձակումները ձեր էջերում ինձ համար օգտակար հիշեցում են այն մասին, ինչին մենք պետք է հակաճառենք, եւ դա ընդունելի է, քանի դեռ դրանք ժամանակ առ ժամանակ հակակշռվում են հակառակ կարծիքով»:

Արդյո՞ք հանդուրժողականությունը խրախուսում է հարձակումները: Արդյո՞ք «Գարդիանն» իր քրիստոնյա ընթերցողներին առյուծի երախն է նետում: Փոլի Թոյնբին իր մի կարծիմակում հավասար քննադատության կոչ է անում: Նրա կարծիքով՝ թերթը հարկ եղածից ավելի համակրանքով է վերա-

բերվում, օրինակ, մուսուլմանական հավատին, այն աստիճան, որ բարի լինելու համար երբեմն հրաժարվում է տրամաբանությունից: Պետք է հասնել նրան, գրում է Թոմսբին, որ հնարավոր լինի կռիվ տալ կրոնի դեմ կամ հարցականի տակ առնել այն՝ առանց դրա հետեւորդների զգացմունքները վիրավորելու:

Թղթակիցների մեծ մասը՝ թե թերթից, թե դրսից, տարբերակում են մտցնում. մի կողմից լուրերի հաղորդումները, որոնց բովանդակությունը կարելի է հասկանալ առանց կրոնական համատեքստի իմացության, մյուս կողմից՝ հոդվածներն ու սյունակները, որոնցում մարդիկ՝ լրագրողի միջնորդությամբ կամ առանց դրա, բացատրում են իրենց հավատի իմաստն ու նշանակությունը: Հենց այս երկրորդ խմբի նյութերի աճն է, որ խնդրո առարկա բանավեճի սկիզբը դնող սկզբնական հարցին հանգեցրեց:

Այս բանավեճի մեծ մասը վերաբերում էր Face to Faith՝ «Երես առ հավատ» սյունակին, ընդ որում մի շարք ընթերցողներ պնդում էին, որ այնտեղ պետք է տեղ տալ նաեւ աթեիստական ու հումանիստական տեսակետներին: Հիշյալ սյունակը «Գարդիանի» հին ու ավանդական մասերից է: 1960-ականներին այն փակվեց, բայց 1972թ. վերաբացվեց այն ժամանակվա խմբագիր Ալասթեր Չեթերինգթոնի կարգադրությամբ՝ իր այսօրվա խորագրի տակ: Բաժինը վարելը նա վստահեց իր հոդվածների խմբագիր Չարլոզ Ջեքսոնին, որն իրեն անվանում է «հավերժական աթեիստ»: Ջեքսոնը ասում է նաեւ, որ «Երես առ հավատ» վերնագիրն է ընտրել սյունակի համար, քանի որ դա բավականաչափ ծիծաղելի էր ու կարող էր ձախողել ծրագիրը:

Սյունակի խմբագիրն այսօր, հիշյալ խորագրով դրա բացվելուց 30 տարի անց, «Գարդիանի» կրոնական հարցերով թղթակից Սթիվեն Բեյթսն է: Նա սյունակի համոզված պաշտպանն է եւ ասում է. «Ես բոլորովին դեմ չեմ հումանիստ կամ աշխարհիկապաշտ հեղինակներ ներառելուն, սակայն ուզում եմ ասել բոլոր ապագա հեղինակներին, որ սյունակի նպատակը, իմ համոզմամբ, ոչբանավիճային կամ փիլիսոփայական խորհրդածությունների վայր լինելն է: Սա նշանակում է՝ հարձակման տակ չառնել ուրիշների հավատը, իսկ հումա-

նիստներին ու աթեիստներին, ինչպես իմ փորձն է հուշում, դա դժվար է հաջողվում...»:

Բեյթսը նշում է, թե խմբագրի որոշելու հարցն է՝ ում արժանի համարել սյունակի փոքրիկ ամբիոնից խոսելուն: Խմբագիրը, երբ ես հարցրի նրան այս մասին, ասաց, որ իր կարծիքով բոլոր հիմքերը կան «Երես առ հավատ» սյունակը, իր բառերով, որպես «պաշտպանված տարածք» պահպանելու համար: Նա նշեց նաեւ, որ երբ ֆորմատի վերջին փոփոխության հետ կապված խոսք է եղել սյունակը փակելու մասին, կարծիքի ուսումնասիրություններն ու ստացված բողոքները ցույց են տվել, որ այն շարունակում է բարձր գնահատվել բազմաթիվ ընթերցողների կողմից:

Խմբագիրը նկատեց նաեւ, որ վերջերս եկեղեցիներին ու լրատվամիջոցներին նվիրված մի համաժողովից ինքն այն տպավորությունն է ստացել, թե անգլիկաններն ու կաթոլիկները մի քիչ շփոթված են «Գարդիանի» մոտեցումներից, թեւէ շարունակում են սիրով ու հարգանքով վերաբերվել թերթին. «Շատ առումներով մեր մոտեցումները ընդհանուր են: Սակայն նրանց տպավորությամբ՝ շատ հաճախ մենք թշնամաբար ենք վերաբերվում կրոնին կամ նրանց եկեղեցուն, եւ սա մի մտահոգություն է, որի հանդեպ մենք պետք է ուշադիր լինենք»:

«Մենք պետք է գիտակցենք, որ «Գարդիանի» բազմաթիվ ընթերցողներ, ունենալով հիմնականում նույն աշխարհայացքը ինչ որ մենք, երջանիկ են քրիստոնյա լինելով, եւ նրանց հիասթափեցնում է այն, որ տարբերությունները չափազանցելով, մենք ստվերում ենք մեզ միացնող ընդհանուրը: Այս մարդիկ մյուսների չափ իրավունքն ունեն լսված ու հասկացված լինելու», - ասում է խմբագիրը:

# *ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ԱՅՆ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԹԵՐԹՆ ԱՅԼԵՎՍ ԱՇԽԱՐՀԻԿ ԶԷ*

*Երկուշաբթի, 5 դեկտեմբերի, 2005*

Ընթերցողը գրում է. «Այսօր տպագրել էիք եւս մեկ կրոնական հոդված: Կարո՞ղ էիք ինձ ասել՝ ինչու վերջերս այսքան շատ տեղ է բռնում կրոնը «Գարդիանում»: Ինչո՞վ է պայմանավորված այս անցումը՝ աշխարհիկ թերթից դեպի մյուս բոլոր թերթերի մեջ ամենակրոնականը»:

Այս նամակը ինձ զարմացրեց: Ես ավելի սովոր եմ նամակների, ուր բողոքում են թե «Գարդիանի» լուսանցքային անդրադարձերը կրոնական խնդիրներին հաճախ արվում են եթե ոչ ակնհայտ արհամարհական, ապա առնվազն թերագնահատող հնչերանգով:

Իր երկրորդ իմակում նույն ընթերցողը բացատրում էր. «Ես մեծացել եմ աշխարհիկ հասարակության մեջ եւ իմ «Գարդիան» կարդալու պատճառներից մեկն էլ դրա աշխարհիկ, առաջադիմական թերթ լինելն էր: Իսկ հիմա այնտեղ ավելի շատ կրոն կա, քան որեւէ այլ թերթում»:

Արդյո՞ք սա ճիշտ է: Եթե բոլոր կողմերից նայենք՝ գուցե: Եթե հաշվի առնենք հոդվածները, ուր տարբեր կրոնի մարդիկ իրենց հավատն են բացատրում կամ արժեւորում, ինչպես նաեւ այն լուրերը, որոնցում կրոնը նշանակալի գործոն է, այդ դեպքում այո, ասվածը իսկապես ճիշտ է թվում: Բայց արդյո՞ք սա անհամատեղելի է թերթի աշխարհիկ դիրքորոշման հետ: Խնդրեմք ինձ ասե՛ք, որ աշխատակազմի շատ անդամներ կպատասխանեն՝ ոչ:

Իսկապես այն տպավորությունն է ստեղծվում, թե «Գարդիանն» այսօր կրոնին վերաբերող հարցերն ավելի է լուսաբանում, քան մյուս թերթերը, եւ քան հենց ինքը՝ անցյալում: Իմ գործընկերներից մեկը էլեկտրոնային փնտրանք էր անցկացրել՝ հաշվելու համար այն նյութերը, որոնցում հիշատակվում էին «կրոն», «եկեղեցի», «Աստված» բառերը (ընդ որում նա

հաշվի չէր առել այն հանգամանքը, որ «Աստված» բառը շատ հաճախ օգտագործվում է հայհոյական արտահայտությունների մեջ, ինչի դեմ շատերն են բողոքում): Ամփոփելով իր ստացած արդյունքները, գործընկերս նկատեց. «Գարդիանը» զգալիորեն առաջ է որակով իրեն համազոր մրցակիցներից»: Ապա ավելացրեց՝ «Թայմսը» «եկեղեցի» բառն ավելի հաճախ է օգտագործում, բայց դա նրանից է, որ իրենք եկեղեցական լուրերի մշտական սյունակ ունեն»:

Մեկ այլ գործընկերս ուրիշ թեստ էր անցկացրել, ընդգրկելով միայն «Գարդիանի» նյութերը: Ահա նրա եզրակացությունը. «Անկասկած է, որ թերթի էջերում կրոնի մասին ավելի շատ է խոսվում, բայց դա քաղաքականության մեջ կրոնի դերի մեծացման արձագանքն է... Կոպիտ հաշվարկով «Գարդիանում» «քրիստոնյա» բառը հիշատակվել է. 1985-ին՝ 770, 1995-ին՝ 1 221, եւ 2005-ին՝ 2 341 անգամ, իսկ «նուսուլման» բառը՝ 1985-ին՝ 408, 1995-ին՝ 1 106, եւ 2005-ին՝ 2 114 անգամ:

Սրանք կոպիտ թեստեր են, որ տարբերակում չեն դնում լուսաբանման տեսակների միջեւ, օրինակ չեն տարբերակում կարծիքը լուրից: Բերենք եւս մի քանի թիվ՝ «Գարդիանի» վերջերս հրապարակված սոցիալական աուդիտից. աշխատակազմի հարցված անդամներից 56-ն ասել է, որ ոչ մի կրոն չի դավանում, 36%-ն իրեն քրիստոնյա է համարել, իսկ մնացած 8%-ն ուրիշ կրոնների անուն է տվել: (Ողջ Միացյալ Թագավորությունում, 2001 թվականի մարդահամարի համաձայն, բնակչության 72%-ն իրեն քրիստոնյա էր համարում, իսկ BBC ICM-ի անցած ամիս անցկացրած հարցման արդյունքներում այդ թիվը 67% էր):

«Գարդիանն» այսօր էլ աշխարհիկ թերթ է մնում՝ բառիս սահմանումների մեծ մասի համաձայն: Այն չի հետեւում որեւէ կրոնի: Սակայն ինչպես որոշ լրագրողներ էին նշել անցած շաբաթ իմ անցկացրած հարցման ժամանակ, նրանցից մեկի ձեւակերպմամբ՝ «Գարդիանի» արմատները «նոնկոմֆորմիստ» (ոչ հարմարվողական) քրիստոնեության մեջ են»: Թերթի հյուսիսային խմբագրի կարծիքով՝ «Գարդիանի» ավանդույթը միայն աշխարհիկ չէ, թեւեւ դա իսկապես ուժեղ եւ հարուստ գիծ է: Թերթում ուժեղ է նաեւ քվակեր - ունիտարյան ժառանգությունը: Թերթի հիմնադիր Ջոն Էդվարդ Թեյլորը



քվակերի զավակ էր եւ այն ունիտարյան շրջանակի անդամ, որն էլ հենց հիմնեց «Գարդիանը».. Չ.Փ.Սքոթը (թերթի վաղ շրջանի ազդեցիկ խմբագիրը) ունիտար հոգեւորականի զավակ էր»: Իմ նույն գործընկերոջ կարծիքով՝ «Քվակերականութունն ու ունիտարութունը ... երկուսն էլ ունեն սոցիալական գործողութունների հրամայական, ինչի վառ օրինակն է «Գարդիանը»:

Իմ երրորդ գործընկերը մեջբերում է անու՛մ «Մանչեստեր Գարդիանի»<sup>2</sup> 1821թ. առաջին համարում Թեյլորի ուղեւճային հողվածից, ուր խոստացվում էր, որ թերթը «անխոնջ կերպով պաշտպանելու է քաղաքացիական ու կրոնական Ազատության սկզբունքները...»:

Իմ հարցունը լրագրողներին ուղղված հետեւյալ հարցն էր պարունակում. «Ընթերցողներից մեկը բողոքում է, թե «Գարդիանում» չափազանց շատ է կրոնը: Արդյո՞ք դա այդպես է»: Հարցվածներից շատ քչերն էին դրական պատասխան տվել: Գերակշռող մեծամասնության կարծիքով՝ նկատի առնելով կրոնի խաղացած դերը ոչ միայն հակամարտութուններում, այլեւ ընդհանրապես աշխարհի գործերում, թերթը հստակ պարտականություն ունի հաղորդելու դրա մասին եւ քննելու այն՝ ձգտելով հասկանալ ու բացատրել: Մյուս շաբաթ ես ավելի մանրամասն կանդորադառնամ նրանց ասածին:

---

<sup>2</sup> «Գարդիանը» նախապես կոչվում էր «Մանչեստեր Գարդիան» (Ծան. թարգմ.)

# ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ԲԱՌԻ ՄԱՍԻՆ, ՈՐՆ ԻՐ ԻՄԱՍՏԸ ՓՈԽԵԼՈՒ ԾՆՇՄԱՆ ՏԱԿ Է

*Երկուշաբթի, 28 նոյեմբերի, 2005*

«Գարդիանի» քաղաքական խմբագիրը, անցած շաբաթ առաջին էջում գրելով Հյուսիսային Իռլանդիայի հարցով նախկին պետքարտուղար Մո Սոուլամի հուղարկավորության մասին, իր խոսքն ավարտում է այսպես. «Բլեյրները Բեյֆասթում նրա ձեռքբերումների մասին պատմող մի տեսանյութ էին ուղարկել, որ fulsome էր, եւ չժափահարողներ համարյա չեղան»:

Ընթերցողներից մեկը գրում է, թե fulsome բառը չունի այն նշանակությունը, որով ըստ երեւույթին այն օգտագործել է քաղաքական խմբագիրը՝ անզուսպ եւ անգամ շռայլ: Ես ինքս իմ մի շարք նախորդ սյունակներում պաշտպանել եմ բառի բոլորովին ուրիշ մի սահմանում եւ շարունակում եմ իմ կարծիքի տերը մնալ, թեեւ այս խնդրի շուրջ ճակատամարտի դաշտից եկող լուրերն այնքան էլ խրախուսող չեն:

Իմ շատ սիրած սահմանումը հրաշալի կերպով ներկայացված է «Գարդիանի» ոճագրքում. «Fulsome նշանակում է «քաղցրունեղոր, զգվելիության աստիճանի չափազանցված (եւ ոչ թե, ինչպես ոմանք են կարծում, full բառի տարբերակն է), ուստի «fulsome գովասանք» բառակապակցությունը չպետք է գործածվի դրական իմաստով»:

Եթե ընդունենք այս սահմանումը, որը «Գարդիանի» հեղինակները պետք է որ ընդունեն, հարկ է ընդունենք նաեւ, որ թերթում այս բառը չափազանց հաճախ սխալ է օգտագործվում: «Հողի պաշտոնակցի գովասանքը Փուլի հասցեին fulsome էր», «Ներկա ու նախկին աշակերտների վկայությունները նրա մասին fulsome են», կամ «խոսելով ITV-ի ճաշկերույթում, մշակույթի նախարար Թեսա Ջովելը fulsome կերպով գովաբանեց ITV-ի գործադիր ղեկավար Չարլզ Ալենին»:

Այստեղ ես օգնության եմ կանչում դ-ր. Ջոնսոնին, որ մեր այս փողոցներով վերուվար էր անում երկուսուկես դար առաջ. ես օգտագործում եմ Ջեք Լինչի խմբագրած «Սամուել Ջոնսոնի բառարան, 1755թ. հրատարակության ընտրանի» գիրքը («Ատլանտիկ բուքս» հրատարակչություն): Ջոնսոնի համաձայն (թեև նա հավանաբար սխալվում է), fulsome բառը ծագում է full, սաքսոն. foul արմատից: Նա օրինակներ է բերում հետևյալ երեք նշանակությունների համար. 1. զզվելի, տհաճ, 2. գարշելի հոտով, 3. Լկտիության հակում ունեցող:

Անգլերենի օքսֆորդյան բառարանը (1933) բառի յոթ իմաստները բացատրելուց առաջ գրում է. «Չնարավոր է, որ միջին անգլերենում զոյություն ունեցած լինի fulsum բառը՝ ծագած ful, foul-ից... բայց բառի իմաստային զարգացման առումով այս ենթադրությունը մեծ կարեւորություն չունի»: Fulsome բառի օգտագործման բերված բազմաթիվ օրինակների մեջ ամենահինը՝ 1250թ., վերաբերում է բառի նշված առաջին իմաստին՝ «առատ, շռայլ, լիքը»: Այս իմաստը պաշտպանող՝ 1868թ. թվականի մի մեջբերում ավարտվում է այսպես. «Ես կարող էի շարունակել՝ թվարկելով... այն ամենը, ինչով լիքն է այս շռայլ (fulsome) աշխարհը: Ես բառն օգտագործում եմ իր սկզբնական իմաստով»:

Բառի մնացած վեց իմաստներից հինգը բառարանում ներկայացված են իբրև հնացած: Այդպիսի հնացած իմաստներից է «լիքն ու թմբկիկ...»-ը. բառարանն այս իմաստով բառի օգտագործման վերջին օրինակներից հիշատակում է մեկը՝ Օթվեյի 1678թ. պիեսից: Չիշենք, որ վերջին տարիներս «Գարդիանը» հարություն է տվել սրան. ուզում եմ ասել բառիմաստին, ոչ թե պիեսին: Առաջինից բացի միակ իմաստը, որ բառարանում չի նշվում իբրև հնացած, յոթերորդն է. «լեզվի, ոճի, վարքագծի մասին եւ այլն... Ներկայումս հիմնականում օգտագործվում է կոպիտ ու չափազանցված քծնանքի, ցուցադրական սիրո, եւ համանման այլ իմաստներով»:

Ահա մի զգուշացում վերջերս լույս տեսած այն գրքից, որ մի անգամ արդեն հիշատակել եմ՝ Լինդա Մազլսթոնի «Օքսֆորդի անգլերենի բառարանի թաքուն պատմությունը»: Չեղինակը մեջբերում է Ջեյմս Մարրիին՝ բառարանի վաղ շրջանի հայտնի խմբագիր. «Բանասերի ու լեզվի պատմաբանի

համար թերթային մեջբերումները ամենից արժեքավորն են ընթացիկ օրինակներից... դրանք ցույց են տալիս, թե ինչպես է լեզուն զարգանում՝ մեզ տեսանելի են դարձնում այն իրական քայլերը, որոնք ավելի վաղ շրջանների համար մենք վերականգնում ենք ենթադրաբար»:

Թերթային անգլերենը, վստահորեն կարելի է ասել, արտացոլում է հասարակության մեջ լեզվի գործածությունը եւ ստիպում է մեզ ընդունել, որ համատարած սխալը ճիշտ է դառնում: Այնուամենայնիվ, ես ինքս fulsome բառի առումով դեռ մման դիրքորոշման չեմ հասել, ճիշտ ինչպես այն հեղինակությունների մեծ մասը, ում դիմում ենք խորհրդի համար:

Արդի բառարանների մեծ մասը շարունակում է որպես բառի առաջին սահմանում նշել հենց այն իմաստը, որ «Գարդիանը» գերադասում է՝ «զգվելի՝ չափազանց քծնանքի, ստրկահաճության կամ ցուցադրական սիրո պատճառով» (Օքսֆորդ), «Չափազանցված կամ կեղծ, հատկապես՝ տհաճ կամ անճաշակ կերպով» (Բոլինգ), «հուզական կամ քծնական՝ տհաճ լինելու աստիճան» (Բլումզբերի):

Ջեյմս Մարրին նշում է, թե ինքը բառօգտագործման դեղատոմսեր չի տալիս, ընդ որում՝ դա ասում է անշահագրգիռ հնչերանգով: Ախ անշահագրգիռ, դա ուրիշ բան...

# ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ՈՉ ԱՅՆՔԱՆ ՀԱՅՏՆԻՆԵՐԻՆ ՃԱՆԱՊԱՐՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Երկուշաբթի, 21 նոյեմբերի, 2005*

Անհետաքրքիր կյանք չի լինում: Սա առաջին բաներից էր, որ մենք արագ հասկացել էինք այն երեկոյան թերթում, ուր ես սկսել եմ իմ աշխատանքը: «Գարդիանի» մահախոսականի էջերի «Ուրիշ կյանքեր» բաժինը նույն այս սկզբունքի վրա է հիմնված. ոչ թե Օրվելի ասած՝ «Բոլոր կյանքերը հետաքրքիր են, բայց որոշ կյանքեր՝ մյուսներից ավելի», այլ թե բոլոր կյանքերը հետաքրքիր են ու վերջ:

Բաժինը «Գարդիանի» խմբագրի առաջարկությամբ մտցված նորամուծություն էր եւ համընկել էր թերթի ֆորմատը փոխելու հետ: Մահախոսականների բաժնի լրագրողներից մեկի արտահայտությամբ՝ «Լավագույն «Ուրիշ կյանքերը» անկանոն են, նույնիսկ խճճված, ու երբեմն էլ սենտիմենտալ, բայց չէ որ հենց այդպիսին է կյանքը (իմը որ՝ հաստատ)»:

Լավ արվելու դեպքում դրանք մեզ շրջապատող կյանքն ավելի մոտից ու ավելի վառ են արտացոլում, քան այն էջերը, որ պատմում են մեծ մասամբ մեծերի ու լավերի եւ երբեմն միայն վատերի, մեծ մասամբ հայտնիների ու երբեմն միայն վատահամբավների մասին:

1995-1997 թվականների ընթացքում, երբ ես մահախոսականների խմբագիր էի, Դարթինգթոնի լորդ Յանգը, որին իր 2002թ. մահախոսականում «Գարդիանը» բնութագրելու էր իբրեւ «սոցիալական գաղափարների ու հաստատությունների մեծ սերմնացան», ինձ մի քանի անգամ համոզեց համաման առաջաբան գրել: Նրա կարծիքով՝ փառքի արժանանալու հավանականությունն չունեցած մարդիկ հեռու էին մնում ոչ միայն «Գարդիանի», այլեւ բոլոր կենտրոնական թերթերի ուշադրությունից: Սակայն պարզվեց, որ այս ուրիշ կյանքերի մասին տեղեկանալը, ինչպես նաեւ դրանց մասին գրել կարողանալու չափով խնդիրը իմացող մեկին գտնելը արտակարգ

դժվար հարցեր են: Պարզ ասած՝ ես այդ ուղղությամբ քիչ թե շատ առաջ գնալ չկարողացա:

Ահա թե ինչու ես այդչափ հիանում եմ «Գարդիանի» մահախոսականների ներկայիս թիմով, որն այդքան աշխուժացրել է էջը: Այդ թիմից մեկն ասաց ինձ՝ «Ուրիշ կյանքերի» հարցում ես նախապես մի քիչ հոռետես էի, բայց հիմա ոգեւորված եմ»: Նրա կարծիքով՝ այդ նյութերի մեծ մասը իսկապես հիշվող են, հաճախ դրանք արտակարգ ժամանակներում ապրված կյանքերի զարմանալի պատմություններ են. գերմանացի կաթուղիկ մի կին, որի ամուսինը, մինչ ինքը հղի էր, զոհվել էր ռուսական ճակատում, իսկ մայրը մահացել էր պատերազմի վերջում, երբ իր նստած գնացքը ռմբակոծվել էր RAF-ի (Թագավորական օդուժի) կողմից, Եվա Պեյրոնի հետ պարած մի օդաչու, Չարոլդ Վիլսոնի անձնական թիկնապահ սպան... Պատմություններ կան նաեւ մարդկանց մասին, ովքեր իրենց կյանքը նվիրել են, ասենք, դայակությանը կամ երեխաների ու սովորելու դժվարություններ ունեցող մեծահասակների շահերի պաշտպանությանը:

Պատվերների խմբագիրը ավելացնում է. «Չհաջողված նյութերը մեծ մասամբ մանր աստղերի մասին են, ուն հեղինակը չի ճանաչում: Հենց նյութի հերոսի լավ իմացությունից է գալիս «Ուրիշ կյանքեր» բաժնի լավ նյութերի ուժը»:

Այստեղ կանոնները մի փոքր տարբեր ու ավելի ճկուն են, քան թերթի հիմնական բաժնի մահախոսականներում, որ հիմնականում ավելի երկար ու լրիվ եւ ժամանակագրորեն կանոնավոր են: «Ուրիշ կյանքերի» մահախոսականները կարող են գրված լինել, օրինակ, հարազատի կողմից (բայց այս հանգամանքը պետք է որեւէ կերպ նշված լինի): Բաժնում սա համարում են իրենց ուժեղ կողմը, ոչ թե՝ թերություն:

Ընթերցողների ոչ մեծաքանակ մի խումբ հարցականի տակ է առնում «Ուրիշ կյանքեր» բաժնի հիմքում ընկած առանցքային դրույթը՝ հարց տալով, թե՞ ասում են մահը մեծ հավասարեցնող է, իսկ գուցե՝ ո՞չ: Բաժնի խմբագիրներից մեկն, օրինակ, այն կարծիքին է, որ բաժնի գոյությունն ինքնին էլիստիստական է՝ փաստորեն մեռածներին երկու կարգի է բաժանում: Նա ասում է, թե ինքը նույնիսկ այսպիսի կատակ է լսել՝ «Ախ, Աստված, երանի կյանքս «Ուրիշ կյանքերով» չավարտվեր»:

Նա նույնիսկ խոստովանում է, թե բաժնի գոյությունը մարդկանց դրդում է թերթին ֆինանսական օգնություն ցույց տալ, որը հակառակ դեպքում, ինչպես ինքն է ասում, «լույս աշխարհ չէր գա»: Մեկ ուրիշ լրագրող առարկում է. «Էլիտիստական լինելու մեղադրանքին ի պատասխան պետք է ասել, որ սյունակը շատ սիրված է: Բազմաթիվ մարդիկ, թե թերթի աշխատողներից, թե դրսից, այն գնահատել են իբրև նոր «Գարդիանի» հաջողված բաժիններից մեկը»: Միայն մի քանի հոգի են՝ մահախոսագիր դառնալու հավակնորդներից, որ առարկում են որեւէ մեկին հատուկ շիրմաքար հատկացնելուն:

Մենք այստեղ անմահության մասին չենք խոսում (Յերման Մելվիլն ասում է՝ «անմահությունը ժամանակի մեջ ամենուր լինելն է»), այլ մահացողին հիշատակի փոքրիկ ժեստով ճանապարհ դնելու:

# ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ՕՍԲՈՒԴՍՍԱՆԻ ՀԱՆԴԵՊ ԱՃՈՂ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Երկուշաբթի, 14 նոյեմբերի, 2005*

Ես վերջերս Մադրիդում մասնակցեցի լրատվական կազմակերպությունների ինքնակարգավորմանը նվիրված համաժողովի, որ հրավիրել էր Իսպանիայի Մամուլի միավորումների ֆեդերացիան: Համաժողովի հիմնական նպատակներն էին՝ ստեղծել երկրի առաջին համազգային էթիկական կանոնագիրը թերթերի համար, գործնական խորհուրդներ լսել Միացյալ Թագավորության Մամուլի դեմ բողոքների հանձնաժողովի մի խումբ անդամներից, ինչպես նաև՝ քննարկել ինքնակարգավորման այլ ձևեր, ներառյալ օմբուդսմանը:

Ինքնակարգավորումը անհրաժեշտ է համարվում ավելի ու ավելի շատ երկրներում, ավելի ու ավելի շատ թերթերի, ռադիո եւ հեռուստատեսային ցանցերի կողմից, ինչը մասամբ պայմանավորված է լրատվամիջոցների աշխատանքի միջավայրի փոփոխմամբ: Մասնավորապես, էլեկտրոնային փոստի զարգացումը արագ ու հեշտ մուտքի եւ պատասխանի ակնկալիքներ է ծնել, եւ լոբբիները երբեմն փորձում են ճնշում գործադրել ուղարկված նամակների բազմաքանակությամբ, երբեմն շտապեցնելով այնպիսի դեպքերում, որոնք հակառակը՝ հանգիստ կշռադատում են պահանջում:

Իսպանիան այսօր միայն էթիկական կանոնագիր չէ, որ ունի: Նա նաև օմբուդսմաններ ունի իր երեք առաջատար թերթերում՝ «Էլ Պաիսում», «Լա Վանգարդիայում» ու «Լա Վոզ դը Գալիցիայում», ի տարբերություն Բրիտանիայի, ուր օմբուդսմանն անսովոր բան է:

Օմբուդսմանը անկախ կերպով աշխատում է լրատվամիջոցի ներսում՝ մի կողմից ընթերցողի, ունկնդրի կամ հեռուստադիտողի, մյուս կողմից՝ լրագրողի եւ խմբագրի հանդիպման կետում: Սա ինքնակարգավորման այն միակ ձեւն է, որ վստահություն է ստեղծում կոնկրետ լրատվամիջոցի եւ դրա



լսարանի միջև: Դա արվում է բողոքների պարբերական ու անկողմնակալ քննությամբ, ինչպես նաև՝ ընթերցողի բարձրացրած հարցերի բաց քննարկումով: Այն իրական հնարավորություն է տալիս նոր ու ավելի ուժեղ կապ ստեղծել լրագրողի ու ընթերցողի միջև:

Լրատվամիջոցն իր օմբուդսմանն է նշանակում, եթե ուզում է ինքնաուղղումով զբաղվել՝ շահագրգռված լինելով, որ իրեն ճիշտ հասկանան եւ ոչ թե սխալ: Կամ ինչպես ամերիկյան իմ գործընկերներն են ասել՝ դու ուզում ես հանրային բանավեճի ասպարեզ մտցնել ճշգրիտ տեղեկատվություն, որի վրա քաղաքացին կարող է հենվել՝ օրվա իրողությունների մասին կարծիք կազմելիս:

Այս ուղղությամբ առաջին քայլը շատ պարզ է, եւ այն լավ կլինի որ ուղեկցվի, բայց պարտադիր չի, որ ուղեկցվի օմբուդսմանի նշանակումով: Այդ քայլը ուղղումների կամավոր ու պարբերական հրապարակումն է, որ թերթի դեպքում շատ հեշտ է անել, իսկ ռադիոհեռուստահաղորդումների դեպքում վերջերս է հեշտ դարձել՝ դրանց կայքէջերի ստեղծումով: Հարկավոր է ուղղակի նայել, թե ինչպես է BBC-ն իր կայքէջն օգտագործում այս նպատակով:

Ինչո՞ւ լրատվամիջոցները դժկամությամբ են այս քայլը կատարում: Իսպանական առածն ասում է՝ նա է միշտ ճիշտ, ով միշտ կասկածում է, թե սխալ է անում: Ես միայն կարող եմ ենթադրել, որ հիշյալ դժկամության պատճառը ավանդական նախապաշարումն է, թե սեփական սխալը խոստովանելը վնասակար է հեղինակության համար, եւ համառությունը, որով այս նախապաշարումը պոկ չի գալիս լրագրողներից, թեւեւ նման բան փաստող ոչ մի վկայություն չկա, իսկ հակառակը փաստող վկայություններ կան:

Իմ համոզմամբ՝ ընթերցողի, ունկնդրի կամ հեռուստադիտողի մեջ լրատվամիջոցի հանդեպ վստահությունը խաթարում է ոչ թե սխալի ընդունումը, անգամ եթե այն շատ լուրջ բնույթ ունի, այլ չուղղված նշանակալի սխալի հայտնաբերումը, բացահայտումը, կամ ստիպված ընդունումը: Ընթերցողին ուղղված իմ անկեղծ խորհուրդն է՝ երբեք մի վստահեք թերթին, որ ձեւացնում է, թե երբեք սխալ չի անում, իսկ մյուսներին վերաբերվեք ըստ ձեր փորձառության հուշած թերահա-

վատության աստիճանի: Թերթում աշխատած ցանկացած լրագրող գիտի, որ նկարն առանց բծերի չի լինում: Նույնը կարելի է ասել ռադիո-հեռուստատեսության հաղորդումների մասին: Մեր աշխատանքի դեպքում սա անխուսափելի է:

Ինքնակարգավորման միջոցով վստահությունն ամրապնդելու ցանկությունը կարող է շատ ուժեղ լինել դժվար կամ բարդ քաղաքական ժառանգություն ունեցող երկրներում: Նման ցանկության կողքին երբեմն կա հիմնական մղումը՝ լրատվամիջոցները պաշտպանել իշխանությունների միջատությունից: Օմբուդսմանի հաստատությունը կատարելապես համատեղելի է համազգային կամ մասնագիտական վերահսկիչ մարմնի հետ, ինչպիսին է Մամուլի դեմ բողոքների հանձնաժողովը Բրիտանիայում: Մտածող մարդիկ ցանկանում են ունենալ պատասխանատու, արագ արձագանքող ու հաշվետու լրատվամիջոցներ: Իմ կարծիքով օմբուդսման ունենալը դրան հասնելու մի ճանապարհ է:

# ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ԹԵՐԹԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՀԵՏ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՃԻ ՄԱՍԻՆ

*Երկուշաբթի, 7 նոյեմբերի, 2005*

Անցած տարվա ընթացքում, որ ութերորդն էր «Գարդիանուն» իմ ընթերցողների խմբագիր կամ ռեզիդենտ օմբուդսման նշանակվելուց ի վեր, իմ (փոքրիկ) բաժինը ռեկորդային թվով զանգեր ու բողոքներ է ստացել ընթերցողից, եւ մենք էլ տպագրել ենք ռեկորդային թվով գրառումներ՝ ուղղումների եւ պարզաբանումների ամենօրյա սյունակում: Սրա ազդեցությունը թերթի վրա՝ քննության արժանի խնդիր է:

Մինչ ես գրում եմ այս տողերը՝ մենք դեռ հաշվում ենք, սակայն շատ հավանական է, որ այս տարվա ընթացքում ստացված իմակների, զանգերի ու նամակների թիվը անցնի 12 000-ից՝ երկու անգամ ավելի շատ, քան 1997թ. նոյեմբերի 5-ին իմ նշանակվելուց հետո առաջին տարում: Իսկ նախորդ՝ մինչ 2004թ. նոյեմբերն ընկած տարվա համեմատ այն ավել է 2 000-ով: Ինչ վերաբերում է ուղղումներին ու պարզաբանումներին՝ արդեն ավարտված տարում, ապա դրանք 1 666-ն են՝ անցած տարվա թվից 50-ով ավելի:

Նկատենք, որ եթե առաջին տարիներին ուղղումների հարաբերակցությունը ընթերցողի ուղարկած իմակներին ու զանգերին 1 : 5 էր, ապա այս տարի այն 1 : 7-ի եւ 1 : 8-ի արանքում է: Ուղղումների թիվը նամակների ու զանգերի համեմատ ավելի քիչ է ավելացել մի քանի պատճառով: Դրանցից մեկն այն է, որ ձեզանից շատերը նույն բաների դեմ են բողոքում: Հիմնական պատճառն այն է, սակայն, որ մեր ուղղումները կարծես թե հասել են մեր հնարավորությունների առավելագույն սահմանին, եթե կարելի է այդպես արտահայտվել:

Գնալով ավելի ու ավելի անհրաժեշտ է դառնում ուղղումների մեջ դասդասում կատարել՝ գերապատվություն տալով

իրապես «նշանակալիներին», որպեսզի դրանք անհրաժեշտ ուշադրության արժանանան: Իսկ սա իր հերթին նշանակում է, որ ես ավելի ու ավելի հաճախ եմ դիմում իմ գործընկերներին՝ խնդրելով իմ աշխատանքի մի մասն իրենց վրա առնել: Ես մի անգամ արդեն նշել եմ, որ ուղղումների հետ գործ ունենալիս ես իմ գլխում երեւակայական հորիզոնական գիծ եմ գծում: Գծից վերել զրպարտությունն է, փաստերի աղավաղումը, էականորեն սխալ մեջբերումները եւ այլն՝ բաներ, որ անհանդուրժելի կերպով վատաբանող են կամ ոչ ճշգրիտ՝ ճշմարտությանը լուրջ հարված հասցնելու աստիճանի: Գծից ներքել՝ պակաս լուրջ անթիվ զանցանքներ են՝ սխալ տառադարձված անուններ, տեղագրական կամ աշխարհագրական սխալներ, որ հաճախ, հավատացեք, խիստ տհաճություն են պատճառում, բայց ասվածի իմաստը չեն խաթարում:

Չենց երկրորդ խմբի սխալներն են, որ հաճախ ուղղումների սյունակ չեն մտնում: Ես սա հիշատակում եմ՝ փորձելով մեղմել հուսախաբությունը, որ գիտեմ՝ ձեզանից ոմանք դրա պատճառով ապրում են: Սակայն դա անխուսափելի է, եթե նկատի ունենանք, որ սեպտեմբերից թերթի «Բեռլիներ» ֆորմատի անցնելուց ի վեր իմ ստացած իմակների, զանգերի ու նամակների ծավալը կտրուկ ավելացել է՝ համապատասխան լինելով տարեկան 25 000-ի, ինչն անցած տարվա ռեկորդային ցուցանիշից երկու անգամ ավել է:

Սա կարելի է վերագրել մի քանի գործոնների: Նախ եւ առաջ՝ «Գարդիանը» ամեն ինչ անում է, որ ընթերցողը հեշտությամբ կարողանա մեկնաբանել իր նյութերը կամ բողոքել դրանց դեմ, եւ այս իմաստով աշխարհում նրանից առաջ են մեկ-երկու թերթ: Այս հանգամանքն էլ ավելի խորացավ այն բանից հետո, երբ թերթն անցավ նոր ֆորմատի, ուր իմ հասցեները տպագրվում են ամեն օր՝ հեշտ տեսանելի 2-րդ էջում: Ձեր մեծ նասին կապի նման հեշտությունը դուր է գալիս (համաձայն անցած շաբաթվա իմ սյունակում հիշատակված հարցման): Մեկնաբանությունների ու բողոքների աճի մյուս պատճառը թերթի շրջանառության ավելացումն է: Հավանական է, որ ընթերցողների մի զգալի մասն առաջին անգամ է վայելում բողոքելու հաճույքը:

Ասվածից բնավ չպետք է եզրակացնել, թե «Գարդիանը» միակն է, որ սխալներ է անում, կամ էլ թե այն ուրիշ թերթերից ավելի է սխալներ անում (հակառակ, որ ժամանակին այն վաստակել էր «Գրոնյադ» մականունը<sup>3</sup>): Նախ եւ առաջ՝ բոլորս էլ գիտենք, որ սխալ անում են բոլոր թերթերը: «Դեյլի միտորը», որ ընթերցողական խմբագիր ունեցող միակ ավանդական թաբլոյդն է Բրիտանիայում, նույնպես ուղղումների սյունակ է պահում, ցույց տալով, որ ոչ մի թերթ սխալներից ապահովագրված չէ: Եվ ապա՝ «Գարդիանի» չափ կամ ավելի ծավալուն լրագրերը հավանաբար նույնչափ սխալներ են անում: Վերջին տարիներից մեկում ԱՄՆ առաջատար թերթերից մեկը 1 000-ով գերազանցել էր «Գարդիանի» ողջ ուղղումների թիվը:

«Գարդիանի» բոլոր լրագրողներին խորհուրդ է տրվում ուշադիր լինել ուղղումների սյունակի նկատմամբ: Ավելին՝ շաբաթներ առաջ ես գրութուն ուղարկեցի խմբագրակազմի բոլոր անդամներին՝ տեղեկացնելով, որ նրանք բոլորն իրենց իսկ գրասեղանի առջև նստած կարող են անմիջապես ծանոթանալ ինձ հասցեագրված ընթացիկ իմականերին: Այսպիսով՝ ինձ ուղղված բոլոր բողոքները, բացի գաղտնիություն պահանջողներից, անմիջապես տպագրվում են ողջ խմբագրակազմի համար:

Այս բոլորի նպատակն է՝ համակարգը դարձնել հնարավորինս բաց՝ բոլոր ուղղություններով:

---

<sup>3</sup> Մականվան իմաստն այն է, թե «Գարդիանը» սխալ է տառադարձում իր իսկ անունը. ժամանակին թերթն իսկապես հայտնի է եղել իր էջերում վրիպակների շատությամբ: (Ծան. թարգմ.)

**ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ...  
ԱՌՒԴԻՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՓՈՐՁՈՒՄ Է  
ՊԱՐՁԵԼ ՄԵՐ ԱՐԱԾԻ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՄԵՐ ՔԱՐՈԶԱԾԻՆ**

*Երկուշաբթի, 31 հոկտեմբերի, 2005*

«Գարդիանը», միակը լինելով բրիտանական թերթերի մեջ, ամեն տարի սոցիալական, էթիկական ու բնապահպանական աուդիտ է անցկացնում, անկախ արտաքին աուդիտորի միջոցով քննելով իր իսկ վարքը՝ որպես ընկերություն: Այս տարվա աուդիտը երրորդն էր ու վերաբերում էր «Բեռլիներ» ֆորմատի անցնելուն, դրա կրկնօրինակն այս առավոտ բաժանվեց աշխատակազմի բոլոր անդամներին, իսկ ամբողջ տեքստը դրված է «Գարդիանի» կայքէջում, որպեսզի դուք կարողանաք ուսումնասիրել այն:

Նախորդների նման, այս տարվա աուդիտը եւս հետաքրքիր վերնագիր ունի՝ «Ապրելով մեր արժեքները», եւ դարձյալ նախորդների նման, այն վերաբերում է ոչ միայն «Գարդիանին», այլեւ «Օբզերվերին» ու Guardian Unlimited կայքէջերի ցանցին: Այն մանրամասն կերպով կանգ է առնում «Գարդիանի» լրագրության վրա՝ երկու թերթերի խմբագիրների եւ ընկերության գործադիր ղեկավարի բնութագրմամբ՝ այս «կարեւորագույն» տարում:

Ձեկույցի նախաբանում եւ մի քանի այլ տեղ վճռականություն է հայտնվում՝ ապահովելու լրագրության հիմքում ընկած լիբերալ արժեքների անխաթարությունը փոփոխություններից հետո: «Գարդիանի» համար այս արժեքները սահմանված են իբրեւ «ազնվություն, մաքրություն (շիտակությունն անվանելու մեկ այլ եղանակ), խիզախություն, արդարամտություն, ընթերցողի ու համայնքի առաջ պատասխանատվություն»: Ձեկույցում մեկ այլ տեղ «Գարդիանի» խմբագիրը հա-

վաստում է թե՛ «Մենք չենք պատրաստվում փոխել մեր ընդհանուր քաղաքական աշխարհայացքը. մենք մնում ենք ազատական, առաջադիմական միջազգայնական օրաթերթ»։ Իսկ «Գարդիանի» քաղաքական էջերին վերաբերող բաժնուն քաղաքական խմբագիրը նշում է, որ իրենց դիրքորոշումն է միշտ եղել ազատական ավանդույթին հավատարիմ անկախ լրագրություն վարելը, միաժամանակ զերծ մնալով կուսակցական կողմնապահությունից:

Ավանդված արժեքներին տրվող կարելությունը շեշտելու համար նախաբանում մեջբերվում է Ջոզեֆ Պուլիտցերի կողմից մեկ դար առաջ արտասանված զգուշացումը. «Ցինիկ ու ծախուս դեմագոգիկ մամուլը ժամանակի ընթացքում ծնունդ է տալիս իր նման ստոր մարդկանց»: Ավելի լավ դժվար թե հնարավոր լիներ արտահայտել այն միտքը, որ այս հարցում մենք՝ ընթերցողներս ու հեղինակներս կապված ենք իրար, դրանով իսկ փաստարկելով մեր միջեւ բաց ու անկեղծ երկխոսության անհրաժեշտությունը:

Ձեկույցում մեջբերված վերլուծության արդյունքներում հետաքրքիր հակադրություններ կան: Օրինակ, Հասարակական կյանքի չափորոշիչների կոմիտեի համար անցկացված հարցման արդյունքներով, հարցվածների ընդամենը մեկ երրորդն է հիմնականում վստահում բարձրակարգ թերթերում իր կարդացածին (ինչ վերաբերում է սիրված թափլոյդներին, դրանց հանդեպ վստահությունը 7% է): Հատուկ սոցիալական աուդիտի համար անցկացված հարցման շրջանակներում «Գարդիանի» ավելի քան 3 000 ընթերցողի ուղղված հարցումը ցույց է տալիս, որ նրանց 86%-ը հիմնականում արժանահավատ է համարում թերթի լրատվությունը (թեև նրանց մեջ 17%-ը, որ փոքր թիվ չէ, այն նաեւ որոշ իմաստով կողմնապահ է համարում): Ենչող մեծամասնությունը՝ 78%, նաեւ կարծում է, որ «Գարդիանը» հանրային ոլորտ է բերում այնպիսի տեղեկատվություն, որն այլապես գաղտնի կմնար:

Համարյա նույնքան մարդ՝ հարցվածների 77%-ը, այո է պատասխանել հետեւյալ հարցին. «Արդյո՞ք ընթերցողների խմբագրի գոյությունը ձեզ զգալ է տալիս, որ թերթը ուշադիր

է ձեր տեսակետների ու կարծիքի նկատմամբ»: Ընթերցողի հանդեպ ուշադիր լինելու եւ բողոքներին արագ արձագանքելու «Գարդիանի» ջանքերի հետ է կապված հավանաբար այն փաստը, որ 2004 թվին ՄԲՀ-ի ստացած բողոքներից եւ ոչ մեկը «Գարդիանի» դեմ չի եղել:

Շատերին հիշյալ աուդիտը զարմանալի է թվում նրանով, որ այնտեղ բացահայտված են «Գարդիանի» սովորաբար քիչ քննարկվող բաժինների աշխատանքին վերաբերող մանրամասներ: Խոսքը վերաբերում է թերթի գնումների քաղաքականությանը (օրինակ՝ թուղթ գնելու հարցում), աշխատակազմի կատարած թռիչքների հասցրած բնապահպանական վնասը նվազագույնի հասցնելուն, թերթի ճամփորդական լրագրության ու գովազդի բնապահպանական հետեւանքներին, իրենց գրասենյակների շրջակա համայնքի կյանքին աշխատակազմի անդամների մասնակցությանը, իրավական հարցերի բաժնի աշխատանքներին եւ այլն:

Երեք տարի առաջ անցկացված առաջին սոցիալական աուդիտը ցույց տվեց, որ «Գարդիանին» նյութ տվողների մեջ որոշ անբավարարվածություն կա՝ կապված իրենց վճարի ուշացման հետ: Նման հանգամանքի կամավոր հրապարակումն, իհարկե, դրա վերացման խթան է, եւ բարեբախտաբար, հենց դա էլ տեղի ունեցավ: Ոչ-խմբագրական վճարումները նախկին 40 օրվա փոխարեն ասօր կատարվում են 30 օրում, իսկ արտահաստիքային լրագրողներն այժմ վարձատրվում են միջինը 9 օրում:



# ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ԿԱՅՔԷՋՈՒՄ ՅՈՂՎԱԾԻ ՈՂՋՈՒՆԵԼԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

*Երկուշաբթի, 24 հոկտեմբերի, 2005*

Այս տարվա ապրիլի 14-ին «Գարդիանն» իր մեկնաբանությունների էջում տպագրեց ազատ հետաքննող հեղինակ Դունկան Քամփբելի «Գաղտնի խումբը, որ բնավ գոյություն չուներ» հոդվածը: Դրա ենթավերնագիրն ասում էր՝ «Երեկվա դատավարության տապալումը ցույց տվեց Ալ Քաիդան Լոնդոնի «թունավորման հարձակումների» հետ կապելու փորձերի հետեւում թաքնված կեղծիքը»:

Պ-ն Քամփբելին, որին պետք չի շփոթել «Գարդիանի» աշխատակազմից համանուն լրագրողի հետ, խնդրել էին վկայություն տալ իբրեւ համակարգիչների ու հեռահաղորդակցության գիտական փորձագետ-վկա: Եվ նա կարողացել էր ցույց տալ, որ այն մի քանի փաստաթուղթը, որոնց մասին ասվել էր, թե դրանք ձեռք բերելու համար Աֆղանստանում ահաբեկչական պատրաստություն էր պահանջվում, իրականում կարող էին ձեռք բերվել Համացանցից՝ Միացյալ Թագավորության ցանկացած ինտերնետ-սրճարանում:

Ես մտադիր չեմ մտնել այս գործի մանրամասների մեջ: Միայն ասեմ, որ «Գարդիանի» հոդվածում Քամփբելը տվել էր Փորթոն դաունի ռազմական ուսումնասիրությունների հաստատությունից երկու գիտական վկայի անուն, որոնց ինքնությունը, պաշտպանության նախարարության հայտարարության համաձայն, պաշտպանված էր դատարանով: Նախարարությունը, նամակ ուղարկելով պ-ն Քամփբելին ու «Գարդիանին», զգուշացնում էր, թե Փորթոնի դաունի այն վկաների ինքնության բացահայտումը, որոնց անանունությունը պաշտպանվում է, կնշանակի արհամարհանք դատարանի հասցեին: Նամակում հատուկ զգուշացում կար հետագա բացահայտումների դեմ: Պ-ն Քամփբելը անընդհատ պնդում էր, թե ինքն անտեղյակ է եղել նման կարգադրության մասին:

Հաշվի առնելով պաշտպանության նախարարության նա-  
մակը, «Գարդիանն» անմիջապես հանեց հողվածն իր կայ-  
քից: Սա արվեց իրավաբանների խորհրդով, որոնք գտան, որ  
հարկ կա քննել իրավիճակն ու մասնավորապես ձեռք բերել  
խնդրո առարկա կարգադրության կրկնօրինակը: Այն Հանրա-  
յին իրավունքի պաշտպանվածության հավաստագրի (PII)  
ծեւն ուներ, դատարանին էր հանձնվել պաշտպանության նա-  
խարարի անունից եւ ստացել էր դատավորի հավանությունը:  
Պէ իրավական բաժանմունքի նամակը նշում էր, որ իրենց դի-  
մումն հիմքում ընկած է վկաների անվտանգությունը «դեպքի  
հետ չկապված անձանցից» պաշտպանելը:

Հակառակ բազմակի խնդրանքներին, պաշտպանության  
նախարարությունն ու Դատական հետապնդումների թագա-  
վորական ծառայությունը «Գարդիանին» չտրամադրեցին  
կարգադրության կրկնօրինակը: Սակայն թերթի իրավաբան-  
ները խոսեցին մեղադրողի եւ պաշտպանության փաստա-  
բանների հետ, որոնք հաստատեցին այն փաստը, թե դատա-  
վորը հավանություն է տվել Փորթոն դաունի վկաների ինքնու-  
թյունը պաշտպանելուն վերաբերող դիմումին: Արդյունքում,  
այդ վկաների անունը չէր տրվում բաց դատավարության ժա-  
մանակ, եւ ցուցմունք տալիս երդվյալ ատենակալները նրանց  
դեմքը չէին տեսնում: Դատարանի մամուլի սենյակում ոչ մի  
կարգադրություն չկար փակցված (ինչը սահմանափակումնե-  
րի դեպքում սովորաբար արվում է), եւ պ-ն Քամփբելն այդ ըն-  
թացքում դատարանում չէր եղել:

Հոդվածը նորից վերադարձվեց կայք, բայց այս անգամ  
Փորթոն դաունի գիտնական-վկաների անանունությունը  
պահպանված էր: Պ-ն Քամփբելն ասում է. «Անունները հանե-  
լով նյութը բոլորովին չի տուժել»: Վերականգնված տարբե-  
րակի վերելում հետեւյալ նշումը կա. «Ուղղված տարբերակ.  
այս հողվածը վերականգնվել է կայքում՝ իրավական բողոքի  
պատճառով հանվելուց եւ ուղղվելուց հետո»:

Հոդվածը հանելու եւ ապա օրերս վերականգնելու արան-  
քում ընկած վեց ամիսների ընթացքում երեւան են եկել «դա-  
վադրության տեսության» մի քանի տարբերակներ: Մասնա-  
վորապես, «Գարդիանը» մեղադրվում է պաշտպանության  
նախարարության D գրության հետեւանքով իր դիրքերը զի-  
ջելու մեջ: Իրականում 1993թ. ի վեր D գրություններ չեն գր-

վում: Այդ տարի դրանք փոխարինվեցին DA գրություններով՝ Պաշտպանության նախարարության խորհրդատվական գրություններ: Դրանք հինգն են եւ բոլոր հինգն էլ կարելի է գտնել [www.dnotice.org.uk](http://www.dnotice.org.uk) կայքում: Դրանք խորհրդատվական բնույթ ունեն, եւ համակարգի համար պատասխանատու հանձնաժողովը պարտադրող ուժ չունի: Այն ոչ մի կերպ չի մասնակցել Դուռնկան Քամփբելի հողվածի հետ կապված գործին:

«Գարդիանը» սովորաբար մեծ ջանքեր է թափում իր նյութերը շրջանառության մեջ պահելու համար: Բայց, միեւնույն է, առաջանում են հարցեր՝ արդյո՞ք որեւէ նյութ հանելու դեպքում պատճառն արագ բացատրվում է, արդյո՞ք հանված նյութը հնարավորինս շուտ է վերականգնվում, եւ արդյո՞ք այդ դեպքում բացատրվում է, թե ինչու հողվածը հանկարծ նորից հայտնվեց: Դուռնկան Քամփբելի հողվածի հետ կապված դա առաջին անգամ արվեց:

# ԶԻՆԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՍԱԾՆ ՈՒ ՊԱՏՄԱԾԸ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ԾՆՇՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ ԼՐԱԳՐՈՂԻ ԿԱՏԱՐԱԾ ՍԽԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Երկուշաբթի, 17 հոկտեմբերի, 2005*

Անցած երեքշաբթի «Գարդիանի» ուղղումների սյունակում հետեւյալ գրությունը հայտնվեց. «Մեր հրապարակման մեջ, որ վերնագրված էր «Նրան այնքան ծեծեցին, մինչեւ անշնչացավ. համազգեստավորների խումբը Չինաստանում հարձակվել է ժողովրդավարության մարտիկի վրա եւ ծեծելով հասցրել մահվան» (առաջին էջ, հոկտեմբերի 10), մենք հաղորդել էինք, թե Լու Բան-Լին՝ ժողովրդավարության մարտիկ, այնպես էր ծեծվել, որ «աչքը դուրս էր ընկել ակնախոռոչից» եւ «վզի ջլերը կտրվել էին»: Սակայն հետագա հաղորդումներից պարզ դարձավ, որ պ-ն Լուի վնասվածքները նախապես ասվածի չափ լուրջ չեն եղել: Մասնավորապես, հոկտեմբերի 12-ի 3-րդ էջի «Չինացի ակտիվիստը, հակառակ ծեծին, երդվում է շարունակել պայքարը» նյութում խոսվում էր պ-ն Լուի տված հարցազրույցի մասին, ապա ասվում էր, թե «չնայած նրա վիզը ցավում էր, բայց այն չէր ջարդվել եւ աչքն էլ խոռոչից դուրս չէր ընկել»: Ես ինքս իմ հերթին մի գրություն ավելացրի, նշելով, որ հիշյալ հաղորդումների միջեւ եղած հսկա տարբերությունը կդառնա իմ այսօրվա սյունակի թեման:

Կոպիտ սխալներ ու չափազանցություններ պարունակող սկզբնական հաղորդումը գրվել էր Շանհայում «Գարդիանի» նոր նշանակված թղթակից Բենջամին Ջոֆ-Վոլտի կողմից: Պ-ն Ջոֆ-Վոլտը 25 տարեկան է: Իր լրագրողական հիմնական փորձառությունը հարավաֆրիկյան «Դիս դեյ» թերթում աշ-

խատած վեց ամիսն է՝ մինչեւ 2004թ. նոյեմբերին թերթի փակվելը, եւ մի որոշ ժամանակ էլ եղել է բրիտանական «Սանդի թեւեգրաֆի» արտահաստիքային թղթակից: Այս վերջին թերթի համար նա նյութեր էր ուղարկում ողջ Աֆրիկայից, այդ թվում Դարֆուրից: Այդ ընթացքում ստացել է մրցանակներ՝ Լոնդոնի Օտարերկրյա մամուլի միավորման Երիտասարդ լրագրողների մրցանակը անցած տարվա նոյեմբերին, եւ CNN-ի Տարվա աֆրիկյան լրագրողի մրցանակն այս տարվա սեպտեմբերին: Նա եւ երկրորդն է եղել երկու այլ մրցանակաբաշխություններում: «Գարդիանի» համար սկսել է աշխատել սեպտեմբերի 1-ից:

Իր աշխատանքային պայմանագիրն ստորագրելուց ընդամենը 5 շաբաթ անց, որպէս «Գարդիանի» չինաստանյան թղթակից Ջոնաթան Վոթսին փոխարինող, նա գնում է Թայշի, որ գտնվում է Չինաստանի հարավում եւ նրա թղթակցություններում նկարագրված է իբրեւ «հասունացող գյուղացիական ապստամբության կենտրոն»: Ճանապարհին նրան ուղեկցում էին տեղական մի վարորդ, Շանհայից բերված մի թարգմանիչ եւ Լու Բան-Լին: Պ-ն Լուն համառորեն գալիս է նրանց հետ մինչեւ Թայշի, թեւ նրան, Ջոֆ-Վոլտի պատմելով, երեք անգամ խնդրում են իջնել մեքենայից: Ջոֆ-Վոլտի հաղորդման մեջ, որ դրված է «Գարդիանի» կայքում, խիստ պատկերավոր կերպով պատմվում է այնտեղ կատարվածը: Պ-ն Լուին քաջքշելով դուրս են հանում մեքենայից ու դաժանորեն ծեծում: Վարորդը, թարգմանիչն ու Ջոֆ-Վոլտը փակվում են մեքենայում՝ ապահովության համար: Մինչ այդ Ջոֆ-Վոլտը հասցնում է պատուհանից բռունցքի հարված ստանալ: Խմբին ձերբակալում են ու հարցաքննում, եւ նրանք համոզված են լինում, թե պ-ն Լուն մահացել է:

24 ժամ հետո հասնելով Շանհայ, Ջոֆ-Վոլտը թերթին է ուղարկում դեպքի ակնառեսի իր առաջին հաղորդումը: Շտապելով նյութը հասցնել երկուշաբթի օրվա թողարկմանը, նա գիտակցության հոսքի սկզբունքով գրված մի ազդեցիկ պատմություն է գրում՝ 3 500 բառ, որի թերթային, մեծապես կրճատված տարբերակում ասվում էր. «Գլուխս պտտվում էր: Ես շոկի մեջ էի՝ թե պ-ն Լուի հետ պատահածից, թե սեփական կյանքի համար վախից»:

Նյութն ուղարկվել է թերթի համապատասխան բաժին վերջնաժամկետից մեկ ժամ առաջ, ինչը դրա վրա աշխատելու քիչ ժամանակ էր թողնում: Լոնդոնից Ջոֆ-Վոլտին հարցեր չեն ուղղվել՝ իր նկարագրածի մանրամասների հետ կապված: Նրան չեն հարցրել՝ ինքը պ-ն Լուից ինչ հեռավորության վրա էր՝ երբ վերջինիս ծեծում էին: Չեն հարցրել՝ որչափ հստակորեն է ինքը տեսել դեպքերը, որոնց մասին պատմում է իբրև ականատես: Մյուս կողմից՝ Ջոֆ-Վոլտը չի հաղորդել բաժնին այն հոգեվիճակի մասին, որում գտնվում էր նյութը գրելու ժամանակ: Այն ժամանակ նա դեռ համոզված էր, թե պ-ն Լուին մահացել է: Սրան ես դեռ կվերադառնամ:

Երբ պարզ դարձավ, որ պ-ն Լուին կենդանի է եւ իր ստացած վնասվածքները նկարագրվածին չեն համապատասխանում, ընթերցողների զգացած ուրախությանը խառնվեց լուրջ անհանգստություն՝ կապված հաղորդման մեջ տեղ գտած կոպիտ սխալների հետ: «Գարդիանը» Ջոֆ-Վոլտին հետ կանչեց Լոնդոն Դոնկոնգի վրայով. «Գարդիանի» դիվանագիտական խմբագիր Յուեն ՄաքԱսքիլը հատուկ ուղարկվեց այնտեղ՝ թղթակցի հետ զրուցելու: ՄաքԱսքիլն ու Վաթսը, որ արձակուրդից հետ էր կանչվել, զրուցեցին Թայշիում Ջոֆ-Վոլտի հետ եղած բոլոր մարդկանց հետ, այդ թվում պ-ն Լուի: «Գարդիանը» վերջինիս համար հատուկ բժշկական քննություն կազմակերպեց: Ոչ մի լուրջ վնասվածք չհայտնաբերվեց:

Բոլոր վկաները հաստատում էին, որ պ-ն Լուին դաժանորեն ծեծել են, եւ վերջինս ինքը դա ընդունում էր: Լոնդոնում «Գարդիանի» մի ամբողջ շարք խմբագիրներ զրուցեցին Ջոֆ-Վոլտի հետ: Իմ տպավորությամբ՝ նրանք բոլորը որոշակիորեն համակրել սկսեցին Ջոֆ-Վոլտին, հակառակ նրան, որ վերջինիս թղթակցության պատճառով թերթի հեղինակությունը Չինաստանում վտանգված էր:

Ես ինքս երկու անգամ զրուցեցի Ջոֆ-Վոլտի հետ, ընդհանուր հաշվով երեք ժամ, ու հիմա վստահորեն կարող եմ ասել, որ ճիշտ կլիներ դադարեցնել այն համընդհանուր դատապարտումը, որն այս դեպքում առաջին հայացքից արդարացված է թվում: Իր արածի, ինչպես նաեւ թերթի ու չինական ժողովրդավարական շարժման հեղինակության վրա դրա հնարավոր հետեւանքների համար բազմիցս ներողություն խնդ-

րելուց հետո Ջոֆ-Վոլտն ասել է. «Ես մի իրավիճակում էի հայտնվել, երբ կյանքումս առաջին անգամ մտածում էի, թե ուր որ է մեռնելու եմ»:

Ջոֆ-Վոլտի հետ զրուցելուց հետո ես նրան խորհուրդ տվեցի հանդիպել Դարթ կենտրոնից Մարկ Բրեյնի հետ՝ BBC-ի նախկին թղթակից, որը ներկայումս լրագրության եւ տրավմայի հարցերում մասնագիտացած հոգեթերապետ է (Ջոֆ-Վոլտն արդեն իսկ, «Գարդիանի» առաջարկությամբ, հետազոտվել էր մի կլինիկայում): Ես նույնիսկ ստացա Ջոֆ-Վոլտի թույլտվությունը՝ նրանց հանդիպումից հետո զրուցելու Մարկ Բրեյնի հետ՝ եթե վերջինս համաձայնի: Հանդիպումից հետո պ-ն Բրեյնը ոչ իմ կասկած չուներ, որ Ջոֆ-Վոլտի ապրած սարսափն ու անոթը, երբ իր ներկայությամբ պ-ն Լուին ծեծում էին, իսկ ինքը թաքնվել էր մեքենայում, նպաստել է տրավմատիկ ճնշվածության վիճակի առաջացմանը, որ շարունակվելիս է եղել խնդրո առարկա թղթակցությունը գրելիս: Պ-ն Բրեյնի խոսքերով. «Առկա է եղել անսովոր ուժգնության ճնշվածության վիճակ, որը Բենջամինի շուրջ ստեղծված իրավիճակում պատճառաբանված է... Նման վիճակում Ջոֆ-Վոլտը կորցրել է իրականության զգացումը»:

«Գարդիանն» անկասկած պետք է պաշտպանի իր հեղինակությունը: Թերթը նաեւ պարտավոր է հոգ տանել պ-ն Ջոֆ-Վոլտի մասին: Այս երկուսը համատեղել հնարավոր է:

*Բենջամին Ջոֆ-Վոլտը վեց ամիս Միացյալ Թագավորությունում աշխատեց «Գարդիանի» համար, ապա հեռացավ նախ ճամփորդելու, ապա ուսումը շարունակելու:*

# ԿԱՐԾԵՍ ԾԱՆՈԹ Է

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ԳՐԱԳՈՂՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Շաբաթ, 3 սեպտեմբերի, 2005*

Գրագողությունը տգեղ, վարկաբեկիչ բառ է, որը չպետք է շտապողաբար ու հեշտությամբ գործածել: Այս շաբաթ ես քննել եմ գրագողության երկու մեղադրանք «Գարդիանի» դեմ: Ապացուցվեց, որ դրանցից մեկը միանգամայն անհիմն էր: Երկրորդում խոսքը դատապարտելի, թեև տարածված, սխալի մասին էր. նյութի մի քանի հատվածների աղբյուրը չէր նշված:

Տվյալ հատվածների թե՛ լեզվից, թե՛ բովանդակությունից հեշտությամբ հասկացվում էր, թե որ հոդվածից են դրանք վերցված, այսինքն թե՛ դրանք պարունակում էին սկզբնաղբյուրի «ստորագրությունը» կրող բառակապակցություններ:

Հիշյալ բողոքին այս շաբաթվա Ուղղումների ու պարզաբանումների սյունակում առանձին գրություն էր նվիրված, ուր հիշատակվում էին երկու հոդվածների հեղինակներն ու ներողություն էր հայտնվում սկզբնաղբյուր հոդվածը գրողից ու այն տպագրած անսագրից: Պատշաճ կարգից նման անկհայտ շեղումը, որի արտահայտությունն էին այս անհղում մեջբերումները, «Գարդիանի» խմբագրական կանոնագրում ներկայացված է «գրագողություն» վերնագրված բաժնում: Այն ասում է. «Աշխատակազմի անդամը չպետք է արտատպի մեկ ուրիշի նյութը՝ առանց այդ մասին հիշատակելու: Այլ կազմակերպությունից ձեռք բերված նյութը տպագրելու դեպքում այդ մասին պետք է նշվի, այդ թվում այլ թերթի հոդվածից մեջբերումը չակերտների մեջ առնելով... »: Այս բաժինը, թեև դրա մասին հատուկ նշված չէ, կանոնագրի մյուս բաժինների



նման վերաբերում է ոչ միայն հաստիքային, այլ նաև ազատ լրագրողներին (խնդրո առարկա հողվածի հեղինակը հենց այդպիսին էր):

Սակայն ամեն դեպքում, գրագողություն տերմինն օգտագործելիս պետք է զգույշ լինել: Դա խիստ ու խարանող բառ է, եւ այն պետք է կիրառել, իմ կարծիքով, միայն ուրիշի աշխատանքի մեծածավալ յուրացման, կամ դրան մոտ դեպքերում, այլ կերպ ասած՝ երբ կա գողություն եւ խաբելու դիտավորությունն ակնհայտ է:

Միացյալ Նահանգներում, ուր գրագողությունը մամուլում ու կրթական համակարգում, ասում են, համաճարակի բնույթ է ստացել, տվյալ բառն օգտագործում են ավելի մեծ պատրաստականությամբ: Նյու Յորքում լույս տեսնող այն ամսագրի խմբագիրը, որից վերցված էին խնդրո առարկա հատվածները «Գարդիանի» նյութում, կարծում է, թե տվյալ դեպքի համար ես պետք է կիրառեմ հենց գրագողություն տերմինը: Իսկ ես վերապահ եմ այս հարցում, եւ պատճառն իմ անվճարականությունը չէ: Իմ համոզմամբ՝ խնդիրը պետք է քննարկել կոնկրետ համատեքստում եւ ըստ իր լրջության աստիճանի:

Կատարվածն իմ կարծիքով առաջին աստիճանի գրագողություն չէ: Եթե գրագողության սանդղակ կազմելու լինենք, ծանրագույն դեպքն այն է, երբ մեկը պարզապես նյութի սկզբնական հեղինակի փոխարեն դնում է իր անունը: Իսկ սանդղակի հակառակ՝ ցածի ծայրում մեծապես տարածված սովորությունն է՝ գողանալ մամուլի «քաղվածքներից», որոնց վերջին ժամանակներս փոխարինել են էլեկտրոնային արխիվները: Լրագրողներն այս վերջինը երբեմն կոչում են «ուսումնասիրություն»: Այն հաճախ ներառում է չճշտված փաստերի փոխանցում այնպիսի աղբյուրներից, որոնց մասին ընթերցողը տեղյակ չի պահվում: «Գարդիանում» շատ մեծ ջանքեր են թափվել այս երեւույթը արմատախիլ անելու համար: Բայց դա, ըստ երեւույթին, հնարավոր չէր արմատախիլ անել:

Վերադառնանք, սակայն, մեր դեպքին: «Գարդիանի» նյութն ավելի լայն էր, քան հողվածը, որից խնդրո առարկա հատվածներն էին վերցված: Եվ դրանց օգտագործման պատասխանատվությունը, ըստ երեւույթին, միայն հողվածի հեղինակինը չէ: Դրանցից մեկը կարող է մտցված լինել պատ-

վերների խմբագրի կողմից՝ «Գարդիանի» իրավաբաններին բավարարող իրավականորեն ապահով արտահայտություն ունենալու համար: Այս հանգամանքն, անշուշտ, բողոքողի համար կարելու է: Սակայն այդ բողոքը, կատարվածը գրագողություն համարենք թե ոչ, ըստ էության քննվել է:

Մյուս բողոքը, ինչպես խոսքիս սկզբում ասացի, լիովին մերժվել էր: Ավելի վաղ ասել եմ արդեն, որ իմակի տեսքով ինձ եկող բոլոր բողոքները, եթե միայն ուղարկողի պահանջով կամ բովանդակությամբ պայմանավորված դրանք չպետք է գաղտնի մնան, ուղարկվում են «Գարդիանի» հաստիքային լրագրողներին: Այս մի բողոքը հետեւյալ խորագիրն ուներ. «Բողոք-հիմնավորում («Գարդիանի» ավագ լրագրողներից մեկի) կողմից գրագողության մասին. 12 տարեկան մուսուլման տղայի պատմությունը»: Ընթերցողն ապա թվարկում էր այն նմանությունները, որ ինքը նկատել էր Muslim News-ի օգոստոսի 26-ի հաղորդագրության եւ «Գարդիանի» նյութի միջեւ, որը թվագրված էր, իր ասելով, օգոստոսի 28:

Այս վերջինը, սակայն, սխալմունք էր: «Գարդիանի» նյութը հրապարակվել էր ոչ թե օգոստոսի, այլ հուլիսի 28-ին՝ մեկ ամիս առաջ այն հոդվածից, որից իբրեւ թե գրագողություն էր արվել: Ես այս մասին հաղորդեցի ընթերցողին: Քանի որ պատասխանը լռությունն էր, մեկ անգամ եւս գրեցի՝ մտածելով, արդյո՞ք նամակագիրը ներողություն կխնդրի: Ի վերջո նա ներողություն խնդրեց:

# ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ՅԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ՃԻՇՏ ԿԱՐԳԻ ԵՎ ՇԱՅԵՐԸ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Շաբաթ, 27 օգոստոսի, 2005*

Հուլիսի 13-ին, Լոնդոնի ճակատագրական ռմբահարումներից դեռ մեկ ամիս էլ չէր անցել, «Գարդիանն» իր Մեկնաբանությունների էջում տպագրեց Դիլփազիեր Ասլամի հոդվածը, վերնագրված՝ «Մենք կրակի վրա յուղ ենք լցնում. այսօրվա մահմեդականը չի ներում անարդարությունը»: Նյութի վերջում նշված էր, որ պ-ն Ասլամը «Գարդիանում» պատրաստություն (թրեյնինգ) անցնող լրագրող է: Սակայն այդ ծանոթագրության մեջ չէր հիշատակված մեկ այլ փաստ, որը թերթում գիտեին (գուցե պատճառն այն էր, որ այդ մասին Մեկնաբանությունների էջի խմբագրին տեղյակ չէր պահվել)՝ այն, որ պ-ն Ասլամը «Հիզբ ութ-Թահրիր» քաղաքական կազմակերպության անդամ էր:

Սա մի հանգամանք է, որի մասին անպայման պետք է նշվեր, ու սա ի վերջո արվեց, թեև 10 օր ուշացումով՝ հուլիսի 23-ի Ուղղումների ու պարզաբանումների սյունակում: Ուշացումը պայմանավորված էր նրանով, որ «Հիզբ ութ-Թահրիր»-ին պ-ն Ասլամի անդամակցությունը ներքին քննության առարկա էր դարձել: Ի վերջո, դրա արդյունքում որոշվեց, որ պ-ն Ասլամը այլևս չի կարող շարունակել իր թրեյնինգը «Գարդիանում», քանի որ նա հրաժարվեց դադարեցնել իր անդամակցությունը «Հիզբ ութ-Թահրիր»-ին, ինչը թերթը համարում էր անհամատեղելի իր դավանած արժեքների հետ: Ուղղումների սյունակում հիշյալ նշումի հրապարակման օրը «Գարդիանը» նաև հայտարարություն արեց այս դեպքի հետ կապված: Դրա կրճատ տարբերակը հրապարակվեց թերթում, ավելի ընդարձակը՝ կայքէջում:

Ես չեմ պատրաստվում քննարկել պ-ն Ասլամին հեռացնելը կամ դրա պատճառները: Իմ լիազորությունների մեջ, եւ այս մասին գրված է «Գարդիանի» կայքում, մտնում է թերթի լրագրության հետ կապված բողոքներն ու հարցերը քննելն ու դրանց պատասխանելը:

Իսկ ահա միություններին անդամակցության բացահայտման հարցը հստակորեն իմ լիազորության շրջանակներում է եւ նաեւ կենտրոնական խնդիր է՝ «Գարդիանի» ու ընթերցողի հարաբերություններում: Բաց լինելու առումով «Գարդիանն» արդեն իսկ աշխարհի բոլոր թերթերից առաջ է անցել: Այն իր կայքէջում դրել է ոչ միայն իմ լիազորությունները նշող կետերը, այլեւ իր սոցիալական աուդիտն ամբողջությամբ եւ իր խմբագրական կանոնագիրը:

Սրանով թերթի թե՛ բարեկամներին, թե՛ թշնամիներին հնարավորություն է տրվում արվածը համեմատելու հայտարարվածի հետ: Անհամապատասխանության դեպքերը եզակի չեն:

«Գարդիանի» խմբագրական կանոնագրի մի ողջ բաժին նվիրված է անհատական վարքին ու բախվող շահերին: Նախաբանում հետեւյալ նախադասությունը կա. «Մենք մտադիր ենք հասնել նրան, որ արտաքին շահերը հակասության մեջ չմտնեն թերթի գործունեության հետ՝ խաթարելով «Գարդիանի» ազնվությունը կամ մեր ընթերցողների ակնկալած թափանցիկությունը»:

Այն նաեւ ասում է. «Գարդիանի» հաստիքային լրագրողները պետք է նկատի ունենան, որ իրենց աշխատանքից դուրս գործունեությունը (պաշտոն ունենալը կամ որեւէ այլ կերպ այս կամ այն կազմակերպությունում, ընկերությունում կամ քաղաքական կուսակցության մեջ ակտիվորեն ներգրավված լինելը) կարող է դիտարկվել իբրեւ մեր լրագրության ազնվության վրա ազդող կամ դրա հետ հակասության մեջ մտնող հանգամանք: Աշխատակազմի անդամը պետք է ոչինչ չթաքցնի իր արտաքին՝ անհատական, աշխարհայացքային կամ ֆինանսական շահերի հետ կապված, որոնք կարող էին հակասության մեջ մտնել լրագրողական պարտականությունների կատարման հետ, կամ կարող էին ընկալվել իբրեւ այդպիսիք»:

Սակայն այստեղ մի անբնական հանգամանք կա: Մամուլի դեմ բողոքների հանձնաժողովի կողմից վերահսկվող Մասնագիտական կանոնագիրը թերթի հաստիքային լրագրողների աշխատանքային պայմանագրի մաս է կազմում: Այնինչ «Գարդիանի» սեփական կանոնագիրը պայմանագրային ուժ չունի: Փաստորեն այն ուղենշային փաստաթուղթ է, որի գործությունը տրամաբանել կարողացողին համոզելու մեջ է:

Այդ ուղենիշները, իմ համոզմամբ, լիովին տրամաբանական են, ու թեև գիտեն, որ Լրագրողների ազգային միությունը (ԼԱՄ) սրա դեմ է, ես կարծում եմ դրանք պետք է պայմանագրային ուժ ունենան (ես սա ասում եմ իբրև ԼԱՄ-ի ցմահ անդամ): Վստահ եմ՝ սա բխում է թե՛ թերթի, թե՛ լրագրողների ու ընթերցողի շահերից:

Դիփլոագիեր Ասլամի դեպքից հետո «Գարդիանի» խմբագիրը նման իրավիճակներից խուսափելու մի քանի տարբերակ է քննարկում, որոնցից մեկը կլիներ այն, որ «Գարդիանում» ցանկացած լրագրողական աշխատանքի համար դիմողներին տրվեր թերթի կանոնագրի մի օրինակ եւ հատուկ հարց տրվեր, թե արդյո՞ք, գրվածը նկատի ունենալով, իրենք շահերի բախում չեն կանխատեսում:

Պ-ն Ասլամի հողվածի հրապարակումին հետեւած իրադարձությունները հաստատում են այն տեսակետը, որ նրա դեպքում համապատասխան հայտարարության բացթողումը սխալ էր: Փաստը, որ «Չիզմ ութ-Թահրիր»-ի բնույթի եւ այն փակելու կառավարության մտադրության մասին տարբեր կարծիքներ կան, ասվածին չի հակասում: Կամ գուցե հակառակը, սխալն ավելի է ընդգծում:

*Այս հողվածի հրապարակումից հետո «Գարդիանի» եւ պ-ն Ասլամի վեճը աշխատանքային դատարանում դրվեց քննության, որի արդյունքները հրապարակման ենթակա չեն: Պ-ն Ասլամն այլևս «Գարդիանում» չի աշխատում:*

# ՍԱՐՍԱՓԵԼԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... «ԳԱՐԴԻՎՆԻ» ԷՋԵՐՈՒՄ ԼՈՆԴՈՆՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Շաբաթ, 16 հունիսի, 2005

«Գարդիանի» կողմից Լոնդոնի ռմբահարումների լուսաբանումը հիմնականում դրվատանքի արժանացավ, սակայն երեք դեպքում եղավ նաեւ ուժեղ քննադատություն: Մեկը կապված էր ուրբաթ օրը (հարձակումների հաջորդ օրը) երկրորդ էջի լայնքով մեկ դրված լուսանկարի հետ, ուր պատկերված էր տրոլեյբուսի «սեւացած ու արյունոտված» մի ուղեւոր, որին օգնություն էին ցույց տալիս:

Երկրորդը վերաբերում էր կիրակի օրվա ներսի էջերից մեկի դարձյալ ողջ լայնքը գրաված լուսանկարին, ուր պատկերված էին փրկված ուղեւորներ՝ Թավիսթոք հրապարակում տանիքը պայթած ավտոբուսի երկրորդ հարկում: Ջոհերից մեկի կամ հնարավոր է երկուսի գլուխն ու ուսերը երեւում էին ավտոբուսի հետնամասում, ուր պայթել էր ռումբը:

Երրորդ բողոքը վերաբերում էր ականատեսի վկայության՝ «սարսափազդու վկայության», ինչպես զգուշացնում էր նյութի նախաբանը, ուր Բրիտանական տրանսպորտային ոստիկանության մի սերժանտ-փրկարար նկարագրում էր Քինգսքրոս կայարանի ու Բասել հրապարակի միջեւ ռումբի պայթյունից առաջացած արյունահեղությունը: Սա դրված էր Կիրակի օրվա առաջին էջում:

Նախ խոսենք սրա մասին: Ընթերցողներից մեկը գրեց. «Արդյո՞ք «Գարդիանը» ողջամիտ գտնվեց՝ հրապարակելով մարդկանց ստացած սարսափելի վերքերի մման տիաճորեն մանրամասն նկարագրություն... Իմ համալսարանական ըն-

կերուհիներից մեկը մահացածների մեջ է.. Ես այսուհետ միշտ մտածելու եմ՝ արդյո՞ք ոտքերը կորցրած այն կինը, որին հնարավոր չեղավ օգնություն հասցնել, հենց նա չէր»:

Հարկ է, որ նյութի բովանդակության բնույթի մասին ավելի խիստ զգուշացում լիներ: Սակայն ես կարծում եմ «Գարդիանը» ճիշտ է վարվել նյութը հրապարակելով, թույլ տալով, որ փրկարարը պատմի իրականում կատարվածը, հաղորդի իր ապրումները. նյութն առաջին էջում տպագրելը, ըստ էության, նշանակում էր, թե բոլորը պետք է լսեն նրան: Վկայությունն ավարտվում էր այսպես. «Ես կանգած էի այնտեղ, ու ինձ այնքան մենակ էի զգում, որ անհնար է նկարագրել»:

Արդյո՞ք նյութն օգտագործելու այս հիմնավորումը՝ պատմելու ցանկությունը, պահանջը, որ բոլորն իմանան այն, ինչ փրկարարն է տեսել, այնքան կարելու է, որ արդարացում է զոհերի ընկերներին ու բարեկամներին հասցվելիք հնարավոր հուզումը: Սա մի բարդ հարց է, որին հեշտ չէ «այո» պատասխանելը, բայց խմբագրությունը, ըստ էության, հենց դա էր արել:

Տրոլեյբուսի ուղեւորի լուսանկարի դեմ երեք բողոքների հեղինակներն էլ բժիշկ էին: Նրանք առարկում էին վերակենդանացման ընթացքում գտնվող մարդուն լուսանկարելը՝ համարելով դա կոպիտ միջամտություն: Մեկը «Գարդիանին» մեղադրում էր, թե նա այս դեպքում «իրեն ոչ բնորոշ ճաշակի պակաս է ցուցաբերել», մյուսը թե՛ «կոպիտ անմոբանկատություն»:

Հիշյալ լուսանկարը վերցված էր BBC-ի ցուցադրած մի տեսարանից, որի համար վերջինս ի վերջո ներողություն խնդրեց՝ ասելով, որ այն ցուցադրելը սխալ էր: «Գարդիանին» հայտնի չէ ոչ լուսանկարում պատկերված մարդու ինքնությունը, ոչ էլ այն, թե արդյո՞ք նա փրկվել է:

Ես «Գարդիանի» ողջ խմբագրակազմին ուղարկեցի բժիշկներից մեկի բողոքի նամակն ամբողջությամբ, ինչպես նաև ավտոբուսի լուսանկարին վերաբերող մեկ իմակ՝ դարձյալ ամբողջությամբ: Ես նաև հարց էի տվել՝ արդյո՞ք մենք ճիշտ ենք վարվել, հրապարակելով լուսանկարները:

Տրոլեյբուսի ուղեւորի դեպքում մեծ մասը համաձայնեցին բժշկի հետ, թե լուսանկարը տպագրելը սխալ էր: Կարելու էր

համարվում ինքնության հարցը: Այն, որ մարդուն հեշտ էր ճանաչելը, մեծացնում էր անհարկի միջամտության հանգամանքը: Նրանք, որ որոշում էին ընդունել լուսանկարն օգտագործելու մասին, իրենք էին անակնկալի եկել, տեսնելով, թե տպագրված-մեծացված տարբերակում մարդու դեմքը որքան պարզ էր երեւում. ի վերջո նրանք կարող էին լուսանկարում փակել մարդու դեմքը՝ հատուկ նշելով դրա մասին: Լուսանկարն օգտագործվել էր ուրբաթ օրը՝ նախքան BBC-ի դեմ բողոքների մասին թերթին հայտնի կդառնար, եւ այն լիովին արտահայտում էր թե՛ այդ ժամանակ բոլորին պատած սարսափը, թե՛ այն աշխատանքների բնույթը, որոնց մեջ ներգրավվել էին շտապ փրկարարական ծառայությունները:

Ավտոբուսի լուսանկարի դեմ առարկումները վերաբերում էին ավտոբուսի հետնամասում անդամահատված զոհերի երեւալու բուն փաստին, ոչ թե նրանց ճանաչելու հնարավորությանը, որը համարյա զրոյի էր հավասար: Լուսանկարն օգտագործած թերթերի մի մասը ջնջել կամ աղոտացրել էին նկարի այդ մասը: Մյուսները չէին արել դա, այդ թվում «Գարդիանը», որը սկզբունք ունի՝ չձեւափոխել նկարները, կամ գոնե ձեւափոխելու դեպքում՝ հայտնել այդ մասին:

Այս լուսանկարի դեմ առարկությանը համաձայն էին ավելի քիչ թվով լրագրողներ: Ոմանց կարծիքով՝ երկու լուսանկարների օգտագործումն էլ ցույց էր տալիս, որ թերթը պատրաստ է Միացյալ Թագավորության ներսում կիրառել նույն չափորոշիչները, ինչ աշխարհի այլ վայրերում նման դեպքեր լուսաբանելիս:

Չորեքշաբթի օրվա ցերեկը թերթի լրագրողներից մեկը ավտոբուսի լուսանկարի արդարացված լինելու հարցին ժխտական պատասխանեց: Նա հենց նոր էր առել նույն այդ ավտոբուսում իր ընկերոջ զոհված լինելու լուրը: Եվ նա թերթում միակը չէ, որ նման լուր է ստանում:

Հիշյալ որոշումները, ճիշտ լինեն դրանք, թե սխալ, մեկուսյալ պայմաններում չեն ընդունվում: Նման ահավոր դժվարին հարցերում կարծիքները չեն կարող միասնական լինել:



# ԱՅԴ ՔԱՂՑՐ ԲԱՌԸ՝ ԼՈՆԴՈՆ

*ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ...*

*«ԳԱՐԴԻԱՆԻ» ԷՋԵՐՈՒՄ*

*ԱՅԱԲԵԿԶԱԿԱՆ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԻ*

*ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Շաբաթ, 9 հուլիսի, 2005*

Դժվար է պատկերացնել իրար հաջորդող ավելի հակադիր պատկերներ, քան այս շաբաթվա հինգշաբթի եւ ուրբաթ օրերի թերթերի առաջին էջերն էին: Հինգշաբթի օրվա «Գարդիանի» երեսի էջին, ողջ լայնքով, Թրաֆալգար հրապարակում քաղաքի օլիմպիական հաղթանակը խանդավառ նշող բազմութունն էր: Լուսանկարի ներքեւում գրված էր՝ «Այդ քաղցր բառը՝ Լոնդոն»:

Ահաբեկիչների հարձակման օրը ընթերցողի ձեռքին թերթի հենց այդ համարն էր, իսկ հարձակման մասին պատմող երեկվա համարում, ողջ առաջին էջով մեկ, արդեն խորհրդանիշ դարձած կարմիր ավտոբուսի նկարն էր, իսկ ներքեւում գրված էր՝ «Լոնդոնյան սարսափի օրը»:

Հինգշաբթի օրերը ես աշխատանքի եմ գալիս առավոտյան ութին՝ գրելու համար այս սյունակը: Այս շաբաթվա իմ թեման «Գարդիանի» «Բեռլիններ» ֆորմատի անցնելն էր՝ ամենամեծ փոփոխություններից մեկը թերթի պատմության մեջ: Առավոտյան ինն անց կեսին արդեն խառնաշփոթ լուրեր սկսեցին գալ պայթյունների մասին, արդեն վախ կար, որ զոհեր են եղել, ու ես որոշեցի փոխել որոշված թեման՝ փոխարենն անդրադառնալով ուրբաթ օրվա համարի նյութերին:

Վախը, թե թերթի աշխատողներն աշխատավայր չեն հասնի, իզուր էր. մեծ մասը տեղ հասավ ոտքով: Էլեկտրոնային փոստարկղը, ուր հավաքվում են թերթի հրապարակումների մասին ձեր մեկնաբանություններն ու բողոքները, եւ որը դեպ-

քերի լրջության լավ ցուցիչ է սովորաբար, աննախադեպ կերպով դատարկ էր ողջ առավոտվա ընթացքում:

Թերթի փոխխմբագիրը (նաեւ լուրերի խմբագիր), եկել էր ոչ թե մեքենայով, այլ վաղ գնացքով, որպեսզի հինգշաբթի օրվա օլիմպիական իրարանցումից հետո թերթերը կարդալու ժամանակ ունենա: Իսկ խմբագիրը եկավ հեծանիվով (ավելի ուշ լրագրողներից մեկը նույն փոխադրամիջոցն էր օգտագործելու՝ կենտրոնական Լոնդոնի կաթվածահար մասերը հասնելու համար):

Սկզբում ուշադրության կենտրոնում կազմակերպչական հարցերն էին. եթե տրանսպորտը խափանված էր, արդյո՞ք արեւելյան Լոնդոնի «Այլ ով դոգզում» գտնվող Վեստֆերրի տպարանի աշխատանքը դրանից կտուժի, արդյոք տպարանի բանվորները կկարողանա՞ն ժամանակին գործի հասնել: (Շատ արագ պարզվեց, որ պատասխանը դրական էր): Պե՞տք է, արդյոք, մտածել լրացուցիչ տպարանի դիմելու մասին: Գուցե հնարավոր է թերթի մի մասը տպել Մանչեստերի տպարանո՞ւմ, ուր թերթի հյուսիսային հրատարակություններն են տպվում: Իսկ ինչպե՞ս տարածել արդեն տպագրված թերթը: Պարզ է որ, որքան վաղ այն տպագրվի՝ այնքան լավ:

Առավոտվա 11-ից մի քիչ անց որոշվեց թերթը տպել կրճատ 32 էջով, որպեսզի G2 թաբլոյդը լույսի տեսնի ամենաուշը երեկոյան 6-ին, իսկ հիմնական թերթը (բրոդշիթը)՝ 7 անց 15-ին: Մտածում էինք նաեւ լրացուցիչ տպագրատան դիմելու մասին, բայց դրա կարիքը չէղավ:

Սկզբում, երբ հարձակման արդյունքները լիովին պարզ չէին, ստուգում էինք էլեկտրաէներգիայի լրացուցիչ աղբյուրի առկայությունը, ինչպես նաեւ սկսեցինք հյուրանոցային համարներ փնտրել թերթի այն աշխատողների համար, ովքեր գիշերը Լոնդոնում մնալու կարիքը կունենային:

Ժողովներ տեղի ունեցան թերթի գովազդն ու տարածումն իրականացնող աշխատողների հետ: Գովազդը հանվեց թերթի առաջին հինգ էջերից՝ տեղափոխվելով այլ էջեր կամ հետաձգվելով: Որոշվեց թերթի տպաքանակը ուրբաթ օրերի սովորական տպաքանակի համեմատ ավելացնել, եւ ինչպես երեկվա առավոտյան հավաքում ասվեց, դա հիմնականում իրագործվել էր:

Ողջ լրատվության վրա իշխող սրա նման ցնցող դեպքերում սովորաբար երկու հանգամանք է առաջ գալիս. նախ՝ նյութերը մի խնդրի շուրջ կենտրոնանալով, թերթը կազմելն ավելի պարզ գործ է դառնում, եւ ասպա՝ պատահածի մասին թարմ եւ մանրամասն լուրեր ստանալու պահանջը հասնում է ծայրահեղ սրության:

Այս իրողությունը ոչ իմ տեղ այնքան պարզ չէր երեւում, որքան հինգշաբթի օրվա Guardian Unlimited կայքէջում: Այդ օրը գրանցվեց էջի ռեկորդային 7,8 միլիոն այցելություն (նախորդ ամենաբարձր օրական ցուցանիշը 6,2 միլիոն էր): Նրանց մեջ 1,3 միլիոնն առաջին անգամ էին կայքէջ այցելում: Ամենածանրաբեռնված ժամը ցերեկվա 1-ի ու 2-ի միջակայքն էր, երբ գրանցվել էր վայրկյանում 213 այցելություն: Ականատեսների՝ կայքում դրված որոշ վկայություններ նայվել էին մոտ 100 000 այցելուի կողմից:

Միացյալ Նահանգներից «Գարդիանի» կայքէջն ավելի շատ այցելուներ ունեցավ, քան աշխարհի որեւէ այլ երկրից, ներառյալ Միացյալ Թագավորությունն ինքը (518 524 այցելություն՝ 392 029-ի դիմաց): Եվրոպական երկրների մեջ, հավանաբար Մադրիդի ռմբահարումների հետեւանքով, ամենաշատ այցելուներն Իսպանիայից էին՝ 35 000 մարդ:

Ակնհայտ դարձած հանգամանքներից մեկն էլ այն աննախադեպ դերն էր, առնվազն Բրիտանիայում պատահածի նման աղետալի դեպքում, որ խաղացին նկարահանող հեռախոսները: Ամենաառաջին նկարները (մասնավորապես տեսանկարները) ստացվեցին ականատեսներից ու դեպքի մասնակիցներից, ոչ թե՛ պրոֆեսիոնալներից:

Վերադառնանք, սակայն, «Գարդիանի» համարին: Այն, ի վերջո, 30 000 բառ տպագրեց հարձակումների վերաբերյալ. դրանցից 22 000-ը լուրերի էջերում էին, մնացածը՝ մեկնաբանությունների էջերում, առաջնորդող սյունակում եւ G2-ում: Դա արտադրանքն էր մի օրվա, երբ լրագրության գործառույթը պարզ տեսանելի էր:

# ԴԵՄՔԸ ՓՐԿԵՑԻՆ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ՊԱՏՈՎԱԾ ԴԵՄՔՈՎ ԱՂՋՆԱԿԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ՄԱՍԻՆ

*Շաբաթ, 21 մայիսի, 2005*

Մայիսի 6-ին, «Գարդիանի» G2 ամենօրյա թաբլոյդում, թերթի հեռուստաքննադատներից մեկը տեսություն էր գրել Discovery ալիքով ցուցադրվող Face Race ծրագրի մասին: Եթե մեջքերումներով ասելու լինենք, ծրագիրը «հյուսիսային Յնդկաստանում ապրող մի փոքրիկ աղջկա մասին էր, որի դեմքը գյուղատնտեսական մեքենան երկու մասի էր բաժանել», եւ ապա բժիշկները այն հաջողությամբ կարել էին: Այն նաեւ պատմում էր դեմքի պատվաստման բնագավառում ամերիկյան վիրաբույժների հաջողությունների մասին, որոնք «խանդավառվել էին ... հնդիկ աղջկա պատմությամբ»:

Տեսությունը «Դեմքը փրկեցին» խորագիրն ուներ եւ ուղեկցվում էր մի լուսանկարով, ուր պատկերված էր «երեխայի դեմքը կարվելուց առաջ», երբ այն դեռ «երկու մասի էր բաժանված, բայց գանգն ու մազերը անվնաս էին»: Աղջկա համարյա ողջ դեմքը, գլխի վերելի մասից մինչեւ ներքելի շուրթը, քիթը ներառյալ, դեռ մազերի հյուսն էլ հետը, նկարում պատկերված էր լվացված ու մաքուր շորի վրա դրված՝ մինչ բժիշկները կկարեին այն:

Երկու ընթերցող բողոքեցին: Մեկը գրում էր. «Ինձ խիստ տհաճություն պատճառեց հեռուստահաղորդումների էջի լուսանկարը... [ուր] ահավոր վթարի ենթարկված աղջկա դեմքի մնացորդն էր: Սա «Գարդիանում» իմ երբեւէ տեսած ամենից ծնշող լուսանկարն էր եւ այն դրված էր ամենաանսպասելի տեղում: Իմ կարծիքով սա անընդունելի է»: Այս ընթերցողին նաեւ բուլրովին դուր չէր եկել տեսության հնչերանգը, իր

կարծիքով՝ «շոշափված զգայուն թեմային բնավ ոչ հարմար՝ թաբլոյդյան էժան աղմկարարության օրինակ»։ Ինձ խնդրում էին պատասխանել երկու հարցի. «Արդյո՞ք «Գարդիանը» որոշակի սկզբունքների է հետեւում նման դեպքերում, եւ եթե այո, արդյո՞ք ձեր կարծիքով այդ սկզբունքներն այս դեպքում չեն խախտվել»:

Մեկ այլ ընթերցող համանման կարծիք էր հայտնում. «Իմ կարծիքով հեռուստահաղորդումների տեսության հետ երեխայի պատռված դեմքի լուսանկար դնելը լուրջ սխալ էր... Յնարավոր է հեռուստահաղորդման մեջ այն իր ճիշտ տեղում եղած լինի, բայց տպագրված առանձին ու թերթի «թեթել» էջում՝ նման սարսափելի նկարը խիստ տհաճ անակնկալ էր... Ես ֆիզիկապես վատացա»:

Երբ ես հարցրի, թե ինչու հենց տվյալ նկարն է ընտրվել հեռուստահաղորդումների տեսության հետ դրվելու համար, ինձ ասացին, որ ուրիշը չի եղել: Ուրեմն երկընտրանքը նկար դնել կամ չդնելն է եղել: Ոչ, քանի որ էջի ֆորմատը պահանջում է լուսանկարի անպայման օգտագործում:

Ես առանձին-առանձին խոսեցի էջի խմբագրի, նկարների խմբագրի եւ գեղարվեստական խմբագրի հետ եւ նրանք համաձայն էին, որ այդ նկարն օգտագործելը բնավ անխուսափելի չէր: Կարող էին ընտրել մեկ այլ նկար՝ այդ օրվա տեսության մեջ հիշատակվող մեկ այլ հեռուստահաղորդումից՝ BBC2-ով ցուցադրվող իրավիճակային կոմեդիայից, որ կոչվում է «Ռեբինսոնները»: Գեղարվեստական խմբագիրը նշեց նաեւ, որ ինչ-որ առումով սա էջի կառուցվածքի տրամաբանությանը հակառակ կլիներ, սակայն նման բաներ ժամանակ առ ժամանակ արվում են, կարելի էր անել նաեւ այս անգամ:

Այս ամենով հանդերձ, ի վերջո նկարն օգտագործվել էր, որովհետեւ այն չօգտագործելու պատճառ չէին տեսել: Նկարը առնչվում էր վիրաբուժական արտակարգ սխրանքի եւ մարդկային արտակարգ պատմության: Ինձ ասացին, թե սա այն դեպքը չէր, երբ բարոյական նկատառումները մի կողմ դրված լինեին նպատակահարմարությունից դրդված:

Ամեն դեպքում, անպատասխան հարցեր են դեռ մնում: Արդյո՞ք նկարը պետք է ընդհանրապես օգտագործվեր: Ի՞նչ նպատակի էր այն ծառայում: Արդյոք նկարն օգտագործելու

կամ չօգտագործելու հարցը ընդամենը ճաշակի՞ խնդիր է, թե՞ ավելի հեռուն է գնում: Ավելի վաղ ես իմ սյունակում անդրադարձել էի այն դեպքին, երբ Մադրիդի ահաբեկչական ռմբահարումներից անմիջապես հետո «Գարդիանը» մի լուսանկարում հատված վերջույթը էլեկտրոնային միջոցներով ձեւափոխել էր այնպես, որ այն ընդհանրապես վերջույթի չէր նմանվում: Ես այն ժամանակ գրել էի, որ թերթը սխալ էր վարվել, իսկ եթե թերթում կարծում էին որ ճիշտ են վարվում՝ գոնե պետք է հիշատակեին արված փոփոխության մասին:

Եթե թերթը կասկածներ ուներ հատված թելը կամ ոտքը նկարում երեւալու հետ կապված, ինչո՞ւ ուրեմն այն առանց երկնտելու տպագրեց աղջկա պատռված դեմքի լուսանկարը: Հեռուստահաղորդում պատրաստելու համար աղջկա ծնողներից թույլտվություն ստանալը պարտադիր էր, եւ այն հավանաբար տարածվում է նաեւ հաղորդման մասին պատմող լուսանկարի վրա: Սակայն, մի՞թե այս հանգամանքը նկարի օգտագործումն արդարացված է դարձնում:

Արդյո՞ք «Գարդիանը» կօգտագործեր պատռված դեմքով աղջնակի լուսանկարը, եթե նա բրիտանացի լիներ, եվրոպացի կամ սպիտակ:

Վերադառնալով առաջին ընթերցողի տված երկու հարցին՝ ասեմ, որ «Գարդիանը» նման դեպքերի լուսաբանման հարցում հատուկ սկզբունքներ չունի, ուրեմն եւ դրանք չէին կարող խախտված լինել: Սկզբունքը պետք է լինի հիշատակված հարցերը մի փոքր ավելի խստությամբ դնելը, ինչը ձեզանից ոմանք արեցին մեր փոխարեն:

# ԱԶԱՏ ԶԳԱ ԵՎ ԱՍԱ ԿԱՐԾԻՔԴ

*ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ...*

*«ԱՅՆ ՄԱՍԻՆ «ԹԵ ԻՆՉՊԵՍ  
ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ  
«ԳԱՐՂԻԱՆԻ» ԸՆՏՐԱԿԱՆ  
ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆԸ*

*Շաբաթ, 7 մայիսի, 2005*

Այս երեքշաբթի «Գարդիանը» սովորական երեքի փոխառեն մեկ առաջնորդող հոդված տպագրեց, իսկ ազատված տարածքն օգտագործեց, որպեսզի բացատրի, թե ինչպիսի արդյունքներ կուզենար տեսնել հինգշաբթի օրվա համընդհանուր ընտրություններում: Թերթի դիրքորոշումը բավականաչափ հստակ էր արտահայտված. «Մենք ուզում ենք, որ լեյբորիստները վերընտրվելով կառավարություն կազմեն եւ ուզում ենք, որ ավելի շատ լիբերալ դեմոկրատներ լինեն խորհրդարանում, որ կուսակցության հաշվին էլ դա լինի»:

Սրանում շատ զարմանալի ոչինչ չկար ( Guardian Unlimited-ի ընտրական բլոգի մեկնաբանություններից մեկում գրված էր. «Զարմանա՞նք: «Գարդիանն» ասում է՝ ընտրեք լեյբորիստներին»: Սակայն առաջնորդող սյունակում նաեւ մանրամասն բացատրված էին այն հարցերը, ներառյալ Իրաքի պատերազմի հետ կապված, որոնք ընտրողներին կարող էին հետաքրքրել, եւ բացատրված էր թե ինչու, հակառակ որ լիբերալ դեմոկրատների համար քվեարկելու «հզոր պատճառներ» կան, թերթը նրանց լիովին չի պաշտպանում:

Իր եզրակացությունն անելիս առաջնորդողը հղում էր անում «Գարդիանի» հայտնի խմբագիր Չ.Փ.Սքոթին, որը տասնամյակների առաջ «Մանչեստեր Գարդիանի» ընթերցողներին (թերթն այն ժամանակ այդպես էր կոչվում) հետեւյալ զգուշացումն էր արել. «Շատ հնարավոր է՝ մինչ Լիբերա-

լիզմն ու Աշխատանքը (Լեյբորը) իրար հետ վիճելով են զբաղված, Պահպանողական շունը ոսկորը փախցնի: Դա ցավալի կլիներ»: Նույնքան ցավալի կլիներ, եթե դա պատահեր այսօր, ավելացնում էր առաջնորդողը:

Ի դեպ, նշեմ, որ ՄՈՐԻ-ի հարցման համաձայն, «Գարդիանի» ընթերցողների 48%-ն ասել է, որ ինքը քվեարկելու է Լեյբորիստների օգտին, 34%-ը՝ լիբերալ դեմոկրատների եւ միայն 7%-ը՝ պահպանողականների: Նույն ՄՈՐԻ հարցումով, 2001թ. (եւ 1997թ.) արդյունքներն էին՝ 53%-ը (67%) Լեյբորիստներին, 34%-ը (22%) լիբերալ դեմոկրատներին, եւ 6%-ը (8%) պահպանողականներին:

Անսովորը այս շաբաթվա առաջնորդողին նախորդած խորհրդակցություններն էին, ինչը հատուկ է թերեւս միայն «Գարդիանին»: Այս փաստը շատ բան է ասում թերթի աշխատառճի, նրա էթոսի, նաեւ այն մասին, թե ինչպես է խմբագիրը պատկերացնում եւ կատարում իր դերը:

Ապրիլի 21-ին խմբագիրը հետեւյալ իմակն էր ուղարկել խմբագրակազմի բոլոր անդամներին. «Ես կարծում եմ լավ կլիներ, եթե նախկին տարիների նման կեսօրին «Գարդիանի» բոլոր լրագրողների համար բաց հավաք անցկացնեինք՝ ընտրությունների հետ կապված մտքեր փոխանակելու, նախքան առաջնորդող գրողները կհավաքվեին խնդիրը քննարկելու համար... Բոլորիդ հրավիրում եմ»: Մոտ 100 լրագրող մասնակցեց հիշյալ հավաքին, որ տեղի ունեցավ ապրիլի 26-ին:

Առաջնորդողի տպագրման օրը խմբագիրն իր սեփական գրառումը կատարեց ընտրությունների բլոգում. «Գարդիանում» մենք սեփականատեր չունենք: Մեկ առումով սա մեր կյանքը հեշտացնում է՝ խմբագրից վերեւ նրան քննադատող չկա: Սակայն մնացած բոլոր առումներով մեր վիճակն ավելի բարդ է՝ մենք ինքներս պետք է որոշումներ ընդունենք: Գործնականում սա արտահայտվում է նրանով, որ մենք ֆորում ենք ստեղծել, ուր ցանկացած լրագրող, անգամ ամենակրտսերը... կարող է իր ներդրումն ունենալ»:

Խմբագիրն այդ ֆորումը համարում է իր ամենօրյա հավաքների շարունակություն՝ «երբ, դրանց նման, խմբագրակազմի ցանկացած անդամ կարող է քննադատել օրվա համարը կամ գաղափարներ առաջարկել մյուս համարի հետ կապ-



ված»։ Սրա հիմնավորումն այն է, թե այս աստիճանի ազատությունն ու անկախությունը խթանում են նվիրվածությունն ու պատասխանատվությունը եւ առավելագույնի են հասցնում թերթին հատկացվող էներգիան ու տաղանդը։

Հիշյալ հավաքին մասնակցած 100 լրագրողից մոտ 30-ը խոսեց, եւ դրանց մոտ մեկ երրորդը ներգրավված էին քաղաքական լուսաբանման մեջ։ Խմբագիրը բացատրում է. «Հավաքի նպատակը «գիծ մշակելը» չէր։ Մենք ուզում էին հնարավոր դարձնել հնարավորինս... լայն բանավեճ, որպեսզի առաջնորդող գրողները պատկերացում կազմեին խմբագրակազմում եղած կարծիքների մասին»։

Մի քանի օր անց առաջնորդող գրողները մեկժամյա հանդիպում ունեցան խմբագրի ու նրա տեղակալի հետ։ Շաբաթավերջին առաջնորդող գրողների ղեկավարը կազմեց դրա սեւագիրը, որպեսզի խումբն այն ուշադիր քննի։ Վերջնական տարբերակը կազմվեց միայն այն բանից հետո, երբ նկատի առնվեցին եղած կարծիքները, հիմնականում խմբագրի կողմից արտահայտված։ Այն դրված է «Գարդիանի» կայքում, ուր կա նաեւ ընտրական բլոգը՝ խմբագրի գրությամբ ու ընթերցողների մեկնաբանություններով։

Խմբագիրը եւ առաջնորդող գրողների ղեկավարը ոչ մի կասկած չունեն, որ բաց բանավեճից առաջնորդողը մեծապես շահել է։ Խմբագիրը, բլոգի իր գրության մեջ, նշում է. «Բոլորը երեւի կհամաձայնեն, որ դա բովանդակալից, սուր եւ խելացի բանավեճ էր»։ Հավաքի կարելոթության մասին իմ անցկացրած հարցմանը մասնակցածների մեծ մասը համաձայն էր այս մտքի հետ, շատերն իրապես խանդավառ էին։ Առաջնորդողում հիշատակված էին բանավեճի ընթացքում արտահայտված հիմնական մտքերը, անգամ նրանք, որ մերժվել էին։ Ոմանք այն կարծիքն էին արտահայտել, թե պետք էր Բլերին ավելի շատ քննադատել պատերազմի համար։ Մի քանիսը կարծում էին, որ թերթը պետք է առավելությունը տար լիբերալ դեմոկրատներին։ Մյուսները համոզված էին, որ առավել պետք է շեշտվեր ըստ սեփական խղճի քվեարկելու անհրաժեշտությունը։ Համարյա բոլորն ուրախ էին, որ բանավեճը տեղի էր ունեցել, եւ ոմանք չէին թաքցնում իրենց հպարտությունն այն բանի համար, որ թերթը թույլ է տվել դա։

# ՀԱՍԿԱՆՈ՞ՒՄ ԵՔ, ԻՆՉ ԵՄ ԱՍՈՒՄ

*ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ...  
ՄԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԻ ՄԱՍԻՆ,  
ՈՐ ԻՄՊԼԱՆՏԱՑՎԵՑ «ԳԱՐԴԻԱՆ»,  
ԲԱՅՑ ՈՉ ԽՐՈՆԻԿԱՊԵՍ*

*Շաբաթ, 30 ապրիլի, 2005*

«Կյանքը»՝ «Գարդիանի» գիտական հավելվածը, վերջերս հոդված էր տպագրել, ուր բացատրում էր, թե ինչպես «կաթվածահար մարդիկ այժմ կարող են լոկ մտքով կառավարել իրենց արհեստական վերջույթները»: Հոդվածի երկրորդ պարբերությունն ասում էր, թե Մաթ Նեյգլը, որ չորս տարի առաջ դանակահարվել էր, «առաջին մարդն էր, որ իր ուղեղի մեջ խրոնիկապես տեղադրված սարքի միջոցով կարողացավ կառավարել իր արհեստական վերջույթը»:

Ընթերցողներից մեկը հարցնում է. «Դուք գրել եք՝ «խրոնիկապես տեղադրված»: Արդյո՞ք ուզում էիք ասել՝ կլինիկապես տեղադրված»: Նույն հարցը նյութի տպագրումից առաջ դրա հեղինակին տվել էր փոխխմբագիրը: Ոչ, հեղինակն ուզում էր ասել հենց խրոնիկապես տեղադրված, եւ տերմինը թողնվել էր տեքստում այն ենթադրությամբ, թե ընթերցողը կհասկանա, որ դա նշանակում է երկար ժամանակով, առանց փոխելու անհրաժեշտության տեղադրված:

Սա այն հոդվածներից մեկն էր, որ «Գարդիան ուիքլին» («Գարդիանի» միջազգային շաբաթաթերթը) ընտրեց հրապարակման համար, վերատպելով այն համարյա առանց փոփոխության, պարզապես «խրոնիկապես» բառը բաց թողնելով: Խնդրո առարկա հատվածն այսպիսի տեսք ունեցավ. «Նա առաջին մարդն էր, որ սեփական ուղեղի մեջ տեղադրված սարքի միջոցով կարողացավ կառավարել իր արհեստական վերջույթը»:

«Գուգլ»-ով փնտրելու դեպքում գտնում ենք «խրոնիկապես տեղադրված» տերմինի օգտագործման բազմաթիվ օրինակներ տարբեր գիտական ու բժշկական տեքստերում: Բայց իմ բացած ընդհանուր բառարաններից ոչ մեկում տերմինը բացատրված չէ կամ գոնե սահմանումներ չեն տրված, որ հարմար կգային տվյալ բառօգտագործմանը:

Արդյո՞ք «Լայֆը» սխալ էր վարվել՝ հիշյալ տերմինը գործածելով: Կամ գուցե սխալ էր այն առանց բացատրությամբ գործածելը: Արդյոք ճիշտ էր տերմինը գործածելն այն ենթադրությամբ, թե հակառակ ընթերցողին (օրինակ՝ ինձ) անծանոթ լինելուն, վերջինս այն կհասկանա (ոչ ես, ոչ էլ հարց տված ընթերցողն այն չէինք հասկացել): Գուցե տերմինն օգտագործելը ճիշտ էր, քանի որ հոդվածը հրապարակվում էր «Գարդիանի» գիտությամբ նվիրված էջում: «Գարդիան ուիքլի» թերեւս ճիշտ վարվեց՝ դուրս թողնելով տերմինը, քանի որ իր ընթերցողն ավելի ընդհանուր բնույթ ունի:

«Գարդիան ուիքլի» խմբագիրը հավանություն էր տվել «խրոնիկապես» բառը բաց թողնելուն, որովհետեւ իր կարծիքով այն հավակնոտ ու շփոթեցնող էր, եւ առանց այդ բառի էլ ասվածի իմաստը միանգամայն հասկանալի էր:

Իմ կարծիքով՝ տերմինի իմաստը հասկանալու դժվարությունն ակնկալելով, այն առաջին անգամ օգտագործելիս պետք է կողքին բացատրություն դրվեր: «խրոնիկապես» բառը անգլերենի օքսֆորդյան բառարանում բացատրված է այսպես՝ «խրոնիկ կերպով, մշտապես»: Բառարանը նաեւ «խրոնիկական» բառի հետաքրքիր պատմությունն է տալիս. բառը նախապես ուղղակի նշանակել է «ժամանակին վերաբերող», բայց հռոմեական շրջանում այն «բժիշկների կողմից սկսել է գործածվել ավելի լայն նշանակությամբ՝ հիվանդություններ նկարագրելիս (նշանակելով երկար տևող, երկար շարունակվող)»: Բառարանը ուշադրություն է հրավիրում Ցելիոս Ավրելիոսի հավանաբար 4-րդ դարում գրած մի գործի վրա, որ կոչվում է «Դե մորբիս ակուտիս էտ քրոնիցիս»: Այստեղ արդեն բառն օգտագործված է իր այսօրվա հիմնական իմաստով:

«խրոնիկապես տեղադրված» տերմինի գործածումները «Լայֆի» հեղինակի օգտագործած իմաստով դժվար չէ գտնել

գիտական գրականության մեջ: Ահա մեկը «Բիոտեխնիկական օրենք» շաբաթաթերթից. «Սրա համար արու մկների մարմնի մեջ կառավարող փողրակ են խրոնիկապես տեղադրում»:

Հոդվածի հեղինակն առարկում է, թե ես «Ժարգոն» եմ տեսնում այնտեղ, ուր այն չկա (չնայած ես այդ բառը չեմ գործածել), եւ իմ ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ վերջերս միայն մեկ օրում խնդրո առարկա բառը «Գարդիանում» գործածվել է երեք անգամ՝ «խրոնիկական գործազրկություն», «խրոնիկական թերֆինանսավորում» եւ «խրոնիկական դեգեներատիվ ողնաշարային հիվանդություն»: Նրա կարծիքով՝ խոսքն ընդհանուր, ոչ թե գիտական գրագիտության մասին է:

Նկատենք, որ բերված բոլոր օրինակներում «խրոնիկական» բառն օգտագործված է այս կամ այն հանգամանքի երկարատեւությունն ու շարունակականությունը, ոչ թե որեւէ առարկայի դիմացկունությունը նշանակելու համար, որ տեղադրվել է երկար ժամանակով: Ամեն դեպքում, քննարկման առարկան «խրոնիկական» կամ «խրոնիկապես» բառերը չեն, այլ «խրոնիկապես իմպլանտացվածը»:

Մենք, անշուշտ, չպետք է լրագրությունը զտենք գիտական տերմիններից: Այստեղ ուզում եմ վերաշարադրել Լինդա Մագլսթոնի «Բառեր չգտնելով» գրքում, որը ես ձեզ խորհուրդ կտայի կարդալ, հեղինակի ասածը, որ մասամբ վերաբերում է անգլերենի օքսֆորդյան բառարանի սկզբնական տարբերակից գիտական տերմինները դուրս թողնելու, բարեբախտաբար՝ անհաջող, փորձերին: Այդ փորձերին հերոսաբար դիմադրում էր օքսֆորդյան բառարանի առաջին խմբագիր Ջեյմս Մարրին, ոչ մի օգնություն չստանալով «Մանչեստեր Գարդիանից», որը (1891 թվին, Յենրի Բրադլիի խմբագրած բաժնի մասին խոսելիս) հայտարարում էր, թե. «Այդ բաժնի շատ էջեր ու սյունակներ մեծապես լի են տարօրինակ բառերով, որ միայն գիտական փորձագետը կպահանջեր գործածել»:

# ՌԻԶԱՐԴԸ ԵՎ ԶՈՒԴԻՆ ԱՌԱՆՑ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ԱՆԽՏԻՐ ՄԵՐԺՎՈՂ ՄԻ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

*Շաբաթ, 23 ապրիլի, 2005*

Անցած շաբաթ «Գարդիանի» շաբաթօրյա հավելվածը՝ «Ու-իքենդը», իր առաջին էջին պատմում էր հեռուստավարձեր Ռիչարդի եւ Ջուդիի մասին (նրանք վաղուց հաղթահարել են իրենց ազգանունները): Թե խմբագրի մոտ ուրբաթօրյա հավաքին, թե հենց բուն տեքստում նշվել էր, որ նյութը հրապարակվում է առանց «օրինակի հավանության»: «Գարդիանի» կարծիքով սրանում ոչ մի տարօրինակ բան չկա: Այն երբեք «օրինակի հավանության»՝ հրապարակումից առաջ հողվածը (սովորաբար հարցազրույցը) կարդալու եւ լրացնելու իրավունք չի տալիս: Ռիչարդի եւ Ջուդիի կարծիքով, սակայն, սա խիստ տարօրինակ էր, եւ առավոտյան հավաքին նշվեց, որ նրանք համարյա երբեք առանց դրա հարցազրույց չէին տվել:

Այստեղ ես ուզում եմ հղում անել Փիրզ Սորգանի վերջերս հրապարակված օրագրերին, մասնավորապես 2001թ. նոյեմբերի 20-ի ու 21-ի գրառումներին: Սորգանը շատ պատկերավոր պատմում է, թե ինչպես իր խմբագրած «Ղեյլի միորոը» համաձայնել է «օրինակի հավանության» իրավունք տալ Ռիչարդին եւ Ջուդիին՝ «Չորրորդ ալիք» (Channel 4) նրանց տեղափոխվելու հետ կապված հարցազրույցն ապահովելու համար:

Նա նշում է. «Սա թերթերի մեծ մասի թաքուն ամոթն է, որ վերջին տարիներս համաճարակի է վերածվել: Մենք աստղերի հարցազրույցների կարիքն ունենք, բայց նրանք մեզ չեն վստահում, եւ համաձայնում են դրան միայն այն պայմանով, որ «հավանություն տան» հարցազրույցի օրինակին, երբեմն

նաեւ վերնագրին ու լուսանկարներին: Բոլոր թաբլոյդները դա անում են, եւ սա ինձ միշտ համբերութիւնից հանում է, քանի որ իրականում գրաքննութիւնն է նշանակում»:

Կոնկրետ այս դեպքում պահանջված փոփոխութիւնները բոլորովին չափն անցնում էին, եւ թերթը հրապարակում է «հավանութիւն ստացած եւ չստացած» տարբերակները՝ կողք կողքի: Ռիչարդը հրապարակման օրը զանգահարում է Փիրզին, եւ ի վերջո, կարճ կտրելով ասենք, նրանք հաշտվում են:

«Գարդիանի» հարցազրույցի ժամանակն այնպես էր ընտրված, որ նախորդէր Բրիտանական գրքի մրցանակին. երեկ Ռիչարդը եւ Ջուդին այն ներկայացրին «Չորրորդ ալիքով»: Հոդվածում ոչ մի ցնցող բան չկար, Ջուդին ընդամենն ասում է, որ իրենք եթերից դուրս էլ նույն մարդիկ են ինչ եթերում, մենակ թէ եթերից դուրս F բառը շատ են գործածում: Ողորմած Աստված, ոնց որ «Գարդիանի» ժողովուրդը լինեն:

«Օրինակի հավանութիւն» տալու խնդրանքով «Ուիքենդ» հանդեսին ժամանակ առ ժամանակ դիմում են, եւ նրանց միշտ տրվում է նույն պատասխանը. «Մենք «օրինակի հավանութիւն» չենք ընդունում, եւ վերջ»: «Ուիքենդի» պատվերների խմբագիրն ասում է. «Եթէ օրինակի հավանութիւնը ներկայացվում է իբրեւ հարցազրույց տալու անխախտ պայման, մենք (տվյալ անձի ներկայացուցչին) առաջարկում ենք հրատարակել մեր թերթից եւ փոխարենը հարցազրույց տալ «անվտանգ» մամուլին՝ թաբլոյդներին եւ այն հանդեսներին, որոնք թույլ կտան, որ իրենց հաճախորդները եւ նրանց PR-ները գնեն օրինակը եւ փոփոխութիւններ կատարեն»:

«Ես կուզենայի մտածել,- շարունակում է նա,- թէ այս հարցում լուրջ թերթերի մեծ մասը մեզ հետ համերաշխ է: Սակայն երբեմն զարմանում են նրանց զիջողութեան վրա, երբ տեսնում են «անհասանելի» աստղի ցնծուն լուսանկարը՝ մեկ այլ թերթում տպագրված հարցազրույցի կողքին»:

Երբեմն հարցազրույց տվող անձը կամ նրա ներկայացուցիչը ցանկանում են նայել մեջբերումները, իրենց ասելով՝ ցանկանալով հանդգնել, որ իրենց ասածը ճիշտ են շարադրել: «Սա կարող է փորձանք դառնալ (մեկ այլ թերթում): Մենք մի անգամ հարցազրույցի օրինակն ուղարկեցինք մի հայտնի

արձակագրի, որից հետո նա դուրս հանեց իր արտասանած բոլոր կոպիտ բառերն ու նրբացրեց կատակները... Եթե հիշողությունս չի դավաճանում, մենք առաջարկված փոփոխություններից ոչ մեկը չընդունեցինք»:

Պատվերների խմբագրի ասելով՝ հիմնականում երրորդ կարգի աստղերն են, որ առավել վերահսկողություն են փորձում իրականացնել: «Իմ հանդիպած ամենակոպիտ ու համառ PR-ը մի մանր հեռուստադերասանուհու համար էր աշխատում, նա պահանջում էր հոդվածին ու նկարներին հավանություն տալու իրավունք, երբ առարկեցինք՝ գոռաց. «էշություն», իսկ հաջորդ օրը նորից զանգեց՝ տենելու, թե արդյո՞ք մտքներս չէինք փոխել»:

«Գարդիանի» մյուս բաժիններում համանման պատմություններ են պատմում: Թե՛ գրական «Րեվյու»-ն, թե՛ արվեստների բաժինը պաշտպանում են օրինակի հավանության արգելքը, բայց ասում են նաեւ, որ այսօրվա աստղերը ավելի շատ լուսանկարներն են փորձում վերահսկել:

Արվեստների խմբագիրն ասում է. «Ես այս հարցում նրանց հասկանում եմ, քանի որ իրենց կերպարը նրանց հիմնական ունեցվածքն է»: Նա խոստովանում է. «Աստղերից մեկը լաց եղավ, երբ տեսավ թե մեր լուսանկարիչներից մեկն ինչ էր արել իր հետ... PR-ները հաճախ ասում են. «Նա չի լուսանկարվում հիմա, բայց մի քանի նկար ես արդեն ունեմ: Եվ անշուշտ այդ նկարները «հավանություն ստացած» են լինում, եւ մեծ մասամբ արված են լինում աստղեր նկարելու մեջ մասնագիտացած լուսանկարչի կողմից, որ գիտի ինչպես նրանց գեղեցկացնել»:

Օրինակի հավանության խնդրանքների անխտիր մերժումը մեծացնում է արդար եւ ճշգրիտ լինելու հարցում լրագրողի պատասխանատվությունը: Ճշգրտությունն ապահովելու համար տարբեր լրագրողներ տարբեր միջոցների են դիմում: Շատերը իրենք են մեջբերումները կարդում հարցազրույցի հեղինակին՝ եթե նյութի թեման հատկապես զգայուն կամ բարդ է լինում: Դրանից վնաս չկա:

# ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԾԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ

*ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ...*

*G2-ի ԾԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝*

*ՀԱՆԴԻՊԵԼՈՒ ՊԱՊԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ*

*Շաբաթ, 16 ապրիլի, 2005*

«Գարդիանի» երկրորդ բաժնի՝ G2-ի ապրիլի 5-ի ընդարձակված թողարկումը, որ լույս տեսավ Պապի մահվանից հետո, բայց մինչև նրա թաղումը, համարյա ամբողջովին նվիրված էր, թերթի բառերով, «Հովհաննես Պողոսի ժողովրդին» հանդիպելու համար «կաթոլիկ աշխարհով մեկ ճամփորդությանը»: Հազվադեպ, եւ շատ ընթերցողների համար զարմանալի մի երեւույթ՝ թերթը պարզ ու շիտակ կերպով, նույնիսկ համակրանքով էր շոշափել կրոնին՝ այն էլ կաթոլիկությանը վերաբերող այդ թեման:

Սակայն Պապին վերաբերող բոլոր նյութերի նման, այս մի թողարկումն էլ բեւեռացրեց ընթերցողին: «Կաթոլիկ հերալդի» խմբագիրը (գրողը նրան տաներ՝ կասեին որոշ ընթերցողներ) շնորհավորեց G2-ի 21 էջերը գրաված 30 հարցազրույցների հեղինակին, նրա աշխատանքն անվանելով «հոյակապ», «ամենախելացի նյութերը, որ վերջին տարիներս կարդացել եմ ժամանակակից եկեղեցու մասին»:

Ընթերցողներից մեկը գրեց. «Ես կաթոլիկ հավատացյալ եմ, եւ իմ կարծիքով Պապի մասին նյութերը ծայրահեղ հարգալից էին... Ես ողջ G2-ը կարդացի մեծ հետաքրքրությամբ ու հաճույքով: Դրանք առավել ողջունելի են մի թերթում, որ երբեմն սխալ ճանապարհ է բռնում՝ տպագրելով շշմեցնող հակակրոնական նյութեր»:

Մեկ այլ ընթերցող ուրիշ կարծիքի էր. «Ես սկսեցի կարդալ (այն), բայց շուտով դադարեցրի: Ինչո՞ւ: Նյութերը հավասարակշռված չէին: Իհարկե, ճիշտ էր նրանց խոսք տալը, ովքեր



հիացած էին Պապով եւ սիրուն էին նրան: Նրանց կարծիքը պետք է լսվեր: Սակայն ո՞ւր էին ՁԻԱՅ-ով վարակված կաթոլիկ կանայք Աֆրիկայից, ամերիկյան քահանաների կողմից բռնաբարված երեխաները, ո՞ւր էին անընդհատ երեխա ունենալուց հյուծված աղքատ կանայք կամ Հարավային Ամերիկայի հարստահարված աղքատները, որոնք Պապի՝ ազատագրական աստվածաբանությունը ճնշելու պատճառով, ապագայի ոչ մի հույս չունեն: «Գարդիանը» կարող էր եւ պետք է ավելի ճիշտ վարվեր»:

Իսկ ահա մի ընթերցող, որն իրեն անվանում է «ճախկին անգլիկան», խոստովանում է, թե շփոթվել է այն մարդու հանդեպ վերաբերմունքից, որի մասին իր ողջ կյանքի ընթացքում համարյա երբեք չի մտածել եւ որն «իր կենդանության օրոք իմ կյանքի վրա բացարձակապես ոչ մի ազդեցություն չի ունեցել»: G2-ի խնդրո առարկա համարի մասին այս կինն ասում է. «Տեսնելով, որ նրանում տվյալ թեմայից դուրս այլ բան չկա, ես առանց մեկ բառ կարդալու այն մի կողմ դրեցի: Առանց դրա մասին նախօրոք խոսք լինելու, ընկերուհիս ասաց, որ ինքը ճիշտ նույն կերպ է վարվել»:

Համարի հրապարակման ժամանակը վիճելի էր: Այն հայտնվեց մի այնպիսի շաբաթվա ընթացքում, երբ ողջ մամուլում խնդրո առարկա թեման զանգվածային կերպով լուսաբանվում էր, իսկ կոնկրետ «Գարդիանում» աննախադեպ քանակով նյութեր նվիրվում էին մի կրոնական առաջնորդի: Շատերի կողմից համարի տպագրման բուն փաստն իսկ ընկալվեց իբրեւ ակնածանքի նշան՝ մի կարծիք, որ, իմ կարծիքով, անհիմն է՝ վկա շիտակ (ինչպես նշել եմ անցած շաբաթվա իմ սյունակում) եւ ոչ սենտիմենտալ այն հնչերանգը, որով գրված են համարի նյութերը: Այնուամենայնիվ, շատերը համարում են, որ G2-ի մի ողջ համար տվյալ թեմային նվիրելը մի քիչ չափազանց էր. «Հասկանալի կլիներ, եթե դա աներ «Կաթոլիկ հերալդը», բայց «Գարդիա՞նը»:

Սրա համար ես ցավ եմ զգում: Խորհուրդ կտայի կարդալ համարի նյութերը «Գարդիանի» կայքում: 9 000 բառից կազմված հիմնական նյութը, գումարած 30 առանձին հարցազրույցները, մի արտասովոր ճամփորդություն են գծագրում, որ սկսվելով Վատիկանից, անցնում է Լեհաստանով, Մալթայով,

Ֆիլիպիններով, Յոնդուրասով, Կոնգոյով, ապա ավարտվում դարձյալ Վատիկանում: Այն նաեւ անդրադառնում է շատ այնպիսի թեմաների, որոնց բացակայության մեջ թերթին մեղադրում են որոշ ընթերցողներ, մասնավորապես՝ ազատագրական աստվածաբանությանը. տես, օրինակ, Յոնդուրասից գրված նյութերը: Մեջբերում կատարեմ դրանցից մեկից. «Հարավային Ամերիկայում Պապի դեմ բողոքները հիմնականում այն մասին են, թե նա վերջ դրեց ազատագրական աստվածաբանությանը՝ ձեւափոխիչ, հեղափոխական, հարստահարման դեմ պայքարող եկեղեցու մասին պատկերացմանը: Սակայն կարդինալ Ռոդրիգեսը (Յոնդուրասի եկեղեցու ղեկավարը) կարծում է, որ ազատագրության ոգին չի մեռել: «Լատինական Ամերիկայում մենք բոլորս աղքատների կողմն ենք», - ասում է նա: Եւ այլն:

Իմ տպավորությամբ՝ ողջ մտահղացումը, այդ թվում լուսանկարների շարքը, որ արժանի է առանձին ցուցահանդեսով ցուցադրվելու, միանգամայն հաջողված է, գրավիչ, արված է ճաշակով ու իմացությամբ: Ինձ դուր չի գալիս հետաքրքրության պակասը, որ շատ ընթերցողների հեռու է պահել համարն ընթերցելուց:

Շատերին՝ հիմնականում ոչ հավատացյալներին, բայց ոչ միայն նրանց, զայրացրել է, ինչպես արդեն նշել են, պապականությանը այդքան մեծ տեղ տալը: Այսպիսի ընթերցողների մեծ մասը ուրախությամբ ընդունեց Պապի թաղման օրը հրապարակված այն հոդվածը (գրված Փոլի Թոյնբիի կողմից), ուր հարձակման էին ենթարկված վերջինիս բոլոր մոտեցումները: Այս նյութի արձագանքները, դարձյալ այս բառը պետք է գործածեն, աննախադեպ էին: Ստացված հարյուրավոր իմակաների մեջ ոմանք իրենց վրդովմունքն էին հայտնում հոդվածի ոգու եւ դրա տպագրման ժամանակի հետ կապված, սակայն ճնշող մեծամասնությունը պաշտպանում էր հեղինակին եւ շնորհակալություն հայտնում նրան՝ «Գարդիանին» իրականության զգացումը վերադարձնելու համար:

# ԵՐԿԱՐ ՅՐԱԺԵՇՏ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... «ԳԱՐԴԻԱՆՈՒՄ» ՅՈՒՍԻ ՊԱՊԻ ՄԱՅՎԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

*Շաբաթ, 9 ապրիլի, 2005*

Արդյո՞ք որեւէ մեկին պապախեղդ ենք անում՝ հարցրեց խմբագիրն այս երեքշաբթի օրվա առավոտյան հավաքին: Արդեն այն ժամանակ մի շարք ընթերցողներ հենց այդ վիճակում էին: «Դուք ինձ Պապի եւ Յոսմի մասին ավելին եք պատմում, քան ես կուզենայի իմանալ»՝ սա դեռ մեղմ հանդիմանանքներից էր: Ընթերցողներից մեկը հարց էր տալիս. «Գուցե Գարդիանը Opus Dei-ի ծածկագի՞րն է»:

Հազիվ թե այդպես լինի: Սակայն Պապի մահվան լուսաբանման ծավալն ու հիմնականում չափավոր բնույթն ակնհայտորեն զարմացրին որոշ ընթերցողների, քանի որ թերթի վերաբերմունքը կրոնական հարցերին անցյալում իրենից ներկայացրել էր, գործընկերներիս մեկի խոսքերով, անուշադրության ու արհամարհանքի խառնուրդ:

Անցած շաբաթ օրվա՝ ապրիլի 2-ի համարում թեմային նվիրված էր ամբողջ հինգ էջ, իսկ առաջին էջի գլխագիրն ազդարարում էր՝ «Պապը շարժվում է դեպի մահ՝ փակելով նշանակալի մի դարաշրջան»:

Ներսի էջերը, դա դժվար չէր գլխի ընկնել, դեռ շաբաթներ առաջ հիմնականում պատրաստ էին Պապի մահվանից հետո հրապարակվելու համար, թեւ պետք է ասել, որ դեպքից հետո դրանք նաեւ նոր նյութերով լրացվեցին: Իսկ ուրբաթ օրն աշխատող խմբագիրները հայտնվել էին այլընտրանքի մեջ. քանի որ շաբաթ օրվա թողարկումն ավելի մեծածավալ է, այդ օրը պահանջվում է համարը շուտ հանձնել, իսկ նրանք չգիտեին՝ պետք կլինի՞ արդյոք դնել այդ համարում Պապի մահվան մասին նյութերը:

Այդ պատճառով էլ շաբաթ օրվա համարի երկու տարբերակ էր մշակված: Մեկ տարբերակում առաջին էջին պատկերված էր լինելու մահամերձ Պապը, իսկ ներսի էջերից երկուսը նվիրված էին լինելու միջիշխանական՝ մինչեւ նոր Պապի ընտրությունն ընկած ժամանակահատվածին՝ մասնավորաբար բացատրելով, թե ինչպես է աշխատելու կոնկլավը: Մյուս տարբերակում թեմային նվիրված նյութերը լինելու էին 2-5-րդ էջերում, որոնք զերծ էին լինելու գովազդից, եւ մեկից բացի մյուս բոլոր էջերում լինելու էին գունավոր լուսանկարներ:

Սկզբում աշխատում էին տարբերակ ա-ով, մինչեւ որ ուրբաթ օրվա երեկոյան 6-ն անց 30-ը հազիվ անցած (իսկ համարի հանձնման վերջնաժամկետը երկոյան 8-ն էր) Վատիկանից հայտարարեցին, թե Պապը կորցրել է գիտակցությունը: Ամմիջապես որոշվեց անցնել տարբերակ բ-ին: Համարի բոլոր նյութերը ուշադիր զննության ենթարկվեցին, որպեսզի ոչ մի տեղ գրված չլինի, թե Պապն արդեն մահացել է, եւ թերթը, մեկ ժամ տեւած տեճղագին աշխատանքի արդյունքում, լույս տեսավ համարյա ժամանակին:

Արդյո՞ք «Գարդիանը» ժամանակից շուտ էր վերցրել բարձրագույն նոտան: Հավանաբար՝ ոչ: Թերթի էջերից պարզ զգացվում էր անխուսափելիի մոտ լինելը, սակայն նյութերի առանցքը Հովհաննես Պողոս Երկրորդի գահակալության ավարտն ու դրա հետեւանքները լինելով՝ դրանց նշանակությունը կախված չէր լինում Պապի մահվան կոնկրետ պահից:

Երբ շաբաթ օրվա երեկոյան 9-ին հայտարարվեց Պապի մահը, «Գարդիանն» իր կայքում ընդամենը ըրպեներ անց հաղորդում տպագրեց այդ մասին (եւ գրություն ուղարկեց իր տեքստային ուղերձների բաժանորդներին): Մինչ երեկոյան տասը Guardian Unlimited-ն արդեն հրապարակել էր նախապես պատրաստված նյութերի փաթեթը, այդ թվում՝ Պապի մահախոսականը, նրա լուսանկարների մի ողջ պատկերասրահ, նոր պոնտիֆիկի ընտրության ձեւը բացատրող ինտերակտիվ գծագիր, ինչպես նաեւ տեղեկություններ հավանորդների մասին: Մոտ երեկոյան 11-ին կայքում տեղադրվեց կիրակնօրյա «Օբզերվերի» օրինակը՝ սովորականից մեկ ժամ առաջ: Եվ կիրակի օրվա ընթացքում, մինչ սգացյալ բազմու-

թյունը հավաքվում էր Վատիկանում, Guardian Unlimited-ը շարունակում էր հարստանալ նոր նյութերով:

Երկուշաբթի օրվա «Գարդիանում» Պապին էին նվիրված ներսի էջերից երեքը, իսկ առաջին էջում Ապոստոլիկ պալատում դրված Պապի մարմինը պատկերող լուսանկարի վերելի գլխագիրն ասում էր. «Եկեղեցու հոգու համար ճակատամարտն սկսված է»: Առնվազն մեկ ընթերցողի սա այնքան անհարգալից էր թվացել, որ վերջինս այս անգամ չէր գնել թերթի իր մշտական օրինակը, թեև ես սրա պատճառը լավ չեմ հասկանում: Չեր մեծ մասը, անգամ հարցի այլ առումներով թերթին քննադատելու դեպքում, ընդունում է, որ Հռոմից «Գարդիանի» հաղորդումները զերծ էին նման դեպքերի համար սովորական սենտիմենտալությունից:

Երկուշաբթի օրվա ներսի էջերում տեղ էին գտել «Արմատական ավտորիտարը» վերնագրով առաջնորդողը, մոտ 3 500 բառ պարունակող մահախոսականը (ավագ լրագրողներից մեկն ասում է, թե դա իր երբեւէ կարդացածների մեջ լավագույններից է), եւ վերջապես թեմային նվիրված ամենից վիճահարույց նյութը տվյալ ժամանակահատվածում՝ մեկնաբանությունների էջում թերի Իգլթոնի գրվածքը, որի բովանդակությունը կատարելապես համապատասխանում էր խորագրին. «Նրա ձեռքերին արյուն կա»: Սրան քննադատաբար արծագանքողների մեջ բազմաթիվ էին կաթոլիկները, մասնավորապես լեհաստանցի, բայց կային նաեւ ոչ կաթոլիկներ: Ուրիշների համար, սակայն, այս նյութը ողջունելի հակակշիռ էր Պապի հանդեպ իրենց կարծիքով թերթի դրսեւորած անհարկի ակնածանքին: Այս վերջին բնույթի արծագանքներից մեկում նույնիսկ պարադոքսալ մի արտահայտություն կար. «Աստված պահի թերի Իգլթոնին»:

Երեքշաբթի օրը, երկու հիմնական էջ Պապին նվիրելուց բացի, G2-ը՝ «Գարդիանի» թաբլոյդ-երկրորդ բաժինը 21 էջ նվիրեց շուրջերկրյա արտակարգ մի ճամփորդության, իր բառերով՝ Հովհաննես Պողոս Երկրորդի ժողովրդին հանդիպելու նպատակով (ես սրա մասին գրելու եմ հաջորդ շաբաթ, խնդրեմ ուղարկեք ձեր կարծիքը G2-ի այս համարի մասին):

Վերադառնանք խմբագրի հարցին: Ես հարցում ուղղեցի

«Գարդիանի» խմբագրակազմի անդամներին. «Պապի մահվան լուսաբանումը չափազանցված էր, թե հիմնականում ճիշտ էր արված»:

Պարզվեց՝ 34 հոգի կարծում են, որ այն չափազանցված էր, եւ միայն 27-ը՝ որ այն հիմնականում ճիշտ էր արված: Առաջիններից ոմանք լուսաբանումն անվանել էին «Դիանայակերպ», մի տպավորություն, որ ընթերցողներից ոմանք էլ էին ստացել, իսկ մի լրագրող այն անվանել էր «տհաճություն պատճառելու չափ զգացմունքաշատ»:

# ՏԵՂՈՒՄ ԼԻՆԵԼՈՒ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

*ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ...  
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՈՒ Է  
«ԳԱՐԴԻԱՆՆ» ԱՅԴՔԱՆ  
ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԻՍ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԻՆ*

*Շաբաթ, 2 ապրիլի, 2005*

Ինդոնեզիայում այս շաբաթ նորից մահ ու ավերածություն սփռած երկրաշարժը արագ ու լայնորեն լուսաբանվեց «Գարդիանում», քանի որ թերթի Հարավարևելյան Ասիայի թղթակիցը տեղում էր, երբ այն պատահեց: Նա ավելի վաղ Սումատրա էր եկել Ջակարտայից, ուր եւ բնակվում է: Նրա այս այցի հիմնական նպատակը մարզկենտրոն Բանդա Աչեհից 10 մղոն հեռավորության վրա գտնվող Նուսա գյուղ նորից այցելելն էր:

Ծննդյան օրերին հաջորդած ցունամիից հետո խմբագրի մոտ առավոտյան հավաքում դրված խնդիրներից մեկը եղել էր առաջիկա ամիսներին խնդիրը ուշադրության կենտրոնում պահելը՝ օգնության ջանքերն ու ավերված շրջանների վերակառուցումը լուսաբանելով: Սրան հասնելու համար թերթի արտասահմանյան բաժնի աշխատողները կանոնավոր կերպով այցելում էին Ինդոնեզիայի տուժած շրջաններ, մասնավորապես Նուսա գյուղը, ուր ցունամիից զոհվել էին 24 գյուղացի, այդ թվում 12 երեխա:

«Գարդիանի» թղթակից Ջոն Ագլիոնբին վերադարձել էր գյուղից եւ երկար աշխատանքային օրվանից հետո քնած էր Բանդա Աչեհի իր վարձած տանը, երբ երեկոյան 11-ը հազիվ անցած՝ երկրաշարժը նրան արթնացրեց: Պատահածի մասին նա գրել է այս երեքշաբթի օրվա առաջին էջի թղթակցության մեջ: Իր ասելով՝ դա իր տեսած ամենահզոր երկրաշարժն էր:

Մոտ 45 բուսական հոսանքն անջատված էր, բայց ոչ մի շենք չէր փլվել, ու սկզբնական խուճապն աստիճանաբար սկսել էր ցրվել: Գրասենյակից զանգեցին եւ արդեն պարզ էր, որ ամենից տուժած շրջանը մի քանի հարյուր մղոն այն կողմ էր՝ Նիաս կղզում, Սումատրայի արեւմտյան ափին ոչ շատ մոտ:

Թղթակիցն առաջին իսկ չվերթով թռնում է Մեդան, որ ինքնաթիռով մեկ ժամվա հեռավորության վրա է՝ Սումատրա կղզու արեւելյան ափին, ապա մեքենա վարձելով հասնում է Սիբուլգա, որ արդեն արեւմտյան ափին է՝ Նիասի դիմաց: Նույն օրը, ուրիշների հետ միասին, վարձու փայտե նավակով նա ճամփա է ընկնում դեպի Նիաս: Սակայն փոթորկի պատճառով նավակի շարժիչը վթարվում է: Ուղեւորներն ապաստանում են մոտակա կղզու ծովածոցում, ապա, ժամեր անց, վերադառնում Սիբուլգա: Ի վերջո, թղթակիցը կարողանում է Նիաս հասնել ինդոնեզական մի ռազմանավով, եւ կղզուց նրա առաջին թղթակցությունը «Գարդիանում» հայտնվում է հինգ-շաբթի օրը: Մինչ ես գրում եմ այս տողերը, նա դեռ միակ լրագրողն է, որ հասել է Լահեվա՝ էպիկենտրոնին ամենից մոտ քաղաքը Նիասի հյուսիսային ափին:

Ինչո՞ւ է «Գարդիանն» այսքան մեծ ուշադրություն դարձնում արտաքին լուրերին եւ այդպիսի ջանքեր գործադրում դրանք ձեռք բերելու համար: Պատճառներից մեկն այն է, որ թերթի ընթերցողները չեն ուզում փակ հորիզոն ունենալ: Անդրյու Մարն իր վերջին «Իմ գործը» (Մաքմիլան) գրքում արտաքին լուրերին մեծ տեղ տալը համարում է բրողչիթ անվանվող լուրջ թերթերի եւ թափլոյդների միջեւ առկա կարեւոր տարբերություններից մեկը, նշելով որ այս առումով դրանց միջեւ անդունդ կա, այնինչ այլ առումներով դրանք նմանություններ ունեն: «Գարդիանը», ասում է Մարը, «մյուս բոլոր թերթերի մեջ ամենից շատ է հակված օտար երկրների մասին պատմող երկար պատմություններ դնել առաջին էջում»:

Հաջորդ տարի «Գարդիանը» դադարելու է բառիս ուղղակի իմաստով բրողչիթ լինել, անցնելով նոր՝ «Մոնդի» չափի ֆորմատի, բայց դրանից նրա նվիրվածությունը միջազգային լուրերին անշուշտ չի նվազի: Ինչպես արտաքին բաժնի խմբագիրն է նշում, աշխարհի մասին տեղեկացված լինելու պահանջը, որի հանդեպ միշտ ուշադիր է եղել «Գարդիանը», առավել է սրվել 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո:



«Գարդիանն» այսօր արտերկրում ունի 21 թղթակից՝ հաստիքային կամ լրիվ-դրույք պայմանագրով աշխատող լրագրողներ: Սրանից բացի, կան մոտ կես տասնյակ կես-դրույք պայմանագրայիններ եւ մի երկար շարք «սթրինգերներ»՝ ազատ թղթակիցներ աշխարհի բոլոր ծայրերում: Վերջապես կան չորս մասնագետ թղթակիցներ, որոնք չափազանց հաճախ են լքում Լոնդոնը (սրանց թվում են դիվանագիտական եւ Միջին Արեւելքի խմբագիրները): «Գարդիանը» հինգ լրիվ-դրույք թղթակիցներ ունի ԱՄՆ-ում, երկուսը՝ Բրյուսելում, մեկական՝ Փարիզում, Բեռլինում, Չոունում, Մադրիդում, Ջագրեբում, Մոսկվայում, Իսրայելում, Բաղդադում, Դելիում, Իսլամաբադում, Պեկինում, Տոկիոյում, Նայրոբիում եւ Պրետորիայում: Պակաս տեղը, որ թերթը գիտակցում է, Հարավային Ամերիկան է:

Արտաքին բաժնի խմբագիրն ասում է. «Հարկավոր է թղթակիցներին բավարար ժամանակ ու միջոցներ տրամադրել, որպեսզի գնան ու անեն իրենց գործը»: Արդյունքում, շարունակում է նա, ոչ միայն կարելոր իրադարձություններ են լուսաբանվում, այլեւ այնպիսի նույթեր են հայտնվում, ուր տեսնում ես կոնկրետ մարդկանց եւ ստանում նրանց կողքին գտնվելու տպավորություն»:

«Գարդիանի» խմբագիրը համոզված է՝ թերթը մեծապես շահում է տեղական թղթակիցներին մեծ տեղ տալու շնորհիվ: Նա նաեւ նշում է, թե թերթի աշխույժ կայքէջը, Միացյալ Թագավորությունից դուրս միլիոնավոր ընթերցողներ ձեռք բերելով, ազդել է թղթակիցների վարկի վրա՝ ուժեղացնելով նրանց դիրքերը տեղում. մի կողմից նրանց ենթակա դարձնելով ավելի մեծ քննության, մյուս կողմից՝ մեծացնելով տարբեր աղբյուրներից օգտվելու նրանց հնարավորությունը:

Վերադառնալով մեր խոսքի սկզբին, ասենք, որ Ինդոնեզիայից մոտ 5 000 ընթերցող է այս շաբաթ մտել «Գարդիանի» կայք՝ հավանաբար տեսնելու, թե իրենց երկրում կատարվածն ինչ արձագանք է գտել մեզանում:

# ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՍԵԼՈՒ ՀԱՐՄԱՐ ՏԵՂԸ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ԼՐԱԳՐՈՂԻ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՍՐԱՊՆԴԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ԸՍՏ ՄԲՀ-Ի

*Շաբաթ, 12 մարտի, 2005*

Սըր Քրիստոֆեր Մայերը՝ Մամուլի դեմ բողոքների հանձնաժողովի նախագահը, Լոնդոնի խմբագիրների միությունում այս շաբաթ արտասանած իր ելույթում, որի մասին, ի դեպ, շատ քիչ գրվեց, ասում է, որ մամուլի լրագրողների համար իրենց կարգավիճակը բարձրացնելու ձևերից մեկը սեփական սխալներն ընդունելն ու դրանք ուղղելն է:

Նրա կարծիքով, ընդհանրապես լրագրողների, եւ մասնավորապես ՄԲՀ-ի հեղինակությունը բարձրացնելու համար դժվար է ավելի լավ միջոց գտնել, «քան սխալներն արագ ու հիմնավոր ուղղողի եւ դրանց համար ներողություն խնդրողի անուն հանելը: Դա, ի վերջո, ուժի նշան է եւ ոչ թե՛ թուլության: Դա ամենից առաջ խմբագիրների շահերից է բխում»:

Նրա այս մտքերը տեղ էին գտել իր ելույթի այն հատվածում, ուր նա առարկում էր սխալ գործած խմբագիրների համար տուգանք մտցնելու առաջարկին, պնդելով որ ՄԲՀ-ն պետք է բավարար ճկունություն ունենա՝ ուղղումների եւ ներողությունների տեղադրման մասին դեպք առ դեպք դատելու համար: Հանձնաժողովը պետք է կարողանա ազատորեն մեկնաբանել, թե որ դեպքում է բավարարված խմբագիրների կանոնագրի՝ ուղղումները «ըստ հարկի նշանակալի տեղում» տեղադրելու պահանջը: ՄԲՀ-ի նախագահը չէր ընդունում բոլոր դեպքերին նույն ստանդարտ լուծումը թելադրող այն մոտեցումը, թե բոլոր ուղղումները պետք է տեղադրվեն նույն

տեղում եւ գրավեն նույնքան ծավալ, ինչ սխալը պարունակող նյութը:

Սրանք այսպես կոչված «հանցանքի վայրում» ուղղումներն են, որոնց դեմ ես միշտ հանդես եմ եկել՝ յոթ տարի առաջ «Գարդիանում» իմ նշանակումից ի վեր: Դրանց վրա ժամանակ ու փող է ծախսվում, դրանք մեծացնում են լուրջ սխալներին ուղեկցող սթրեսը՝ ոչ միայն, բայց հատկապես, իհարկե, բողոքողի համար, միեւնույն ժամանակ դրանք հետաձգում են լուծումը: Ինչպես սրբաբան Քրիստոֆերն է նշում իր ելույթում, տեղադրման «համազոր նշանակալիություն» պահանջող ոչ մի բանածեւ, որքան էլ որ այդ գաղափարը շատերին հրապուրիչ թվա, գործնականում չի կարող աշխատել: Նա նաեւ ավելացնում է, որ «դա նշանակում է հակառակ գնալ նրանց, ովքեր հավատում են, որ ուղղումների հաստատումն եւ ընթերցողներին քաջածանոթ սյունակը բոլոր սխալները, այդ թվում անենալուրջ սխաներն ուղղելու ճիշտ վայրն է»:

«Գարդիանը» կարող է վստահորեն պաշտպանել վերոհիշյալ դիրքորոշումը, քանի որ նրա ուղղումների սյունակը «ըստ հարկի նշանակալի» տեղում է՝ թերթի առաջնորդող էջում: Շատերը կհաստատեն, որ սա թերթի ամենից հեղինակավոր էջն է՝ այստեղ է հնչում թերթի սեփական ձայնը, այստեղ են տպագրվում խմբագրին ուղղված նամակները, ուր ընթերցողն արտահայտում է իր կարծիքը: Անցած յոթ տարիներին այն կայացել է իբրեւ անենակրպիտ սխալներն անգամ խոստովանելու վայր, եւ այս հանգամանքը ստացել է Գերագույն դատարանի մի դատավորի անուղղակի հավանությունը, որն առիթն ունեցավ քննելու «Գարդիանի» համակարգը:

Սրբաբանները նշում է պատճառներից մեկը, թե ինչու բողոքները հաճախ իզուր տեղը հասնում են մինչեւ իրենց հանձնաժողով: Նրա ելույթի այս հատվածն արժանի է լիովին մեջբերվելու. «Որոշ խմբագիրներ սովորություն ունեն բանի տեղ չդնելու ճշգրտությանն առնչվող որոշ բողոքներ՝ հիմնավորելով դա բողոքողի տհաճ անձնավորություն լինելով: Սակայն, չէ՞ որ հարցը ոչ թե զրպարտությանը, այլ ճշգրտությանն է առնչվում: Նման դեպքերում ոչ մի նշանակություն չունի, եթե անգամ բողոքողն իսկապես «տականք» լինի: Կա-

նոնագիրը վերաբերում է բոլորին: Եթե մեկի հանդեպ նշանակալի սխալ եք գործել, ակնկալվում է, որ պետք է ուղղեք ձեր սխալը: Հույս ունեմ նման խուսանավումներն այսուհետ քիչ կլինեն, քանի որ դրանք ոչ մի արդյունքի չեն հանգեցնում»:

Նման բողոքները, այսպես ասենք, ոչ այնքան դուրեկան մարդկանցից, թերթի անկախությունն ու անկողմնակալության յուրօրինակ քննություն են: Փաստը, որ «Գարդիանի» ուղղումների մեծագույն դեպքում մեղավոր է համարվում թերթն ընդհանրապես եւ կոնկրետ լրագրողի անուն չի նշվում, օգնել է այն գաղափարի հաստատմանը, որ կարելու է սխալն ընդունելն ու այն ուղղելը: Մենք, եղել է, ճշգրտության հետ կապված ուղղումներ ենք արել՝ ի պատասխան որոշ անտանելի անձանց ու կազմակերպությունների բողոքների, եթե տեսել ենք, որ իսկապես սխալ բաներ ենք գրել նրանց մասին, եւ սա արել ենք՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպես են նրանք օգտագործելու իրենց հաղթանակը (չէ՞ որ այս տեսակի բողոքողները ուղղումի տպագրումը սովորաբար հենց որպես իրենց հաղթանակ են դիտում):

Վերադառնալով սրը Քրիստոֆերի այն մտքին, թե ուղղումների կանոնավոր հրապարակումը կխթանի ոչ միայն լրագրողների, այլեւ ՄԲՀ-ի հեղինակությունը, պետք է ասեմ, որ խիստ պատժամիջոցներ կամ կանոնադրություն պահանջողների համար ավելի հստակ ազդանշան չէր կարող լինել այն մասին, որ ինքնակարգավորումը կարող է հաջողությամբ իրականացվել: Այսօր այն մասամբ է միայն իրականացվում: Ո՞ւմ մեղքն է դա:

# ՈՏՆԱՅԵՏՔԵՐ ԶՅԱՆ ՎՐԱ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ՆԿԱՐՆԵՐԻ ԶԵՎԱՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

*Շաբաթ, 5 մարտի, 2005*

Մտո մեկ շաբաթ առաջ «Գարդիանը» տպագրեց մի լուսանկար, որի տակ գրված էր. «Գարնանային այս ծաղիկները հենց նոր են փրկվել Էդինբուրգի ձնահողմից»: Նկարը վերագրված էր Դեյվիդ Չեսկինին եւ Փրես ասոսիեյշն գործակալությանը (PA), ուր վերջինս աշխատում է:

Նույն օրը երեկոյան 8-ից մի փոքր առաջ PA-ը հրապարակեց այսպես կոչված mandatory kill՝ հրաման այն մասին, որ տվյալ նկարը չպետք է հրապարակվի եւ պետք է ջնջվի նկարների արխիվներից: Եվ անշուշտ, «Գարդիանի» եւ մի շարք այլ թերթերի համար հրամանն արդեն ուշացած էր:

Հրամանում արգելված նկարի գունավոր վերատպության կողքին կարմիրով գրված էր, թե «մեր ուշարդությունը հրավիրել են այն հանգամանքի վրա, որ նկարի որոշ մասեր թվայնորեն կլոնավորված են»: Նկարի արգելումը հստակ էր ու աներկբա:

Մամուլի դեմ բողոքների հանձնաժողովի կողմից վերահսկվող խմբագրական կանոնագրի ուղեցույցում ասված է. «ՄԲԳ-ն պահանջում է, որ եթե նկարը այն չէ, ինչ ներկայացվում է, կամ երբ այն հնարված է ու կամ թվայնորեն ձեւափոխված, ընթերցողն այս մասին պետք է ընդհանուր կերպով տեղյակ պահվի»:

Ենթադրվում է, որ նկարներն ունեն իրականության մի մասնիկը մեզ ցույց տալու վստահելի գործառույթ, այդ իսկ պատճառով դրանք աղավաղելը փոքր հարց չէ, անգամ եթե խոսքը գնում է ծաղիկներով ծածկված բլրի մասին, ինչպես այս դեպքում:

Երեքշաբթի (մարտի 1-ին) «Գարդիանի» ուղղումների սյունակում հայտնվեց հետեւյալ գրառումը՝ «Էդինբուրգում մի

քանի սանտիմետր հաստության ձյունների մեջ սփռված գարնանային ծաղիկներ պատկերող լուսանկարը թվայնորեն ձեւափոխված էր... Գործակալությունը, որ լուսանկարը տրամադրելիս դրա մասին տեղյակ չէր, հրապարակումից հետո հայտնաբերել է, որ տեղի է ունեցել պատկերի կլոնավորում»:

PA-ի խմբագիրը պատմեց ինձ, թե լուսանկարիչն ասել է, որ ինքը Ֆոտոշոփի (թվային նկարների խմբագրման ծրագրի) հետ մոթերի մեջ ընկած խաղալիս է եղել, եւ պատահաբար սխալ նկար է ուղարկել: Գործակալությունն այս բացատրությունն ընդունել էր:

Այնուամենայնիվ, ինձ ասացին, որ իրենք հարցին լրջությամբ են մոտենում, եւ այլ ձեռք առնված միջոցների թվում խմբագիրն ու նկարների խմբագիրը վերաշրջանառել են նկարների էլեկտրոնային օգտագործման հարցում PA-ի կանոնները: Դրանք սկսվում են հետեւյալ հայտարարությամբ. «PA-ի նկարների բովանդակության շիտակությունն ու վստահելիությունը խիստ մեծ կարեւորություն ունեն: Լուսանկարի բովանդակությունը երբեք չի կարելի փոխել կամ աղավաղել»:

Կանոններում հստակորեն նշված է, որ նկարի թվային մշակումը պետք է սահմանափակվի այն «կտրելով, հստակեցնելով, ընդհանուր դիրքը, կոնտրաստը կամ գույնը ուղղելով, մեխանիկական թերությունները (սենսորի վրա փոշի, մազեր, նեգատիվի վրա քերծվածքներ) ուղղելով, եւ պատկերի այնպիսի բարելավմամբ, որը համապատասխանում է նրան, ինչը կարող էր ձեռք բերվել ավանդական «թաց» մթնասենյակում: Սա չպետք է հանգեցնի նրան, որ նկարի մեջ մանրամասները վերանան: Նկարի մեջ որեւէ բան ավելացնելը, տեղաշարժելը կամ հանելը, եթե դա փոխում է նկարի բովանդակությունը, չի թույլատրվում»:

«Գարդիանը» նույնպես խիստ կանոն ունի, որ արգելում է նկարների ձեւափոխումը, եւ դրա համաձայն արգելվում է նույնիսկ պատկերը շրջելը՝ դիզայնի կամ այլ նպատակով: Անցած տարվա մարտին նույն այս սյունակում ես թերթին քննադատել էի իր իսկ կանոնը խախտելու եւ Մադրիդի Ատոֆա կայարանի ռմբահարումից հետո լուսանկարներից մեկը ձեւափոխելու համար. նկարի մեջ երեւացող մարդկային հատված մի վերջույթ անգունացվել էր՝ դառնալով աննկատելի:

«Գարդիանը» օրական ստանում է մոտ 5 500 թվային պատկեր: Այս եւ այլ աղբյուրներից օգտագործման համար տարեկան ընտրվում են 120-130 պատկեր: Ընթերցողն արագորեն կասկածի տակ է առնում այն նկարները, ուր ձեւափոխման նշաններ է տեսնում: Այս երկուշաբթի (փետրվարի 28-ին) մենք մի նկար տպագրեցինք, որ խորագրված էր. «Սառը պատերազմ. հյուսիսկորեացի երեխաները թիրախ են ընտրում Ամերիկան»: Նկարում պատկերված երեխաները ձնագնդակներ էին նետում Միացյալ Նահանգները ներկայացնող ձնեմարդու վրա: Ընթերցողներից մեկը գրեց. «Հյուսիսկորեական քարոզչության այս բավական թույլ նմուշն անգամ թեթեւակի քննելու դեպքում ակնհայտ է դառնում, որ ձնեմարդը սկզբնական լուսանկարի մեջ չի եղել, այլ հետո է ավելացվել»:

Բաժնի խմբագրի կարծիքով, քանի որ լուսանկարի տակ գրված էր, թե այն «թողարկված է Կորեայի պետական Կենտրոնական լրատվական գործակալության կողմից», դրանով պարզ հասկացվում էր նկարի՝ քարոզչության նմուշ լինելը: Բայց նա ընդունում է, որ այս մասին կարելի էր ավելի ուղղակի կերպով նշել:

Հիշյալ նկարը ձեւափոխված էր, թե ոչ՝ մենք հաստատ չգիտենք: Ընթերցողը կարծում է՝ այո, ձեւափոխված է, եւ հավանաբար նա ճիշտ է: Այդ նկարը քարոզչության օրինակ է, իսկ ձեւափոխումը քարոզչության սիրած գործիքներից է: Այն խաթարում է դրանից օգտվողի հեղինակությունը:

# ԿԱՆՈՆԱԳԻՐԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՎ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ՄԱՍՈՒԼԻ ԴԵՄ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

*Շաբաթ, 26 փետրվարի, 2005*

Նոր ուղեցույցը, ստեղծված «Խմբագիրների գործնական կանոնագրի կոմիտեի կողմից»՝ կոմիտե, որ գրում է այն կանոնագիրը, որի կիրառումը ՄԲՀ-ն՝ Մամուլի դեմ բողոքների հանձնաժողովը, պարտավոր է վերահսկել, օգտակար ու ողջունելի պատկերացում է տալիս այն մասին, թե ինչպես են կանոնները մեկնաբանվում եւ կիրառվում: Այն նաեւ ակնհայտ է դարձնում մի կարելուր հարցում կանոնագրի թերությունը, ինչին ես դեռ կանդիդատանամ:

«Խմբագիրների կանոնագիրքը»՝ այդպես են այն անվանել, հիշեցնում է ընթերցողին, որ ՄԲՀ-ն հետեւում է հաշտեցման սկզբունքին, այսինքն թե՛ ցանկալի է, որ բողոքները լուծուն ստանան՝ առանց ֆորմալ վճիռ կայացնող հանձնաժողովին դիմելու: Հաշտեցումը, խոսքի մեջ ասեմ, թուլության նշան չէ:

Կանոնագիրքը թվարկում է դրան հասնելու մի քանի միջոց՝ պարզաբանում, ուղղում, ներողություն, հրապարակվող նամակ, լրացուցիչ հոդված, նշում թերթի պահվող նյութերում, ներողության անհատական նամակ, կամ թերթի հետագա վարքագծին վերաբերող անհատական խոստում՝ բողոքողին խաղաղեցնելու նպատակով (օրինակ, երբ նեղություն պատճառելու մասին բողոքը կա):

Գործող համակարգի քննադատներն ասում են, թե այն աշխատում է թերթերի օգտին՝ ի վնաս բողոքողների, հակառակ որ ՄԲՀ-ի անդամների մեծ մասը լրագրողներ չեն: Ամեն դեպ-



քում, բողոքողներին հաճախ վերն առաջարկված բավարարումներից ոչ մեկը չի տրվում, մինչև որ նրանք չեն դիմում ՄԲՀ-ին, ինչը չի խոսում այն մասին, թե թերթերը հանձնաժողովից առանձնապես վախենում են:

Ուղեցույցի հրապարակումը ժամանակի առումով համընկավ համայնքների պալատի անդամի կողմից ներկայացված մի օրինագծի, որով առաջարկվում է խմբագիրներին օրենքով պարտադրել երեք օրվա ընթացքում ուղղել իրենց թերթում տեղ գտած նշանակալի անճշտությունները: Վստահորեն կարելի է ասել, որ նման օրենքի ընդունումը գործող համակարգին կոպտորեն անվստահություն հայտնելու մի քայլ կլիներ:

Ինքնակարգավորվող համակարգ ստեղծելու նպատակներից մեկն էլ հենց այն է, որ օրենքի պարտադրանքի կարիքը չզգացվի, քանի որ դա կարող է խանգարել մամուլի ազատությանը: Սրան հասնելու համար ինքնակարգավորումը պետք է բավարար չափով ուժեղ լինի եւ հստակորեն կիրառվի՝ առանց արտահայտման ազատությունը ճնշելու: Այն հավասարակշռող հանգամանք է:

Կանոնագրքի առաջաբանում ասվում է. «Կարելի է, որ հարգվի ընդունված կանոնագրի ոչ միայն տառը, այլև ոգին: Այն ոչ պետք է անհատի իրավունքների հարգմանը խանգարելու չափ նեղորեն մեկնաբանվի, ոչ էլ այնքան լայնորեն, որ անհարկի ձևով խանգարի արտահայտման ազատությանը կամ կանխի հանրային շահին միտված հրապարակումները»:

«Գարդիանն» ունի իր սեփական խմբագրական կանոնագիրը, որն իր մեջ ներառում է ՄԲՀ-ի կողմ եւ նույնիսկ դրանից էլ հեռուն է գնում՝ առանց իր լրագրության եռանդը կասեցնելու: Թերթում իմ կատարած գործառույթն անշուշտ չի բացառում ՄԲՀ-ին կամ օրենքին դիմելու դեպքերը, սակայն նվազեցնում է այդ քայլին դիմողների թիվը, եւ նվազեցնում է հավանաբար շատ մեծ չափով: Ի դեպ նշեն, որ մինչև անցած տարվա նոյեմբերն ընկած 12 ամիսների ընթացքում «Գարդիանի» կատարած ուղղումների 57%-ն արվել է երեք օրվա ընթացքում, ինչպես որ պահանջում է առաջարկվող օրինագիծը (իմ փորձը հուշում է, որ այդ պահանջը լիովին կիրառելը գործնականում անհնար է):

Վերադառնալով իմ այն մտքին, որ Խմբագիրների կանոնագիրը մի հարցում պակասություն ունի, ասեմ որ «Գարդիանի» կանոնագրի կետերից մեկը հատուկ վերաբերում է ինքնասպանության լուսաբանմանը, այնինչ կանոնագրային կոմիտեն կարծում է, թե այդ հարցն արդեն իսկ պարզաբանված է քաղաքացիների վշտի մեջ ներխուժելուն վերաբերող կետում: Սրանով ուշադրությունից դուրս է մնում բազմաթիվ վկայություններով հաստատված այն հանգամանքը, որ ինքնասպանությունների չափազանց մանրամասն կամ հուզական լուսաբանումը նպաստում է, այսպես կոչված, նմանակող ինքնասպանությունների աճին:

«Գարդիանի» կանոնագրի հատուկ կետը գրվեց, հաշվի առնելով վերոհիշյալ փաստի մասին այն վկայությունները, որ բերվեցին Օքսֆորդի սեմինարում (այնտեղ զեկուցողներից մեկը պրոֆ. Քիթ Յոթոնն էր՝ Օքսֆորդի համալսարանի «Ինքնասպանությունների ուսումնասիրության կենտրոնից») եւ Վաշինգտոնի Հոգեկան առողջության ազգային ինստիտուտի կողմից:

«Գարդիանի» կանոնագրի հիշյալ կետը զգուշացնող, ոչ թե պարտադրող բնույթ ունի: Հաշվի առնելով հիշյալ վկայությունները, այն պարզապես նշում է, որ լրագրողը պետք է ինքնասպանություն կամ դրան առնչվող դեպք լուսաբանելիս հատկապես զգուշ լինի՝ հաշվի առնելով ուրիշներին այդ ուղու վրա դնելու վտանգը: Սա վերաբերում է ինքնասպանությունը ներկայացնելուն, մասնավորապես նկարների օգտագործմանը եւ մանրամասների հիշատակմանը: Օգտագործված միջոցների մասին խոսելիս պետք է օգտագործել ընդհանուր արտահայտություններ՝ առանց հատուկ տերմիններ նշելու: Երբ հարմար է, պետք է նշել նաեւ օգնության հեռախոսահամարներ (օրինակ՝ «Սամարացիներինը»՝ 08457 909090): Պետք է նրբորեն հաշվի առնել հարազատների զգացմունքները:

Արդյո՞ք այս ամենը լավ մտածված չէ:

# ԱՄԲՈՒՆԸ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԻՄԱԿԱՅԻՆ ԼՈՒԲԻ

*ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ...  
ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑ ՆՊԱՏԱԿԸ  
ՊԱՐԶ ՈՒՂՂՈՒՄԻՑ ՅԵՌՈՒՆ Է ԳՆՈՒՄ*

*Շաբաթ, 19 փետրվարի, 2005*

Հարցը, որ իմ աշխատանքի ընթացքում հաճախ է ծագում, հետեւյալն է. որչա՞փ պետք է լինի որեւէ նյութում թույլ տրված սխալը, որպեսզի այդ նյութն ընդհանրապես արժեզրկվի: Այն սխալի առնչությամբ, որին մի քանի շաբաթ առաջ նվիրված էր իմ այս սյունակը, հարցը հետեւյալ ձեւակերպումը կունենա. «Արդյո՞ք «Գարդիանի» կողմից Հոլոքոսթի տարեւիցի ողջ լուսաբանումը արժեզրկվեց այն պատճառով, որ նացիստների կողմից գրավված Լեհաստանում ստեղծված համակենտրոնացման ճամբարները հիշատակվել էին իբրեւ «Լեհական մահվան ճամբարներ»:

Կոնկրետ այս հարցի պատասխանն է՝ ոչ, իհարկե ոչ: Դա իսկապես լուրջ սխալ էր, բայց ընդամենը մեկ նյութում, թող որ՝ առաջնորդող: Պատասխանը բացասական է նաեւ այն պատճառով, որ սխալն արագորեն ընդունվեց եւ ուղղվեց, ինչին անմիջապես հետեւեցին ընդարձակ բանավեճն ու խմբագրի ներողությունը՝ իմ սյունակում: Եթե նույն հարցը տայինք միայն խնդրո առարկա առաջնորդողի վերաբերյալ, պատասխանը դարձյալ բացասական կլիներ, քանի որ նյութը հստակ զգացումներ էր արտահայտում եւ զովաբանվել է անզամ հիշյալ բառակապակցությանը իրավացիորեն առարկողների կողմից:

Բողոքողների առարկումներում, ի շարս այլոց, երկու կարեւոր ու հասկանալի պնդում կար: Առաջինն այն էր, որ նկա-

րագրությունն ամեն դեպքում սխալ էր: Սա այսպես էր՝ անկախ այն հանգամանքից, արդյո՞ք հարցը դիտարկվում էր ավելի ուշ որոշ թղթակիցների հիշատակած համատեքստում, այն է՝ Լեհաստանում այդ ժամանակ տարածված հակասեմականության ֆոնին: Իսկ երկրորդ պնդումն այն էր, որ եթե հիշյալ բառակապակցությունը մնար չուղղված, ինչքան ժամանակը մեզ հեռացներ խնդրո առարկա իրադարձություններից, այնքան կմեծանար հավանականությունը, որ պատմությանն անտեղյակները ասվածը կհասկանային բառացի:

Ամենից առաջ այս վերջին հանգամանքի պատճառով էր թերեւս, որ «Գարդիանը», Միացյալ Թագավորությունում եւ այլուր, մի շարք այլ լրատվամիջոցների հետ միասին, համառ լրբբինգի թիրախ դարձավ, որ կոնկրետ այս դեպքում բաց դուռը կոտրել էր նշանակում:

Թեեւ «Գարդիանում» դա հիմա քիչ է պատահում, բայց այժմ էլ դեռ լրագրողները երբեմն այն մտահոգությունն են արտահայտում, թե լուրջ սխալների արագ ու հրապարակային ընդունման սկզբունքի որդեգրումը ինչ-որ չափով վնասում է իրենց կարգավիճակին ու հեղինակությանը, ու նաեւ թերթի հեղինակությանը, այնինչ իմ կարծիքով հաճախ, ավելի ճիշտ կլինի ասել՝ սովորաբար, արդյունքը ճիշտ հակառակն է լինում:

Հենց սխալը չընդունելու դեպքում առաջացող զայրույթից ու հակամարտությունից է, որ սովորաբար վնաս է գալիս: Սրա հետ կապված արժեր հիշել Անդրու Գիլիգանի հեռարձակած նյութի արդյունքում BBC-ի եւ կառավարության բախումը:

Երբեմն կարելու է լինում ճիշտ հասկանալ այս կամ այն լրբբիի հետապնդած նպատակը: Լինում է, որ այն շատ պարզ է՝ կոնկրետ որեւէ կետի ուղղում, սակայն իմ փորձառության մեջ սա ամենից հաճախ հանդիպող տարբերակը չէ: Եթե լրբբիի մոտիվացիան հասկանալի եւ ընդունելի է, ինչպես «Լեհական մահվան ճամբարներ» արտահայտությունն արգելելու համախմբված ջանքի դեպքում, մենք ըստ էության միանում ենք տվյալ լրբբիին: (Ի դեպ, «Գարդիանի» եւ Channel 4 News-ի ուղղումներից հետո էլ հիշյալ վիրավորական արտահայտությունը դեռ օգտագործվում է, օրինակ, «Լոնդոն իվնինգ ստանդարտում»):

Երբեմն, սակայն, հիմք ես ունենում մտածելու, որ հետապնդվող նպատակը ոչ թե պարզապես ուղղումն է, այլ այս կամ այն հրապարակումը կամ մեկնաբանությունը վարկաբեկելը՝ կոնկրետ թերությունը փորձելով ներկայացնել իբրև ամբողջ նյութի անընդունելիության ապացույց: Այս տեսակի լրբեհնգի համակարգողը նման դեպքերում սեփական կայքում տեղադրում է, ասենք, մի հրապարակում, ուր տրվում է հետևյալ հարցը. «Եթե այս հարցում նրանք սխալվել են, ուրեմն էլի որքա՞ն հարցերում են սխալվել»: Կամ՝ «Նրանք ստիպված էին ընդունել, որ այս հարցում սխալվել են, հետևաբար դուք կհավատաք մեզ, երբ մենք ասում ենք, որ նրանք մնացած ամեն ինչում էլ են սխալ»: «Ստիպված» շատ սիրված բառ է, ընդ որում՝ ոչ այնքան անհատների, որքան ուղղմանը հասած լրբեհի անդամների կողմից (ինչը բնավ նույն բանը չէ), հակառակ որ այդ ուղղումը մեծավ մասամբ ձեռք է բերված լինում առանց որեւէ ստիպողության:

Չափազանցություն չի լինի ասելը, որ որոշ դեպքերում լրբեհնգի նպատակը ավելի հեռուն է գնում քան տվյալ հրապարակումը վարկաբեկելն է. որպես թիրախ ընտրված է լինում կոնկրետ լրագրողը կամ նույնիսկ՝ կոնկրետ լրատվամիջոցը, տվյալ դեպքում՝ «Գարդիանն» իբրև գլոբալ հրատարակիչ՝ իր կայքէջի միջոցով: Եվ սա արվում է այն մեծ հեղինակության պատճառով, որ վայելում է «Գարդիանը»՝ իբրև (հիմնականում) վստահելի լուրերի աղբյուր: Հենց այս վստահությունն արդարացնելու համար է ամենից առաջ, որ թերթը պարբերաբար ուղղում է իր կատարած սխալները՝ կլինի այս կամ այն լրբեհի ճնշումը, թե՛ ոչ: Պարտդոքսալ կերպով, հենց այս հանգամանքն էլ «Գարդիանին» դարձնում է լրբեհնգի թիրախ:

Վերադառնանք ամենասկզբում տրված հարցին: Պատահել է՝ այս սյունակում մենք քննարկել ենք հրապարակումներ, որոնք ոչ թե պարզապես սխալ են եղել, այլ ամբողջապես սխալ: Նման դեպքերը, սակայն, շատ ավելի քիչ են պատահում, քան պնդում են որոշ լրբեհներ:

# ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆԸ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՔԻՉ ԹԵ ՇԱՏ ՊԱՏԱՀԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Շաբաթ, 12 փետրվարի, 2005*

Այս երեքշաբթի «Գարդիանը» տպագրեց ներգաղթի եւ ապաստանի վերաբերյալ կառավարության հնգամյա պլանի մանրամասները: Խնդրին էին նվիրված առաջին էջի մի հաղորդում, առաջնորդող մի հոդված, մեկնաբանությունների էջի մի նյութ՝ «Ներգաղթի եւ հանցագործությունների վախճ կուսակցություններին մղում է մեկը մյուսից առաջ ընկնել» վերնագրով, եւ Սթիվ Բելի ծաղրանակարը, որում Թոնի Բլերն ու Սայքլ Յովարդը դեմ դիմաց կանգնած են Համայնքների պալատում, իսկ նրանց երկճյուղ եւ դուրս ընկած լեզուների վրա գրված է. Wogs/go home՝ «Սեւաքամակներ, հեռացեք»: Իսկ նկարի մեկնաբանությունն ասում էր. «Մեծ բանավեճն սկսված է»:

Մեկ այլ էջում ներքին գործերի խմբագիրը բացատրում էր, թե ինչպես է աշխատելու պլանում ներառված միավորների համակարգը: Իսկ դրա տակ, ինչպես ավելի ուշ պարզվեց, խնդրին նվիրված ամենից վիճահարույց նյութն էր՝ ժողովրդի ձայնը (vox pop), ուր հանրության ներկայացուցիչներն արտահայտում էին իրենց կարծիքը ներգաղթի վերահսկման վերաբերյալ:

Մեջբերված էր հինգ մարդու կարծիք: Մի սեւամորթ մանկաբարձուհի եւ Գանայից մի ուսանող պատմում էին ներգաղթի մարմինների հետ շփվելիս իրենց հանդիպած դժվարությունների մասին: Մնացած երեք արտահայտվածների՝ երկու սպիտակամորթի եւ մեկ ոչ սպիտակ բրիտանացու նաեւ լուսանկարներն էին տպագրված:

Սպիտակ բրիտանացիք հիմնականում շաբլոն կարծիք էին արտահայտել, թեև նրանցից ոչ մեկը ներգաղթին լիովին դեմ չէր եւ ընդունում էր, որ երկիրը ներգաղթողների կարիքն ունի, երկուսն էլ ասում էին, թե վերջիններս «հերթում միշտ առաջ են ընկնում» եւ յուրացնում այնպիսի արտոնություններ, որ չեն տրվում անգամ իրենց երկրի համար կռվածներին, որ քնուն են փողոցներում: Նրանք հանցագործությունների ու հիվանդությունների աճը կապում էին ներգաղթողների հետ եւ վախ էին հայտնում, թե վերջիններս «կհեղեղեն» երկիրը: Իսկ գլխազիրը մեջբերում էր նրանցից մեկի խոսքերը. «Այսօր նրանք ուղղակի կարող են բացել մեր դուռը եւ ներս մտնել»:

Թեև նյութից դա պարզ չէր դառնում, երկու աֆրիկացիները հարցվել էին Լուսնար հաուսում՝ ներքին գործերի նախարարության ներգաղթի ու ազգությունների Քրոյդոնի բաժանմունքում: Սկզբում նախատեսել էին ողջ հարցումն անցկացնել այնտեղի մարդկանց հետ, բայց հետո որոշել էին «ավելի լայն» հարցում անել:

Երեքշաբթի խմբագրի սենյակում անցկացված առավոտյան հավաքին տվյալ հարցումը ենթարկվեց խիստ, բայց ոչ հանընդհանուր քննադատության: Լրագրողներից մեկը, որ առանցքային դեր է խաղում «Գարդիանում» բազմակարծության ապահովման գործում, պնդում էր, որ թերթն անպատասխանատվություն է ցուցաբերել՝ տպագրելով մեջբերումներ, որոնք, գլխազրի ու ներկայացման հետ միասին, սնունդ են տալիս ռասիստական կաղապարների եւ խթանում դրանք: Նրա կարծիքով թերթը պետք է գոնե իր կողմից համապատասխան նշում աներ՝ «մեջբերումները դնելով համատեքստի մեջ»:

Ես իմակ ուղարկեցի թերթի բոլոր լրագրողներին՝ հարցնելով նրանց կարծիքը: Մի մասն ընդհանրապես կասկածի տակ առավ տվյալ խնդրի առնչությամբ ժողովրդի ձայնին դիմելու նպատակահարմարությունը. «Vox pop-ը պարզ գործիք է եւ պետք է օգտագործվի պարզ խնդիրների դեպքում, օրինակ՝ խանութների շուրջօրյա բաց լինելը, գերբեռնվածության վճարը, եւ նման բաներ: Խնդրո առարկա հարցի նման բարդ հարցերի դեպքում vox pop անցկացնելը անպատասխանատու եւ վտանգավոր է»:

Լրագրողներից մեկն ասաց, թե ավելի ճիշտ կլիներ, եթե նյութը լրագրողի կողմից պատրաստված լիներ, որպեսզի մեջբերումները, օրինակ, կարծիքների գիտականորեն հիմնավորված քննության համատեքստում բերվեին, կամ առնվազն նշվեր, որ դրանք բոլորի կարծիքը չեն:

Մի քանի լրագրողներ ընդհանրապես ամբողջ նյութին էին դեմ, ասելով, որ նորությունների բաժինը դիմել է դրան՝ նոր գաղափարներ չունենալով: Մեկ ուրիշն ասաց. «Ռա ժամանակի իզուր վատնում էր: Անկասկած է, որ մեր ընթերցողը ժողովրդի ձայնը լսելու կարիքը չունի՝ (այս կարգի մտքերի մասին)՝ տեղեկանալու համար: Ալֆ Գարնետը (ծան - *BBC-ի երկու հայտնի հեռուստասերիալների պերսոնաժ*) դրանք տարիներ առաջ է արտահայտել ու սրա արձագանքը դեռ լսվում է պանդոկներում ու որոշ թաբլոյդներում»:

Պատասխանած լրագրողների մեծ մասի կարծիքով՝ ժողովրդական հարցումը օգտակար է լինում որոշակի հանգամանքներում. «Այն արդյունավետ է, երբ ակնկալվում է, որ հարցված մարդիկ տեղեկացված կլինեն, օրինակ, երբ որսորդության արգելման դեմ բողոքի ցույցի ժամանակ հարցվում են աղվեսորսի պաշտպանները, երբ կայարանում գնացքից օգտվողներին հարցնում են երկաթուղու աշխատանքի մասին կամ էլ երբ ընտրելու համար հերթ կանգնած իրաքցիներին հարցնում են ընտրություններից... Այս կոնկրետ դեպքում հետաքրքիր կլիներ ավելի շատ լսել Լուինար հաուսում հերթ կանգնած ներգաղթյալների կարծիքը, քանի որ ... այդ դեպքում դու լսում ես համապատասխան փորձառություն ունեցողների»:

Շատ լրագրողներ մերժում էին մեջբերումները «համատեքստի մեջ դնելու» եւ դրանց կողքին «զգուշացումներ» դնելու գաղափարը, համարելով դա վիրավորական ընթերցողի համար: Մի քանիսը նշում էին, որ ժողովրդի կարծիքը միշտ էլ ակնհայտորեն ոչ ներկայացուցչական է եւ հրապարակումը բնավ չի ենթադրում, թե թերթը վստահելի է համարում հայտնված մտքերը կամ նույնիսկ հավանություն է տալիս դրանց: Եղածն ընդամենը «հասարակ մարդկանց» շրջանում կարծիքի պատահական հարցում էր, որ նպատակ ունեւորողները ընթերցողին՝ մտածելու տվյալ հարցի մասին:



Ոմանք ասում էին, թե նման նյութերից հրաժարվելը մեծ սխալ կլիներ, ընդունելով հանդերձ, որ խնդրո առարկա կոնկրետ հրապարակումը կարող էր եւ ավելի լավ մտածված ու ներկայացված լինել:

# ԱՐԴԱՐԱՑԻ ԲՈՂՈՔ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ՀՈԼՈՔՈՍԹԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԼԵՀԱՍՏԱՆԻՑ ՀՆՉԱԾ ԲՈՂՈՔԻ ՄԱՍԻՆ

*Շաբաթ, 29 հունվարի, 2005*

«Գարդիանի» կողմից Հոլոքոսթի հիշատակի օրվա եւ դրա հետ կապված դեպքերի լուսաբանումը, որի ամեն բառը ընթերցողի խոշորացույցի տակ հայտնվեց, այնքան էլ հարթ չանցավ: Խիստ քննադատության ենթարկվեց այն փաստը, որ լուսաբանումը ոչ թե հենց հիշատակի բուն օրը՝ հինգշաբթի կատարվեց, այլ դրան մոտ օրերին: Այդ օրը թերթում թեմային վերաբերող շատ քիչ բան կար, թեեւ նույնը չի կարելի ասել կայքէջի մասին:

Մինչեւ այս շաբաթավերջ թերթի ուղղումների սյունակում հայտնվեցին մի շարք անոթահար անող գրություններ, որոնցում նշվում էին հիմնական առումներով հուզիչ ու հիշարժան լուսաբանման վրա ստվեր ձգած սխալները:

Իսկ լուսաբանումն իսկապես հիշարժան էր: Մասնավորապես՝ G2-ը՝ «Գարդիանի» թաբլոյդ երկրորդ բաժինը, հունվարի 13-ին համարյա ամբողջովին նվիրված էր Օսվենցիմը՝ վերապրածների հիշողություններին, եւ իմ կարծիքով, դրա թե՛ տեքստերը, թե՛ լուսանկարներն ու ձեւավորումը ըստ պատշաճին էին: Ինձ բացատրեցին, որ հենց այս լուսաբանման ծավալունությամբ էլ (G2-ի առաջին 13 էջերը) մասամբ պայմանավորված էր հինգշաբթի օրվա համարում Հոլոքոսթին նվիրված նյութերի փոքր քանակը:

G2-ի տվյալ համարի նյութերի լավ ու թերեւս օգտակար կողմերից մեկն էլ այն էր, որ դրանց համար նախաբան էր գրել Ջոնաթան Վեբերը, որը լեհական կառավարության Օսվենցի-

մի միջազգային խորհրդի անդամ է եւ Օքսֆորդի լեհ-հրեական ուսումնասիրությունների հաստատության փոխնախագահը (ավելի ուշ պարզ կդառնա, թե ինչու եմ ես շեշտում այս հանգամանքը):

Այս շաբաթ ուղղումների ամենօրյա սյունակում հայտնված սխալներից երկուսի պատճառը խմբագրի կամ փոխխմբագրի միջամտությունն էր: Նրանցից մեկը խաղաղության Նոբելյան դափնեկիր Էլի Վիսելին տղամարդուց դարձրել էր կին՝ նրանից բերված մեջբերումից հետո ավելացնելով she said (նա ասաց) բառերը: Վիսելի գործերին անծանոթ բոլորին առաջարկում ենք օգտվել [www.eliewieselfoundation.org](http://www.eliewieselfoundation.org) կայքից:

Մյուս խմբագրական սխալով կանցլեր Գերհարդ Շրյոդերը դարձել էր Գերմանիայի պետության ղեկավար՝ մի դեր, որ վերապահված է նախագահ Զորստ Քյոլերին:

Իսկ ամենից լուրջ սխալը, որ տեղ էր գտել առաջնորդող սյունակում, հանգեցրեց հետեւյալ ուղղմանը, որ հիշատակված մյուսների հետ տպագրվեց հունվարի 27-ին. «Երեկ, Զոլոքոսթի հիշատակի օրվան նվիրված առաջնորդողում, էջ 25, մենք գրել ենք «լեհական գազախցիկներ եւ դիակիզարան»: Այնինչ դրանք պետք է հիշատակվեին իբրեւ Լեհաստանում եղած նացիստական գազախցիկներ ու դիակիզարան՝ մի տարբերություն, որի վրա հիմնավորված կերպով մեր ուշադրությունն էին հրավիրել նախորդ մեկ այլ դեպքում»:

Այս տխուր սխալը մեծ արձագանք ունեցավ, մասնավորապես Լեհաստանում: Ինձ բողոքներ էին հասնում թե՛ անհատներից, թե՛ լեհական մամուլից ու հեռուստատեսությունից: Սրան արագորեն հետեւեցին այլ բողոքներ՝ ստորագրված նախ Եվրախորհրդարանի լեհ անդամների, ապա Լոնդոնում Լեհաստանի դեսպանի կողմից:

Ամենազայրացնողն այն է, որ բողոքի հիմնական կետը արդեն մի անգամ ուղղվել էր անցյալում, ավելի կոնկրետ՝ 2001թ. հուլիսի 31-ին: Այն ժամանակ ուղղումն ասում էր. «Գլխագրերից մեկում ... գրված էր՝ «Հրեաները, որ ապստամբեցին լեհական մահվան ճամբարում»: Այնինչ Սոբիբորն, իհարկե, նացիստական մահվան ճամբար էր գերմանացիների կողմից զավթված Լեհաստանում: Այն լեհական մահվան ճամբար չէր»: Լե-

հերի զգայուն լինելն այս հարցում դժվար չէ հասկանալ:

Անշուշտ, անցած դարի պատմությունից գոնե նվազագույն գիտելիքներ ունեցող մեկը դժվար թե ասվածը մեկնաբանի այնպես, իբրեւ թե «Գարդիանը» հավատում է, որ լեհերն իրենք մահվան ճամբարներ են ստեղծել: Իմ կարծիքով, ընթերցողների մեծ մասին թերթի առաջնորդողի իմաստը պետք է պարզ լիներ, քանի որ դրանում, Օսվենցիմի մասին խոսելիս, ասվում էր. «Ոչ մի ուրիշ անուն այդքան չի հիշեցնում վեց միլիոն հրեաների՝ *նացիստական* ցեղասպանության հիմնական զոհերի բնաջնջման մասին» (շեղագիրը իմն է): Արդյո՞ք մենք պետք է հատուկ ընդգծեինք, որ հիշատակված նացիստները գերմանացի էին:

Մենք, իհարկե, ծանոթ ենք Զոլոբոսթի հարցում մարդկանց անտեղյակության աստիճանին: Հենց նույն առաջնորդողում, այս մասին նշում է նաեւ դեսպանը, մենք սա անվանել էինք «անհանգստացնող անտեղյակություն»: Նաեւ այս հանգամանքով պայմանավորված, մահվան ճամբարները լեհական անվանելը հասկանալի է, որ լուրջ վիրավորանք էր դիտվելու շատ լեհերի կողմից:

Վերադառնամ վերելում հիշատակված Ջոնաթան Վեբերին եւ մեջբերեմ թերթից նրա խոսքերը Օսվենցիմի մասին. «Այս ճամբարն էին ուղարկվում լեհ մտավորականները, հոգեւորականները, դիմադրության շարժման անդամները, եւ պարզապես շարքային լեհեր, որոնց ձերբակալում էին փողոցային շուրջկալների ժամանակ: Օսվենցիմում սպանվել է 75 հազար լեհ»:

«Գարդիանը» անզուշտորեն վիրավորել է այս իրողությանը ամենից մոտ կանգնած բազմաթիվ մարդկանց, ու ես խմբագրի խնդրանքով նրա իսկ անունից ներողություն եմ խնդրում դրա համար:

# ՄԱՍՈՒԼԸ ՈՐԻՆ ԱՐԺԱՆԻ՞ ԵՆՔ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՇՈՒՐՋ ՈՐՈՇ ԽՈՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Շաբաթ, 22 հունվարի, 2005

«Գարդիանի» լրագրողների արձագանքը բրիտանական մամուլի քննադատությամբ Ջոն Լոյդի սկսած բանավեճին միանշանակ չէր: Լոյդի պնդումների մեխն այն է, թե լրատվամիջոցները գոյություն ունեն «իրական» աշխարհի հետ չկապված մի «գուգահեռ իրականության» մեջ, արդյունքում նրանք քաղաքական ու հանրային կյանքի մի աղավաղված պատկեր են ներկայացնում՝ դրանով քայքայելով մեր ժողովրդավարության առողջությունը:

Լոյդն իր մտքերը նախ հստակորեն շարադրեց իր «Ինչ են անում լրատվամիջոցները մեր քաղաքականության հետ» գրքում, ապա զարգացրեց «Մեդիա Գարդիան»-ի վերջին երկու համարներում: Դրանցից առաջինը (10 հունվարի) ամբողջովին նվիրված էր բանավեճին եւ մեծապես նաեւ «Բրիտանիան դեկավարող մարդկանց» կարծիքին (մեջբերում թերթի երեսի տողից):

Հարցվածների մեծ մասը պաշտպանում էր Լոյդի թեզը: Կային կարծիքներում կրկնվող կետեր: Օրինակ՝ լուրն ու մեկնաբանությունը ավելի հստակորեն տարբերակելու, ավելի խիստ ինքնակարգավորման, ինչպես նաեւ «մեր ապրած աշխարհի իրական բարդությունը» ներկայացնելու ջանքերի անհրաժեշտությունը:

Պատասխանողներից մեկը լրագրողների մի մասին բնութագրել էր իբրեւ «ցինիկ կուղիսերի, որ անկեղծությունը շփոթում են անտակտության հետ եւ խոսքն օգտագործում են որպես դրա առարկայի վրա թույն ու արհամարհանք տեղալու հնարավորություն» (կուղիսը աքիսների ընտանիքին պատկանող միայնակ գիշատիչ է՝ ըստ Բլումսբերիի բառարանի):

Բանավեճի ընթացքում ոմանք վրդովմունք էին հայտնում այն առնչությամբ, թե հաստատությունների եւ կրոնական խմբերի դրական ազդեցությունը հասարակության վրա լրագրողների կողմից անտեսվում է կամ խիստ սակավ լուսաբանվում: Այնինչ, որոշ լրագրողներ սա դիտում էին իբրեւ հիմնական խնդրից իրենց շեղելու փորձ:

«Գարդիանի» հետաքննությունների խմբագիր Դեյվիդ Լին վերոհիշյալ մեղադրանքին մի պատասխան է տալիս, որի տակ կստորագրեին շատերը: Նա ասում է. «Ընդդիմադիր լրագրությունը պայթեցնում է եսասեր սուտը եւ ջրի երես հանում անցանկալի փաստեր: Դրանով ժողովրդավար հասարակությունը կարողանում է ուղղել ինքն իրեն»: Նրա պնդմամբ՝ տրամաբանական ու եական է, որ ցանկացած լրագրող ելնի Ջերեմի Փաքսմանի հարցից. «Ինչո՞ւ է այս ստախոս սրիկան ստում ինձ»:

Ինձ մի քիչ անհանգստացնում է այն, որ երբ ես շրջեցի «Գարդիանի» բաժիններով, հարցնելով լրագրողներին, թե ինչ են իրենց կարդացել խնդրո առարկա բանավեճից, ոմանք ոչինչ չէին կարդացել, մի մասն էլ ասաց, թե կարդացել է միայն վերը բերված պատասխանը: Ավելի ուշ ես նրանց մեջ էլեկտրոնային հարցում անցկացրի, եւ ստացված պատասխանները դարձյալ խրախուսիչ չէին:

Ողջ բանավեճին հետեւած մի լրագրող այն կարծիքը հայտնեց, թե «այդ ամբողջն անօգուտ էր թե՛ իբրեւ լրագրողական նախաձեռնություն, թե՛ իբրեւ պատասխան Լոյդին... Մարդկանց մեծ մասը, որոնցից կարծիք էին հարցրել, անդեն, սպիտակ, միջին դասի, համալսարանական կրթությամբ, ոչկառավարական խմբերի, հասարակական կազմակերպությունների կամ ակադեմիայի (որոնց ազդեցությունը Բրիտանիայում խիստ փոքր է) ներկայացուցիչներն էին... Դրանք մռայլ ու նվնվացող մտավորականներ են, որոնց սովորաբար անտեսում են, եւ ճիշտ են անում»:

Մեկ ուրիշը պատասխանեց. «Կարդացի բանավեճի մեծ մասը, բայց այնքան վիատեցնող էր, որ չկարողացա ավարտել: Իմ տպավորությամբ՝ հարցվածներից շատերը շահագրգռված են, որ մենք քթներս որոշ տեղեր չխոթենք»:

Իսկ ահա «Գարդիանի» քաղաքական խմբագիրը պնդում է, որ բանավեճը լավ մտահղացում էր: «Ես շատ հարցերում

համաձայն են (Լոյդի հետ), մանավանդ քաղաքականության հետ կապված»։ Նրա կարծիքով, քաղաքական լրագրությունը հաճախ զարմանալիորեն հիշեցնում է «բանվոր դասակարգի ծոցից ելած ֆուտբոլիստներին» նվիրված նյութերը՝ այն աներես է, դեստրուկտիվ, քսենոֆոբիկ, անարդար եւ չի ծառայում հանրային շահին»։ Քաղաքական խմբագիրը նշում է նաեւ, որ թերթում տպագրված պատասխանի մեջ արտահայտված մոտեցումը տիրապետող է քաղաքական լրագրողների շրջանում, ուր «լոյդ-իզմը ասում են ու դրանից վախենում»։

Որոշ լրագրողների անհանգստացումն է այն, որ ամերիկյան լրագրությունը հաստատվում է իբրեւ հետեւելու արժանի օրինակ։ Նրանցից մեկն իր անհանգստությունը ձեւակերպել է այսպես. «Ամերիկյան մեծ քաղաքների թերթերը սարսափելի ձանձրալի են... Մենք պետք է շատ զգույշ լինենք՝ չկորցնելու համար այն աշխուժությունը, որ հմայք է տալիս մեր թերթերին»։ Նախկին ամերիկյան մի թղթակից, դարձյալ խոսելով ամերիկյան մամուլի մասին, ասում է. «Սարսափելի կլիներ, եթե «Գարդիանն» էլ հանկարծ դառնար այդքան պասիվ ու տաղտկալի»։

Մեկ այլ հետաքննող լրագրող ասում է. «Ես ավելի շատ Դեյվիդ Լիի հետ են համաձայն, քան Ջոն Լոյդի... Հետաքննող լրագրությունը միշտ էլ ոմանց զայրացնելու է շատ պարզ այն պատճառով, որ դրան առնչվող մարդիկ չեն ուզում լույսն իրենց վրա պահեն։ Իսկ լրագրողը հենց այն միակ մարդն է, որ ժամանակ ու ցանկություն ունի դա անելու»։

Գործադիր խմբագիրը, որ նաեւ կրթության բաժինն է վարում, կարծում է, որ բանավեճը «գերազանց, կարելոր մի մտահղացում էր»։ Օգնական խմբագիրը նշում է. «Ես հիմնականում համաձայն են արտահայտված քննադատության հետ։ Եվ այն կասկածն ունեն, թե փոքրամասնություն են ոչ միայն «Գարդիանում», այլեւ լրագրողների մեջ ընդհանրապես, որովհետեւ... մենք քննադատություն չենք սիրում»։ Այս ավելացնում է. «Մենք գոնե պատրաստ ենք բանավեճի համար տարածք հատկացնել»։

Թերթը պատրաստվում է վերահրատարակել տպագրված ողջ նյութը՝ առանձին գրքույկով։ Պատրաստ ենք լսելու ընթերցողի կարծիքը։

# ԻՆՉՊԵՍ ԵՎ ԻՆՉՈՒ ՍՊԱՆՎԵՑԻՆ ՅՈԹ ՊԱՏԱՆԻՆԵՐԸ

*ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ...  
ԳԱԶԱՅԻՑ ՄԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ,  
ՈՐ ՔՆՆԱԴԱՏՎԵՑ ԵՐԿՈՒ ՀԱԿԱԴԻՐ  
ԼՈՐԲԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ*

*Շաբաթ, 15 հունվարի, 2005*

Հունվարի 5-ին «Գարդիանի» միջազգային լուրերի էջում տպագրված հաղորդումը, որ վերնագրված էր «Յոթ երեխա մահացել է խաչածեւ կրակից, երբ իսրայելցիները կրակ են բացել ենթադրյալ զինյալների վրա», հարուցեց թե՛ իսրայելամետ, թե՛ պաղեստինամետ իմակային լրբիների բողոքը: Այնինչ «Գարդիանի» նյութը, իմ կարծիքով, հիմնականում ճշգրիտ ու արդար էր:

Իսրայելամետ կողմի բողոքներն առավելապես, բայց ոչ բացառապես [HonestReporting.com](http://HonestReporting.com) (ԱզնիվԼրագրություն.քոմ) լրբիի կողմից էին: Այս խումբն ասում է, որ ունի 100 հազար բաժանորդ: Խմբի թիրախը այն լրատվական կազմակերպությունները կամ անհատ լրագրողներն են, որոնք, իրենց կարծիքով, անարդար, ոչ ճշգրիտ կամ ոչ համաչափ ձեւով են լուսաբանում Միջին Արեւելքի իրադարձությունները՝ վնասելով Իսրայելին:

«Գարդիանն» այս խմբի կողմից հաճախ է քննադատվում: Այս վերջին «կոմյունիկեն» Ազնիվ լրագրություն կայքում հայտնվեց հետեւյալ վերնագրով. «Բրիտանական աղավաղման Գարդիանը» (ծան - բառախաղ է՝ Գարդիան անգլերեն նշանակում է պաշտպան, պահապան): Այն նաեւ ենթավերնագիր ուներ՝ «Գարդիանի» նյութի նման անպատասխանատու նյութերի հետեւանքով Իսրայելն անարգվում է Մեծ Բրիտանիայում»:



Այնտեղ նշվում էր, որ համաձայն «Դեյլի թելեգրաֆում» հրապարակված հարցախույզի, բրիտանացիները Իսրայելը համարում են «միջազգային հարգանքի ամենից քիչ արժանի», ապա հարց էր տրվում. «Ինչպե՞ս առաջացավ Իսրայելի դեմ այս բրիտանական թշնամանքը»:

Մեղադրական ակտի նմանվող տեքստում այնուհետև մեջբերումներ էին արվում «Գարդիանի» հաղորդումից եւ թվարկվում էին դրա թերի կողմերը: Ասվում էր, թե այնտեղ իբրեւ հաստատված փաստ է ներկայացված անմեղ պաղեստինցի երեխաներին «սխալմամբ սպանելը», շրջված է ներկայացված դեպքերի հերթագայությունը՝ նախ նշվում է Իսրայելի պաշտպանության ուժերի (ԻՊՀ) պատասխանի, ապա միայն պաղեստինյան ականանետների մասին, այդ ականանետներից մեկի կրակի քաղաքացիական թիրախն Իսրայելում նկարագրվում է իբրեւ իսրայելական «դիրքեր»՝ ստեղծելով ռազմական թիրախի տպավորություն, եւ վերջապես ԻՊՀ-ի պատասխանն անվանվում է «հարձակում», այնինչ պաղեստինյան ականանետի կրակի (քաղաքացիների դեմ) վերաբերմամբ նման բացասական անվանում չի տրվում:

Վերջում «Գարդիանը» մեղադրվում էր «Իսրայելա-պաղեստինյան հակամարտության մասին սխալ պատկերացում» տարածելու մեջ, ապա հարց էր տրվում, թե մինչեւ երբ է Միացյալ Թագավորության անպատասխանատու մանուլը խաբելու բրիտանական հանրությանը՝ Իսրայելին մեղադրելով տարածաշրջանի բոլոր դժբախտությունների համար:

Ազնիվ Լրագրության իմակաների ստացումը համընկավ ավելի փոքրաքանակ, բայց ոչ պակաս կրքոտ պաղեստինամետ իմակաների հետ, այդ թվում «Լրատվամիջոցների պաղեստինյան դիտարկում» ([www.pmwatch.org](http://www.pmwatch.org)) լրբիից, որը 2000 թվին ստեղծվել է հատկապես «ԱՄՆ կենտրոնական լրատվամիջոցներում Իսրայելի կողմից Պաղեստինի զավթման արդար ու ճշգրիտ լուսաբանմանը նպաստելու» համար:

«Գարդիանին» հղած իր իմակում լրբին թվարկում էր հետեւյալ բողոքները. նյութի վերնագրում «խաչածեւ կրակ» արտահայտությունը ճշգրիտ չէ, հնարավոր գիտելիքի սահմանները չափազանցված են՝ հայտարարվում է, թե իսրայելցիները կրակ են բացել «ենթադրյալ զինյալների վրա», Մահ-

մուդ Աբասի դեպքը դատապարտելուն նախապատվություն տալը վկայում է թերթի «անզգայությունը» պաղեստինցիների մահվան հանդեպ:

«Թայմսը», «Դեյլի թեյեգրաֆը» եւ «Ինդիփենդենթը» հիշյալ մահերը հիշատակել էին հպանցիկ՝ Պաղեստինի ղեկավարի ընտրություններից առաջ պ-ն Աբասի ելույթի համատեքստում, եւ դրել էին շատ նման վերնագրեր՝ «Չափավորները դատապարտում են Իսրայելին իբրեւ սիոնիստական թշնամու» («Թայմս»), «Չափավոր Աբասը հարձակվում է «սիոնիստական թշնամու» վրա» («Թեյեգրաֆ»), «Աբասը իր կողմն է գրավում կոշտ գծի կողմնակիցներին՝ խոսելով «սիոնիստական թշնամու» մասին» («Ինդիփենդենթ»):

Այնինչ «Գարդիանի» հաղորդումը, գրված «Իսրայելում» թերթի թղթակիցներից մեկի կողմից, ամբողջովին վերաբերում էր սպանություններին: Դրանում հիշատակվում էին ե՛լ իսրայելական կողմի պնդումը՝ թե տանկը կրակել ու խփել է մի խումբ դիմակավորված մարդկանց, ե՛լ պաղեստինյան պնդումը, թե սպանվածներն ու վիրավորվածները քաղաքացիներ էին եւ գնում էին ելակ հավաքելու: Իսկ նախաբանը, ուր այդ ամենը քաղաքական համատեքստի մեջ էր դրվում, գրվել էր Լոնդոնում՝ համապատասխան բաժնի կողմից:

Վերնագրում օգտագործված «խաչածեւ կրակ» արտահայտությունն իսկապես տեղին չէր: Որքան ես հասկանում եմ, այն ենթադրում է կրակի միաժամանակյա փոխանակում, այնինչ իմ տեսած բոլոր զեկույցներում նշվում է, որ նման բան չի եղել: Կարծես թե ոչ ոք չի առարկում, որ նախ պաղեստինյան զինյալները կրակել են ականանետից, ապա որոշ ընդմիջումից հետո իսրայելական տանկը արկ է արձակել՝ սպանելով յոթ պատանիների եւ վիրավորելով եւս 11-ին:

«Իսրայելական դիրքեր» բառակապակցությունը «Գարդիանի» հաղորդման մեջ, օգտագործված պաղեստինյան ականանետային հարձակման թիրախը նշելու համար, իսկապես ենթադրում էր հստակորեն ռազմական թիրախ, այնինչ անմիջապես պատասխանի բացակայությունը մտածել է տալիս, որ այն այդպիսին չէր: «Գարդիանի» լրագրողն ասում է, թե դա մի տարածք է, ուր բնակավայրերն ու ռազմական դիրքերը կողք կողքի են: Նա նաեւ նշում է, թե դեպքի վայրից տրվող հեռու-

տատեսային մանրամասն կադրերը, ինչպես նաև Իսրայելի պաշտպանության ուժերի լռությունը հուշում են, որ իր գրածը համապատասխանում էր իրականությանը:

Ի վերջո, յոթ պատանի իսկապես սպանվել է:

# ՈՒՐՎԱԿԱՆԸ (ԳՈՍԹ) ՄԵՔԵՆԱՅԻ ՄԵՋ<sup>4</sup>

*ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ...  
ՆՐԱՆՑ ՉԱՅՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ,  
ՈՒՄ ՉԱՅՆԸ ԿԱՐՈՂ ԷՐ ԵՎ ՉԼՍՎԵԼ*

*24 հուլիսի, 2004*

Շաբաթներ առաջ մենք մեր մեկնաբանությունների էջերից մեկում հողված տպագրեցինք, ուր ապաստան փնտրողներից մեկը շարադրում էր Միդլլզբրո քաղաքում ռասիզմի դրսեւորումների մասին վկայող իր փորձառությունը:

Միդլզբրոյի խորհուրդը, ինչպես նաեւ այնտեղից ընտրված պատգամավորներից մեկը համաձայն չէին հողվածի հետ որոշ առումներով. նրանք չէին ժխտում ռասիզմի առկայությունը, բայց դեմ էին ընդհանրացում անելով ողջ քաղաքը անվանարկելուն եւ նշում էին տեղի դրական կողմերի մասին: Նրանց նամակները թերթում տպագրվեցին, եւ ինձ թվում է, դրանով արդարության պահանջը բավարարվեց:

Հողվածի հետեւանքները նույնպես իմ կարծիքով դրական էին: Կարելուր հարց էր բարձրացվում, որի մասին դրանից հետո սկսեցին գրել տեղի թերթերը: Հողվածի վերջում մի կազմակերպության էլեկտրոնային հասցեն էր նշված, որով դրա հեղինակը օգնության բազմաթիվ առաջարկներ ստացավ:

Հողվածում սակայն չէր նշված այն լրագրողի անունը, ով հարցազրույց էր վերցրել ապաստան խնդրողից եւ շարադրել նրա պատմությունը՝ նրա իսկ խոսքերով եւ նաեւ հավանությունամբ: Հողվածը փաստորեն գոսթի կողմից էր գրված (*ժան - գոսթ, բառացի՝ ուրվական, որտեղից էլ այս սյունակի վերնա-*

---

<sup>4</sup> Բառախաղ է God in the machine՝ «Աստված մեքենայի մեջ» արտահայտության հետ (հունական թատրոնում)

գիրը, այսպես կոչվում է նաև ուրիշի անունով հրապարակվող տեքստի հրական հեղինակը), ինչի մասին թերթը չէր նշել: Սրանով խախտվել էր արդյոք թերթի սկզբունքը՝ բաց լինել իր ընթերցողի առաջ: Բայց չէ՞ որ մենք չենք նշում խմբագիրների ու փոխխմբագիրների անունները, որոնք նույնպես աշխատում են հոդվածի վրա, մի՞թե գոսթը դրանից շատ է տարբերվում:

Այդ դեպքը իրավացիորեն կարելի է դիտել որպես փայլուն օրինակ թերթի կողմից իր պարտքը համարվող գործառույթներից մեկի հրականացման՝ ձայն տալ նրանց, ում ձայնն այլապես չէր լսվի: Եվ արդյո՞ք խնդրի լուսաբանումը կտուժեր, կամ որպես հեղինակ հանդես եկողի հանդեպ արհամարհանք կդրսեւորվեր, եթե խմբագիրները մի ծանոթագրությամբ տեղեկացնեին ընթերցողին, որ նրա մտքերը շարադրված են լրագրողի օգնությամբ:

Հարց է ծագում՝ ինչո՞ւ է հարկավոր դա անել ապաստան փնտրողի անունից գրված հոդվածի դեպքում, երբ նույնը չենք անում, ասենք, քաղաքական գործիչների պարագայում: Մասնակի պատասխանը կարող է լինել այսպիսին. քաղաքական գործիչի դեպքում մենք տարածված կարգին ավելի ենք ծանոթ, գիտենք, որ հավանաբար տեքստը մի քանի անգամ աշխատակազմում գնացել եկել ու լրացվել է՝ մինչև գործիչը հավանություն կտա դրան ու կդնի իր «ստորագրությունը»:

Մեկնաբանությունների խմբագիրն ասում է. «Եթե մենք, ասենք, նույն լրագրողին խնդրեինք հարցազրույց վերցնել մեկ ուրիշ ապաստան խնդրողից, եւ տեքստը դարձյալ գրվեր վերջինիս բառերով ու հավանությամբ, ինչո՞ւ պետք է վերջինս հեղինակ չհամարվեր: Սրա տարբերությունը արհմիութենական գործիչի, թանգարանի տնօրենի ու կամ քաղաքական գործիչի դեպքերից (որոնք իրենք են խորհրդատու կամ մանուկի աշխատող վարձում) միայն այն է, որ լրագրողին առաջադրանք տվողը ոչ թե ապաստան խնդրողն է, այլ մենք: Դժվար է ցույց տալ այն սահմանը, որից այն կողմ խմբագրելը վերածվում է գոսթինգի (ուրիշի փոխարեն գրելու)»:

«Գարդիանը» գոսթինգի հարցում հայտարարված քաղաքականություն չունի եւ լինում են դեպքեր, երբ նշում է, լինում է, որ չի նշում դրա մասին: Գոսթինգը ժամանակ առ ժամանակ

կիրառվում է թերթի բազմաթիվ, մասնավորապես ակնարկների, արվեստի եւ սպորտի բաժիններում:

Եթե դուք մտնեք մեծ գրախանութ, այնտեղ սպորտային աստղերի բազմաթիվ «ինքնակենսագրություններ» կգտնեք, որոնց շապիկի վրա, հաճախ ամենաերեւացող տեղում, գրված է այն շարադրողի անունը՝ «ինչպես պատմվեց» այսինչ այսինչին, կամ՝ այսինչ այսինչի «հետ միասին»: Այնինչ թերթերի մարզական էջերում տպագրվող նյութերի դեպքում գոսթինգի մասին սակավ է նշվում, այդ թվում «Գարդիանում»:

Մարզական խմբագիրը պարզաբանում է. «Մենք նյութի վերջում ծանոթագրություն չենք դնում, քանի որ դրանում հենց որպես հեղինակ նշվող անձի խոսքն է շարադրված՝ նույն այդ անձի կամ նրա ներկայացուցչի հավանությամբ: Դրանով իսկ այդ նյութերը չեն տարբերվում այս կամ այն քաղաքական կամ թե վարչական գործչի անունից վերջիններիս խորհրդականների գրած տեքստերից»: Նա ավելացնում է նաեւ, թե այդ կերպ հնարավոր է լինում հետաքրքիր նյութ քաղել սպորտսմեններից, որոնք իրենք դրա մասին գրելու ժամանակ չունեն: «Գոսթը արձանագրում է նրանց խոսքը, ապա հավանություն ստանալու համար իր գրածը փոխանցում է, ասենք, ատլետին կամ վերջինիս գործակալին՝ մինչեւ տպագրվելը»:

Ակնարկների խմբագրի հաշվարկներով, ինքը երկու շաբաթը մեկ գործ է ունենում գոսթինգի հետ: «Կիրառվող հիմնական սկզբունքը, իմ կարծիքով, պետք է լինի այն, որ գոսթերը ուրիշի խոսքը գրի առնելու եւ խմբագրելու աշխատանք կատարեն, ոչ թե՝ գրելու: Երբ մենք x-ին խնդրում ենք գոսթինգ անել y-ի տեքստը, ակնկալվում է, որ լեզուն պետք է y-ինը լինի, ոչ թե՝ x-ինը: Ասված խոսքի մեջ որոշ հատվածներ հետ ու առաջ տանելը, նախադասությունները կոկելը, տեքստը գրավիչ ձևով սկսելն ու վերջացնելը՝ այս բոլորը շատ լավ է, մենք դա խմբագրելիս էլ միշտ անում ենք»:

Ես գտնում եմ, որ առաջին դեմքով գրված լայնածավալ շարադրանքի դեպքում գոսթինգը պետք է բավարարի առնվազն երեք չափանիշի. այն պետք է արվի որպես հեղինակ ներկայացվողի գիտությամբ ու համաձայնությամբ, պետք է պահապանվեն նրա օգտագործած բառերը, տպագրվելուց առաջ

վերջինս պետք է տեսնի տեքստը եւ հավանություն տա դրան:  
Ահա եւ վերադառնում ենք նույն հարցին, իսկ ընթերցողին  
հարկավոր է, արդյոք, տեղյակ պահել:

# ԱՆԱՐԳԱՆՔԻ ԱՆԴԻՄԱԿ ԴԵՄՔԸ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ԱՔՈՒ ԳՐԵՅՔԻ ՆԿԱՐԻ ՀԱՐՈՒՑԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

15 մայիսի, 2004

Մայիսի 10-ին «Գարդիանի» առաջին էջի հինգ սյունակները զբաղեցրած նկարը հետեւյալ մակագրութիւնն ուներ՝ «Աբու Գրեյք բանտի այս մերկ իրաքցի բանտարկյալը կծկվել է ամերիկյան զինվորների հաշող շների առաջ»:

Մի շարք ընթերցողներ անընդունելի համարեցին նկարի ներկայացման ձեւը, իսկ մի քանիսն այն կարծիքին էին, որ նկարն ընդհանրապես չպետք է հրապարակվեր: Աբու Գրեյքի բանտից «Գարդիանը» առայսօր տպագրել է 15 տարբեր նկարներ, իսկ ամենաառաջինը ապրիլի 30-ի նկարն էր, ուր պատկերված էր գլխին կնգուղ հագցրած եւ արկղի վրա կանգնած մի բանտարկյալ, որին էլեկտրալարեր էին միացված:

Ինչո՞վ էր խնդրո առարկա նկարը դրանցից տարբերվում: Եթե նախորդ համարյա բոլոր նկարներում բանտապանների կողմից բանտարկյալների գլխին կնգուղ էր հագցված, ապա այս մեկում մարդու դեմքը հստակ երեւում էր, եւ ծանոթները նրան հավանաբար կճանաչեին: Ինքն էլ հաստատ իրեն կճանաչեր:

Ընթերցողներից մեկը գրեց. «Ի՞նչ կերպ կարող էիք հիմնավորել, թե ձեր թերթի առաջին էջին դրված իրաքցու նկարը մարդու իրավունքների խախտում չէ»: Իսկ Գերմանիայից Guardian online-ին մեկը այսպիսի իմակ էր հասցեագրել. «Շատ, շատ են խնդրում ձեր թերթի առաջին էջից եւ միջազգային նորութիւնների էջից հանեք մերկ իրաքցու նկարը եւ տեղը ավելի պակաս վշտացնող մի նկար դրեք: Արդեն իսկ խիստ անոթ է, որ նրան այդպես նվաստացրել են, իսկ դուք



ծեր հերթին, անկասկած, մեծացնում եք նրա այդ նվաստացումը՝ այն հայտնի դարձնելով ողջ աշխարհով մեկ»:

Թեև բոլոր ընթերցողները չէ, որ դա շեշտում էին, բայց մարդու դեմքը բաց լինելու հանգամանքը ակնհայտորեն մեծացնում էր նկարի հարուցած մտահոգությունը: Մեկը գրեց. «Ես գիտեմ, որ դուք անցյալում էլ տպագրել եք այս սարսափելի թեմայով նման նկարներ եւ գիտեմ նաեւ, որ մեզ համար կարելու է նման տեղեկատվություն ստանալը: Այնուամենայնիվ, ես առարկում եմ (այս նկարին), քանի որ իմ տպավորությամբ այն վուայորիզմի սահմանին է. կարծես թե մենք բոլորս մասնակցում ենք այս մարդու ամոթին ու նվաստացմանը: Ես չեմ ուզում որեւէ կերպ առնչված լինել այս կարգի անմարդկայնությանը, իսկ թերթի առաջին էջին այն ցուցադրելը մեզ բոլորիս հանցակից է դարձնում»:

Ինձ թվում է այս նամակում մի քիչ իրար են խառնված հանցանքն ու հանցանքի վկայությունը: Լուսանկարի տպագրումը մարդու իրավունքների խախտում չէ, այլ ակնառու մեզ է փոխանցում մարդու իրավունքների խախտման տեղի ունեցած դեպքը: Մյուս լուսանկարների հետ, որոնց թիվն առնվազն 1 800-ի էր հասնում եւ նրանցից շատերն ավելի մեծ նվաստացում էին պատկերում, այս նկարը հրամայական կերպով աչքի ընկնող տեղում հրապարակում էր պահանջում՝ հակառակ բոլոր տեսակի հնարավոր հետեւանքների (ասենք՝ արաբական աշխարհում հակաամերիկյան տրամադրությունների խորացման): Այն հիմնավորված կերպով ցնցող էր:

Շատ լավ, հարցնում է ընթերցողներից մեկը, բայց «ինչո՞ւ սեւ շերտով չծածկեցիք մերկ բանտարկյալի աչքերը, ինչպես քաղաքակիրթ հասարակության մեջ ընդունված է, որպեսզի դեպքը ներկայացվեր՝ մարդու արժանապատվությունը փրկելով՝ նրա ինքնությունը թաքցնելով հանդերձ»:

Բրիտանական թերթերին մի հայացք նետելով կարելի է հանոզվել, որ այս հարցում որոշ անորոշություն կա, կամ այսպես ասենք՝ կարծիքների տարբերություն: Մի մասը էլեկտրոնային միջոցներով ծածկել՝ սեւացրել էր բանտարկյալի դեմքը: Մյուս մասը չէին արել դա:

Կարող էիք ինքներդ ձեզ հարց տալ. «Եթե սա ինձ հետ պատահած լիներ, կուզենայի՞ արդյոք, որ աշխարհն իմանար

այդ մասին, կուզենայի՞, որ աշխարհն իմանար, թե դա հենց ինձ հետ է կատարվել»:

Սակայն հարցը մեկ ուրիշ կերպ նույնպես ձեւակերպենք. «Այն դեպքում, երբ այս նվաստացումների հեղինակներն ամեն ինչ անում են իրենց զոհերի անունը թաքցնելու համար, կուզեի՞ ես, որ այդ անանունությունից ինձ հանելու ընդունակ թերթը նույնպես ինձ մատներ անանունության»:

Իրականում, ինչպես «Գարդիանը» հաղորդեց այս հինգ-շաբթի, բանտարկյալները, որ հակառակ իրենց գլխին հագցված կնգուղների, կարողացել են նկարներում ճանաչել իրենց, սկսել են իրենք իմաց տալ իրենց մասին՝ կատարվածը վկայելու համար:

«Գարդիանի» խմբագիրը համոզված կերպով պաշտպանում է նկարը առանց փոփոխության տպագրելու որոշումը: Նա մտածում է, որ թերթը սխալ էր վարվել, երբ Իրաքի պատերազմի սկզբին, տեղի տալով Պաշտպանության նախարարության խնդրանքին, սեւ շերտով ծածկել էր ամերիկյան զորքերին հանձնված իրաքցի զինվորի դեմքը: Խմբագրի կարծիքով, եթե թերթը շարունակի այդպես վարվել պարբերաբար, պատերազմական լրագրության դեմքն ամբողջովին կփոխվի:

Մենք չգիտենք լուսանկարում պատկերված այդ կոնկրետ բանտարկյալը ինչ էր արել կամ ինչում էր մեղադրվում: Դրանից ինչ-որ բան կփոխվե՞ր, պե՞տք է որ փոխվեր: Ո՞վ է նվաստացվում նման անարգունի ցուցադրմամբ՝ բանտարկյալ՞ը, բանտապանե՞րը, թե՞, ինչպես կարծում է իմ հիշատակած ընթերցողը, մենք բոլորս: Արդյո՞ք անհարմարության զգացումը գալիս էր նրանից, որ մենք ստիպված էինք տեսնել բանտարկյալի դեմքը:

# ԱՏՈՒՒՄ ԵՎ ՊԱՏԿԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

*ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ...  
ՄԱՂՐԻՂԻ ԱՅԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆԸ  
ՊԱՏԿԵՐՈՂ ՆԿԱՐԻ ԹՎԱՅԻՆ  
ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ*

*20 մարտի, 2004*

Մարտի 12-ի ուրբաթ օրը «Գարդիանի» առաջին էջի ողջ լայնքով տեղադրված էր Մաղրիղի Ատոխա կայարանից մի տեսարան պատկերող գունավոր լուսանկար, իսկ կից հաղորդումը պատմում էր «Լոքերբիի ռմբահարումից ի վեր Եվրոպայի ամենասաստիկ ահաբեկչական հարձակման մասին»:

Իսկ այս երեքշաբթի թերթի առաջնորդող էջի ուղղումների ու պարզաբանումների սյունակը սկսվում էր հետևյալ նախադասությամբ. «Առաջին էջի լուսանկարը, ... որ պատկերում է Մաղրիղի Ատոխա կայարանի վրա ահաբեկչական հարձակման անմիջական հետեւանքները, թվայնորեն փոփոխված էր՝ առջեւի մասում երեւացող անդամահատված վերջույթն անգունացնելու եւ պակաս նկատելի դարձնելու միջոցով: Մենք պետք է նշեինք կատարված փոփոխության մասին եւ հիմնավորեինք դա, քանի որ թերթը կանոն ունի. նկարները չպետք է փոփոխվեն»:

Հիշատակված կանոնը, որ ներառված է «Գարդիանի» խմբագրական կանոնագրում, ասում է. «Թվայնորեն բարելավված կամ փոփոխված նկարները, մոնտաժները եւ նկարազարդումները պետք է հստակորեն նշված լինեն իբրեւ այդպիսիք»: Իսկ Մամուլի դեմ բողոքների հանձնաժողովի կանոնագիրը զգուշացնում է «թյուրիմացության մեջ զցող կամ աղավաղված նյութերի, այդ թվում նկարների» օգտագործման մասին. հանգամանք, որ տվյալ դեպքում հաստատապես տեղի ուներ:

«Գարդիանն» այս կանոնին միշտ բժախնդիր կերպով հետևել է, նշելով ամենափոքր փոփոխություններն անգամ, ինչպես, ասենք, երբ մենք շրջել էինք Ձիու գլխի միզամածության լուսանկարը:

Ահա մարտի 12-ին գրված մի իմակ, ուր ընթերցողը բողոքում է խնդրո առարկա լուսանկարի հետ «Գարդիանի» կատարած փոփոխության դեմ. «Ես այսօր եմ վերադարձել Իսպանիայից՝ հետս բերելով «Էլ պախի» մի օրինակ: Դրա կազմին տեղադրված լուսանկարը, որ Մադրիդի երեկվա բարբարոսությանն էր վերաբերում, ձեր թերթում տպագրվածն էր... Իսպանական թերթում լուսանկարի ձախ կողմում հստակ տեսանելի է մարդու արյունոտ մի վերջույթ: Այն (մեկ ուրիշ բրիտանական թերթի) լուսանկարում լրիվ հանված էր, իսկ դուք այն որոշակիորեն մշակել եք: Ինչո՞ւ»:

Ես կարծում եմ, լուսանկարը պետք է կամ տպագրել կամ ոչ: Մի՞թե մենք ճշմարտության համար բավականաչափ հասուն չենք»:

«Գարդիանի» կայքում տեղադրված մի նյութ, ուր քննարկվում էին մյուս թերթերի կողմից լուսանկարի օգտագործման ձեւերը (մեկից ավելի թերթեր փոփոխել էին այն), ընթերցողներից մեկին հիմք տվեց բողոքելու, թե «Գարդիանն» իր սեփական գործողությունների մասին ազնվորեն չի արտահայտվում:

«Միայն նյութը մինչեւ վերջ կարդալուց հետո ես... հասկանում, որ «Գարդիանը» նույնպես «փոփոխել» ու «մաքրել» էր անդամահատված վերջույթը, դրա գույնը փոխելով գորշի, որպեսզի այն ուսապարկ հիշեցնի: «Գարդիանի» կատարած քայլը բարոյական առումով մի սողանք է, որ թույլ է տվել ընթերցողից թաքցնել այն տեղեկատվությունը, որը թերթը չէր ուզում փոխանցել. կտրված թելը փաստորեն մի կողմից պահպանված էր լուսանկարում, մյուս կողմից՝ դարձել էր աննկատելի»:

Եթե թերթը վստահ էր, որ նկարը փոփոխելու համար բավարար պատճառներ ունի, պետք է դրա մասին նշեր ժամանակին: «Գարդիանը», ի տարբերություն մյուս թերթերի, ուղղումների ու պարզաբանումների ամենօրյա սյունակ ունի, որ նման կարգի բացատրությունների համար է հենց: Երեքշաբ-

թի այնտեղ հայտնված գրությունը կարող էր ավելի վաղ՝ նախորդ ուրբաթ այնտեղ հատնվել՝ հենց լուսանկարի տպագրման օրը:

Այնտեղ կարող էին նշվել նկարը փոփոխելու հետեւյալ պատճառները. հարգանք մահացածների ու վիրավորվածների ընտանիքների նկատմամբ, ընթերցողին անհարկի արյունոտ ու ցնցող մանրամասներից զերծ պահելու ցանկություն: Կարելի էր նաև շեշտել, որ խնդրո առարկա մանրամասները աննկատ դարձնելուց հետո էլ լուսանկարը փոխանցում էր տեղի ունեցածի ողջ սարսափը:

Մեզ հնարավորություն չէր տրվել համաձայնել կամ չհամաձայնել ներկայացված պահանջների հետ: Ինչո՞ւ է դա այդքան էական: Որովհետև շատ կարելու է, որ ընթերցողը համոզված լինի թերթում իր տեսածի ճշմարտացիության մեջ, իսկ դրա համար պետք է, որ նկարների ներքին խմբագրում տեղի չունենա: Իսկ եթե տեղի է ունենում, ընթերցողն անմիջապես պետք է տեղեկացվի դրա մասին:

Բոլոր թերթերն էլ նույն այլընտրանքի առջև էին կանգնած: Հնարավոր տարբերակները մի քանիսն էին. ողջ նկարը տպագրել գունավոր, առանց փոփոխությունների, ողջ նկարը դարձնել սեւ ու սպիտակ, այդպիսով խնդրո առարկա մանրամասնը դարձնելով աննկատ, թվային միջոցներով ողջ այդ մանրամասնը վերացնել, նկարի ներքեւի մասը կտրել՝ մանրամասնի հետ միասին, եւ վերջապես, օգտագործել լրիվ ուրիշ նկար: Հիշատակված բոլոր տարբերակները, բացի առաջինից, անցած հինգշաբթի այս կամ այն բրիտանական թերթն օգտագործել էր:

Իսկ դո՞ւք ինչպես կվարվեիք:

«Գարդիանի» թե՛ խմբագիրը, թե՛ խմբագրի տեղակալը (նորությունների գծով) ասացին ինձ, որ որոշումն ընդունվել է լավագույն մտադրություններով, բայց շտապողաբար: Այսօր, հետադարձ հայացքով, նրանք ընդունում են, որ նկարում գույնը փոփոխելը սխալ էր:

Եվ մի վերջին հանգամանք: Նկարի փոփոխման դեմ բողոքողներ եղան, իսկ բուն նկարի դեմ՝ ոչ: Իսկ եթե նկարը անփոփոխ տպագվեր, ինչպես «Էլ պահում» եւ այլ եվրոպական թերթերում, բողոքողներ կլինեի՞ն: Քանի որ այդ օրը բոլոր բրիտա-

ճական թերթերը կամ որեւէ կերպ մեղմացրել էին խնդրո առարկա մանրամասնը, կամ ընդհանրապես հանել էին այն, մենք իրավունք ունենք հարց տալու. մի՞թե կա այնպիսի իրականութիւն, որ ուրիշները պատրաստ են տեսնելու, իսկ մենք՝ ոչ:

# ՎՍՏԱՅԵԼԻ՝ ԻՆՉՊԵՍ ԻՐԵՆՑ ԽՈՍՔԸ (ՍՈՎՈՐԱԲԱՐ)

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ԱՆԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՆՅՐԱԺԵՇՏ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

*13 դեկտեմբերի, 2003*

Այս երեքշաբթի «Գարդիանն» իր առաջին էջի ամենավերելուն տեղադրեց մի նյութ՝ հետևյալ գլխագրով. «Իսրայելը մարզում է ԱՄՆ-ի մահվան ջոկատները Իրաքում»: Ընթերցողներից մեկի դիտողությունը, որ անմիջապես հետևեց, հենց գլխագրին էր վերաբերում. տեքստից երևում է, գրում էր նա, որ ջոկատները մարզվում են ԱՄՆ-ում, ոչ թե Իրաքում, հակառակ, որ ի վերջո Իրաքում են գործելու:

Այնինչ գլխագրի իմաստը, կարծում եմ, շատ պարզ էր ու ընդգծում էր հոդվածի հիմնական միտքը. ջոկատները, որ նախատեսված են Իրաքում կամ Իրաքից գործելու համար, մարզվում են Իսրայելի կողմից:

Մեկ այլ ընթերցող առաջին հայացքից ավելի լուրջ բողոք էր ներկայացնում. «Գարդիանի» լրագրողները, ուրիշ տեղերից ամբողջ հոդվածներ թխելիս երեւի պետք է, որ գոնե իրենց աղբյուրի՝ այս դեպքում «Նյու Յորքեր» հանդեսի մասին, նշեն ավելի վերելուն, քան տեքստի 18-րդ պարբերությունն է»: Սակայն այս բողոքը, մեղմ ասած, ահագին անարդար էր:

Ընթերցողը հղում էր անում «Նյու Յորքերի» կայքէջին, որը դեկտեմբերի 8-ին տպագրել էր Սեյմուր Յերշի հոդվածը, վերնագրված՝ «Շարժվող թիրախներ. արդյո՞ք Իրաքի հակաապստամբական ծրագրում կկրկնվեն Վիետնամի սխալները»:

Դրանում իսկապես «Գարդիանի» նյութի հետ նմանություն-

ներ կային: Եվ «Նյու Յորք թայմսը» նույնպես նույնքերի սկզբից անդրադառնում էր նույն հարցին: «Գարդիանի» թղթակիցն ինձ պատմեց. «Ես ինքս երկուշաբթի օրը, երբ հողվածիս համար նյութերն արդեն հավաքել էի, նոր միայն տեսա Յերշի գրածը, ու սիրտս ճնլվեց, որովհետև հասկացա, որ որոշ մարդկանց մտքով նույն բանը կանցնի, ինչ որ այս ընթերցողն է գրում»:

«Գարդիանի» հողվածում ուղղակի նշվում էր, որ այն հիմնված է իրենց թղթակցի աղբյուրների վրա, եւ ապա պատմութունը շարունակվում էր: Ես կարդացի «Նյու Յորքերի» հողվածը եւ խնդրի մասին զրուցեցի «Գարդիանի» միջազգային լուրերի բաժնի այն խմբագրի հետ, որը զբաղվել էր խնդրո առարկա նյութով: Ինձ թվում է «Նյու Յորքերի» հիշատակումը «Գարդիանի» հողվածում արված է ճիշտ ու բավարար ձեւով:

«Գարդիանի» տվյալ հողվածում ինձ շատ ավելի հետաքրքրում է դրա երկու անանուն աղբյուրների հիշատակումը: Մեկն անվանված է «ԱՄՆ-ի հետախուզության նախկին բարձրաստիճան պաշտոնյա», մյուսը՝ «լավ տեղեկացված հետախուզական աղբյուր Վաշինգտոնում»:

Հողվածի հրապարակման օրը «Գարդիանի» խմբագիրը հավաք անցկացրեց աշխատակազմի նոր անդամների հետ՝ ընդգծելու համար թերթի ուղենիշները, այլ հարցերի թվում, նաեւ անանուն մեջբերումների խնդրում: Հավաքի անցկացումը կապված էր նաեւ դ-ր Դեյվիդ Քելիի մահվանն առնչվող դեպքերի՝ Հաթոնի հետաքննության հունվարին սպասվող զեկույցի հետ:

Խմբագրի ավելի վաղ տված բրիֆինգում արդեն իսկ ասվել էր. «Հաթոնը կարող է մեզ համար ոչ այնքան դուրեկան բաներ ասել լուրերի հայթայթման մեր եղանակի մասին՝ այն մասին, թե ինչպես ենք դրանք արժեւորում ու խմբագրում, եւ թե ինչպես ենք արձագանքում, երբ դրանց իսկությունը կասկածի տակ է դրվում: Հանրությունը, որն արդեն իսկ բավականաչափ կասկածներ ունի մեր ասածի ու մեր գործելակերպի շուրջ, ակնկալում է վկայություն այն մասին, որ լրագրողներն իրենց տունը կարգի են բերում»:

Երեքշաբթի օրվա «Գարդիանի» հողվածը միանգամայն համապատասխանում է խմբագրի նշած ուղենիշներին: Նո-



րից մեջբերում կատարեմ նրա խոսքից. «Աղբյուրների հարցում մենք որոշակի քաղաքականություն ունենք: Այն ասում է՝ անանուն աղբյուրներ շատ չօգտագործել: Այն ասում է՝ նաեւ՝ քննադատական բնույթի անանուն մեջբերումներ կատարել միայն խիստ անհրաժեշտության դեպքում: Մենք պետք է խուսափենք աղբյուրների բնույթն ու քանակը սխալ ներկայացնելուց եւ պետք է անենք առավելագույնը, որպեսզի ընթերցողը հնարավորություն ունենա գուշակելու՝ իշխանության ինչպիսի աղբյուրից է գալիս լուրը»:

Հավաքից հետո լրագրողներից մեկը նկատեց՝ այո, մենք կանոններ ունենք, բայց լավ կլիներ ընթերցողին տեղեկացնելնք դրանց կիրառման մասին: «Օրինակ, (առաջին էջի հոդվածում) կարող էինք ասել, որ հետախուզական աղբյուրները սովորաբար չեն անվանվում, բայց նշելնք, որ մեր երկու աղբյուրներն իրարից անկախ են ու երկուսն էլ վստահելի: Սա թե՛ օգտակար կլիներ ընթերցողի համար, թե՛ կմեծացներ վստահությունը մեր նկատմամբ»:

Ենթադրյալ մահվան ջոկատների մասին պատմությունը հիմնված էր անանուն աղբյուրների վրա եւ առանց դրանց նյութը կկորցնել իր ուժը: Նույն կերպ՝ դեկտեմբերի 5-ի առաջին էջի պատմությունը, որ ներկայացված է իբրեւ «հատուկ հետաքննություն» եւ վերաբերում է BAE Systems-ի կողմից զենքի վաճառքին, դարձյալ հիմնված էր անանուն աղբյուրների վրա:

Վերադառնանք խմբագրի բրիֆինգին: «Հաճախ մարդիկ հետաքրքիր ու կարելուք բաներ են ասում միայն անանուն մնալու դեպքում: Երբեմն դրա պատճառն ամոթալի է (վախկոտություն), իսկ երբեմն՝ հարգելի ( երբ տեղեկություն է տրվում սեփական ֆիրմայի անօրինությունների մասին)»: Շատ բան կախված է նաեւ լրագրողի մոտեցումից, ավելացնում է խմբագիրը:

Նորից վերադառնում ենք վստահության խնդրին եւ այն հարցին, թե ինչպե՞ս հաղթահարել ընթերցողի առողջ կասկածամտությունը: Մեծ մասամբ դա մեզ հաջողվում է : Բայց լինում է նաեւ՝ ցեխն ենք ընկնում:

# ԼՈՒԻԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՕՐԵՆՔ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳԱՂՏՆԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

13 սեպտեմբերի, 2003

«Գարդիանը», այլ թերթերի նման, երբեմն նյութեր է տպագրում, որոնք մեկ չհիշատակվող աղբյուրի վրա են հենվում: Նման դեպքում ի՞նչ պարտականություններ ունի լրագրողն իր աղբյուրի հանդեպ: Բոլոր լրագրողներն ընդունում են գաղտնի տեղեկացնողի ինքնությունը թաքցնելու պահելու իրենց պարտականությունը. սա ենթադրվում է լրագրողի եւ նրա աղբյուրի միջեւ պայմանավորվածությամբ: Սակայն կա՞ն արդյոք այնպիսի հանգամանքներ, որոնց դեպքում աղբյուրի անունը կարելի է հայտնել, եթե այո, ապա կարելի է հայտնել՝ ո՞ւմ:

Քչերը կանդեն, թե լրագրողի եւ աբյուրի միջեւ պայմանավորվածությունն իր ուժը կորցնում է աղբյուրի տրամադրած տեղեկատվության սխալ լինելու դեպքում, ինչը երբեմն պատահում է: Նման դեպքերում թերթը ստիպված է լինում հերքում տալ ու ներողություն խնդրել, եւ նրա հանդեպ վստահությունը խաթարվում է:

Իսկ եթե պարզվում է, որ աղբյուրը ստե՞լ է: «Նման դեպքում,- ասում է «Գարդիանի» լրագրողներից մեկը,- «բոլոր պայմանավորվածությունները չեղյալ են դառնում»: Սրանով հանդերձ, չկա որեւէ դեպք, երբ ստող աղբյուրը բացահայտված լինի: Նման քայլից լրագրողին հետ է պահում թերեւս այն գիտակցությունը, որ ինքն է սխալ կողմնորոշվել: Մի լրագրող ինձ այն կարծիքը հայտնեց, թե աղբյուրի ինքնությունը գաղտնի պահելու իր պարտականությունն ուժի մեջ է մնում, անգամ եթե այդ աղբյուրը ստած լինի: Ամեն դեպքում, պատասխանատու է թերթը:

Տվյալ խնդրի հետ կապված ուզում եմ հիշատակել «Գարդիանում» այս շաբաթ հրապարակված նամակը, ուր Լոնդոնի համալսարանի Գոլդսմիթի քոլեջի լրատվական օրենքի եւ էթիկայի մի դասախոս մեկնաբանում էր Չաթոնի քննության որոշ կողմեր: Նա գրում էր. «Աղբյուրը գաղտնի պահելու պահանջը վերապահումներ չունի: Այն երբեք չպետք է հայտնել ոչ խմբագրին, ոչ սեփականատիրոջը, եւ դա՝ անգամ աղբյուրի մահվանից հետո: Լրագրողը երբեք չպետք է գաղտնի աղբյուրի մասին հիշատակում թողնի գրանցող սարքերի վրա՝ առանց վերջինիս գիտության եւ թուլտվության»:

Մեկ անանուն աղբյուրի վրա հենվող վիճահարույց նյութի դեպքում «Գարդիանի» խմբագրի տեղակալը (նորությունների գծով) լրագրողին մի քանի հարց է տալիս: Արդյո՞ք նա նախկինում գործ է ունեցել տվյալ աղբյուրի հետ, եթե այո, արդյո՞ք նրա տրամադրած տեղեկատվությունը ճշգրիտ է եղել: Արդյո՞ք տվյալ անձնավորությունը հնարավորություն ունի տեղյակ լինելու այն մասին, ինչի մասին պատմում է:

Խմբագրի տեղակալն ավելացնում է. «Եթե բոլոր այս հարցերին դրական պատասխան է տրվում, դա հերիք է, սակայն պատահում է, որ լրագրողը, նյութի մեծ կարեւորության եւ հնարավոր մեծ ազդեցության դեպքում, ինքնական հայտնում է աղբյուրի անունը՝ շեշտելու համար տեղեկության կարեւորությունը: Երբեք չի պատահել, որ դրա հետեւանքով աղբյուրի անունը բացահայտվի»:

«Գարդիանի» գործադիր ֆինանսական խմբագիրն ասում է, որ ինքը խիստ արժեքավոր աղբյուրներ է ունեցել, որոնց որպես այդպիսիք տարել է թերթից թերթ: «Ես նրանց ինքնությունը չէի հայտնի ոչ մեկին ոչ մի դեպքում, ինչպիսին էլ որ լինեին հետեւանքները»: Նա ասում է, որ իր դիրքորոշումը չէր փոխվի, անգամ եթե իրեն դրա համար բանտ սպառնար կամ կարիերայի խաթարում:

Միաժամանակ նա ավելացնում է. «Պնդել, թե միշտ ու բոլոր հանգամանքներում աղբյուրի անունը հայտնի է մնում միայն մեկ լրագրողի՝ կնշանակե՞ր հաշվի չառնել լրատվական գործի բարդությունը: Նյութերը, մանավանդ մեծ ու կարեւոր նյութերը, քիչ է պատահում, որ պատրաստվեն մենակ աշխատող առանձին լրագրողի կողմից: Խմբագրի ու լրագրողի մի-

ջել անվերջ քննարկում է գնում այն մասին, թե ինչպես նախապատրաստել, գրել, մշակել նյութը, եւ այդ ընթացքում խմբագիրը կարող է իմանալ օգտագործվող աղբյուրի կամ աղբյուրների մասին, անգամ առանց հարցնելու դա»:

Գործադիր խմբագիրն ասում է, որ ինքը երբեք լրագրողից չի հարցնի աղբյուրի ինքնությունը. «Սակայն անհրաժեշտության դեպքում ես լրագրողից երաշխիքներ կխնդրեմ աղբյուրի տեսակի ու որակի հետ կապված, ու որոշ հանգամանքներում սա կարող է հանգեցնել նրան, որ ինձ, գաղտնի պահելու պայմանով, հայտնվի աղբյուրի ով լինելը: Լրագրողը նման դեպքում ինքնաբերաբար պարտադիր ակնկալում է, որ տեղեկությունը կմնա մեր մեջ, եւ ես բնականաբար հարգում եմ այդ անխոս պահանջը»:

«Գարդիանի» խմբագիրը նշում է, որ սա այն դեպքն է, երբ աղբյուրի ինքնության գաղտնիությունը կախված է թերթի ներսում լրագրողների եւ խմբագիրների միջեւ գոյություն ունեցող փոխվստահությունից: Խմբագիրն ասում է՝ ինքը չի կարծում, թե աղբյուրի ինքնությանը տեղեկանալու իրավունք ունի, բայց ուրախ է լինում, երբ իրեն այդ տեղեկությունը տրամադրվում է նյութը ճիշտ գնահատելու համար, եւ միայն բացառիկ հանգամանքներում է, որ ինքն է խնդրում այդ տեղեկությունը: Այս վերջին դեպքում, եթե լրագրողը հրաժարվում է տալ աղբյուրի անունը, խմբագրին մնում է նյութի գնահատումը կատարել իրեն հայտնի գործոնների հիման վրա, որոնցից մեկն էլ տվյալ լրագրողի մասնագիտական վարկանիշն է: «Ես չեմ կարծում, թե տեղեկանալու իրավունք ունեմ, բայց որպես խմբագիր ես լիազորված եմ կամ չընդունել առաջարկվող նյութը, կամ հրապարակել այն պակաս երեւացող տեղում, կամ դարձնել այն պակաս սուր»:

Ի վերջո, մտարի վրա թերթի վարկանիշն է: Որքա՞ն վստահելի է աղբյուրը: Իսկ ամենակարեւորը՝ որքա՞ն վստահելի է այն, ինչ կարդում ես:

# ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԱՅՄԱՆՆԵՐԸ

## ԸՆԹԵՐԾՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՆԿԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՆՈՆՆԵՐ ՍԱՅՄԱՆԵԼՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

5 հուլիսի, 2003

Իրաքի պատերազմի մասին «Գարդիանի» նկարներից մեկը մյուսներից ավելի էր ընթերցողին վրդովել: Երկու սյունակ բռնած այդ նկարում, տեղադրված ապրիլի 2-ի համարի առաջին էջում, Բաբելոն քաղաքի մոտերքում ամերիկյան հարձակման հետեւանքով սպանված իրաքցի մի մանկիկի մարմինն էր: Ընթերցողներից մեկը գրեց. «Մի՞թե մեր լրատվամիջոցներում մարդկային արժանապատվության նմուշ չի մնացել: (Այս լուսանկարին) անհնար է հավատալ: Բոլորովին անընդունելի է, որ լրագրերին թույլ է տրվում այսպիսի բացահայտ արհամարհանք ցուցաբերել մարդկային կյանքին եւ բարեկրթության բոլոր չափանիշներին դեմ գնալ»:

Ահա մեկ այլ ընթերցողի նամակ. «Ես հասկանում եմ պատերազմի բարբարոսությունը հաղորդելու համար ցնցող նկարներ տպագրելու իմաստը, բայց ինչ էլ լինի այս լուսանկարի օգտագործումը սխալ եմ համարում»: Մի՞թե, հարցնում էր նույն ընթերցողը, պատահածի ողջ ահավորությունն արտահայտելու համար բավարար չէր նույն էջում տպագրված՝ իր մոր դիակի վրա սգացող տղամարդու լուսանկարը (նշված էր, որ նա կորցրել է իր ընտանիքի 15 անդամներին, այդ թվում 6 երեխայի):

Ընթերցողն ապա շարունակում էր. «Ես այն զգացումն ունեի, թե տեսել եմ մի բան, որ պետք է թաքուն մնար եւ զայրացած էի ավելի շատ «Գարդիանի» խմբագրի, քան թե մանկանը մահ պատճառողների դեմ, քանի որ վերջիններս հաստատումն անտադրություն չեն ունեցել»:

Մեկ այլ ընթերցող նկատում էր. «Այս նկարը վիրավորում է մանկան ու նրա ընտանիքի արժանապատվությունը... մի՞թե խմբագրակազմը հաշվի չէր առնում սա, երբ տպագրում էր հոդվածը»:

Առարկությունների մի մասը հենց թերթի ներսից էր գալիս: Գովազդային տնօրեններից մեկը գրեց խմբագրին. «Ես կարծում եմ այդ լուսանկարի տպագրումը հիմնովին սխալ էր, մանավանդ եթե նկատի ունենանք Ալ Ջազիրայի կողմից ... պատերազմի լուսաբանման դեմ եղած բողոքները»: Տնօրենին ուղղված բողոքների մեծ մասը շեշտում էին այն հանգամանքը, որ նկարը թաքցված էր առաջին էջի ծալքից ցած, եւ ծնողները, ինչպես ընթերցողներից մեկն էր ձեւակերպել, ոչ մի հնարավորություն չունեին թաքցնել այն իրենց երեխաներից, եթե ցանկանային անել դա:

Գիշտ մեկ շաբաթ անց «Գարդիանն» իր առաջին էջում ընթերցողներին ցնցող մեկ այլ նկար տպագրեց: Վեց սյունակ զբաղեցնող եւ խոշոր պլանով արված այս լուսանկարում պատկերված էին Բաղդադի դիարաններից մեկում իրար վրա կուտակված դիակների, այդ թվում մանկահասակ երեխայի, արյունոտ ոտքերն ու ձեռքերը: Նկարն ուղեկցվում էր թերթի թղթակցի երկար տեքստով:

Մի ընթերցող, որ նաեւ նախորդ նկարի դեմ էր բողոքել, գրեց. «Ես զարմանում եմ, մի՞թե դուք չեք գիտակցում, որ զոհերի նման զարհուրելի նկարների ամխնա օգտագործումը անպատշաճ է: Մի՞թե բարոյական է այդ նկարները ավսեի վրա դրած մեզ մատուցել նախաճաշի համար... Այդ լուսանկարները չեն կանգնեցնի պատերազմը, դրանք ազդեցիկ գլխագրերի եւ թերթերը վաճառելու համար են...»:

Նման արձագանքին հակառակ, կան նաեւ բազմաթիվ այնպիսի ընթերցողներ, ովքեր ուզում են տեղեկացված լինել, թե ինչ է կատարվում եւ պատրաստ են դիմանալ ցնցող նկարներին, եթե դրանց օգտագործումն արդարացված է համատեքստով: Այստեղ ուզում են շարադրել ամերիկացի մի ընթերցողի գրածը, որի հետ թերեւս շատերը համաձայնեն. եթե մենք կարող ենք դա անել, ուրեմն կարող ենք նաեւ նայել դրան:

Ես մեջբերում եմ այս նամակները, որովհետեւ դրանք ուղղակիորեն առնչվում են այն բանավեճին, որի անհրաժեշտու-

թյան մասին պատերազմի լուսաբանմանը նվիրված «Մեդիա Գարդիանի» ֆորումում խոսում էր Մարկ Դամազերը՝ BBC News-ի փոխտնօրենը: Նա մասնավորաբար հիշատակեց Ալ Ջազիրայի տրամադրած՝ երկու սպանված բրիտանացի զինվորների լուսանկարները, որոնք BBC-ն սկզբում չէր ցուցադրել, բայց երկու ամիս անց դրանք ցուցադրվել էին վավերագրական մի ֆիլմում ( ութ վայրկյան)՝ սպանվածների դեմքերը սեւ շերտով փակելուց հետո միայն: Երկու զինվորների ծնողները եւ բազմաթիվ ուրիշներ դրա դեմ բողոքել էին:

«Գարդիանը», հիշյալ լուսանկարների օգտագործման հարցը երկար քննելուց հետո, որոշել էր դրանք չտպագրել հիմնականում այն պատճառով, որ հարազատների կողմից զինվորների ճանաչվելու հավանականությունը մեծ էր՝ անգամ դեմքերը փակելու դեպքում, քանի որ ընդամենը երկու զինվոր էին կորած: Հարց է ծագում՝ արդյո՞ք դա բավարար պատճառ է բրիտանացի կամ ամերիկացի զոհվածների լուսանկարները չհրապարակելու համար, երբ որ սպանված կամ վիրավոր իրաքցիների նկարները լայնորեն օգտագործվում են: «Գարդիանի» լուսանկարիչներից մեկն ասում է, որ բանակը բնավ չի խրախուսում բրիտանացի զոհվածներին լուսանկարելը, հասկացնել տալով, որ ամեն դեպքում նրանք չպետք է ճանաչելի լինեն:

Արդյո՞ք մնան լուսանկարները չպետք է տպագրել, երբ նույն նկարները կամ համանման նկարներ լայնորեն շրջանառության մեջ են դրվում ինտերնետի կամ արբանյակային հեռուստատեսության միջոցով: Այս հարցը գնալով ավելի սուր է դառնալու: Բանավեճը դեռ շարունակություն կունենա:

# ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ԽՆԴԻՐ

*ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ...*

*ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՋԻ ՄԱՍԻՆ*

*12 ապրիլի, 2003*

«Գարդիանի» մեկնաբանությունների էջերը խմբագրելը թերեւս թերթում եղած ամենամախամնձելի գործերից է: Այդ դեպքում դու հնարավորություն ես լուրջ պատասխանատվություն ունես՝ ոչ միայն պարզապես վարելու օրվա կարեւոր հարցերի շուրջ բանավեճը, այլեւ մի որոշ չափով խթանելու եւ առաջ մղելու այն:

Դա մի ֆորում է, ուր միանգամայն հակառակ հայացքներ ունեցող մարդիկ կարող են ասել իրենց խոսքը: Սակայն երբեմն կռիվ է սկսվում եւ մեկնաբանությունների խմբագիրն ընկնում է երկու կրակի արանքը՝ նրան մեղադրում են թե այս բանն անելու, թե այնինչ բանը չանելու մեջ: «Ե՞րբ եք դուք վերջին անգամ Իսրայելի հանդեպ դրական նյութ տպագրել», հարցնում է մի ընթերցող (իսկ պատասխանն է՝ ընդամենը վերջերս): «Ինչո՞ւ Ջորջ Գալովեյին հնարավորություն տվեցիք պաշտպանելու իրեն» (իր հակապատերազմական մոտեցման որոշ կողմերի համար լեյբորիստական կուսակցությունից հեռացվելու վտանգի պայմաններում): «Ինչո՞ւ եք տեղ ծախսում Չարլզ Կրաութամերի վրա»: Կրաութամերը՝ «Վաշինգտոն պոստի» Պուլիտցերյան մրցանակի արժանացած պահպանողական այդ լարգրողը, առաջարկել էր, կոպիտ ասած, որ Ջորջ Բուշը արհամարհանքի մատնանշան ցույց տա Միացյալ ազգերի կազմակերպությանը:

Հիշյալ ընթերցողները, առնվազն վերջին երկուսը, իմ կարծիքով, իրավացի չեն: «Գարդիանի» էթոսը մեկնաբանությունների էջում դրսեւորվում է երկու հիմնական ձևով: Մեկն այն է, երբ հեղինակները (այդ թվում ոչ թերթի հեղինակներից) ընթերցողին են դիմում ազատական ռացիոնալության դիրքե-



րից, ինչն ակնկալվում է, որ կնույնացվի թերթի դիրքորոշման հետ: Մյուս դրսեւորումն այն է, երբ բանավեճի մեջ արտահայտվելու հնարավորություն է տրվում բոլոր կողմերին, այդ թվում՝ նրանց, որ հակասում են թերթի խմբագրական գծին: «Գարդիանի» խմբագրի տեղակալն ասում է. «Այդ էջերի առաքելությունն է՝ տեղ տալ մեզ մարտահրավեր նետող հայացքներին եւ հնարավոր դարձնել պնդումների այնպիսի լայն սպեկտր, որպիսին ուրիշ ոչ մի տեղ չէք գտնի: Դրանցում քննարկվում են հարցեր, որոնք միշտ մեկից ավելի չափումներ ունեն»:

Վերջին մի քանի օրերին թերթի այս բաժինը հաջողությամբ իրագործում է եղած էյֆորիայի վրա սառը ջուր լցնելու խնդիրը: Երեկվա էջերում արտգործնախարարության նախկին մի հատուկ խորհրդականի խոսքն էր տպագրված, որի բովանդակությունը խտացված էր գլխագրերում՝ «Պյունոսյան հաղթանակ Տիգրիսի վրա» եւ «Մարտի ելքը կանխորոշված էր, բայց հետեւանքները չարագուշակ են թվում»:

Նույն էջերում «Գարդիանի» գլխավոր միջազգային մեկնաբաններից մեկը միանգամայն ոչ լավատեսական լույսի տակ էր քննում Ծոցի պատերազմի արդյունքում Միացյալ Նահանգներ - իսլամական աշխարհի հարաբերությունները: Մեկ այլ մեկնաբան առանց որեւէ խանդավառության կանխագուշակում էր նույն պատերազմի մեկ այլ հետեւանք՝ Մակդոնալդսի կայսրության ընդարձակումը եւ իր խոսքն ավարտում հետեւյալ բառերով՝ «Գուցե հերի՞ք է իրաքցիների տառապանքը»:

Նախորդ օրը մեկնաբանությունների խմբագրի սեփական նյութն էր տպագրվել: Դրա գլխագրում եւ նախաբանում գրված էր. «Այս նախաձեռնության կոպիտ գաղութատիրական բնույթն այլեւս հնարավոր չէ թաքցնել: Իրաքցիները արյունով վճարեցին խարդախ պատերազմի համար»: Այս նյութի կողքին վարչապետի խոսքն էր տպագրվել, բայց ոչ թե պատերազմի, այլ տարվա բյուջեում փոքր արժեքի պարտատոմսերին վերաբերող կետի մասին:

Մեկնաբանությունների էջերը խմբագրողի գործը հեշտերից չես անվանի (նույնը կարելի է ասել այդ էջերը կարդացողի մասին): Խնդիրն էլ ավելի է բարդանում պատերազմների ժամանակ: Վերջերս վեճեր հարուցեց այն կրճատումը, որ ար-

վել էր Իրաքի պատերազմում թոնի Բլերի դիրքորոշումը պաշտպանող եւ Համայնքների պալատում դրա շուրջ բանավեճի օրը տպագրված Բիլ Քլինթոնի հոդվածում: Հիմնական կրճատվածը, այլ փոքր ուղղումների թվում, լեյբորիստական պատգամավորներին ուղղված ուղերձն էր՝ պաշտպանելու իրենց առաջնորդին: Իհարկե, նյութի հիմնական ասելիքը պահպանված էր, ավելին՝ պահպանված էր բրիտանական ժողովրդին ուղղված կոչը՝ պաշտպանելու պ-ն Բլերին, սակայն արդյո՞ք «Գարդիանի» ընթերցողների համար հետաքրքիր չէր լինի իմանալ, որ ԱՄՆ նախկին նախագահը պատրաստ է ուղղակի կոչով դիմելու բրիտանական պառլամենտի անդամներին: Իմ կարծիքով՝ իհարկե հետաքրքիր կլիներ:

Ուրեմն ի՞նչ էր պատահել: Արդյո՞ք կրճատումը շտապողական ու խառնաշփոթ իրավիճակի ցավալի հետեւանք էր՝ քառասային այն իրավիճակի, որի գործոնը չպետք է թերագնահատել թերթերի պարագայում: Մեկնաբանությունների խմբագիրն ասում է, որ այո, նյութը շատ ուշ ստացվեց ու շատ երկար էր, փոքրիկ կրճատումներ արվեցին ու նորմալ իրավիճակում դրանք հետ կուղարկեին հեղինակին՝ նայելու, սակայն այս անգամ դրա համար ժամանակ չկար:

Սա իհարկե խոսում է նաեւ այն զննող հայացքի մասին, որ կա այս էջերի ու դրանք խմբագրողների նկատմամբ: Թերեւս ճիշտ կլինի ասել, որ ներկայիս մեկնաբանությունների խմբագրի վարած էջերում բանավիճողների սպեկտրը այնպիսի լայն ընդգրկում ունի, որպիսին չկա ոչ մի այլ անգլալեզու թերթում: Մահնեդական գրողների եւ արաբական աշխարհը ներկայացնող մեկնաբանների ներառումը մեծ հավանության է արժանանում, այդ թվում՝ նաեւ ամերիկյան ընթերցողի կողմից, որը բողոքում է, թե իրենց մամուլում նման բան չկա:

Հնչող քննադատություններից մեկն այն է, թե հիշյալ էջերում մոտեցումների երկու ծայրահեղ թեւերը լավ են ներկայացված, այնինչ միջին մոտեցումը՝ ոչ: Խմբագիրները, ընդունելով այս հանգամանքը, բացատրում են, թե իշխանությունը, Ամերիկայում որ հաստատ, բնավ մեջտեղում չէ, գոնե առայժմ:

Մեկնաբանությունների էջի սկզբունքը պետք է լինի, ու թերեւս է՝ հնարավոր չէ դուր գալ բոլորին:

# ՄԱՐՆ ԱՎԵԼԻ ՄՈՏԻԿԻՑ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՐՉԱՓ ՌԵԱԼԻԶՄՆ Է ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ

29 մարտի, 2003

«Գարդիանի» երեկվա առաջնորդողը, որ վերնագրված էր «Ի՞նչ պետք է պատմենք պատերազմի սարսափներից», առնչվում էր անցած շաբաթվա ընթացքում լրագրողների ապրած երկընտրանքին: Առաջնորդողում մեջբերված էին Ղրիմի պատերազմի ժամանակ բրիտանական բանակից գրող՝ «Թայմսի» թղթակցի խոսքերը. «Պատմե՞մ արդյոք տեսածս, թե՞ լուռ մնամ»: Այս հարցին ավելի հեշտ է պատասխանելը, երբ խոսքը բառերին է վերաբերում, եւ ավելի դժվար՝ երբ գործ ունես նկարների, պատերազմի «չատ ավելի ցնցող» պատկերների հետ, ինչպես նշված էր առաջնորդողում:

Հինգշաբթի օրը իմ բացած իմակներից ամենաառաջինը շնորհավորում էր «Գարդիանին» այդ օրվա առաջին էջի լուսանկարի համար: Նկարը վեց սյունակ էր զբաղեցնում, իսկ վերելում գլխագիրն էր. «Քմահաճ ռումբերը շուկայում սպանդ են սարքել»: Նկարի ներքելում նաեւ բացատրություն կար. «Բաղդադի շուկայում ռմբահարված այս իրաքցու մարմինը ծածկել են մի խումբ տեղացիների»: Լուսանկարն արված էր Գորան Տոմասեիչի կողմից՝ Ռոյթերի համար:

Ընթերցողը շեշտում էր, որ իհարկե ոչ մեկի համար հաճելի չէ զարհուրելի նկարներ տեսնելը (իսկ այս դեպքում մահացածը հստակորեն ճանաչելի էր), սակայն դրանք անհրաժեշտ հակակշիռ են այն նկարներին, որ ստացվում են ամերիկյան ու բրիտանական ուժերին «կցված» օպերատորներից ու լուսանկարիչներից:

Մի փոքր անց ես իմակ ստացա մեկ այլ ընթերցողից, որն իր «ծայրահեղ զգվանքն» էր արտահայտում նույն այդ լու-

սանկարը հրապարակելու՝ թերթի որոշման հետ կապված. «Ես ապշահար եմ ձեր անզգայությունից, որ թույլ է տալիս հրապարակել մեռած քաղաքացու լուսանկարը՝ մոտիկից ու գունավոր: Ես չեմ կարծում դուք հրապարակելիք նույնանման լուսանկար, ասենք, Լոնդոնի վրա կատարված ահաբեկչական հարձակումից հետո, ու իմ համոզումն է, որ նույն չափորոշիչներով պետք է առաջնորդվել՝ անկախ զոհի գտնվելու վայրից»: Բողոքի ուրիշ համանման նամակներ եւս ստացվեցին:

Թերթի կարծիքով ճիշտ մոտեցումը, որ հաստատվում է նաեւ մեծաթիվ ընթերցողների պահանջով, պատերազմի իրական դեմքը ներկայացնելն է, ոչ թե ծայրահեղ զգուշության արդյունքում այն սիրունացնելուն հանցակցելը: Սա իր հերթին նշանակում է անվերջ փորձարկել թույլատրելիության սահմանները: Սակայն մինչեւ ո՞ր կարելի է լայնացնել այդ սահմանները:

Գիշտ, թե՞ սխալ վարվեց «Գարդիանը», ձեզ չներկայացնելով որոշ լուսանկարներ, որ շաբաթվա ընթացքում ներկայացվել էին Քաթարում գործող Ալ Ջազիրա հեռուստակայանի կողմից:

Այդ լուսանկարներից մեկը մոտից պատկերում էր իրաքցի մի տղայի, հեշտ ճանաչելի, գլխից մահացու խոցված, գանգի մի մասը անջատված ու կողքից կախված: Նկարը չդրվեց «Գարդիանի» կայքում եւ սկզբնապես մերժվեց նաեւ թերթում դրա տպագրումը, քանի որ լուսանկարը զարհուրելի էր ու նաեւ չէր ուղեկցվում անհրաժեշտ տեղեկատվությամբ՝ ով, որտեղ, երբ: Սակայն նկարի մի տարբերակը չորեքշաբթի օրը, այնուամենայնիվ, հայտնվեց թերթի մեկնաբանությունների հիմնական էջում, որպես Սթիվ Բելի քաղաքական ծաղրանկարի մի մաս:

Սթիվ Բելը գաղափար անգամ չուներ, թե լուսանկարը, որի վրա հիմնված էր իր ծաղրանկարը, պետք է տպագրվեր «Գարդիանում»: Բայց երեկ այն վերջապես տպագրվեց, թեւ բավական փոքր չափի մեջ, այլ նկարների հետ, լուսաբանելու համար մի հոդված, ուր խոսվում էր պատերազմի հանդեպ Բրիտանիայի մահմեդականների վերաբերմունքի մասին: Դա Ալ Ջազիրայի տարածած այն լուսանկարներից մեկն էր, որ ցուցադրվել էին Բրիտանիայի մահմեդականների ասոցիացիայի կայքում ([www.mabonline.net](http://www.mabonline.net)).

«Գարդիանի» չտպագրած մյուս լուսանկարները անանուն աղբյուրից Ալ Ջազիրայի ստացած տեսաժապավենից էին վերցված եւ պատկերում էին երկու մահացած բրիտանացի զինվորների: Երկար վեճ եղավ այն մասին՝ թերթում հրապարակել, թե՛ ոչ այդ նկարներից մեկի կիսատ տարբերակը, ուր զինվորին հնարավոր չէ ճանաչել: Սակայն քանի որ ընդամենը երկու զինվոր էին կորած, հավանականությունը մեծ էր, որ հարազատները կճանաչեին պատկերված մարմինը, ու սակարեւոր հանգամանք էր: Հարցը հետեւյալն էր. արդյո՞ք լուսանկարն օգտագործելուն կողմ խոսող հանգամանքները, որոնցից գլխավորը պատերազմի իրական դեմքը ցույց տալու անհրաժեշտությունն էր, ավելի ծանր էին կշռում, քան դրան դեմ խոսողները, որոնցից գլխավորը հարազատների կողմից մարմինը ճանաչելու մեծ հավանականությունն էր:

Խմբագիրը որոշեց, որ տվյալ դեպքում հարցի պատասխանը բացասական էր, եւ լուսանկարը չօգտագործվեց: Որոշումն ընդունելուց փոքր անց գրություն ստացվեց պաշտպանության նախարարությունից, որով խնդրվում էր այդ լուսանկարները չօգտագործել: «Ներկայումս մենք հնարավորություն չունենք հաստատելու, արդյո՞ք (նկարներում պատկերված զինվորները) բրիտանացի են, թե ոչ», - ասված էր գրության մեջ:

Նույն այդ օրը, երբ հիշյալ լուսանկարները թերթում չդրվեցին, «Գարդիանը» ոչ միայն մահացած իրաքցու արդեն հիշատակված նկարն էր դրել առաջին էջին, այլեւ մեկ ուրիշ մահացած իրաքցու մեծ նկարը՝ Յոդ էջին, իսկ խորքի էջերում մի ուրիշ նկար, ուր բրիտանացի զինվորը ժպտադեմ բռնել էր «Բասրայի մոտ գերի ընկած մի իրաքցու»: Իմ սեւամորթ գործընկերներից մեկը նկատեց. «Մենք շատ ավելի հեշտությամբ մեռած սեւերի, կամ ոչ սպիտակների, նկար ենք տպագրում, քան մեռած սպիտակների»:

Երեկվա առաջնորդողը հարց էր տալիս. «Արդյո՞ք դատապարտելի է, կամ նույնիսկ ռասիստական, միայն իրաքցի զոհերին պատկերելը»: Հարցերն ավելի շատ են, քան պատասխանները:

# ԽՈՍՔԸ ՔՈ ԲԵՐԱՆՈՒՄ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ՎԱՎԵՐԱԿԱՆ ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐ ԱՆԵԼՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

25 նոյեմբերի, 2002

Օրեր առաջ «Գարդիանի» էջերում հիշատակված մեկը կապվեց ինձ հետ՝ բողոքելու համար, թե իրեն վերագրվել են բառեր, որ ինքը երբեք չի արտասանել: Կինը խիստ վրդովված էր, որովհետև իրեն վերագրվողը, որ ներկայացված էր իբրև ուղղակի մեջբերում (այսինքն չակերտների մեջ էր դրված), բավական նուրբ բնույթ ուներ եւ ենթադրել էր տալիս իր կողմից մի մոտեցում, որը նա ուղղակի ի վիճակի չէր ունենալու (եթե անգամ ցանկանար դա): Այն հակասական իրավիճակում, որի մասին պատմվում էր նյութում, սա կարող էր վարկաբեկիչ լինել:

Ես նյութը գրած լրագրողին խնդրեցի զանգել այն կնոջը, որից մեջբերում էր արել, լսել նրա բողոքը եւ ապա գալ ինձ մոտ: Քիչ չի պատահում (հարցրեք ցանկացած լրագրողի), որ մարդիկ, անակնկալի գալով իրենց արտասանած բառերի արձագանքից, բողոքում են, թե նման բան չէին ասել:

Ես չէի ակնկալում, թե սա նման դեպք է, եւ իսկապես էլ պարզվեց այդ դեպքը չէր: Լրագրողը խոստովանեց, որ մեջբերվածն իրականում իր բառերն էին, որ նա օգտագործել էր բողոքողին ուղղված հարցի մեջ: Ավելի վաղ, երբ անդրադառնում էի այն խնդրին, որ ընթերցողը պետք է վստահ լինի չակերտների մեջ առնված բառերի վավերականության (ու թերեւս նաեւ ճշմարտացիության) մեջ, ես գրել եմ. «Վաղուց անվանարկված, բայց լրագրողների կողմից դեռ օգտագործվող մի հնարք կա, երբ այն խոսքը, որ կուզեր մեջբերել, լրագրողը հարցի ձեւով ուղղում է նրան, ունից հարցազրույց է վերց-

նուն: Վերջինից ընդամենը պահանջվում է ասել այո կամ ոչ, որից հետո ցանկալի բառերը լրագրողի տեքստում բերվում են իբրև ուղղակի մեջբերում»:

Դա արվում է, օրինակ, հետևյալ կերպ: Լրագրողը հարցնում է հարցազրույց տվողին. «Դուք ձգտում ունե՞ք դառնալու ընկերության տնօրեն»: Վերջինս պատասխանում է. «Չէի ասի, թե ունենմ»: Ապա հաջորդ օրը կարդալով թերթը, իմանում է, որ ինքը ասել է «Ես չեմ ձգտում դառնալ ընկերության տնօրեն» խոսքերը, որ կարող են վնասել իր աշխատանքային առաջխաղացմանը:

Ավելի հաճախ սա պատահում է ճգնաժամային իրավիճակներում, ուր ասենք այսպիսի հարց է տրվում. «Դուք սարսափահա՞ր էիք եղել կատարվածից», ու պատասխանը՝ «Կարծես թե՛ այո», թերթում ներկայացվում է իբրև ուղիղ մեջբերում. «Ես սարսափահար էի եղել կատարվածից»: Լինում է, որ մեջբերումը վերագրվում է մեկին, որի հետ լրագրողը նույնիսկ խոսած չի լինում: «Արդյո՞ք նա սարսափահար էր եղել կատարվածից»: «Այո, սարսափահար էր»: Եվ թերթում կարդում ենք. «Այսինչ-այսինչն ասաց. «Ես սարսափահար էի եղել կատարվածից»:

Հարցազրույցը հարց ու պատասխանի ձևով տպագրելու օգտակար պրակտիկան, ցավոք, այսօր արդեն չի գործում բրիտանական լրագրության մեջ, թեև շատ եվրոպական թերթեր պահպանել են այն: Ամեն դեպքում, այն գործածվում է ավելի հանգիստ բնագավառներում եւ ոչ թե հրատապ լուրերի բաժնում, որտեղ էլ հենց սովորաբար պատահում է այն, ինչի մասին խոսում ենք:

Լրագրողի խնդիրն է, իհարկե, հստակ չասվածը հստակորեն ասելը, սակայն դրա համար սա ճիշտ ճանապարհը չէ: Լրագրողի արածն իր աչքում արդարանում է, թերեւս, նրանով, որ քիչ է պատահում որեւէ մեկը սրա դեմ իրականում բողոքի: Նույնիսկ բնագավառներ կան, սպորտն օրինակ, որի մասին խոսում էի իմ նախորդ հոդվածում, ուր մեջբերման կարծեցյալ հեղինակը, թերեւս իր մամլո քարտուղարի միջոցով, փաստորեն հանցակցում է լրագրողի հետ՝ ընթերցողին խաբելու գործում:

Լրագրողը հույսը նրա վրա է դնում, որ տվյալ անձնավորությանը վերագրված խոսքը բավական մոտ կլինի նրան, ինչ վերջինս կարող էր արտասանել, որպեսզի վերջինս չբողոքի: Սրանից մինչև լիովին հնարված մեջբերումն ընդամենը մեկ քայլ է: Լրագրողներից մեկն ինձ պատմում էր, որ թերթում ուր ինքը պրակտիկա էր անցնում, ցանկալի մեջբերումները միշտ վերագրվում էին հնարված մի անձնավորության, որն իբրև թե ապրում էր իրապես գոյություն ունեցող փողոցի վրա. փողոցն այնքան երկար էր, որ տան համարը չնշելու դեպքում ոչ ոք զլխի չէր ընկնի, որ նման մարդ այդ փողոցի վրա չի ապրում:

Այս բոլորը սովորություններ են, որոնցից մենք պետք է հաստատական կերպով հեռանանք: Դրանք հակառակ են բաց եւ հաշվետու լինելու սկզբունքին, որ «Գարդիանը» որդեգրել է ընթերցողի հետ իր հարաբերություններում: Խմբագիրը, շեշտելով թերթի հանդեպ վստահության խնդիրը, վերջերս գրել էր՝ մի քիչ այլ համատեքստում. «Եթե ընթերցողը «Գարդիանում» նյութ է կարդում, որ ուղիղ մեջբերման չափերտների մեջ է առնված, նա իրավունք ունի վստահ լինելու, որ լրագրողը կվկայի մեջբերման ճշգրտությունը»:

Նրա ասածն այն էր, որ եթե մեջբերված խոսքը ուղղակի չի ասվել լրագրողին, որի անունը նշված է նյութի տակ, ուրեմն պետք է հստակորեն նշվի դրա ծագումը՝ վերցված լինի դա ուրիշ թերթից, ռադիո-հեռուստատեսությունից, կամ թե՛ «Գարդիանի» նախկինում տպված հրապարակումից:

Այդպես է դա, թե՛ չէ, հղումի բացակայությունը մտածել է տալիս, որ լրագրողը նպատակ ունի այն տպավորությունն ստեղծելու, թե մեջբերված խոսքն ուղղակիորեն ասվել է «Գարդիանի» համար: Եթե սեփականացված մեջբերումները մեծաքանակ են, ապա արդեն գրագողության հարց է առաջանում: Բոլոր այս դեպքերում ընտրությունն ու որոշումների ընդունումը կհեշտանան, եթե մտածենք ընթերցողի մասին:



# ՀԵՌԱՎՈՐ ԱՂԵՏ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ԼՈՒՐԵՐԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

*7 հոկտեմբերի, 2002*

Մոտ մեկ շաբաթ առաջ մենք թերթի 15-րդ էջում հաղորդում էինք հրապարակել, որ վերնագրված էր՝ «Լաստանավը սուզվել է, եւ 750 հոգի հավանաբար խեղդվել են»: Նյութը պարունակում էր 320 բառ: Երկու օր հետո մույն էջի վրա հայտնվեց տվյալ դեպքին երկրորդ ու վերջին անդրադարձը՝ 47 բառից պարունակող կարճ լուր. «Լաստանավի զոհերի թիվը մոտենում է 1000-ի» վերնագրի տակ:

Ընթերցողներից մեկը գրեց. «Ինչպե՞ս են «Գարդիանում» որոշում լուրերի համեմատական կարեւորությունը: Այս մարդիկ, որ հավանաբար սեւ ու աղքատ են, Աֆրիկայի արեւմտյան ափերի մոտ զոհվել են լաստանավի ահավոր աղետից... Եթե նրանց փոխարեն ճամփորդող սպիտակներ ու հարուստներ լինեին, որոնց նավը խորտակված լիներ Ֆլորիդայի կամ Իտալիայի ափերի մոտ... հետաքրքիր է, ինչ կերպ կանդրադառնար դա թերթի (եւ մյուս լրատվամիջոցների) կողմից դեպքի լուսաբանման վրա»:

Գուցե «Գարդիանի» մնացած մասերո՞ւմ անդրադարձ կար դեպքին: Ցավոք՝ ոչ: «Գարդիան ուիքլի» ընդամենը 32 բառանոց կարճ լուր էր տպագրել, իսկ կայքէջում մտածել էին լաստանավերի անվտանգության մասին մի նյութ դնել, բայց չէին արել դա:

Վերելում հիշատակված առաջին հաղորդման հեղինակը «Գարդիանի» թղթակիցն էր, որի անունը նշված էր, իսկ վայրը՝ ոչ: Իրականում նյութը գրելիս նա գտնվել էր Ջիմբաբվեի մայրաքաղաք Հարարեում՝ դեպքի վայրից 3 000 մղոն հեռու, մայրցամաքի հակառակ կողմում: Նրա գրածը, եւ այս մասին

նշված էր, կազմված էր լրատվական գործակալությունների հաղորդածի հիման վրա:

Ես սովորաբար «Գարդիանը» չեմ համենատուն այլ թերթերի հետ, բայց տվյալ դեպքում սա կարող է օգտակար լինել: «Թայմսը», «Թեյեգրաֆը» եւ «Ինդիփենդենթը» բոլորն էլ նույն կերպ էին անդրադարձել աղետին՝ իրենց միջազգային լուրերի էջերում: Առաջին՝ շաբաթ օրը «Թայմսը» իր 24-րդ էջի վերելում դրել էր դեպքի մասին մի հաղորդում եւ վշտահար հարազատների մի լուսանկար: «Թեյեգրաֆը» նույնն արել էր իր միջազգային լուրերի երկրորդ էջում, որ 19-րդ էջն է: «Ինդիփենդենթը» մի կարճ հաղորդում էր տպագրել 18-րդ էջում: Բոլոր կիրակնօրյա թերթերը («Սանդի թեյեգրաֆը», «Օբզերվերը», «Կիրակնօրյա ինդիփենդենթը» եւ «Սանդի թայմսը») դեպքը նույն կերպ էին լուսաբանել՝ կարճ լուրով:

Ակամա հիշում ես «Գարդիանի» եւ «Օբզերվերի» նախկին լրագրող Մայքլ Ֆրեյնի «Նիհար մարդիկ» գիրքը («Քոլինգ», 1965), ուր սատիրայով տրված են լուրերն արժեվորելու չափանիշները. «Գնացքի վթարը միշտ հետաքրքիր էր... Անգամ մայրցամաքում կատարված վթարը բավարար թվով բալեր էր հավաքում, եթե առնվազն 5 զոհ լիներ: Միացյալ Նահանգներում պատահելու դեպքում զոհերի պահանջվող նվազագույն թիվը բարձրանում հասնում էր 20-ի, Հարավային Ամերիկայի դեպքում՝ 200-ի, Չինաստանի դեպքում՝ 500-ի»:

Լաստանավի աղետի դեպքում ուշադրություն գրավող հանգամանքը, ինչպես արդեն նշեցի, լուսաբանման միանմանությունն էր, որ մտածել է տալիս, թե դեպքը գնահատվել է նորությունն արժեվորելու ընդհանուր մի չափանիշով:

Ընթերցողի՝ վերելում մեջբերված հարցում այն շեշտադրումը կար, թե ինչպիսին էլ եղած լինեն լուսաբանման ձեւն ու չափը պայմանավորող չափանիշները, ռասայական մոտեցումն ի վերջո որոշիչ դեր է ունեցել: Եվ իսկապես էլ, շատ մեծ երեւակայություն պետք չէ պատկերացնելու համար այն արձագանքը, որ կլիներ ընթերցողի նշած մյուս տարբերակներում: Խմբագիրներից մեկը հիշեց վերջերս Հյուսիսային ծովում լաստանավի վրա բռնկած հրդեհի մանրամասն լուսաբանումը, այնինչ այնտեղ ոչ մի զոհ չէր եղել: Հիշատակվեց նաեւ 1987թ. մարտի 6-ի լաստանավային աղետը Չիբբուգեում, երբ Herald of Free Enterprise-ը շրջվել էր՝ դառնալով 194

մարդու մահվան պատճառ: Այնինչ Աֆրիկայի արեւմտյան ափերի մոտ հինգ անգամ ավելի շատ մարդ էր զոհվել: Ընթերցողի տված հարցը հետեւյալն էր՝ արդյոք նրանց կյանքն ուրի՞շ արժեք ունի: Պատասխանը կարող է լինել՝ ոչ, բայց փաստեր կան, որ «այդ»-ի մասին են խոսում:

Սա դժվար հարց է: Այս կարգի նորությունները արժեվորելու գործով զբաղվող խմբագիրները նշում են, թե նման որոշումների ընդունումն ամենից դժվար գործն է: Եվ արդարության գործունը համարյա անհնար է պաշտպանել, այն խախտվում է ամենատարբեր պատճառներով (եթե դեպքը ավելի մոտ է պատահել, կամ ասենք՝ թեև ավտոմեքենաների վթարներից ընդհանուր հաշվով ավելի շատ զոհ է լինում, գնացքի վթարները միշտ ավելի մեծ ուշադրության են արժանանում):

Խմբագիրները նորությունն արժեվորելիս պետք է հաշվի առնեն հետեւյալ հանգամանքները՝ ո՞ր չափով ընթերցողն իրեն կնույնացնի զոհերի ու նրանց հարազատների հետ, հաղորդումն արդյոք կարեւորություն կունենա՞ նրա համար: Արդյո՞ք հետաքրքրությունը տարածքի հետ նվազում է (բայց Ավստրալիայի հրդեհների դեպքում տարածությունը կարծես թե խնդիր չէր): Իսկ գուցե վայրի մատչելիությունն է խնդիր: Սենեգալը նախկին ֆրանսիական գաղութ է, արդյոք դա ազդո՞ւմ է այնտեղ կատարվող դեպքերի հանդեպ մեր հետաքրքրության վրա: Եվ վերջապես՝ թերթը պե՞տք է արդյոք զբաղվի հետաքրքրության մեծացմամբ՝ ասենք, երբ օգնության գործողություններ են սկսվում:

Ես կարդացի խնդրո առարկա աղետի մասին լրատվական գործակալությունների հաղորդածները: Այնտեղ քիչ բան կար, որ «Գարդիանի» երկու հաղորդումներում տեղ չէր գտել: Բայց մենք այնտեղ թղթակից չէինք ուղարկել: Չէինք բացատրել ընթերցողին, թե ինչու լաստանավի մեջ երկու անգամ ավելի շատ մարդ էր եղել, քան նախատեսված էր, կամ թե ինչու էին այդ մարդիկ Սենեգալի հարավից գնում դեպի հյուսիս: Չէիք գրել նաեւ զոհվածների ընտանիքներին հասանելիք փոխհատուցման մասին, չէինք քննարկել անվտանգության հարցերը: Մենք դեպքի հանդեպ հեռավորություն էինք պահել:

Մենք արդյո՞ք նորությունների արժեվորման իրատեսական չափանիշներով ենք աշխատում, թե՞ դրանք հինն են մնացել աշխարհի նորացմանը հակառակ:

# ԱԶՔԱԹՈՂ ԱՐՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

*ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ...  
ՉԱՍՎԱԾԻՆ ՉԱՓԱԶԱՆՑ ՄԵԾ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*16 սեպտեմբերի, 2002*

Բողոքները՝ այս կամ այն խնդրին կամ դեպքին թերթի չանդրադառնալու մասին, հաճախ ամենից դժվարներից են: Աշխարհում ամեն օր պատահող դեպքերի մեծ մասին թերթն իհարկե չի անդրադառնում: Թերթում տեղ գտնողը ամենից նշանակալի դեպքերի (իհարկե՝ «Գարդիանի» կարծիքով) ամենից նշանակալի մանրամասների մի ընտրանի է: Այդ ընտրությունը միշտ կարելի է վիճարկել, եւ թերթն էլ հաճախ ընդունում է, որ սխալ է վարվել:

Սակայն թերթի դեմ ոչ թե պարզապես այս կամ այն դեպքը բաց թողնելու համար են բողոքում, այլ դրա պատճառների: Բողոքները հաճախ, ինչպես ես նկատել եմ, ելնում են այն հաստատ համոզումից, որ բացթողման հետեւում որոշակի կողմնապահություն կա՝ կամ կոնկրետ լրագրողի, կամ թերթի կողմից:

Ինչո՞ւ Աֆղանստանի պատերազմի դեմ անցած տարվա հոկտեմբերին տեղի ունեցած քայլարշավը «Գարդիանում» չլուսաբանվեց: Խմբագիրը անկեղծորեն ընդունեց՝ «Այդ քայլարշավը չլուսաբանելը մեր սխալն էր»: Ես այն ժամանակ այդ մասին գրեցի: Բայց մեկ-երկու ընթերցող դարձյալ չհամոզվեցին, ավելի ճիշտ նրանք համոզված մնացին, որ թերթը դիտմամբ էր անտեսել քայլարշավը, քանի որ ռազմական գործողությունների կողմնակից էր:

Անցած շաբաթ Իսրայելից մի ընթերցող ինձ հասցնում էր, թե ինչո՞ւ թերթը չի անդրադարձել սեպտեմբերի 10-ին Գազա-

յում տեղի ունեցած 2 000-անոց հանրահավաքին՝ ի պաշտպանություն Սադան Յուսեյնի: Հարցին հետևում էր «Ասոշիեթեդ Փրեսից» մեջբերվող մի հատված, ապա հարց էր տրվում. «Արդյո՞ք այս մասին կլինի այսօրվա «Գարդիանում»:

Պատասխանն է՝ ոչ: Ամեն դեպքում, այդ օրը «Գարդիանի» թղթակիցը զբաղված էր Արեւմտյան ափին: Սակայն հարցն իրականում հռետորական էր: Ընթերցողն ուզում էր ասել, որ «Գարդիանն» այնքան է նախապաշարված Իսրայելի դեմ՝ պաշտպանելով պաղեստինցիներին, որ նման փաստը, որ ընթերցողի կարծիքով պաղեստինցիների օգտին չէ, բացառված է, որ լուսաբանվեր թերթում:

Սակայն փաստն այն է, որ էլեկտրոնային փնտրումի արդյունքում պարզվեց՝ Միացյալ Թագավորության ազգային թերթերից ոչ մեկը հիշյալ հանրահավաքին չէր անդրադարձել:

Պատահում է, որ «Գարդիանի» լրագրողներից մեկնումեկը, կարդալով իմ ուղղումները, ինձ ասում է, թե ես ինքս իմ ձեռքով ինձ գլխացավանքի մեջ եմ գցում: Գուցեւ այդպես է:

Մի քանի օր առաջ ես ի վերջո համաձայնեցի, վերելում հիշված նույն իսրայելցի ընթերցողի խնդրանքով, գրություն հրապարակել ուղղումների սյունակում (ես դա «ուղղում» չէի անվանի)՝ անդրադառնալով Իսրայելում մեր արդեն նախկին թղթակցի հրաժեշտի թղթակցությանը: Դրանում նա գրել էր. «Սեպտեմբերի 11-ից հետո... պաղեստինցիներն ու իսրայելցիները վառված մոմերով հիշատակի հավաքներ էին անցկացնում անհավատալիորեն միանման ցուցապաստառներով՝ «Մենք հասկանում ենք ձեզ, մենք նույնպես ահաբեկչության զոհեր ենք»: Ուղղումների սյունակի իմ գրության մեջ, որ կազմվել էր թերթի թղթակցի հետ գրավոր խորհրդակցելուց հետո, ես կրկնեցի այս հատվածը, ապա ավելացրեցի. «Մենք պետք է հիշատակենք նաեւ այն, ինչ ժամանակին արդեն իսկ հաղորդել էինք, այն է՝ որ եղել էին նաեւ պաղեստինցիների ցույցեր, սահմանափակ բնույթի, ուր ակնհայտ ցնծություն էր արտահայտվում՝ կատարվածի առիթով»:

Ես այդպես գրեցի, որովհետեւ հստակ հիշում էի ժամանակին «Գարդիանում» հրապարակված հաղորդումը եւ մտածում էի, որ շատ այլ ընթերցողներ նույնպես կհիշեին այն: Հեռուտատեսությունը նույնպես անդրադարձել էր այդ ցույցերին:

«Գարդիանի» հաղորդումը, գրված Երուսաղեմում մեր թղթակցի եւ երկու այլ հաստիքային լրագրողների կողմից, լուսանկար չէր պարունակում, բայց դրված էր սեպտեմբերի 12-ի համարի ներսի էջերից մեկի ներքեւում, վեց սյունակ էր բռնում եւ հետեւյալ գլխագիրն ուներ՝ «Պաղեստինցիները երջանիկ են, իսկ աշխարհը դատապարտում է»: Տեքստն սկսվում էր այսպես. «Պաղեստինցի հրացանավորները Լիբանանի փախստականների ճամբարում օդ են կրակում՝ տոնելով կատարվածը, այնինչ մնացյալ աշխարհն իր վրդովմունքն է արտահայտում ԱՄՆ-ում կատարված «հրեշավոր» ու «նողկալի» հարձակումների հանդեպ»: Մենք մեջքերել էինք նաեւ Արեւմտյան ափի Ջենինի փախստականների ճամբարում ցնծության հրացանազարկ տվողներից մեկի խոսքերը. «Սա Աստծո վրեժն է Ամերիկայից՝ Իսրայելին պաշտպանելու համար»: Ապա հաղորդել էինք նաեւ, որ Յասեր Արաֆաթը դատապարտում է հարձակումները եւ իր ցավն արտահայտում զոհերի համար:

Թղթակցությունն այն իսրայելցի ընթերցողի հետ, որ բողոքել էր, թե իր վերջին հաղորդման մեջ «Գարդիանը» հիշյալ ցույցերի մասին չէր նշել, իմ այս «ուղղումից» հետո էլ շարունակվեց: Այս անգամ նա բողոքում էր, թե ես չեմ հետեւել իր խնդրանքին եւ չեմ նշել, որ իսրայելցիների ցույցերին այնքան մնան ցույցերը կազմակերպել էր Յասեր Արաֆաթը:

Միեւնույն ժամանակ երկու թե երեք ընթերցող իմ «ուղղումի» համար ինձ մեղադրեցին հակապաղեստինյան կողմնապահության մեջ:

Անցած շաբաթ G2-ի լրագրողներից մեկն այն ենթադրությունն էր հայտնել, թե ռասայական բնույթի հանցանքի համար 18 ամիս ստացած երկու մարդկանցից մեկը հանիրավի կերպով էր դատապարտվել: Նրա կարծիքով՝ երկուսից այդ մեկը ոչ թե հանցանքի մասնակից, այլ պարզապես անցորդ էր եղել: Ընթերցողներից մեկը խմբագրին ուղղած իր նամակում շտապեց հայտնել, որ լրագրողը մոռացել էր նշել մի փաստ. դատարանում քննվել էին այդ անձնավորության՝ սեւ ոստիկանի վրա մեքենան քշելու հանգամանքները:

Պնդում անելիս պետք է հաշվի առնել բոլոր եական հանգամանքները: Մենք սովորաբար նշում ենք դրանց մասին, բայց՝ ոչ միշտ:

# ՈՒՂԻՂ ԽՈՍՔԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ` ԻՄԱՆԱԼՈՒ, ԹԵ ՈՐՏԵՂԻՑ ԵՆՔ ՎԵՐՑՐԵԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ

8 հուլիսի, 2002

Լրագրության մեջ վաղուց ի վեր տարածված որոշ սովորույթներ հակասում են բաց և հաշվետու լինելու սկզբունքին, որին «Գարդիանը» փորձում է հետևել: Դրանցից մեկն է՝ այլ հրապարակումներից վերցնել նյութը և տպագրել այն, առանձին կամ այլ տեքստի մեջ, հաճախ աննշան փոփոխություններով և առանց աղբյուրը նշելու:

Մեծ երեւակայություն է պետք մտածելու համար, թե հնարավոր կլինե՞ր այս սովորույթը լիովին արմատախիլ անել կատաղի մրցակցությամբ բռնված բրիտանական մամուլից: Թերթերից մեկը, ուր ես ժամանակին աշխատել եմ՝ 1720 թվականին հիմնադրված «Նորդամփթոն մերքուրին», ժամանակին ողջ Յուսիսային Անգլիայում հռչակավոր էր իր ընդգրկումը լրատվությամբ: Դրան հասնելու համար թերթը հատուկ ծիավոր էր ուղարկում Լոնդոն, որը թերթերը տարածող կառքից առաջ ընկնելով՝ Նորդամփթոն էր հասցնում կենտրոնական թերթերը: Կարելու նյութերն այնտեղից վերցվում և տեղադրվում էին «Մերքուրիի»՝ հատուկ դրա համար դատարկ թողնված սյունակներում, որից հետո արդեն տպագրված թերթը հասցնում էին թերթերը տարածող կառքին, որն արդեն կողպտված մյուս թերթերի հետ այն տանում էր ավելի հյուսիս:

Այս երեւույթը որոշ չափով դեռ շարունակվում է, մանավանդ գիշերային ժամերին, երբ լուրերի բաժիններում արդեն տեսած են լինում իրենց մրցակից թերթերի վաղ թողարկումները: Սրանում ես համոզվեցի մի քանի օր առաջ, երբ այցե-

լեցի մեկին, որի անունը դրված էր եղել հաղորդումներից մեկի տակ՝ հարուցելով ընթերցողի հարցերը նյութում նշված որոշ թվերի վերաբերյալ: Նա ասաց. «Ես ոչ մի կապ չունեմ: Իմ ուղարկած նյութի մեջ այդ թվերը չկային: Դրանք խմբագրությունում են ավելացվել»: Իրականում դրանք վերցվել էին մեկ այլ թերթի վաղ թողարկումից, բայց սխալ ձեռով էին ներկայացվել, ինչի արդյունքում ուղղում անելը մի քիչ ավելի էր բարդանում:

Մեկ այլ լրագրող պատմեց ինձ ինչպես վերջերս իր նյութերից մեկում ինքը մեջբերում էր կատարել մի բարձրաստիճան զինվորականից՝ նշելով դրա տպագիր աղբյուրը, սակայն այդ նշումը ջնջել էին, համարելով, թե դա իզուր տեղ է զբաղեցնում: Արդյունքում՝ նյութից այն թյուր տպավորությունն էր ստանում, թե լրագրողն ուղղակի գեներալի հետ էր խոսել: Բայց չէ՞ որ սա ճիշտ մոտեցում չէ:

Դարձյալ վերջերս, մի պատմության մեջ, որի նյութը մեծ նրբանկատություն էր պահանջում, մենք երկար մեջբերումներ էինք կատարել մեկ ուրիշ անձնավորությունից, որի հետ մեր լրագրողը չէր խոսել: Քանի որ այս դեպքում նույնպես ընդարձակ մեջբերումների աղբյուրը՝ դարձյալ մեկ ուրիշ լրագիր, ընթերցողից թաքցվել էր, այն միանշանակ տպավորությունն էր ստեղծվում, թե այդ անձնավորությունը ուղղակի «Գարդիանի» համար է խոսել:

Ես նորից մեջբերում են ուզում կատարել գրագողության մասին իմ իսկ սյունակից (1 հուլիսի, 2001), ուր հղում կար ամերիկյան օգտակար մի հրատարակության՝ Ռալֆ Լ. Յոլսինգերի հեղինակած «Լրատվամիջոցների օրենք»-ին, ուր վերջինս ասում է. «Ցանկացած լրագրող օգտվում է այլ լրագրողների աշխատանքից: Եթե լրագրողն այնպիսի թերթում է աշխատում, որն իր սպասարկած տարածքում միակը չէ, ապա խմբագիրը նրան կառաջարկի օգտվել մրցակից թերթերից քաղված նյութերից... Սա խաղի կանոնների մեջ է մտնում, ու քանի դեռ լրագրողը չափազանց շատ բան ու չափազանց հաճախ չի վերցնում, ամեն ինչ լավ է»:

Այս ամենը հաճախ ուղղվում է ընթերցողի շահերի դեմ, որի իրավունքը՝ իմանալու իր կարդացած նյութերի աղբյուրը, մենք կարծես թե ճանաչում ենք: Վերջին օրինակում հիշա-



տակված երկար մեջբերումների դեպքում դրանց աղբյուրն անպայման պետք էր հիշատակել: Քանի որ դա չէր արվել, հետեւեց «Գարդիանի» խմբագրի հետեւյալ կտրուկ հուշագիրը.

«Պարզվեց որ մեջբերումները վերցվել էին տեղական թերթից ու կրկնվել՝ առանց նշելու, որ խնդրո առարկա անձնավորությունը «Գարդիանին» հարցազրույց չի տվել:

Սա միանգամայն անընդունելի է: Առնվազն գրագողության մասին հարց է առաջանում: Սակայն շատ ավելի տագնապալին վստահության խնդիրն է: Եթե ընթերցողը «Գարդիանում» նյութ է կարդում, որ ուղիղ մեջբերման չափերտների մեջ է առնված, նա իրավունք ունի վստահ լինելու, որ լրագրողը կվկայի մեջբերման ճշգրտությունը:

Առանց հղում անելու այլ թերթից մեջբերում կրկնօրինակելը մերժելի է ոչ միայն իրավական ռիսկ պարունակելու առումով, ավելի կարեւորն այն է, որ դա պարզապես վատ լրագրություն է: Եթե ... դուք կրկնում եք մեջբերումը, անպայման նշեք, թե որտեղից է այն վերցված: Դատական հայցի դեպքում դա ձեզ չի օգնի, սակայն ընթերցողը գոնե կկարողանա պատկերացում կազմել աղբյուրի վստահելիության մասին»:

Խմբագիրն այսպիսով կրկնում էր այն, ինչ գրված է «Գարդիանի» խմբագրական կանոնագրում. «Աշխատակազմի անդամը չպետք է կրկնօրինակի ուրիշ մեկի նյութը, առանց հղում անելու այդ մասին: Եթե տպագրված նյութը այլ կազմակերպությունից է ձեռք բերված, այդ մասին պետք է նշվի, այդ թվում այլ թերթերից վերցված մեջբերումները...»:

Այս խմբագրական ուղենիշները երկար պատմություն չունեն, բայց վերը բերված վիճահարույց նյութերը երբ հայտնվեցին, դրանք արդեն հրապարակված էին, այդ թվում մեր կայքէջում: Ինչպես խոսքիս սկզբում նշեցի, մենք պայքարում ենք մի սովորության դեմ, որ շատ երկար ավանդույթ ունի: Խմբագրական կանոնագրի նպատակն է՝ ճնշում գործադրել ի նպաստ ընթերցողի: Իմ նկարագրած իրավիճակներում որոշում ընդունելը շատ ավելի հեշտ կլինի, եւ այդ որոշումների ճիշտ լինելը ավելի հավանական կլինի, եթե ընթերցողի շահը երբեք չնոռացվի:

# ԶԵՐԾ ՇԱՐԵՐԻ՞Ց

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԼԻՆԵԼՈՒ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

9 փետրվարի, 2002

«Ուուլ սթրիթ ջորնլըլը» այս շաբաթվա իր առաջնորդողը վերնագրել էր «Թուղթ մրոտողի էթիկան»: Այնտեղ ասվում էր, որ պրոֆեսոր Ռոջեր Սքրութոնը այլևս չի գրի թերթի համար, կամ ինչպես իրենք էին ձեռակերպել՝ «արձակուրդ է վերցնում թերթի էջերից», քանի որ չէր հայտարարագրել գործին առնչվող իր շահը: Նա թերթում անդրադարձել էր ծխախոտի խնդիրներին՝ առանց հայտնելու, որ վճարվում էր ծխախոտի մի խոշոր ընկերության կողմից. այս փաստը ավելի ուշ «Գարդիանն» էր հրապարակել:

Այս հեռացման մասին նշվեց «Գարդիանի» չորեքշաբթի օրվա «Սիթիի օրագրում» (ծան - Սիթին Լոնդոնի ֆինանսական կենտրոնն է): Սակայն այս առումով «Գարդիանի» պատմությունն էլ անբիծ չէ: Անցած մի քանի տարիներին եղել է, որ նյութեր են հրապարակվել առանց հեղինակի՝ գործին առնչվող շահը հայտարարագրելու կամ այն պատճառով, որ հեղինակը թաքցրել է դա, կամ էլ պատվերների խմբագիրն է մտածել, թե դրա մասին կարիք չկա ընթերցողին տեղյակ պահել: Իմ խորհուրդն է. եթե կասկածում ես՝ պետք է թե ոչ հայտարարել շահը, որոշումն ընդունիր հոգուտ ընթերցողի եւ հայտարարիր այն: Բոլոր հեղինակները պետք է այն խմբագրին, որի հետ աշխատում են, տեղեկացնեն իրենց այն շահերի մասին, որոնք հայտարարագրելու կարիք կա:

«Ուուլ սթրիթ ջորնլըլը» իր խմբագրականում գրեց. «Մենք այն տեսակետին ենք, որ փաստաբանին տրվող վճարն ավելի պակաս կարելու է, քան նրա՝ որպես փաստաբանի, որակավորումը: Սակայն վաղուց ի վեր մեր չափորոշիչն է նաեւ,

որ նման ֆինանսական կապերը պետք է նշվեն, որպեսզի ընթերցողը կարողանա անել իր եզրակացությունը:

Սա մասնակիորեն հենց այն է, ինչ գրված է «Գարդիանի» կանոնագրում. «Միշտ պետք է հայտարարագրել շահը, եթե լրագրողը գրում է մի բանի մասին, որի հետ նշանակալի առնչություն ունի: Սա վերաբերում է թե՛ հաստիքային, թե՛ «Գարդիանի» համար գրող ազատ լրագրողներին: Հայտարարագիրը պետք է ներկայացվի բաժնի ղեկավարին կամ խմբագրին՝ նյութը պատրաստելու ընթացքում: Լրիվ թափանցիկությունը կարող է պահանջել, որ հայտարարագիրը հրապարակվի նաեւ թերթում կամ կայքէջում»:

Կան հանգամանքներ, երբ շահի հայտարարագիրն ըստ էության հեղինակի՝ տվյալ նյութի մասին գրելու որակավորում ունենալու հավատարմագիրն է: Ինչպես կանոնագրում է նշված. «Որոշ առնչություններ ակնհայտ են եւ իրենցից ներկայացնում են հենց այն պատճառը, որի արդյունքում գրողին խնդրվել է գրել թերթի համար: Այս մասին միշտ պետք է նշվի նյութի վերջում, անգամ եթե հեղինակը կանոնավոր կերպով գրում է թերթի համար, քանի դեռ նա գրում է իր շահերին առնչվող բնագավառի մասին»:

Անելով սա, մենք կարող ենք վստահ լինել, որ թերթի նոր ընթերցողները գոհ կմնան: Բավական գեղեցիկ է հնչում, երբ «Ուոլ սթրիթ ջորնլըն» ասում է՝ «փաստաբանի որակավորումն է» կարելու: Բայց ես այս խնդրի շուրջ հաճախ ուրիշ ձեւակերպում էլ եմ լսում. անշուշտ մենք պետք է շեշտը դնենք փաստարկների, ոչ թե դրանք բերողի պատրաստվածության վրա: Այս ամենի հետ կարելի է համաձայնել, սակայն մամուլի ընթերցողն ունի, կամ պետք է որ ունենա, առողջ կասկածանտություն, որը չպետք է խորացնել՝ թույլ տալով, որ նա ուշացունով իմանա, թե իրենից ինչ որ բան են թաքցրել:

Նոր կանոնագրում ամենից վիճահարույցն այն բաժինն է (կամ է՛ր՝ մինչ կանոնագիրը կազմվում էր), ուր խոսվում է թերթի հաստիքային լրագրողների կամ թերթին պարբերաբար նյութեր ուղարկող ազատ լրագրողների արտաքին շահերի կամ գործունեության մասին:

Որոշ լրագրողներ սա դիտում են իբրեւ իրենց ազատության, հատկապես քաղաքական ազատության սահմանա-

փակման հնարավորություն: Կանոնագրի այս բաժինը, սակայն, ընդամենը պահաջում է բաց լինել ընթերցողի առաջ: Եթե լրագրողը որեւէ շահ չի հայտարարագրում, իսկ ես մի քիչ հետո կուրվագծեմ մի քանիսը այն հանգամանքներից, որոնց դեպքում ակնկալվում է, որ նա պետք է դա անի, ուրեմն ընթերցողն իրավունք ունի մտածելու, որ հեղինակը չհայտարարված կապերով կամ կախվածություններով կաշկանդված չէ:

Ահա թե ինչ է ասված կանոնագրում. «Գարդիանի» հաստիքային լրագրողները պետք է նկատի ունենան, որ իրենց աշխատանքից դուրս գործունեությունը (պաշտոն ունենալը կամ որեւէ այլ կերպ այս կամ այն կազմակերպությունում, ընկերությունում կամ քաղաքական կուսակցության մեջ ակտիվորեն ներգրավված լինելը) կարող է դիտարկվել իբրեւ մեր լրագրության ազնվության վրա ազդող կամ դրա հետ հակասության մեջ մտնող հանգամանք:

Աշխատակազմի անդամը պետք է ոչինչ չթաքցնի իր արտաքին՝ անհատական, աշխարհայացքային կամ ֆինանսական շահերի հետ կապված, որոնք կարող էին հակասության մեջ մտնել լրագրողական պարտականությունների կատարման հետ, կամ կարող էին ընկալվել իբրեւ այդպիսիք»: Այստեղ տեղին է հետեւյալ խորհուրդը՝ եթե կասկածում ես, հարցը քննարկիր խմբագրի հետ:

Ես ժամանակին աշխատել եմ մի խմբագրի հետ, որը թոշակի գնալուց հետո ասաց, որ ինքը պատկանել է, կամ մասնակցություն է ունեցել, ոչ ավել ոչ պակաս 37 կազմակերպությունների՝ այն քաղաքում, ուր տպագրվում էր թերթը: Իսկ «Վաշինգտոն փոսթի» ներկայիս գործադիր խմբագիրն այնքան է ձգտում անխաթար պահել իր անկախությունը, որ անգամ չի իրագործում ընտրելու իր իրավունքը: Իսկ մեր մեծագույն մասը այս երկու ծայրակետերի արանքում է եւ շահագրգռված չէ ձեզանից որեւէ բան թաքցնելու:

# ՇԱՅԱԾ ԳԼՈՒԽՆԵՐ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ԳԼԽԱԳԻՐ ԳՐԵԼՈՒ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՍԻՆ

26 հունվարի, 2002

Գլխագրերը մեծ ուշադրություն են գրավում. այս պնդումն անելով՝ հաստատ սխալված չենք լինի: Վստահ եմ՝ ենթախմբագիրը, որ ամերիկյան թերթերից մեկում գրել էր «Պատերազմը մթագնում է խաղաղության հույսը», նույն կարծիքին կլինի: Սա մի բնագավառ է, ուր մեր տաղանդի պտուղներն անմիջապես արժանանում են գովասանքի կամ ծաղրանքի:

Եթե գլխագրում սխալ անես՝ անմիջապես կռիվ կսկսվի, սովորաբար՝ թերթի եւ ընթերցողի, երբեմն նաեւ՝ նյութի հեղինակի եւ գլխագիրը գրելով այն աղավաղողի միջեւ: Վերջին դեպքում խնդիրը բարդանում է նրանով, որ շատ ընթերցողներ կարծում են, թե նյութ գրողն ու դրան վերնագիր դնողը նույն մարդն է, այնինչ՝ իրականում երբեք այդպես չի լինում:

Լավագույն գլխագրերը շատ երկար կյանք ունեն: Երբ իմ գործընկերներին առաջարկեցի հիշել իրենց կարծիքով լավագույնը, ամենից հաճախ հիշատակվողը «Գարդիանի» գլխագրերից չէր, նրանք հիշեցին Էսեքսում ծագած գրադարանային ճգնաժամին նվիրված նյութի Book lack in Ongar վերնագիրը: (Ֆրանկֆուրտի միջազգային դպրոցի ուսանողների համար, որոնցից դասախոսը գլխագրային բառախաղերի ցանկ էր ուզել, հիշյալ վերնագիրը խաղ է (բառախաղ չեմ անում) Ջոն Օսթորնի «Յետ նայիր զայրացած» թատերախաղի վրա: (ժան - անգլերենում Օսթորնի պիեսի վերնագիրը արտասանությամբ շատ նման է հիշատակված խորագրին՝ Look back in Anger):

Ամենից հռչակավոր գլխագրերից շատերը պանթոն են մտել հեղինակի կամքից անկախ: Ափսոս է, որ պատերազմական ժամանակների «Ֆրանսիացիք շշեր են մտցնում Գերմանիայի հետույքը» գլխագրի հեղինակը մնում է անհայտ:

Հարողը Էվանսն իր «Լրատվական գլխագրեր» գրքում (Հայնման, 1974) ասում է, թե լավ գլխագիրը պետք է հեռագրի նման լինի. «Ամենից կարելորդ՝ այն պետք է լինի պարզ, անմիջական ու ազդեցիկ... Այն պետք է հստակ բովանդակություն ունենա, հեշտ կարդացվի, խնայողական լինի խմբագրելու, տեղադրելու, տպելու եւ կարդալու առումով, ինչպես նաեւ, համաչափ լինի իր նյութին եւ լինի ճկուն»:

Գլխագրերի դեմ հազվադեպ չէ, որ բողոքում են, անգամ եթե դրանք ժպիտ են առաջացնում: Բնության վերջին աղետներից մեկի մասին պատմող մեր մի նյութից հետո այսպիսի իմակ ստացանք. «Կուզենայի ես էլ միանալ նրանց, ովքեր հաստատ շնորհավորած կլինեն «Գարդիանին» շաբաթ օրվա գլխագրի համար՝ «2000 dead - and rising»: (ծան - Այս վերնագիրը դժվար թարգմանելի է: Իմաստն է՝ «Մահացածները 2000-ն են, եւ թիվը դեռ աճում է»: Բայց կարելի է կարդալ նաեւ իբրեւ՝ «2000 մահացած եւ հարություն առած»:) Իմ տրամադրությունը շատ բարձրացավ: Բայց կարող էիք նաեւ մի քիչ սպասել եւ այն տպագրել Հարության տոնի համարում»:

Իսկ ավելի լուրջ բողոքներ ստացվում են գլխագրերում տեղ գտնող չափազանցությունների եւ այնպիսի հայտարարությունների հետ կապված, որոնք տեքստով չեն հաստատվում: Մեր մի շարք ընթերցողների կարծիքով այդպիսին էր անցած շաբաթվա մեր առաջին էջի գլխագիրը, որ ազդարարում էր, թե «Սաուդյան Արաբիան պահանջում է, որ ԱՄՆ ուժերը հեռանան»:

Ընթերցողներից մեկը գրեց. «Յոգվածում ոչ մի տեղ այս հայտարարությունը չի հաստատվում: Հակառակը, այնտեղ ասվում է, թե «Ամիսներ շարունակ կողմերը պնդում էին, որ իրենց միջեւ լուրջ հակասություններ չկան»: Ես կարծում եմ այս ընթերցողի, եւ նրա նման մտածող ուրիշների ասածը հիմնավոր է, թեւ նյութը գրած լրագողն ինքը դրված վերնագրի դեմ չէր բողոքում:

Չափազանցված գլխագրերի մասին ահա թե ինչ է գրում մեկ այլ ընթերցող. «Ինձ անհանգստացնում է այն հանգամանքը, որ «Գարդիանը» գլխագրերը վերջերս ավելի ու ավելի շատ այս կամ այն դեպքի առթիվ այսինչի կամ այնինչի «մոլեգնության», քան բուն այդ դեպքի մասին են: Օրինակ՝

«Բլանքեթը մոլեգնել է ապաստան փնտրողների ճամբարի հարցում իր պարտության պատճառով»... Սա թաբլոյդների սիրած հին հնարքն է, երբ պարզապես «Բլանքեթը զայրացել է» ասելը համարվում է ոչ տպավորիչ»:

Նորից վերադառնանք Հարոլդ Էվանսին: Նա նշում է, որ Մանուլի խորհուրդը՝ Մանուլի դեմ բողոքների հանձնաժողովի նախորդը, «իրավացիորեն պաշտպանում էր (1960-ականներին) բողոքները այն գլխագրերի դեմ, ուր մեղմ քննադատության մասին ասվում էր՝ «փնովեց» կամ «պատին սեղմեց»: Խորհուրդն այն համոզմանն էր, որ վերնագիրը պետք է համապատասխանի նյութի հիմնական բովանդակությանը, ոչ թե վերաբերի դրա մի մասին»:

Լավագույն գլխագրերի դեպքում այն սխալ տպավորությունն է ստեղծվում, թե դրանք հեշտությամբ են գտնվել: Այնինչ վերը նշված պահանջներին բավարարելուց բացի, գլխագիրը նաեւ պետք է բռնի տվյալ սյունակների չափին՝ տվյալ տառատեսակով ու տառաչափով: Այն պետք է նաեւ համապատասխանի նյութի բովանդակության համեմատական կարեւորությանը՝ էջի մյուս նյութերի շարքում: Հիշենք նաեւ, որ գլխագրերը միշտ շտապողաբար են գրվում:

Գլխագիր գրելու հմտությունը խրախուսելու համար խմբագրի օգնականը (տպագրության գծով) վերջերս ամսական մրցույթ հայտարարեց «Գարդիանում»: Առաջին «տարվա գլխագիրը», որն ընտրել է կառավարող-տնօրենը, հենց նոր է որոշվել: Դա Ջուլի Ռիդի՝ G2-ի գլխավոր ենթախմբագրի կազմած պարզ ու հարմար գլխագիրն է Թալիբանին հակադրված երաժիշտների մասին պատմող նյութի համար՝ «Արգելքի տակ էլ շարունակեցին նվագել»:

Իսկ ավարտել ուզում են հայտնի մի գլխագրով, որ բերված է Ֆրից Սպիգլի «Թերթերը բնավ այդ չէին ուզում ասել» գրքում՝ տպագրված իր «Սքառուս փրես» հրատարակչությունում, 1965 թվին: Դրա առաջին մասն ասում է՝ «Սիբելիուսը մեռնում է»: Երկրորդ մասն ավելացնում է՝ «Երբ տեսնում է, թե ինչպես է Սարջենթը կատարում իր Հինգերորդ սիմֆոնիան»:

Մնացածի մասին՝ թերեւս ավելի ուշ:

# ՄՏԱԾԻՐ ՉԽԿԱՑՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ

*ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ....*

*ԵՐԵՒԱՆԵՐԻ՝ ԱՌԱՆՑ*

*ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ*

*ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

*12 հունվարի, 2002*

Վերջերս երկու դեպք է եղել, երբ «Գարդիանում» անչափահասների նկարների տպագրումից հետո վերջիններիս ծնողները բողոքել են: Ընդ որում, բողոքը բուն նկարների դեմ չէր: Դրանք լուսանկարներ էին, որ ուրիշ հանգամանքներում տպագրվելու դեպքում ծնողներին կարող էին միայն ուրախացնել: Առարկությունները հիմնականում պայմանավորված էին այն համատեքստով, որում դրանք օգտագործված էին:

Առաջին լուսանկարը, որ նոյեմբերի 28-ին տպագրվել էր թերթի «Հասարակություն» բաժնում, պատկերում էր Օուլդամի համայնքային կենտրոններից մեկի կողքով վազող երեք աղջիկների: Իսկ համատեքստը Օուլդամի անկախ հանձնաժողովի նախագահի այցն էր տվյալ կենտրոն՝ քաղաքում եղած ռասայական մոտեցումների եւ անկարգությունների հարցը քննելու համար:

Աղջիկներից մեկի մայրը արդեն իսկ մերժած էր եղել այդ այցի հետ կապված իր աղջկանից հարցազրույց վերցնելու համար թույլտվություն տալ հեռուստատեսությանը: Եվ նա լրջորեն զայրացել էր՝ տեսնելով «Գարդիանի» տպագրած լուսանկարը: Մայրը կարծում էր, որ նյութի գլխագրում մեջբերված օուլդամցի եւ ասիացի անչափահասի խոսքերը, թե՛ «Եթե մտնես սպիտակների շրջանը, անպայման քեզ կվիրավորեն», մտածել կտան, թե իր աղջիկն ու նրա ընկերուհիները՝ երեքն էլ 12 տարեկան, երեքն էլ սպիտակ եւ նկարում հս-



տակորեն ճանաչելի, ռասիստական ու մասնավորապես հակասահական նախապաշարուններ ունեն: Իսկ իրականում, պնդում էր մայրը, բնավ էլ այդպես չէ: Լուսանկարն անելիս նրանից բնավ թույլտվություն չէին հարցրել:

Իմ համոզմամբ՝ ծնողի անհանգստությունն արդարացված էր ու սպասելի, ու ես կարծիք հայտնեցի, որ նկարը չպետք է տպագրվեր:

Իմ կարծիքը համարյա նույնն է երկրորդ դեպքի առնչությամբ: Խնդրո առարկա լուսանկարն օգտագործվել էր դեկտեմբերի 12-ի G2 բաժնում իրար դիմացի երկու էջ զբաղեցնող հոդվածում, ուր աշխատակազմի անդամ լրագրողը քննում էր Լիդսում ռասայական մոտեցումների առկայության հարցը՝ կապված ասիացի ուսանողի վրա մի խմբի կատարած հարձակման հետ, որի մեջ եղել էր Leeds United-ի ֆուտբոլիստ:

Հոդվածի հետ տեղադրված էր երեք լուսանկար: Չախ էջում դրված երկու սեւ-սպիտակ նկարներում պատկերված էին հարձակման ենթարկված ուսանողը՝ Սարֆրազ Նաջբեր, եւ հարձակվողներից Ջոնաթան Վուդգեյթը՝ «Լիդսի» ֆուտբոլիստը, որին կռվի մասնակցելու մեջ մեղավոր էին ճանաչել: Իսկ աջ կողմի էջի համարյա կեսը զբաղեցնում էր անունը չնշված մի ասիացի պատանու գունավոր լուսանկար. պատանին նայում էր ուղիղ ընթերցողի աչքերի մեջ: Նկարում ոչ մի այլ դեմք չկար, իսկ մակագրությունն ասում էր. «Լիդսի» մի երկրպագու ...բազմության մեջ: Թիմի համակիրները շփոթված են, որ իրենց ակունքը նորից կապվում է ռասիզմի հետ»:

Նկարը թեւեւ միջին պլանով, բայց «երկար տեսապակով» հեռվից էր արված: Լուսանկարիչը թույլտվություն չէր հարցրել եւ նկարում պատկերված տղան չգիտեր, որ իրեն նկարել են: Տղայի հայրը (դա հնդիկների ընտանիք էր), որ որդու հետ միասին ստադիոնում էր եղել, խիստ վրդովվել էր: Նա մտածում է, որ նկարի պատճառով իր 14-ամյա որդին հայտնվում է վտանգավոր իրավիճակի կենտրոնում, ինչը կարող է հանգեցնել անախորժությունների: Նա կարծում է նաեւ, որ «Գարդիանի» նման թերթը (իր ձեւակերպումն է) պետք է հասկանար դա:

Ես նրա հետ համաձայն եմ: Չնայած թերթի մտադրությունը դրական էր եղել՝ ցույց տալ, որ ասիացիներն առաջվա պես շարունակում են գալ «Լիդսի» խաղերին, դա անելու համար մեկ պատահու առանձնացնելն ու նկարելը ճիշտ չէր: Իմ խնդրանքով խմբագիրը պահանջեց, որ նկարը ջնջվի մեր արխիվից:

Մտածելով, որ ճիշտ կլինի լսել տղայի կարծիքը, հոր համայնությամբ ես այցելեցի նրանց տուն, որ Արեւմտյան Յորքշիրում է: Տղան պատմեց, որ նկարի մասին իմացել է դպրոցում, երբ երեք ուսուցիչ, մեկը մյուսի հետեւից իրեն ցույց են տվել թերթը, իսկ մեկը նույնիսկ իրեն թույլ է տվել դուրս գալ դասից եւ իր համար ձեռք բերել թերթի մի օրինակ: Սկզբում, ասում է, ուրախացա՝ «Վա՛յ, իմ նկարը թերթում»: Բայց հետո ընկերներիցս մի քանիսը, մեծ մասամբ՝ մահմեդականներ, սկսեցին ձեռք առնել ինձ, անվանելով «Լիդս յունայթեդի» «ցուցադրական ասիացին»: Օրվա ընթացքում տղան իրեն անհանգիստ ու խոցելի է զգացել, եւ երեկոյան տուն է հասել արդեն զայրացած: Իսկ «Լիդսի» մյուս տեղական խաղը նայելու արդեն չի գնացել: «Ես պարզապես սիրում եմ ֆուտբոլ եւ սիրում եմ նայել «Լիդսի» խաղը: Ես ինձ «Լիդս յունայթեդի» երկրպագու չեմ համարում»:

Մամուլի դեմ բողոքների հանձնաժողովի կանոնագիրն այս կոնկրետ դեպքում այնքան էլ օգնության չի գալիս: «Երկար տեսապակու» օգտագործումն այնքան էլ էական չէ տվյալ համատեքստում, քանի որ դրա օգտագործման արգելքը վերաբերում է մեկուսի տարածքներին կամ այնպիսի հանրային տարածքներին, ուր ակնկալելի է, որ մեկուսի վայրեր կլինեն: Ֆուտբոլի հերթը նման վայր չէ: Սակայն կանոնագիրը նաեւ նշում է. «Լրագրողը ծնողի (կամ պատասխանատու մեծահասակի) բացակայությամբ կամ առանց նրա համաձայնության չպետք է հարցազրույց վարի 16-ից ցածր տարիքի երեխայի հետ կամ լուսանկարի նրան՝ ...երբ դա կարող է անդրադառնալ երեխայի բարօրության վրա»: «Երեխայի բարօրություն» արտահայտությունը պարզաբանման կարիք է զգում: Սակայն ասվածի իմաստը բավականին պարզ է: Քննարկված երկու դեպքերում էլ թերթը մի քիչ ավելի լավ պետք է մտածեր՝ մարդկանց բեռի տակ դնելուց առաջ:

# ՄԱՅԱՑՈՒ ՎԻՐԱՎՈՐԱՆՔ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ՀԱՆԳՈՒՑՅԱԼՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ՀԱՐԳԱՆՔԻ ԿԱՄ ԱՆՀԱՐԳԱԼԻՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*03 նոյեմբերի, 2001*

«Գարդիանի» մահախոսականների էջը, որտեղից էլ հենց ես տեղափոխվել եմ իմ ներկայիս աշխատանքին (ինչպես գործընկերներիցս մեկն է ասել ժամանակին՝ մեռածների մոտից տեղափոխվելով վիրավորվածների մոտ), երբեք չի հավակնել վերջնական կարծիք հայտնել իր տնվորների մասին: Այստեղ նրանք իրար կողք կողքի են պառկած՝ ինչ դասակարգի, հավատի, ազգության կամ ռասայի էլ որ պատկանեն: Նրանցից ընդամենը պահանջվում է, որ մահացած լինեն, ու մեկ էլ, որ կյանքում քիչ թե շատ փառքի կամ ճանաչման արժանացած լինեն:

Մահախոսականը կարող է լինել հիացական կամ որոշ դեպքերում՝ կծու, իսկ մեծավ մասամբ՝ միջին դիրք է գրավում հիշյալ երկու ծայրահեղությունների միջև: Այն, որ թերթը մահախոսականը չի դիտում որպես վերին խոսք, պարզ երեւում է այն պատրաստականությունից, որով էջը տեղ է հատկացնում ընթերցողի նամակ-մեկնաբանություններին: Դրանցում հաճախ նշվում է այն, ինչի մասին մահախոսական գրողը մոռացել է նշել կամ ուղղակի չէր կարող տեղյակ լինել, կամ էլ՝ առարկություններ են հնչում, հաճախ բավականին կրքոտ, մահացած անձին տրված գնահատանքին:

Նման նամակների կանոնավոր տպագրումը «Գարդիանի» մահախոսականների էջի եզակի առանձնահատկությունն է: Այս տարվա ապրիլից ի վեր թերթում հրապարկվել է 70 այդպիսի նամակ: Իսկ վերջերս հրապարակվածների թվում են այն նամակները, որոնցում վեճ կար՝ կապված լեյբորիստական

գործիչ Փիթեր Շորի մահախոսականի հետ (26 սեպտեմբերի): Այդ մահախոսականը, որ էլեգանտ ոճով գրել էր մի փորձառու քաղաքական մեկնաբան, ոմանց կարծիքով անզիջում լինելու չափ անկեղծ էր, մյուսների կարծիքով՝ «վրիժառու եւ ճղճիմ»:

Ես չէի ցանկանա նորից ցավ պատճառել ոմանց, բայց անկասկած է, որ շատերին զայրացրած հնչերանգը կար մահախոսականի հենց առաջին նախադասության մեջ: Այն ասում էր. «Դժվար է պատկերացնել ավելի տխուր քաղաքական ուղի, քան այն մարդունը, որ ժամանակին իրենից բարձր պետական նախարարների վրայով ցատկելով մտել էր կաբինետ, իսկ 20 տարի անց կատարված հարցման արդյունքում ճանաչվել է իր ազդեցությամբ 12-րդը բաբբենչերների (*ժան - բառացի՝ հետեւի նստարանին նստողների՝ Յամայնքների պալատի շարքային անդամների*) թվում»:

Շորի ընկերներից մեկը նամակ գրեց թերթին, բողոքելով, թե. «նկարագրված մարդը ... համարյա ոչնչով չի հիշեցնում այն մեկին, որին երկար ժամանակով ճանաչելու պատիվն են ես ունեցել»: Նա պնդում էր նաեւ, թե հեղինակը չի կարողացել կատարել իր «հիմնական պարտականությունը»՝ (շարադրում են իր միտքը) տալ մարդու ամբողջական պատկերը:

Այս ընթերցողի եւ մի քանի ուրիշների արձագանքը հարցեր է հարուցում, որոնք հաճախ ծառանում են այս էջում աշխատող նաեւ այլ լրագրողների առջև: Որչափ անկեղծ պետք է լինի մահախոսականը: Ո՞ր չափով պետք է հաշվի առնվեն մահացածի ընկերների եւ հատկապես հարազատների զգացումները: Արագությունը, որով մահախոսականը հետեւում է մահվանը, ի՞նչ չափով պետք է լինի զսպող հանգամանք: Որքանո՞վ է անկեղծության թուլատրվող չափը կախված մահախոսագրի՝ իր նյութին լավ ծանոթ լինելու հանգամանքից: Կարո՞ղ է հանրային դեմքի մահախոսականն ավելի անկեղծ լինել, քան նրանը, ով հանրային աչքից հեռու է իր ճանապարհն անցել: Ո՞ր չափով պետք է մահախոսական գրողը օգտվի այն հանգամանքից, որ մահացածին հնարավոր չէ զրպարտել: Եվ այլն:

Միտքս են գալիս Չ.Փ. Սքոթի՝ մեր էթոսի հիմքը դնողի խոսքերը: Իր հայտնի դիտարկումը, թե՛ «Մեկնաբանելիս ազատ եղիր, բայց փաստերը սրբություն են», նաեւ շարունակություն

ունի, որի մասին շատ քիչ են հիշում. «Մեկնաբանությունը նույնպես իրավացիորեն ենթակա է ինքնակամ սահմանափակման: Անկեղծ լինելը լավ բան է, բայց արդար լինելն ավելի լավ է»:

Մեծ մասամբ, երբ մահախոսականը ոմանց վիրավորում է, օգնում է բողոքի նամակը էջում տպագրելը: Սակայն վերջերս, զարմանալի կերպով, ոչ թե պատմաբան Փլամբի մահախոսականը, այլ դրա մասին գրված նամակն էր, որ բողոքների առիթ տվեց: Մահախոսականի հեղինակը, ամբողջ էջը բռնող իր տեքստում, հիշատակել էր պրոֆեսոր Փլամբի «արտառոց բնավորությունը» և «Քեմբրիջի ամենից կոպիտ մարդու» նրա համբավը: Ոչ մեկը սրան չէր առարկել, քանի որ տեքստում ըստ արժանվույն ներկայացված էին նաև պրոֆեսորի դրական որակները, ձեռքբերումները և արած բարի գործերը:

Նամակի հեղինակը (ինչպես նաև էջի խմբագիրը, որ համաձայնել էր նամակը տպագրել) այն կարծիքին էր, որ պրոֆեսոր Փլամբի բռնկում բնավորությունը կոնկրետ օրինակով ցույց տալու կարիքը կար: Այդ պատճառով էլ տպագրված նամակում նա պատմում էր իր մասնակցությամբ տեղի ունեցած մի դեպք, որի ժամանակ պրոֆեսորը, այսպես ասենք, ավերից դուրս էր եկել: Իսկ ահա նամակի դեմ բողոքողները գտան, որ հիշյալ նամակը վիրավորական էր և դրանից հին հաշիվներ մաքրելու հոտ էր փչում, ուստի և այն չպետք է տպագրվեր: Նրանք հավանաբար ճիշտ էին, և մահախոսականների էջի խմբագիրները թերթի խմբագրի կողմից ցուցում ստացան՝ այսուհետ ավելի զգույշ լինել մահախոսականներում և նամակներում տեղ գտնող վիրավորական տարրերի հարցում:

Վերջերս մի բողոք ստացանք, ուր վրդովմունքի պատճառը ոչ թե մահացածի մասին գրվածն էր, այլ նրա ընտանիքի անդամների մասին մահախոսականում անընդունելի և վիրավորական կերպով հիշատակելը: Ես այն եզրակացությունը հայտնեցի, որ նման դեպքում ուղղիչ նամակի հրապարակումը բողոքի խելամիտ բավարարում կնշանակեր: Երբ բողոքը հասավ «Գարդիանի» արտաքին օմբուդսմանին և Մամուլի դեմ բողոքների հանձնաժողովին, նրանք համաձայնեցին իմ այս վճռի հետ: Սակայն բողոքողները դժգոհ մնացին:

Նման էջ խմբագրելը հեշտ գործ չէ:

# ՊՂՏՈՐՎԱԾ ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆ

*ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ...*

*ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀՆԱՐԱՆՔՆ*

*ԻՐԱՐ ԽԱՌՆՈՂ ՆԿԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

*28 հուլիսի, 2001*

Այս սյունակում ավելի շատ հարցեր են լինելու քան պատասխաններ: Մի քանի շաբաթ առաջ մեր շաբաթօրյա հավելվածում «Գայդում», մենք տպագրել էինք սրածայր ցանկապատի վրա ցից հանած կնոջ գունավոր մի նկար: Կինը պառկած էր աչքերը բաց, մարմինը կրծքից ներքեւ շամփրած ցանկապատի արյունոտ ցցերով, հագուստը բարձրացրած ու ոտքերը տարածած:

Մի ընթերցող բողոքեց նկարի դեմ. «Ի՞նչ պետք է պատասխանեի ես իմ վեց տարեկան որդուն, որը շաբաթ առավոտ թերթը գալուն պես նկատեց նկարը ու հարցրեց դրա մասին», - գրում էր նա: Ընթերցողը որդուն պատասխանել էր, թե նկարը ոչ թե իսկական է, այլ հորինված, ու վերցված է ֆիլմից: Ապա շփոթվել ու չէր իմացել էլ ինչ ասել: Եվ իսկապես էլ նկարը, հենց «Գայդի» բնորոշմամբ, «Ձինջեր սնափս» կոչվող էժանագին ֆիլմից էր վերցված:

Ես ասացի, որ ինքը տղային պետք է ասեր, թե նկարը օգտագործելը սխալ էր ու մենք ներողություն ենք խնդրում դրա համար: Ձեզանից ոմանք կասեն՝ ինչո՞ւ այդքան բարդացնել, դա ընդամենը ֆիլմ էր: Տղայի հայրը, որ պատերազմական շրջաններում աշխատած լուսանկարիչ էր, ուզում էր իմանալ, թե մենք սարսափազդու նկարներ տեղադրելու որոշում ընդունելիս ի՞նչ զանազանություն ենք դնում երեւակայականի ու իրականի միջեւ: Այս հարցին ես դեռ կանդորադառնամ:

Հարցն ունի մի քանի կողմ եւս: Տղային թույլ չէին տա դիտել այն ֆիլմը, որից վերցված էր նկարը: Նրան չէին թույլ տա նայել դա անգամ ֆիլմի գովազդային հեռուստահոլովակում:

Խիստ անհավանական է, որ նա նման բան կարողանար տեսնել հետուստացույցի էկրանին, եթե անգամ այդ օրը անսովոր ուշ քնելու լիներ: Որչափո՞վ պետք է թերթը անհանգստանա երեխաներին նման նկարները մատչելի դարձնելու խնդրով: Արդյո՞ք այս հարցում թերթը պատասխանատվություն ունի, թե՞ ծնողները պետք է պաշտպանեն երեխաներին նման նկարներից, եթե անհրաժեշտ են համարում:

Նորից տղայի հայրն է գրում. «Իսկ գուցե դա նշանակություն չունի՞: Երբ ես Ալաբամայում իր տարիքին էի, կողքի հարեւանի աղջիկը մեզ բերեց ու ցույց տվեց իր շերիֆ հոր՝ հանցագործությունների ֆոտոալբոմը: Դրանք սարսափազդու էին եւ դրանք նայելու համար մեզ վրա խիստ զայրացան: Բայց ես նորմալ մեծացա: Համեմատաբար: Ես 1980-ականներին կենտրոնական Ամերիկայում լուրերի լուսանկարիչ եմ աշխատել եւ գիտեմ դա իրականում ինչպես է լինում, ես ինքս հիմա իմ ալբոմները ունեմ: Ես կարծում եմ «Գարդիանը» ճիշտ է անում, որ պատերազմում զոհվածների նկարները տպագրում է: Հենց սա է, որ ես ուզում եմ բացատրել իմ տղային»:

Իսկ ահա «Գայդի» լուսանկարը, նրա համոզմամբ, «ավելորդ էր ու նվաստացուցիչ բոլորիս համար»: «Ինչպե՞ս պետք է ես բացատրեմ իմ տղային, որ այս նկարը ոչ մի բան չի նշանակում, իսկ առաջին բաժնի (լրատվական) նկարները շատ բան են նշանակում»:

Իմ ընկերներից մեկը մանկական հոգեբույժ է եւ աշխատել է Բոսնիայի պատերազմի սարսափները տեսած երեխաների հետ: Նրան հասկանալի էր այն ընթերցողի տագնապը, ում որդին հարցրել էր ցից հանված կնոջ նկարի մասին: Ընկերս նկատեց, թե որքան հստակ երեւա, որ նկարը հնարված է, այնքան նրա ազդեցությունը պակաս հիվանդագին կլինի (ահա թե ինչու ծաղրանկարներում բռնության պատկերումը շատ ավելի հանդուրժելի է համարվում): Նա նշեց նաեւ, որ «Գայդը» ամբողջովին ժամանցին է նվիրված եւ դրանով իսկ բոլորին, բացի թերեւս երեխաներից, պետք է ինքնին հասկանալի լինի, որ դրանում տպագրված նկարները հորինովի են:

Ամեն դեպքում խնդրո առարկա նկարը, ուր «արյունը ներկայանում է իբրև զվարճանք» (բողոքող ընթերցողի բառերն են), բացատրության մեծ կարիք ուներ: Ինչո՞ւ են մարդիկ այն համարում զվարճալի: Իհարկե, սրանում մեծ դեր է խաղում սեռական բաղկացուցիչը, բռնության ու վուլյորիզմի տարրերով:

Հոգեբույժն այն կարծիքին է, որ փոքր երեխաներին պետք է հեռու պահել նման նկարներից: Ինչպե՞ս հասնել դրան: Պարզապես չօգտագործել՞ով դրանք: Կարելի՞ է անվանել սա գրաքննություն:

Սակայն վերադառնանք դեպի իրականություն, եթե այդպես կարելի է ասել: Մի հարցում մենք մեր բողոքող ընթերցողի հետ համաձայն էինք՝ պատերազմի մասին մեր հայրենակիցներին ճշմարտությունը պատմող նկարները պետք է հրապարակվեն: Ջոն Փիլշերը, մի քանի օր առաջ անդրադառնալով Բասրայի ճանապարհին իր մեքենայի անիվին կապված ու այրված-մոխրացած իրաքցի զինվորի նկարին, գրել էր. «Այդ մի հատիկ նկարը ի չիք դարձրեց այն քարոզչությունը, թե պատերազմը վերջապես դարձել է անարյուն գիտություն՝ «մաքուր» ու «վիրաբուժական»:

Հոգեբույժը նկատում է. «Որոշ նկարներ հրապարակվում են՝ գիտակցելով, որ դրանք ցնցող են. դրանք հենց դիտողին ցնցելու համար են հրապարակվում: Պատերազմական շրջաններում ապրող մարդկանց համար ճշմարտությունը սարսափելի կարելոր է: Նրանք ասում են, թե աշխարհը չգիտի ինչ է իրենց մոտ կատարվում»:

Համարյա նույն բանն է ասում նաև ինձ բողոքող ընթերցողը. «Մարդիկ պատրանքներ չպետք է ունենան պատերազմի զարհուրանքի եւ բռնության հետեւանքների մասին»:

Կարծում են որոշիչ է հետեւյալը՝ նկարը պատերազմական է, թե՛ հակապատերազմական: «Գարդիանում» տպագրված նկարները, որոնց հրապարակումը ես պաշտպանել եմ, իմ կարծիքով հակապատերազմական էին: Դրանք էին՝ Բոսնիայում իրեն կախած կնոջ՝ առաջին էջի լուսանկարը, եւ դարձյալ առաջին էջում՝ Կոսովոյում ռմբահարման զոհ դարձած կնոջ լուսանկարը:

Այս ամենով հանդերձ, անպատասխան հարցեր դարձյալ մնում են: Նորից կրկնենք դրանցից միայն մեկը՝ իսկ ինչպե՞ս վարվել այս դեպքում երեխաների հետ:



# ՆԿԱՐԱՅԻՆ ՎԹԱՐ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉ ՍԽԱԼՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ ՆԿԱՐՆԵՐՈՒՄ ՈՒ ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

21 հուլիսի, 2001

Շաբաթը միջին հաշվով մոտ 1 500 լուսանկար է օգտագործվում «Գարդիանի» բոլոր տպագիր թողարկումներում: Մյուս բրոդշիթների նման, թերթը դարձել է շատ ավելի պատկերային: Չպատկերագարոված կամ քիչ պատկերագարոված էջը ներկայիս փոխված միջավայրում կարող է կապարի նման ծանր թվալ, ինչպես դատարկ եթերը: Եթե խմբագիրը, նայելով էջի պլանին կամ սրբագրությանը, ասում է՝ «տեքստը շատ է», դա քննադատություն է, ոչ թե՝ գովասանք:

Նկարը էջի ակտիվ, ոչ թե կրավորական տարր է (կամ պետք է այդպիսին լինի): Եթե ամեն ինչ ճիշտ է արված, ինչպես սովորաբար լինում է, նկարը, տեքստը եւ վերնագիրը աշխատում են միասին՝ բովանդակությունը ճշգրտորեն ու աշխույժ կերպով արտահայտելու համար: Դրանք մղում են մեզ կարդալու եւ հասկանալու: Սակայն ամեն գնով պատկերագարդելու միտումը երբեմն մղում է հուսահատ քայլերի, ինչի արդյունքում պատահում են, այսպես ասենք, նկարային վթարներ:

Նկարային վթարները տարբեր տեսակի են լինում: Ահա մի մասը նրանից, ինչ մենք կարող ենք անել (եւ արել ենք). մենք կարող ենք տեղադրել սխալ անձնավորության կամ սխալ վայրի նկար, կարող ենք թեքել կամ շրջել նկարը (ամենամեծ «քաջագործությունն» այն էր, որ մենք շրջել էինք «Ձիու գլխի» միգամածության պատկերը), կարող ենք ճիշտ նկարի տակ դնել սխալ մակագրություն (ասենք, եթե նկարը հաջորդ

թողարկման մեջ փոխվել է, իսկ տակի մակագրությունը նույնն է մնացել): Սրանք դեռ մանր վթարներ են:

Դժբախտաբար կան ավելի լուրջ նկարային վթարներ, ու դրանցից խուսափելու մեր անկարողությունը կարող է լուրջ վնաս հասցնել տարբեր անհատների ու խաթարել նրանց հեղինակությունը: Մի քանի ամիս առաջ անշարժ գույքի գործակալների մասին ոչ այնքան հաճելի կարծիք հայտնող նյութը (ի դեպ, այս մասնագիտության տեր մարդիկ հասարակության մեջ մոտավորապես նույն համարումն ունեն, ինչ, ասենք, լրագրողները) ուղեկցվում էր մի լուսանկարով, ուր «վաճառվում է» մակագրության կողքին հստակ երեւում էր մի գործակալի անունը: Ընդհանուր դատողություններ պարունակող տեքստը անթույլատրելի կերպով միացվել էր անշարժ գույքի մեկ կոնկրետ գործակալի նկարի հետ, որը ներկայացվող պատմության հետ ոչ մի կապ չուներ: Սա տվյալ անձի արատավորման ոչ մի արդարացում չունեցող քայլ էր, որի համար թերթը ներողություն խնդրեց:

Նման կարգի վթարից հեշտությամբ կարելի կլինի խուսափել, եթե ամեն անգամ համանման իրավիճակում պատկերացնենք ինքներս մեզ: Ասենք այսպես. լրագրողները բոլորն էլ անհասկացող ու խաբեբա են, ահա նայեք՝ Յան Մեյսի լուսանկարը:

Վերջերս թերթում հոդված էր տպագրվել մի անօրինական ներգաղթյալի փորձառության մասին, որում հիշատակվում էր նրա շահագործումը տոնավաճառներից մեկում կարուսելի վրա աշխատելիս: Հոդվածն ուղեկցվում էր հիշյալ պատմության հետ ոչ մի կապ չունեցող մի կարուսելի լուսանկարով: Սակայն նկարում պատկերված կարուսելն այնքան եզակի էր ու հեշտորեն ճանաչելի, որ դրա սեփականատերն այն անմիջապես նկատեց եւ բողոքեց իր հեղինակությանը վնաս հասցնելու դեմ: Թերթն այս դեպքում եւս հստակորեն ներողություն խնդրեց:

Ուշադիր ընթերցողը նկատած կլինի լուսանկարների երբեմն հանդիպող այն մանվածապատ մակագրությունները, որոնցում փորձ է արվում որոշ հեռավորություն ստեղծել նկարի եւ դրան կից հոդվածում արտահայտված հույզերի կամ նկարագրված իրադարձությունների միջեւ: Սակայն դժվար է

պատկերացնել այն բառերը, որոնցով վերը հիշատակված անշարժ գույքի գործակալին հնարավոր լիներ համոզել, թե ոչ մի վնաս չկա իր անունը կրող ցուցանակով նկարը տվյալ համատեքստում օգտագործելուց: Կամ էլ ի՞նչ կերպ պետք է համոզես կարուսեղի սեփականատիրոջը, թե կարուսեղի լուսանկարը տվյալ հոդվածի հետ տպագրելով պարզապես այն գովազդել են: Նման գրություններն ընդամենը հաստատում են, որ նկարներն անհարկին են օգտագործված, եւ թերթը դրանով իրեն հարվածի տակ է դրել:

Նկարների մակագրությունները հաճախ են լրագրողին պատմության մեջ գցում: Արդյո՞ք ահա այս լուսանկարում, որ պատկերում է ֆուտբոլասերների խաղադաշտ ներխուժելը ու կցված է դրա վտանգավորության մասին հոդվածին, բոլորը ֆուտբոլասերներ են, ինչպես նկարի մակագրության մեջ է գրված: Պարզվում է՝ ոչ: Մեկը, հստակորեն նկատելի է, խաղի կազմակերպիչներից է, որ դաշտ է վազում խաղացողներին պաշտպանելու: Այլ կերպ ասած՝ նա իր գործն է անում: Արդյոք նկարը տեղադրող լրագրողը կարո՞ղ էր գլխի ընկնել դա, թե՛ ոչ, մնում է միայն կռահել: Ամեն դեպքում կազմակերպիչը արդարացի կերպով բողոքեց, ու թերթը նրանից ներողություն խնդրեց:

Մակագրության սխալները հաճախ լայն արձագանք են ունենում: Պատերազմ-պատերազմ խաղացող պաղեստինցի երեխաների նկարի տակ մենք գրել էինք (հետեւելով նկարը տարածող գործակալության մակագրությանը), թե իսրայելցի զինվորները կրակում են պաղեստինցիների վրա, այնինչ ուշադիր քննությունը ցույց տվեց, որ իրականում ճիշտ հակառակն էր: Ստուգելը երկար ժամանակ էր պահանջում, բայց մենք արեցինք դա, եւ ուղղում տպագրեցինք, որին հետեւեց նաեւ գործակալությունը: Սակայն սխալները ապագայում եւս չեն բացառվում, համոզվելու համար՝ նորից կարդացեք այս նյութի առաջին նախադասությունը:

# ԽՈՐԻՆ ՉԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ

*ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ...*

*ՆԱՄԱԿՆԵՐԻ ԷԶԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ*

*ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

*23 հունիսի, 2001*

Խմբագրին ուղղված նամակները հրապարակման համար խմբագրելը թերեւս ամենից դժվար աշխատանքներից է «Գարդիանում»: Չրապարակվելու ցանկությունը միանգամայն հասկանալի է, դրանով դու հնարավորություն ես ստանում մտքերդ հասցեագրելու միլիոնից ավելի մարդկանց:

Վերջին անգամ նամակների հարցին անդրադառնալուցս ի վեր (31 հունվարի, 1998) դրանց պոտենցիալ ընթերցողների թիվը հսկայական չափով աճել է՝ Guardian Unlimited ցանցի շնորհիվ: Թերթում տպագրվող բոլոր նամակները դրվում են նաեւ կայքում. [www.guardian.co.uk](http://www.guardian.co.uk) մտնելուց հետո մնում է միայն մկնիկի մի սեղմում կատարել:

Սակայն այստեղ զարգացման մեծ հնարավորություններ կան դեռ: Սովորաբար օրական մոտ 300 նամակ է հասցեագրվում թերթին, որոնցից շուրջ 20-ը տպագրվում է, ընդ որում՝ սրանց մի մասը բավական կարճ նամակներ են: Այս պահին ավելի քիչ նամակներ են գալիս, ու պատճառը թերեւս հետընտրական հոգնածությունն է: Չարցն այն է, որ հրապարակման համար «Գարդիանին» ուղղված բոլոր նամակները տեսականորեն կարող էին դրվել նաեւ կայքում:

Դժվար է պատկերացնել նամակների խմբագրի հանդեպ ամենից հուսալքված նամակագրի դժկամորեն տրվող հարգանքն անգամ շահելու սրանից հեշտ եղանակ: Բայց ես ասացի՝ տեսականորեն, քանի որ գործնականում նամակների մի մասը կհանվեր իրավական պատճառներով, մի մասը՝ որովհետեւ դրանցում յուրօրինակության ավելի մեծ աստիճան կա, քան այն, որին սովորել են էջի ընթերցողները:

Սակայն հետաքրքիր կլիներ փորձել դա, թեկուզ ընդամենը մեկ անգամվա համար. կայքում տեղադրել այդ օրը ստացված նամակներից այնքանը, որքան հնարավոր է, եւ առաջարկել ձեզ՝ ընթերցողներիդ, ընտրել ու խմբագրել դրանցից 20-ը, առավելությունը տալով օրվա կարեւոր թեմային եւ ընտրված նամակներում պահպանելով կարեւորագույն կետերը: Հետո դուք հնարավորություն կունենայիք ձեր կատարած ընտրությունը համեմատելու թերթի կատարածի հետ:

Ի դեպ, «Գարդիանի» խմբագիրն ու իրավաբանն ամեն օր նայում են արդեն ընտրված նամակները: Այնինչ, դուք կնայե՛իք 200-ից 300 նամակ, որ արդեն «օրինական» համարված կլինե՛ին:

Նամակների խմբագիրը՝ էջի միջնորդն ու հսկիչը, պետք է միշտ զգոն լինի, որ այն կասկածելի նպատակներով չօգտագործվի: Միեւնույն ժամանակ, նա պետք է հնարավոր դարձնի կարծիքների հնարավորինս լայն շառավիղը, որպեսզի էջը աշխույժ լինի եւ կարդացվող: Սակայն բողոքներ միշտ էլ լինում են չընտրված նամակների հեղինակներից, ինչպես նաեւ խմբագրման հետ կապված:

Շատ սակավ, բայց պատահում է նաեւ հրապարակման համար սպրդում են այնպիսի նամակներ, որ չպետք է տպագրվե՛ին: Օրինակ, վերջերս Օուլդամի անկարգությունների ժամանակ տպագրված մի նամակում խոսվում էր այն մասին, թե մահմեդականներին դրդել են հարձակվել հնդիկների տների ու խանութների վրա: Ինձ այս մասին տազնապալի նամակ գրեց մի մահմեդական ընթերցող, որի կարծիքով հիշյալ նամակը՝ իբրեւ թե մահմեդականի կողմից գրված, կեղծ ստորագրություն էր կրում:

Երբ ես փորձեցի կապվել նամակի հեղինակի հետ (իսկ այն, ինպես հիմա մեծ մասամբ լինում է, էլեկտրոնային փոստով էր եկել), հասկացա, որ դրանում գրված փոստային հասցեն իսկապես կեղծ էր: Ես իմակով խնդրեցի նրան՝ զանգել ինձ: Հաջորդ օրը նա հեռախոսով բացատրեց ինձ, որ հասցեն, այո, կեղծ էր, քանի որ իրեն զգուշության է մղում հակամահմեդական քարոզչության մեջ ներքաշված քրիստոնյա պակիստանցի լինելը - ես այստեղ ինձ թույլ կտամ բացականչական նշան դնել: Մեր լրագրողը նամակում հիշատակված

երեւույթի ոչ մի վկայություն չգտավ: Ուղղումների սյունակում մենք մի գրություն դրեցինք, հայտնելով, որ ցավում ենք նամակը տպագրելու համար:

Ես այս օրինակը բերեցի երկու բան ցույց տալու համար՝ անկայուն իրավիճակներում զգոն լինելու անհրաժեշտությունը եւ նամակների էջն իբրեւ պլատֆորմ օգտագործելու մեծ գայթակղությունը:

Ներկա օրերում շատ քիչ բան կա, որ վիճահարույց լինելու պատճառով համարվում է ոչ հրապարակելի : Ի դեպ, ես այս շաբաթ խոսակցություն ունեցա Մերի Քրոուզերի հետ, որը նամակների խմբագիրն է եղել 1946-56թթ.՝ Ա.Փ. Վոդսվորթի խմբագիր լինելու շրջանից մինչեւ Ալասթեր Յեթերինգթոնի խմբագրության առաջին ամիսները: Քրոուզերը եւ Վոդսվորթը պահպանել են դեռ Չ.Փ Սքոթի ժամանակներից եկող սովորությունը՝ չտպագրել կրոնական վիճելի հարցերին վերաբերող նամակներ: «Դրանք բոլորն այնքան տհաճ բնույթ ունեին», - ասում է Քրոուզերը: Սակայն Յեթերինգթոնը վերացրել է այս արգելքը:

Նամակների էջը թերթի ամենից կարելոր էջերից է: Եվ այն շարունակում է մնալ ընթերցողական կարծիքի հիմնական ֆորումը թերթում, հակառակ որ մեծացել է էլեկտրոնային փոստով լրագրողների հետ անմիջական հաղորդակցությունը, ինչպես նաեւ աճել է «Ուիքենդ» հանդեսի, ինչպես նաեւ այլ մասնագիտացված բաժինների՝ «Օնլայնի», «Կրթության», «Հասարկության» նամակների էջերի հանդեպ հետաքրքրությունը, որոնք ստեղծվեցին դրանց ձեւավորումը փոխելուց հետո: (Մյուս բաժինները նույնպես հիմա նամակների համար հատուկ տեղ են հատկացնում):

# ԼՈՐԲԻ ՄԻՍ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ԻՄԱԿՆԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԱՐՇԱՎԻ ՄԱՍԻՆ

31 մարտի, 2001

Էլեկտրոնային մամուլի հետ միասին ասպարեզ իջավ նաեւ էլեկտրոնային լոբբին: Եվ մենք մինչեւ այժմ չենք կողմնորոշվել՝ ինչպես արձագանքել դրան: Իսկ դրա հետ մենք արդեն առնչվել ենք մի քանի դեպքերում՝ պնդումներ ընտրվելուց հետո առաջին ամիսներին Բլերի կառավարության հանդեպ մեր անարդար մոտեցման մասին (այս դեպքում նշանակալի լոբբիի հետ գործ ունենալն ինձ համար կասկածելի է, բայց իմ գործընկերների մի մասն այլ կարծիքի է), պնդումներ, թե Կոսովոյի պատերազմը լուսաբանելիս մենք սերբ ժողովրդին դիվական գծերով էինք ներկայացնում, եւ վերջապես, ամենից վերջին ու կրքոտ պնդումները՝ մեր կարծեցյալ հակախորայելական նախապաշարման մասին: Արաբամետ կամ պաղեստինամետ լոբբի նույնպես կա, բայց դրա ընդգրկումն անհամեմատ փոքր է:

Իսրայելամետ լոբբին (ամեն դեպքում ադպիսին է նրա նպատակը, թեեւ ոչ միշտ՝ արդյունքը) կարող է նշանակել 200-300 իմականեր միանգամից, որ մի քանի ժամվա ընթացքում կազմակերպված ձեռով ուղարկվում են թերթին՝ սպառնալով խցանել դրա աշխատանքները:

Լոբբիստական իմակաները, ինչին էլ դրանք վերաբերեն, սովորաբար հեշտությամբ ճանաչվում են: Չափազանց հաճախ դրանք պարզապես կրկնում են կազմակերպիչի տրամադրած տեքստը, եւ անգամ դրա փոփոխման դեպքում սկզբնաղբյուրից մնացած վերնագիրը կամ բառակապակցությունները մատնում են այն: Շատ թերթեր, մի քանի այդպիսի իմակ ստուգելուց հետո, մնացածը պարզապես ջնջում են:

«Նյու Յորք թայմսը», որի խմբագրությունում ես վերջերս եղա, հաջողությամբ հակադարձում է մի լոբբիի, որը թերթին մեղադրում է «ճախագահական օժան առթիվ բողոքները» նվազեցված ներկայացնելու մեջ: Ընթերցողի մեկնաբանությունների համար հատկացված հեռախոսահամարով եթե զանգեք, գրանցված ուղերձը ձեզ զգուշացնում է. «Եթե դուք որպես անհատ եք ուղղումի համար զանգահարում կամ մեր լուսաբանման հետ կապված հարց տալիս, եւ ոչ թե որպես խմբային արշավի մասնակից, մենք կաշխատենք ձեզ պատասխանել»:

«Գարդիանի» մեկնաբանությունների խմբագիրը մի քանի շաբաթ առաջ իր էջերում գրեց իսրայելամետ լոբբիի մասին, դրա մի նշանակալի մասը կապելով Լոնդոնում տեղակայված մի կազմակերպության հետ: Նրա բաժինը հիմնական թիրախներից է: Այդպիսին է նաեւ «Գարդիանի» մամակների բաժինը: Երկու դեպքում էլ ճիշտ կլինեիք, եթե ասեիք՝ իհարկե այդպես պետք է լիներ: Միջին արեւելքի մասին գրող անհատ լրագրողները նույնպես իմական ռմբակոծության են ենթարկվում, ընդ որում, հաճախ այդ իմակները ծայր աստիճանի վիրավորական են: Եվ դրանց մեջ առավել վիրավորականները միշտ ուղղված են լինում հրեա լրագրողներին:

Մեկնաբանությունների խմբագիրն արդեն խուսափում է էլեկտրոնային հասցեները նշել այն նյութերի վերջում, որոնք հավանականություն ունեն, իր արտահայտությամբ, «ատելության մամակներ» հարուցելու: Նա ասում է, որ վերջին ամիսների փորձը ապացուցում է էլեկտրոնային փոստի զուգահեռ ցանց ստեղծելու անհրաժեշտությունը, որը կբացառեր էլեկտրոնային ներքին գրագրության անհնարին դառնալը՝ իմական արշավի արդյունքում խցանվելու հետեւանքով:

Լոբբիստական նման գործունեության դասն այն է, որ այդ իմակները ստացողների մեծ մասի կողմից դրանք ընկալվում են ոչ թե իբրեւ տրամաբանված տեսակետ, այլ իբրեւ ուժի ցուցադրում եւ իրական բանավեճի արգելակում՝ մեծ թվերի կշիռն օգտագործելով:

Նրանք, որ ջանում են իսրայելյան տեսակետներն առաջ մղել այլ մեթոդներով, ինձ հետ զրույցներում այս լոբբիների գործունեությունը դիտարկում էին իբրեւ հակաարդյունավետ:



Մեկն ինձ ասաց, օրինակ, որ այդպես իրար գլխի հավաքվելով ու աղմուկ բարձրացնելով, խեղդուն են ողջամիտ բանավեճ վարելու իրենց փորձերը: Իսկ արաբական մոտեցումները պաշտպանել փորձող եւ, այսպես ասենք, ընտրովի իմականերով լոբբինգ անող մի կազմակերպության ներկայացուցիչ էլ ինձ ասաց, որ եթե իրենք տեսնեին՝ զանգվածային իմականերով լոբբինգը արդյունավետ է, իրենք էլ տակտիկան կփոխեին եւ կանցնեին դրան:

Միջին արեւելքում ընթացող հակամարտության կողմերից յուրաքանչյուրը «Գարդիանին» մեղադրում է մյուս կողմին պաշտպանելու մեջ: Որոշ լրագրողներ ասում են՝ դա լավ է, դա նշանակում է մենք ճիշտ ուղու վրա ենք, եթե երկու կողմն էլ բողոքում են: Սակայն հնարավոր մյուս տարբերակն էլ այն է, իր կասկածն ինձ հայտնեց լրագրողներից մեկը, որ դա նշանակում է՝ մենք ընդհանրապես սխալ ուղղություն ենք վերցրել:

Խնդիրն այն է, որ լոբբինգի դեպքում, մեծ լինի դրա ընդգրկումը թե փոքր, միշտ դրա մեջ ներգրավվում են մարդիկ, ովքեր ընդհանրապես «Գարդիան» չեն կարդում, այլ միայն տվյալ կոնկրետ հոդվածի պատճառով են թերթի հետ առնչվել, այդ իսկ պատճառով այն դիտում են «Գարդիանի» ընդհանուր մոտեցումների համատեքստից դուրս: Նրանք հավանաբար տեղյակ չեն այն կարեւոր հանգամանքին, որ թերթի մեկնաբանությունների էջը, մանավանդ հակամարտություններին առնչվող հարցերում (Օոցի պատերազմ, նախկին Հարավսլավիայի տարածքի պատերազմներ, եւ այլն) աշխատում է տալ կարծիքների հնարավորինս լայն սպեկտրը: Եվ դա անում է՝ անկախ «Գարդիանի» առաջնորդողում արտահայտված ուղեգծից:

Հենց սա նկատի ուներ խմբագիրը, երբ կազմում էր իր սեփական մուշային իմակը, նշելով, որ այն կարող էր օգտագործվել «Գարդիանի» լրագրողների կողմից՝ Իսրայելի խնդրում թերթի մոտեցումները քննադատող մանակագիրներին պատասխանելիս: Իր այդ իմակում նա մերժում է այն բոլոր մեղադրանքները, թե թերթի հրապարակումները «խոսում են հակաիսրայելական հստակ կողմնորոշման մասին»: Ապա խմբագիրը թվարկում է հակամարտության բոլոր կողմերը ներկայացնող այն մեկնաբաններին, ովքեր հանդես են եկել

թերթում, եւ եզրակացնում. «Ես կարծում եմ, որ թերթն առանձնացել է իր հաղորդումների եւ մեկնաբանությունների թե՛ խորությամբ, թե՛ լայն ընդգրկումով»:

Դուր գա դա մեզ, թե չէ, իմականին լոբբին իրողություն է: Այն ժողովրդավարական հաղորդակցության բնական արդյունք է: Եթե ես մտածեի, որ իմ խոսքը իմաստ կունենա այսօրվան բուռն կրքեր հարուցող իրավիճակում, ես կավելացնեի՝ «Բայց խնդրում եմ, եկեք ողջամիտ լինենք»:

# ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՌԻՍԿ

*ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ...*

*ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ*

*ՉԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՒ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՍԻՆ*

*24 փետրվարի, 2001*

«Ինչ էլ որ արդարացի կերպով ասելու լինենք լրագրողների դեմ, այսուհանդերձ, կա լրագրողի մի տեսակ, որին քաղաքակրթությունը շատ բան է պարտք: Դա այն խիզախ ու ազնիվ լրագրողն է, ով բացահայտում ու հրապարակում է տհաճ փաստերը, անարդարության, դաժանության, կոռուպցիայի այն փաստերը, որոնք իշխանությունները կուզենային ծածուկ պահել, եւ նույնիսկ միջին ընթերցողը կգերադասեր չմտածել դրանց մասին»։ Վ.Յ. Օդեմ, «Մի աշխարհ», 1970:

Հարց տանք մեզ. արդյո՞ք բարոյական է, երբ գրավոր զրպարտության մասին օրենքները բարեփոխելու համար պայքարող թերթը աշխատում է նույն այդ օրենքներն օգտագործել ի շահ իրեն: Եվ մի՞թե թերթը հենց դա չի անում, երբ ասում է իր իրավական խորհրդատուներին՝ «Այո, բայց մի՞թե նրանք դատ կբացեն», ու հաշվարկված ռիսկի գնալով՝ տպագրում է իր հրապարակումը:

Հաշվարկման տարրերից մեկը դատական կարգով զրպարտության մեղադրանք ներկայացնելու հետ կապված հսկայական ծախսերն են: Ո՞ր չափով պետք է հաշվի առնել խնդրո առարկա անձի կամ կազմակերպության բնույթը: Արդյո՞ք ռիսկը համարժեք է հարցի կարեւորությանը: Արդյո՞ք գործ ունենք հանրային շահի հրամայականի հետ: Արդյոք հավատո՞ւմ ենք, որ այն, ինչ ուզում ենք ասել, ճիշտ է:

Դեռ էլի հարցեր կան: Արդյոք զրպարտության մասին օրենքները, ինչպես որ կան, ավելի շատ հարուստների եւ ուժեղների ձեռքին գործիք չէ՞ն՝ վերելում Օդեմի կողմից նկարագրված խիզախ լրագրողի գործունեությունը խեղդելու,

քան անմեղներին պաշտպանելու միջոց: Կամ մի՞թե դրանք իրենց ներկայիս ձեռով ավելի խիստ չեն, քան համանման օրենքները Միացյալ Նահանգներում, ուր դրանք անպատասխանատու մանուկի դեմ անհրաժեշտ արգելակ են:

Անգլիական դատարանում զրպարտության գործով անցնելու համար պահանջվող ծախսերը հաշվելով՝ կարելի է գլխապատույտ ունենալ, եւ դա այն դեպքում, երբ տանուլ տալը շատ հավանական է: Նման գումարներով ստուգվում է թերթի նպատակային ու համառ լինելու կարողությունը: Այն պետք է հանդգնած լինի, որ իրավացի է: Ոմանք, այդ թվում «Գարդիանի» լրագրողներից, կարծում են, թե թերթը զրպարտության դեմ ապահովագրություն ունի: Այդպես չէ: Մի ժամանակ այդ ապահովագրությունն իսկապես կար, բայց պարզվեց, որ դրա համար պահանջվող նախավճարը անտանելի բարձր է: Երբ թերթը դատարան է գնում զրպարտության գործով, գիտի որ տանուլ տալու (երբեմն նաեւ շահելու) դեպքում ինքը ծանր ֆինանսական հարված է կրելու:

Մենք մի քիչ հետո կվերադառնանք այն հարցին, որով սկսել էի, բայց մինչ այդ ուզում եմ նշել էական մի հանգամանք՝ որեւէ նյութ հրապարակելու որոշումը միշտ միայն խմբագրին է եւ ոչ երբեք թերթի իրավաբանինը: Նմանապես՝ խմբագիրն է որոշում հանձնվել, թե՞ պայքարել զրպարտության մեղադրանքի դեպքում: Հենց նա էր, որ որոշեց հակադարձել նախկին պահպանողական պատգամավորներ Նիլ Համիլտոնի եւ Ջոնաթան Էյկինի՝ զրպարտության մեղադրանքով թերթի դեմ սկսած դատական գործին եւ շահեց դատը: Նման որոշումներ ընդունելու համար դու պետք է մեծապես վստահես խնդրի մեջ ներգրավված լրագրողներին:

Անցած շաբաթ ես նկարագրեցի այն եղանակը, որով թերթը փորձում է հասնել նրան, որ խմբագրակազմի բոլոր անդամները հիմնական պատկերացում ունենան լրագրությանը առնչվող օրենքների մասին: Այս շաբաթ տեղի ունեցավ նոր ընդունված լրագրողների համար երկրորդ պարապմունքը, իսկ շուտով կանցկացվեն բաց վարպետության դասեր, որոնց կարող են մասնակցել «Գարդիանի» բոլոր լրագրողները:

Նպատակն այն է, ինչպես արդեն բացատրել եմ, որ յուրաքանչյուր լրագրող զինված լինի զգուշության ռացիոնալ համակարգով, առնվազն իմանա, որ դեպքերում պետք է զգուշ

լինել ու որ դեպքերում պետք է դիմել իրավաբանի խորհրդին, որը միշտ ձեռքի տակ է:

Թերթի ամենից փորձառու հետաքննող լրագրողներից մեկն ասում է, որ օրենքները, մասնավորապես, անվանարկմանը, պաշտոնական գաղտնիքին եւ պաշտոնյայի նկատմամբ արհամարհանքին վերաբերող օրենքներն իմանալը խիստ անհրաժեշտ է, եթե լրագրողն ուզում է կատարել իր էական գործառույթներից մեկը՝ մարտահրավեր նետել այդ օրենքներին: «Երբ ես նոր էի սկսում իմ աշխատանքը, լրագրությունը կարծես թե բաղկացած լիներ փաստեր բացահայտելուց, որոնց մասին իրավաբանը պետք է ասեր, որ դրանք հնարավոր չէ թերթում տպագրել: Սակայն ես որդեգրել էի այն մոտեցումը, որ խոսքի ազատությունը լավ բան է եւ օրենքը խոչընդոտների մի շարք է, որոնք պետք է եւ հնարավոր է հաղթահարել, եթե գիտես ինչ ես անում:

Ես ընդհանրապես կարծում եմ, որ լրագրողը պետք է օրենքի հանդեպ ոչ թե կատարողի, այլ հակամարտողի հարաբերության մեջ լինի: Օրենքն այն հիմնական բեմերից մեկն է, որոնց վրա մենք ճակատամարտ ենք տալիս խոսքի ազատության համար: Սակայն օրենքի դեմ կարող ես դուրս գալ միայն այն դեպքում, եթե գիտես այն»:

Մեկ այլ հետաքննող լրագրող ընդգծում է վկայության հնարավորինս բարձրագույն որակ ապահովելու անհրաժեշտությունը, մինչ որոշում կընդունվի այն մասին՝ տպագրել, թե՛ ոչ, այս կամ այն անձի կամ կազմակերպության դեմ լուրջ մեղադրանքը: «Եթե սուբյեկտն ինքը մեղադրանքը չի ընդունում, լավագույն տարբերակն, իհարկե, անառարկելի փաստագրական վկայություն ունենալն է»:

Թերթի խմբագիրն ասում է, որ առաջին հարցը հետեւյալն է՝ կկարողանա՞նք մենք պաշտպանել սա, կկարողանա՞նք շահել գործը, եթե դատարան գնանք: «Երբեմն նաեւ մտածում ես՝ «Իսկ նրանք դատ կբացե՞ն»: Սակայն ես չեմ կարծում, թե դա նշանակում է շահարկել զրպարտության մասին օրենքները»:

Իսկ իրավաբաններն ասում են, որ իրենց հիմնական նպատակը ոչ թե այս կամ այն հրապարակումը կանխելն է, այլ հնարավորինս շատ բան հրապարակելուն օգնելը: Բոլորի խնդիրն, ի վերջո, նյութը թերթում հրապարակված տեսնելն է:

# ԵՐԲ ՀԱՆՑԱՆՔԸ ՓՈՂ Է ԲԵՐՈՒՄ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ... ՈՐՊԵՍ ԼՐԱԳՐՈՂ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ՆԱԽԿԻՆ ՀԱՆՑԱԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

4 հուլիսի, 1998

Արդյո՞ք «Գարդիանը» վճարում է հանցագործներին, որպեսզի գրեն իր համար: Այո, վճարում է: Արդյո՞ք «Գարդիանը» պետք է վճարի հանցագործներին, որպեսզի գրեն իր համար: Սրա շուրջ կարելի է բանավիճել, բայց կարծում եմ այս երկրորդ հարցի պատասխանը նույնպես հավանաբար դրական է՝ որոշակի հանգամանքներում:

Վերջերս մենք թերթի այս բաժնուն հողված տպագրեցինք՝ գրված թմրադեղերի մաքսանենգության համար դատապարտված Յոզեֆ Մարքսի կողմից, որին խնդրել էին այդ նյութը գրել 300 ֆունտ վճարի դիմաց: Իր հողվածում Մարքսը քննարկում էր պահպանողականների՝ առողջության հարցերով նորանշանակ խոսնակ Ալան Դունկանի որոշումը՝ «Սատուրնի որդիները» կոչվող իր գրքի փափուկ կազմով հրատարակության մեջ հանելու այն գլուխը, ուր պաշտպանվում էր թմրադեղերի տարածումն ու օգտագործումը օրինականացնելու գաղափարը:

Թերթում գտան, որ Մարքսի անցած ուղին նրան բավարար գիտակ դարձրած կլիներ այս խնդրի շուրջ խոսելու համար: Բաժնի խմբագիրն ասում է. «Ինձ պետք էր օրինականացմանը կողմնակից մեկը, որ կկարդար այդ գլուխը եւ կասեր իր կարծիքը»: Մարքսի «որակավորումը» ներառում էր մարիխուանայի մաքսանենգության համար Միացյալ Նահանգներում 25 տարվա բանտարկության դատավճիռը, որն ավելի ուշ կրճատվելով դարձել էր 20 տարի, եւ նա նստել էր այդ ժամկետի մեկ երրորդը՝ ազատ արձակվելով 1995 թվին: Անցած տարի նա աշխատանքի դիմում էր ներկայացրել՝ դառնալու Թոնի Բլեյրի թմրադեղային «ցարը» (եւ մերժվել էր):

Բանտից դուրս գալուց ի վեր Մարքսը մեկից ավելի անգամներ գրել էր «Գարդիանի» համար՝ վճարի դիմաց, իսկ 1996թ. մենք հատվածներ էինք տպագրել նրա ինքնակենսագրությունից՝ վճարելով նրա հրատարակչին:

Մարքսի ամենավերջին հոդվածը «Գարդիանում» տպագրվելուց հետո ես իմակ ստացա, ուր հարց էր տրվում, թե. «Արդյո՞ք Յոզեֆ Մարքսը «Գարդիանի» համար ձրի է հոդվածներ գրում: Իսկ եթե նա վճարվում է, արդյո՞ք դա համատեղելի է ՄԲՅ կանոնագրի բաժին 16-ի ii կետի հետ»: Խոսքը Մամուլի դեմ բողոքների հանձնաժողովի կանոնագրի մասին է, որին կանոնակարգող ենթարկվում են Բրիտանիայի բոլոր թերթերը: Այդ կանոնագրի բաժին ու ոգուն հետեւելը մտածված է իբրեւ ինքնակարգավորմանը մեր նվիրվածության դրսևւորում:

Կանոնագրի՝ ընթերցողի կողմից հիշատակված մասը վերաբերում է թերթի նյութերի համար վճարումին: Այնտեղ ասվում է. «Պատմությունների, նկարների կամ տեղեկատվության համար ուղղակիորեն կամ գործակալների միջոցով վճարում կամ վճարման առաջարկ չի կարելի անել ո՛չ դատապարտված կամ իրենց մեղքը խոստովանած հանցագործներին, ո՛չ էլ նրանց մոտիկներին՝ ներառյալ հարազատները, ընկերները կամ գործընկերները, բացառությամբ այն դեպքերի, երբ խնդրո առարկա նյութի հրապարակումը բխում է հանրության շահերից եւ դրա համար անհրաժեշտ է վճարել»: Այս տրվում է հանրային շահի սահմանումը, համաձայն որի այն ներառում է՝ հանցագործություն եւ կամ հանրության առողջությանը կամ անվտանգությանը սպառնացող արարք երեւան հանելն ու բացահայտելը, այս կամ այն անհատի կամ կազմակերպության կողմից խոսքով կամ գործողությամբ հանրությանը թյուրիմացության մեջ գցելը կանխելը:

«Գարդիանի» խմբագրի եւ այլ լրագրողների կարծիքով, որոնց հետ ես խոսել եմ այս շաբաթ, կանոնագրի տվյալ մասը լավագույններից չէ: Այն չի կարող բավարար ուղեցույց լինել խմբագիրների համար, երբ նրանք գործ ունեն, ինչպես Յոզեֆ Մարքսի օրինակում, մի այնպիսի հանցագործի հետ, որը կրել է իր պատիժը, եւ իրեն այլեւս հեռու պահելով քրեական գործունեությունից, մտել է լրագրողական ասպարեզ (իսկ եթե լրագրողն է քրեական հոդվածով դատապարտվում,

արդյո՞ք նա պետք է այլեւս թողնի իր ասպարեզը): «Գարդիանի» խմբագիրն ասում է, որ կանոնագրի հիշյալ մասի նպատակը, եւ արդար նպատակն է թույլ չտալ, որ հանցագործն իր հանցանքից ուղղակի շահ ստանա (սա բավական դժվար է տրվում մեկնաբանութեան): Միաժամանակ նա կարծում է, որ դատապարտված հանցագործը պետք է կարողանա իր ձեռք բերած փորձն օգտագործել՝ նպաստելու համար կարելոր հարցերի շուրջ հանրային բանավեճին (իսկ թմրադեղերի օգտագործման ու չարաշահման շուրջ բանավեճը հենց այդպիսին էր), ու եթե այդ նպաստը դրսեւորվում է թերթին տված նյութի ձեւով, դրա համար նա պետք է վճարվի:

Կանոնագրի համաձայն՝ դատավճիռը դատավճիռ է, անկախ նրանից, թե երբ ու որտեղ է մեկն այն ստացել: Այնտեղ ոչ մի խոսք չկա ժամանակի մասին, որից հետո դատավճռի հարուցած սահմանափակումները կարող են ուժը կորցնել: Ոչ մի խոսք չկա նաեւ աշխարհագրական գործոնի մասին. արդյո՞ք այլ երկրի դատավճիռը նույն ուժը պետք է ունենա, ինչ Բրիտանիայում ստացածը: Հավանաբար Մամուլի դեմ բողոքների հանձնաժողովի կանոնագրային կոմիտեն այս ամսվա մեջ կքննարկի այս հարցերը:

Մեր քրեական թղթակիցը կարծում է, որ պետք է հաշվի առնվի իրավունքների վերականգնման գործոնը: Նա այսպիսի հարց է տալիս. մի՞թե գերադասելի չէ, որ հանցագործը թերթի համար գրի, քան թե մագլցի ջրհորդանի վրայով ու գողանա ձեր ոսկեղենը: Հարկավոր է, որ կանոնագիրը անդրադառնա սրան: Այսօրվա վիճակով թերթերը ընդհանուր կողմնորոշիչ համարյա չունեն եւ առաջնորդվում են ըստ կոնկրետ դեպքի: Այնինչ կողմնորոշիչի կարիքը կա եւ ես լիովին համաձայն եմ մեր քրեական հարցերով թղթակցի հետ՝ պետք է հաշվի առնվեն հանցանքի եւ դատավճռի բնույթը, հանցանքի ազդեցութունը դրա զոհերի վրա, նաեւ առաջարկվող հողվածի հնարավոր ազդեցութունն այդ զոհերի ու նրանց ընտանիքների վրա, ինչպես նաեւ պետք է հնարավորինս կանխատեսվի, թե հողվածի հնարավոր արդյունքը ինչ կերպ կընդունվի ընթերցողի կողմից: Եվ այս ամենից հետո էլ չի բացառվում, որ սխալ քայլ արվի:



# ՃԱՆԱՊԱՐՅԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

13 դեկտեմբերի, 1997

Այս շաբաթ ինձ երկու անգամ հիշեցրին, ընդ որում պարտադրաբար, որ այն, ինչ հեղինակին ու նաեւ խմբագրին լրագրության պարզ մի դրսեւորում է թվում, կարող է երբեմն հանգեցնել զոհերի:

Երկու բողոքների դեպքում էլ գործ ունեինք մարդկանց հետ, որ անձնական ողբերգություն էին ապրել: Առաջինը վերաբերում էր երկու հողվածների, որ դեկտեմբերի 1-ին միասին տպագրվել էին G2-ի՝ «Գարդիանի» թաբլոյդ բաժնի, մեքենայով ճամփորդելուն վերաբերող «Անիվների վրա» էջում: Նյութերից մեկը վերնագրված էր «Ազատ թող ինձ, որ գնամ» եւ հրավիրում էր լիովին վայելելու ընտանիքով ճամփորդելու հաճույքը, երբ երեխաները ստիպված չէին լինի մեքենայում ամրագոտի կապել:

Նյութի վերջում ասվում էր. «Ես դեռ չեմ տեսել մի երեխա, որ չնախընտրեր մեքենայում հին ձեռով՝ առանց կապանքների ճամփորդելը, բայց դա երբեք երկար չի տևում. շուտով հայտնվում է միշտ մռայլ ու տատիկի պես քո մասին հոգացող մի երիտասարդ, որ ուզում է ստուգել հետեւի ամրագոտիները, երեխայի դեպի հետ մայրը մատելատեղերը, արգելակների սարքինության թուղթը, տեխստուզման թուղթը եւ ապահովագրության սերտիֆիկատը: Երբ սա պատահում է, ես հանձնվում եմ ու փորձում ավերից դուրս չգալ»: Մյուս հողվածը, ճիշտ դիմացի էջում, պատմում էր Perodua Nippa-ի ճանապարհային թեստի մասին եւ ներառում էր հետեւյալ հատվածը. «Ես մեքենաս քշեցի քաղաքով ու երկրով մեկ՝ ժամում 5 մղոնից մինչեւ 84 մղոն (այն՝ 84 մղոն առավելագույնը) արագությամբ: Ու խեղճ երեխան 300 մղոն անցավ կապկաված...»: Այս երկու նյութերի դեմ բողոքող ընթերցողի կարծիքով, դրանք կոչ էին անում խախտել օրենքը, իսկ երկրորդում, ըստ նրա, պարզ ակնարկ կար այն մասին, որ Nippa-ի թեստն անցկացնողը խախտել է այն:

«Չնարավոր է դուք մտածեք, թե ես մանր բաների հետեւից եմ ընկել, բայց չորս տարի առաջ իմ մանկահասակ աղջիկը, որին մենք կապկպել էինք դեպի առաջ նայող նստելատեղում, մահացավ վզի կոտրվածքից, երբ մի մեքենա հանկարծ անսպասելի շրջադարձ կատարեց ու մխրճվեց մեր մեքենայի մեջ»: Ընթերցողը հարցնում է՝ արդյո՞ք տվյալ երկու հոդվածների հեղինակների մոտեցումը ճանապարհային անվտանգությանը շատ է տարբերվում վթարի պատճառ դարձած վարորդի մոտեցումից: Այնինչ, նյութի հեղինակն ասում է, թե իր նպատակն էր մտածել տալ այն մասին, որ անվտանգության վրա սեւեռվելը երբեմն բանական պահանջների սահմանն անցնում է՝ ի վնաս երեխաների: Եվ նա ցավ է զգում, որ իր գրածը կարող էր ընկալվել իբրեւ ճանապարհային երթելեկության հարցերում անպատասխանատվության խրախուսում:

Իսկ ճանապարհային թեստի մասին գրողն ասում է. «Ես բնավ էլ չեմ պաշտպանել սահմանված արագության գերազանցումը: Ուղղակի մեքենայի տվյալների մեջ կարդացել եմ, որ դրա առավելագույն արագությունը ժամում 84 մղոն է, եւ քանի որ ժամանակակից մեքենաների մեծ մասը պարծենում է ժամում 100-150 արագությամբ, ես պարզապես ուզում էի ցույց տալ տվյալ մեքենայի ոչ հզոր լինելը»: Լրագրողուհին ապա շարունակում է. «Չետադարձ հայացքով նայելով գրածիս՝ պետք է ընդունեն, որ մեքենայի նվազ հզորությունը ցույց տալու ավելի լավ եղանակ կարելի էր գտնել»: Իսկ «Անիվների վրա» էջի խմբագիրն ասում է. «Ես հիմա եմ տեսնում, որ օգտագործված արտահայտությունները երկիմաստ են ու պետք է փոխվեին»: Նա նշում է նաեւ, որ անվտանգության հարցերով իրենք մտահոգված են, ու դրա մասին վկայող նյութերից հիշատակում է ամենավերջինները, անցած շաբաթվա մեծ հոդվածը՝ «Բրեյքի»՝ փոխադրամիջոցների անվտանգությունն ուսումնասիրող խմբի մասին եւ հոկտեմբերի 13-ի հոդվածը՝ հատուկ նվիրված ամրագոտիների կարելորդությանը:

Իմ կարծիքով, ոչ մի վկայություն չկա այն մասին, թե «Անիվների վրա» էջին, ինչպես բողոքող ընթերցողն է մեղադրում, բնորոշ է անպատասխանատվությունը: Այնուամենայնիվ, խնդրո առարկա երկու նյութերի առնչությամբ իսկապես հարց է ծագում. արդյո՞ք հարմար է մեքենայով ճամփորդե-

լուն նվիրված էջում այնպիսի հոդվածների տպագրումը, որոնք վթարների դեպքում մահացությունը նվազեցնելուն միտված օրենքների խախտումը խրախուսելու տպավորություն են ստեղծում: Կարծում են պատասխանն է՝ ոչ: Այժմ արդեն այս կարծիքին են նաեւ գործի մեջ ներգրավված անձինք:

Երկրորդ բողոքը եկավ մահացած Մաթյու Բաուերզի ծնողներից (Երկուսն էլ «Գարդիանի» ընթերցող են), որոնց վիրավորել էր ոչ այնքան տղայի անվան անցողակի շոշափումը նրա ընկերուհու՝ Քերոլայն Աիերնի կողմից դեկտեմբերի 6-ին թերթին տված հարցազրույցում, որքան դրանում տեղ գտած երկու անճշտություն: Դրանք ուղղվեցին թերթի ուղղումների եւ պարզաբանումների սյունակում՝ այս շաբաթ:

Անճշտությունների պատճառը գրադարանային կամ էլեկտրոնային պահոցում եղած՝ նախկինում տպագրված նյութերին վստահելն էր: Երկու հիշատակումն էլ, որ բողոք էին հարուցել, արդեն մի քանի անգամ տպագրված էին եղել մամուլում եւ այդ իսկ պատճառով համարվել էին ճշգրիտ:

Թերթերի բոլոր գրադարաններն էլ նման թակարդներ են պարունակում: Որքան էլ լրագրողը զգույշ եւ ուշադիր լինի, միեւնույն է միշտ կա թակարդն ընկնելու վտանգը: Ահա թե ինչու շատ կարեւոր է սխալը պարզվելուն պես այն ուղղելը եւ ապա ուղղումը սկզբնական նյութին կցելը: Մենք հենց այդպես էլ վարվում ենք: Կոնկրետ այս դեպքում դա չօգնեց, բայց ապագա դեպքերը կանխել կարող է:

# ԵՆԹԱԳԻՏԱԿԻՑ

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐԸ ...

## ԵՆԹԱԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ

*18 սեպտեմբերի, 1999*

Ենթախմբագիրների մասին համարյա միշտ վատ են գրում: Իսկ նրանց արած լավ գործերը հաճախ իրենց հետ էլ գերեզման են գնում: Ո՞վ կմոռանա Իվլին Վոյի «Թեժ նորություն» վեպում սպանիչ նկարագրությունը այն սենյակի, ուր «... ենթախմբագիրները զբաղված էին ապատեղեկատվության խրձերը կատարյալ դատարկաբանության վերածելու տաղտկալի գործով»:

Ոչ պակաս սպանիչ է Վուդհաուսի հայտնի վեպում Փամիթի եւ «ընկեր Վինձորի» երկխոսությունը՝ հեղափոխություն նախապատրաստելիս.

- Ի դեպ,- հարցրեց Փամիթը,- դուք կոնկրետ որպես ի՞նչ եք աշխատում թերթում: Մենք բոլորս գիտենք, որ դուք իրականում թերթի ողնաշարն եք, նրա կենարար ավիշը, բայց ո՞րն է ձեր հաստիքը...

- Ես ենթախմբագիր եմ:

- Ընդամենը ենթա՞: Դուք ավելի պատասխանատու պաշտոնի եք արժանի... Որտե՞ղ է ձեր սեփականատերը: Ես ստիպելու եմ նրան լսել ինձ եւ բացատրելու եմ իրեն, թե ինչ տաղանդ է թողնում կորչի: Դուք պետք է ձեզ արժանի իրավասություններ ունենաք»:

Ենթախմբագիրը կամ պարզապես ենթան, գտնվում է, այսպես ասենք՝ նշանառության տակ գտնվող բաղի մեջ, հեղինակի եւ էջի խմբագրի արանքում: Հենց ենթան է, որ ստուգում է լրագրողի տեքստը՝ ուղղելու համար քերականական, ու որքան կարող է՝ նաեւ փաստական սխալները: Չի ակնկալվում իհարկե, որ ենթան պետք է վերաուսումնասիրի նյութը, կամ

ուղղակի ուսումնասիրի այն, եթե դա բավարար չափով չի արվել: Նա պարզապես տեքստը կրճատում-հասցնում է պահանջվող չափին (չթերագնահատենք սրա համար պահանջվող ստեղծագործական կարողությունը), գրում է գլխագրերն ու նակագրությունները, որոշ դեպքերում նաև որոշում է էջի կառուցվածքը՝ այնպես դասավորելով գլխագրերը, տեքստերը, լուսանկարներն ու գծագրերը, որ դրանք իր կամ բաժնի խմբագրի նախապատվություններն արտացոլող ասիմետրիկ հավասարակշռություն ստեղծեն:

Այս ամենի արդյունքում էջը պետք է լավ տեսք ունենա, հստակորեն փոխանցի իր պարունակության իմաստն ու կշիռը, ինչպես նաև, պարունակի լեզվական խոչընդոտներից զերծ տեքստ: Ենթախմբագրի աշխատանքը այն տեսակի աշխատանքներից է, որոնց դեպքում որքան գործն անողն աննկատ մնա, այնքան ուրեմն նա լավ է աշխատել:

Այսօր ամբողջ աշխատանքն արվում է համակարգիչով: Սուր դանակով զինված տպագրիչներ այսօր այլևս չկան: Ենթախմբագրից համակարգչային լայն գիտելիքներ են պահանջվում: Ես նույնիսկ այն կարծիքն եմ լսել, թե ենթախմբագիրը ստիպված է լինում այնքան շատ զբաղվել տեխնիկական հարցերով, որ բովանդակությանը բավարար ուշադրություն դարձնել չի կարողանում, այստեղից էլ՝ թերթում տեղ գտնող բազմաթիվ սխալները: Սակայն այս կարծիքը հաստատող վկայություն համարյա չկա: Խմբագրի տեղակալը ( նորությունների գծով) այն տեսակետին է, որ անցած տարիներից նորագույն տեխնոլոգիաների ներմուծման արդյունքում ենթախմբագրի գործում չափանիշները բարձրացել են: Հավանաբար նշանակություն ունի նաև թերթի ներկայիս չափի հետ կապված՝ աշխատանքի ծավալի ավելացումը:

Երբ ինչ որ բան թերթում սխալ էր, կեսկատակ-կեսլուրջ ավանդաբար եկած մի խոսք կար՝ «Ենթան է մեղավոր»: Ես նրանց անվանեցի խմբագրի եւ հեղինակի արանքում նշանառության տակ գտնվող բաղեր: Սակայն որքանօ՞վ են նրանք իրապես մեղավոր թերթում տեղ գտնող այն սխալների համար, որոնց արդյունքում լցվում է ուղղումների եւ պարզաբանումների թերթի ամենօրյա սյունակը:

Ես վերլուծել եմ ուղղումների սյունակի 100 իրար հետեւող գրառում: Ընդհանրապես շատ քիչ է պատահում, որ սխալի համար պատասխանատվությունը 100 տոկոսով մեկ անձի վրա դրվի: Թերթում տպագրվող ամեն ինչ աչքի են անցկացնում մի քանի մարդ՝ հեղինակը, էջի խմբագիրը, ենթախմբագիրը, նորությունների սեյնակում նաեւ մեկ այլ լրագրող, որն անհրաժեշտության դեպքում փոփոխություններ է մտցնում, եւ վերջապես նա, ով սրբագրում է ողջ էջը: Ահա թե ինչու իմ վերլուծության նպատակն էր տեսնել, ինչպես է բաշխվում սխալի համար պատասխանատվության բեռը:

Ուղղումների մեծ մասի՝ մոտ 50-ի դեպքում, պատճառը հեղինակների արած սխալներն էին, որոնք նկատելը, իմ կարծիքով, ենթախմբագրի համար հեշտ չէր: Երկրորդ խմբի մեջ մտնում էին տարբեր բնույթի այն սխալները, որոնց համար պատասխանատու էին հիմնականում էջի կամ բաժնի խմբագիրը, գծագրերի բաժինը, տպագրողը եւ (նույնիսկ) ես: 100 գրառումներից միայն 20-ի դեպքում է, որ սխալը կարելի էր իրավացիորեն պայմանավորել ենթախմբագրի բացթողմամբ. քերականական եւ ուղղագրական բոլոր սխալները ես մտցրել էի այս խմբի մեջ:

Անկասկած, բոլոր սխալները չէ, որ ուղղվում են, այդ թվում ուղղագրական բազմաթիվ սխալներ: Սակայն ես կարծում եմ, որ վերելում բերված թվերը հիմնականում ճիշտ են գծագրում իրական պատկերը, որից հետեւում է, որ մեզանից ոմանք՝ թե՛ ընթերցողներից, թե՛ լրագրողներից, կարիք ունեն վերանայելու իրենց կարծիքը ենթաների մասին:

Եթե կա մի խումբ, որ կարող է փոքրացնել իր կատարած սխալների թիվը, ապա դա հեղինակներն են: Ես չեմ կարծում, որ փաստեր ստուգողների վարձելով, ինչպես դա անում են ԱՄՆ-ում, դրությունը եականորեն կշտկվի: Ես զանգեցի թերթի համար նյութ գրած հայտնի մի կին հեղինակի, որպեսզի նա փոքրիկ ճշտում անի, եւ նրա ընկերոջից լսեցի այսպիսի պատասխան. «Աստված իմ, ես դրա համար նրան հեռախոսի մոտ չեմ կանչի: Դա փաստեր ստուգողի գործն է, իսկ նա գրող է»:

# ՏԱՐ ԻՆՁ ՔՈ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ԳՐՈՂԻ ՄՈՏ

*10 հունվարի, 1998*

«Գարդիանի» առաջնորդողի սյունակն անանուն տեքստերի վերջին հանգրվանն է: Ինչո՞ւ, հարցնում է ընթերցողը, առաջնորդողները անստորագիր են, երբ դրանց շուրջը բոլոր նյութերը ոչ միայն ստորագրված են, այլև հաճախ հեղինակի նկարն էլ կա: Մի՞թե դա տարօրինակ չէ:

Ես այցելեցի առաջնորդող գրողների՝ խմբագրի մոտ անենօրյա հավաքը, որպեսզի նախ լսեմ նրանց քննարկումը եւ ապա հարցնեմ նրանց կարծիքը անանունության մասին: Եվ անանուն տեքստ գրողները միասնական էին այն հարցում, որ իրենք շարունակելու են նույն կերպ վարվել:

«Գարդիանն» այժմ չորս առաջնորդող գրողներ ունի, նրանք բոլորը տղամարդ են եւ բոլորը նաեւ այլ գործ են անում թերթում: Բացի այդ, պատահում է առաջնորդող է գրում նաեւ խմբագիրը, երբեմն նաեւ աշխատակազմի անդամ փորձագետներն են՝ կին թե տղամարդ, հրավիրվում իրենց խոսքն ասելու: Ներկայումս դրսից փորձագետներ երբեք չեն հրավիրվում, թեւ «Գարդիանի» պատանեկության տարիներին՝ 19-րդ դարի կեսերին, դա բավական տարածված էր եւ շարունակվում էր մինչեւ իմ հիշած ժամանակները: Այս դարի առաջին կեսին, օրինակ, Ռ.Յ. Թոնին՝ Լոնդոնի Տնտեսության դպրոցի գուրուն, առանց ստորագրության առաջնորդողներ էր գրում, դրանով իսկ որոշակիորեն ազդելով թերթի քաղաքականության վրա:

Մեջբերում անեն Ջեֆրի Թեյլորի «Փոփոխվող դեմքերի»-ից («Գարդիանի» պատմությունը, 1956-88թթ): «Ֆորթ իսթեյթ», 1993). Չ.Փ.Սքոթի՝ 57 տարի, մինչեւ 1932թ., թերթը ղեկավարած մեծ խմբագրի համար, «առաջնորդողները թերթի գոյության հիմնական նպատակն էին: Դրանք այն վայրն էին, ուր բոլոր հրատապ թեմաները, այդ թվում միանգամայն առեղծվածայինները, հիմնովին վերլուծվում էին ու դրանց գնահատական էր տրվում, ընդ որում, այդ գնահատականը

երբեմն կտրուկ էր, երբեմն՝ ոչ այնքան, կախված հարցի կարեւորությունից ու առկա վկայություններից»: Դրանք այն տեղն էին, եւ նաեւ են այն տեղը, ուր կարող էր արտահայտվել ու ամրապնդվել Սքոթի հետեւյալ համոզմունքը. «Լրագրի արժանիքներից մեկը, թերեւս ամենամեծ արժանիքը, դրա անկախությունն է: Ինչպիսին էլ լինի դրա կողմնորոշումը կամ բնույթը, այն առնվազն պետք է սեփական էություն ունենա» (Չ.Փ. Սքոթ: «1846 - 1932. «Մանչեստեր Գարդիանի» ստեղծումը»: «Ֆրեդերիկ Սյուլլեր», 1946):

Ներկայիս աշխարհում, ուր հեղինակի անվանը գնալով ավելի ու ավելի մեծ ուշադրություն է դարձվում, անանունության արժեքին դեռ հավատալը ծառայելու պատրաստակամության, անգամ անձնագրության որոշակի պաշար է ենթադրում առաջնորդող գրողների մեջ: «Գարդիանի» ներկա քառյակի ամենահին անդամը պատմում է, որ երբ 25 տարի առաջ պատրաստվել էր անցնել առաջնորդող գրողների սենյակի շենը, նրան ասել էին. «Մի մտիր այդտեղ, քո մասին այլեւս երբեք չեն լսի»: Իսկ նրա գործընկերն ասում է, որ իրեն ծանոթները հաճախ են հարցնում. «Դու դեռ «Գարդիանում» ես աշխատում»: Ես նրանց հետ քննարկեցի հետեւյալ հարցը՝ արդյո՞ք անանունությունը, որին գերադասում ենք հավատարիմ մնալ, վաճառել էրիտասարդ ընթերցողի համար: Չէ՞ որ ենթադրվում է, որ նրանք հաստատությունից ավելի անհատին են հավատում, մեծ մասամբ ծայր աստիճան կասկածում են հավաքական ձայնի վավերականությանը, եւ հետեւաբար պետք է պահանջեն, որ անկեղծություն դրսևորվի եւ հեղինակի ինքնությունը բաց լինի:

Իսկ իրականում մենք չգիտենք՝ արդյո՞ք այս ամենն այսպես է: Ամեն դեպքում, իմ գրուցակիցներն այն կարծիքին չեն, թե դա բավարար փաստարկ է անանունությունից հրաժարվելն արդարացնելու համար: Անանունությունը նրանց աչքում արժեքավոր դարձնող պատճառներից մեկը դրանց վրա քաղաքական գործիչների հաճախակի հարձակումներն են: Նրանք այն հստակ կարծիքին են, որ փաստարկի ուժը (այն փաստարկի, որի հետ անհամաձայնություն են հայտնում) մեծապես կնվազի, եթե այն հնարավոր լինի վերագրել առանձին հեղինակի, ոչ թե ողջ թերթին:



Բոլորովին վերջերս, «Չորրորդ ալիքի նորություններին» տված իր հարցազրույցում Դեյվիդ Բլանքեթը, ջանալով հերքել թերթի առաջնորդողներից մեկուն արտահայտված տեսակետը, ասել էր, թե դա ոչ թե «Գարդիանի», այլ ընդամենը այսինչ-այսինչի տեսակետն է, որը միշտ վիճակագրությունից վատ է եղել ու նորից համասարան հաճախելու կարիքն ունի: Իսկ մի ամիս հետո «Գարդիան» այցելելով, նա երկար ներողություն խնդրեց այն առաջնորդող գրողից, ում անունը տվել էր:

Խնդիրն այն է, որ առաջնորդողները որոշակի իմաստով թերթի հավաքական տեսակետն են արտահայտում: Դրանք սովորաբար երեքն են լինում եւ դրանց թեման որոշվում է ամենօրյա հավաքի ժամանակ՝ ընտրվելով ավելի մեծ թվով առաջարկներից: Դրանց նախնական ուրվագիծը որոշվում է համառոտ քննարկվում է: Իսկ վերջում՝ հրապարակումից առաջ, դրանք կարդում են խմբագիրը կամ նրա տեղակալը:

Խմբագիրը, այս շաբաթվա մեր քննարկումը լսելուց հետո, ասաց, որ իր կարծիքով անստորագիր առաջնորդողը թերթի շարունակականության մի մշտական տարր է, «Գարդիանն» իր պատմությանը կապող օղակ, որ արտացոլում է թերթի դավանած արժեքները: Առաջնորդող գրողը օգտվում է տեղեկատվության անհավատալիորեն մեծ ռեսուրսներից եւ իր տրամադրության տակ ունի թերթի բոլոր լրագրողներին՝ որպես փորձագետների: Առաջնորդողի հետեւում թերթն է՝ իր ողջ հեղինակությամբ: Դրանք ստորագրելը, եւ այս կարծիքի հետ բոլորն էին համաձայն, ճիշտ չէր լինի:

Իդեալական առաջնորդողը, ասաց ինձ նախկինում դրանք գրելով զբաղված մեկը, պետք է լավ ուսումնասիրության արդյունք լինի, դիպուկ շարադրված լինի եւ էլեգանտ կերպով գրված: Նրան լսելով ես հիշեցի, թե ինչպես էր Բոզվելը նկարագրում Սամյուել Չոստոնին. «Նա ոչ գլուխն էր բարձր պահում, ոչ էլ ոտքերի ծայրերին էր բարձրանում. նա ուղղակի չէր կռանում»:

**ՀԱՎԵԼՎԱԾ**  
**ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԱՐՋԱԲԱՆՈՒՄՆԵՐ**

Ծաղկաքաղ  
«Գարդիանի»  
ուղղումների սյունակից

\*

Մեր մի սյունակում, որ վերնագրված էր «Ժպտուն Բրիտանիան խոժոռվում է լեյբորիստների կողմը նայելով» (էջ 31, 20 հունիսի), մենք ճիշտ հաղորդում էինք արել Ջանան Գանեշի տեղադրած բլոգի մասին, բայց սխալ կերպով նրան էինք վերագրել նաեւ բլոգի վերնագիրը՝ «Թող սուղանցիները մահանան, դա մեր գործը չի»: Այդ վերնագիրը պ-ն Գանեշը չէր գրել:

\*

Մենք սխալ կերպով նշել էինք, թե նախկին ներքգործնախարար Չարլզ Քլարկը «պաշտոնազուրկ էր արվել, քանի որ չէր կարողացել երկրից արտաքսել ավելի քան հազար ապաստան խնդրողների, որոնք լուրջ հանցանքներ էին գործած եղել» («Բանտից փախածը հրաշալի է խաղում իր կեղծ ինքնությունը», էջ 2, G2, 20 հունիսի):

\*

Մեքսիկայի նախագահության ձախակողմյան թեկնածուի մասին խոսելիս մենք նրան անվանել էինք պարզապես Մանուել Լոպես Օբրադոր, մոռանալով նշել նրա անունը՝ Անդրե («Գարի Յունգի բարոյական աշխարհի գավաթը», էջ 3, G2, 16 հունիսի):

\*

Կարճ նյութում, որ վերնագրված էր «Չինաստանը հաղթում է ռուսական նավթահանքերը գնելու հարցում իր մրցակիցներին» (էջ 27, 21 հունիս), մենք ասել էինք, թե չինական «Սինոպեկ» ընկերությունը հայտնի է նաեւ իբրեւ CNPC: Իրականում, թեւ «Նավթի ազգային կորպորացիան» (CNPC) եւ «Սինոպեկը» երկուսն էլ Չինաստանի կառավարության սեփականությունն են, դրանք տարբեր ընկերություններ են: «Ուղմուրտնեֆթը»՝ «Սինոպեկի» կողմից գնված նավթարտադրական միավորումը, Սիբիրում չէ: Այն Ուղմուրտիայում է՝ Ռուսաստանի եվրոպական մասում, Ուրալից արեւմուտք ընկած հանրապետությունում:

\*

Մենք սխալ կերպով նշել էինք, թե Գարեթ Ֆիցջերալդը Իռլանդիայի «Ֆայն Գեյլ» կուսակցության առաջնորդն է եղել եւ գլխավորել է Դաիլում 1973թ. ընտրական հաղթանակ տարած

միավորումը (Մահախոսական, Մայքլ Օ'Լիրի, էջ 36, 2 հունիսի): Կուսակցության առաջնորդն այդ ժամանակ Լայան Քոզգրեյվն էր, որը 1973-ից մինչև 1977-ը եղել է թիշիս (ժան - այդպես է կոչվում Իռլանդական Հանրապետության վարչապետը), որից հետո առաջնորդ է ընտրվել պ-ն Ֆիցցերալդը՝ մինչև 1987թ.:

\*

«Հին մրցակից Ռեյ Օզին լուսարձակի տակ» նյութում (էջ 20, «Ֆինանսական», 17 հունիսի) մենք նշել էինք թե պ-ն Օզին՝ «Մայքրոսոֆթի» ծրագրաշարերի նոր գլխավոր ճարտարապետը, մեկ տարով փոքր է Բիլ Գեյթսից: Իսկ իրականում մենք պետք է ասեինք, որ նա մեկ ամսով է փոքր պ-ն Գեյթսից:

\*

Հոդվածում, որ վերնագրված էր «Առանձին սաղմի դեպքում տարիքով կանայք կազատվեին կրկնակի ծննդի ռիսկից» (էջ 11, 1 հունիսի) մենք տեղադրել էինք մարդկային սաղմի էլեկտրոնային միկրոնկարը, մակագրության մեջ սխալմամբ նշելով, թե սաղմը 10 բջջի փուլում է: Իրականում սաղմը 16 բջջի փուլում էր: Բջիջները բազմանում են այնպես, որ լինում են 2, 4, 8, 16, 32: 10 բջջի փուլ գոյություն չունի:

\*

Դեյվիդ Սալիվանի հետ Աքթոնում անցկացրած մեր հարցազրույցում մենք ներառել էինք նրա այնպիսի դատողություններ, որ նախկինում տեղ էին գտել «Ռեյսինգ փոսթում» հրապարակված հոդվածում, ինչի մասին անփութորեն չէինք հիշատակել: Հիշյալ դատողություններն սկսվում էին այսպես՝ «Ես մերժեցի ձիու վերաբերյալ հրեշավոր առաջարկը...» եւ «Ես դարձյալ կարող եմ ձեռքս դնել սրտիս վրա...» ( «Սալիվանը ստիպված է հաշտվել արքունական հանդիպման հնարավորությունը կորցնելու հետ», էջ 17, 22 հունիսի):

\*

Եպիսկոպոս Քաթրին Ջեֆերթս Սքորին ծնվել է 1954-ին, ոչ թե 1964-ին, ինչպես նշված էր շաբաթ օրը տպագրված նրա հարցազրույցում (էջ 29, 24 հունիսի): Մենք կենսագրության մեջ նաեւ չէինք նշել այն մասին, որ նա 1983թ. ծովային կենսաբանության գծով դոկտորական է պաշտպանել:

\*

Նյութում, որ վերնագրված էր «Սաղմնային թեստը հնարավորություն է տալիս հայտնաբերել շուրջ 6 000 ժառանգական հիվանդություններ» (էջ 7, 19 հունիսի), մենք գրել էինք, թե Դուշենի մկանային դիստրոֆիայով (DMD) հիվանդ 100 տղա է ծնվում Բրիտանիայում ամեն օր: Պետք է գրեինք՝ «ամեն տարի»:

\*

Աշխարհը բաժանված է երկու խումբ մարդկանց՝ նրանք, որ գիտեն թե Սոբի-Դիկը գծիկով է գրվում եւ նրանց՝ որ չգիտեն: Վերջիններիս թվում էր նաեւ 1889 թվին նրա մասին պատմած գրողը: Դուք էլ հայտնեք ձեր կարծիքը: (էջ 3, G2, 15 հունիսի):

\*

Տոսկանայի հրաշալի բնաշխարհը կհարստանա ոչ թե Կիպրոսի ծառերով, այլ կիպարիսներով (շաբաթավերջի հեռուստածրագիր, էջ 32, G2, 19 հունիս): (*ծան - բնագրում՝ Cypress tree եւ Cyprus tree*):

\*

Ամազոնը խնդրել է մեզ նշել, որ հակառակ Փրեսթոն Մակաֆիի հետ հարցազրույցում արվող պնդումներին (էջ 24 եւ 25, G2, 6 հունիսի), այն տարբեր հաճախորդների տարբեր գներ չի առաջարկում՝ ոչ Amazon.co.uk-ում, ոչ էլ՝ Amazon.com-ում: Որպես բացատրություն Ամազոնը նաեւ նշում է, որ այն ամեն օր իջեցնում է գները հազարավոր առարկաների համար, որոնք առաջին անգամ տարբեր սերվերների վրա հայտնվում են կարճ ժամանակով: Սակայն հաճախորդներից կգանձվի հավասար գումար, երբ որ նրանց պատվերները կատարվեն:

\*

Նշանավոր մարդկանց ստացած կրթությանը վերաբերող հոդվածում (էջ 10-11, G2, 16 հունիսի), մենք ասել էինք, որ սրը Մենզի Թամբելը հաճախել է Էդինբուրգի Ջորջ Վոթսոնի քոլեջը: Սա սխալ է: Իրականում նա սովորել է Զիլհոուդի դպրոցում, որ պետական դպրոց է Գլազգոյում:

\*

Օպերատոր Զասկել Վեքսլերի հետ մի հարցազրույցում մենք ասել էինք, թե նրա որդի Մարկը «Ջորջ W Բուշի գովեր-

գական պատկերն էր ստեղծել՝ հանրապետականների 2000 թվի համաժողովից առաջ» («Տիաճորեն՝ ապակու միջով», էջ 10, 2 հունիսի): Մարկ Վեքսլերի «Պատմիր նրանց ովքեր ենք մենք» ֆիլմի գրախոսականում մեղադրանքը կրկնվել էր. ասել էինք, թե նա «պաշտոնական ֆիլմեր է նկարում Ջորջ Վ Բուշի համար» (նույն համար էջ 12): Մարկ Վեքսլերը խնդրել է մեզ նշել, որ երբեք ֆիլմ չի նկարել ոչ Ջորջ Վ Բուշի, ոչ Ջորջ Բուշի մասին, ոչ հանրապետականների 2000 թվի համաժողովի, ոչ այլ քաղաքական հավաքի, ոչ էլ որեւէ կուսակցության համար:

\*

Եթե ճշգրիտ արտահայտվենք՝ Թոնի Բլերի նամակը Մայքլ Ֆուլթին (էջ 9, 16 հունիսի), ուղարկված էր նրա սենյակից, ոչ թե իրավաբանական գրասենյակից: Եվ նա փաստաբան էր, ոչ թե իրավախորհրդատու: Որոշ թողարկումներում մենք ասել էինք, թե պ-ն Բլերն այդ ժամանակ 28 տարեկան էր: Իրականում նա 29 տարեկան էր:

\*

Ջեք Լայդնգը Գինեսի խարդախության գործին մասնակցելու համար իրեն հասնող ժամկետը բանտում չի անցկացրել, հակառակ նրա, որ այդպես էր նշված «Ընտանիքները միանում են՝ գնելու համար խոշորագույն տնաշինական ֆիրման» նյութում (էջ 27, 12 հունիսի): Նա ընդամենը 3 միլիոն ֆունտ ստերլինգ է վճարել՝ իր առաջացած տարիքի եւ քաղցկեղով հիվանդ լինելու շնորհիվ: Ավելի ուշ նրան զրկել են նաեւ ասպետի կոչումից:

\*

Rock'N'Roll-ի մասին գրախոսության խմբագրված մի պարբերությունում ասվում էր, թե Յան պերսոնաժը՝ չեխ այդ դիսիդենտը, «դրական գծերով ներկայացված առաջին մարքսիստն է, որ ես հիշում եմ Սթոփարդի գործերում»: Իրականում Մայքլ Բիլինգթոնը խոսում էր Մաքսի մասին, որ դասախոս է Քենթրիջում («Սթոփարդը զարմացնում է», էջ 9, վերջին թողալովներ, երեկ):

\*

Ալպերում արված եւ մեքենաներ, ձյունի մեջ բացված ճանապարհ եւ դահուկներ պատկերող մի լուսանկարի մակագ-

րության մեջ տարօրինակ կերպով գրված էր, թե այն արվել է 1860-ականներին: Իրականում նկարը, որ Հալթոնի արխիվից է, արվել է 1922-ին («Վեր ու հեռու», էջ 4, «Ճամփորդություն», 29 հոկտեմբերի):

\*

Մենք Իրաքն անվանել էինք արաբական երկիր, այնինչ նրա բնակչությունը կազմող էթնիկ խմբերը հետեւյալն են՝ 75-80 տոկոս արաբներ, 15-20 տոկոս քրդեր, 5 տոկոս թուրքմեններ, ասորիներ եւ այլն («Նրանց ստացած միակ փոխհատուցումը նոր տարուց կդադարեցվի», էջ 33, 19 հոկտեմբերի):

\*

Կարմիր ծովը սխալմամբ Մեռյալ ծով է անվանվել մեր երեկվա հողվածին կից քարտեզում («Առեղծվածային մահ Նեղոսի վրա, 4 հազար տարի անց», էջ 7):

\*

Թլպատմանը վերաբերող հողվածի լուսանկարում («Ցավող տեղ», «Ուիքենդ» հանդես, 29 հոկտեմբերի, էջ 39) այդ գործողությունը կատարելիս օգտագործվող վիրահատական գործիք չէր պատկերված, ինչպես մենք էինք գրել: Պատկերվածը քթի ձեւը փոխելու վիրահատությունների ժամանակ օգտագործվող խարտոց էր:

\*

Բրիտանիա կատարած իր այցելությունից հետո Չինաստանի նախագահ Յու Ջին Թաոն նոյեմբերի 10-ին հետ չի վերադարձել Պեկին («Չինաստանի արդյունաբերության նորերս ծաղկող ճյուղը...», էջ 3, երեկ): Նա եռօրյա այցով թռել է Գերմանիա՝ հանդիպելու Անգելա Մերկելի եւ Գերհարդ Շրոյդերի հետ, որից հետո այսօր ուշ երեկոյան պետք է վերադառնար Չինաստան:

\*

Էթանոլով աշխատող ֆորմուլա մեկ մեքենաները արտադրում են ածխածնի երկօքսիդ, հակառակ մեր պնդմանը, որ արել էինք «Վաղուց էր պետք կանաչ լույս վառել էթանոլի ֆորմուլայի առաջ» նյութում (էջ 7, «Սպորտ», երեկ): Այնուամենայնիվ, այդ գործընթացի դեպքում բենզինի այրումից ստացվող մյուս վնասակար նյութերը չեն արտադրվում: Ավե-

լին՝ գործընթացը բնականորեն վերականգնվող է, քանի որ արվում է բույսերով, որոնք աճելիս ածխածնի երկօքսիդ են կլանում: Ողջ գործընթացը ածխածնի առունով չեզոք է:

\*

Մենք սխալմամբ ասել էինք, թե Կազանը Սիբիրի մայրաքաղաքն է, այնինչ այն Ուրալյան լեռներից արեւմուտք ընկած Թաթարական հանրապետության մայրաքաղաքն է: Իսկ Սիբիրն ընկած է այդ լեռներից արեւելք: (Մահախոսական՝ Օլեգ Լանդստրեմ, էջ 37, 28 հոկտեմբերի):

\*

Կրթության մեջ լեզվաբանական ու մշակութային ցեղասպանության մասին դասախոսությունը, որի մասին «Ուղեղի սնունդ» նյութում (էջ 25, G2, 21 նոյեմբերի), գրված էր, թե կայանալու է վաղը էսեքսի համալսարանում, իրականում տեղի էր ունեցել անցած հինգշաբթի:

\*

Թոմ Քելլին՝ Դաունհինգ սթրիթի խոսնակը, մեզ խնդրել է նշել, որ հակառակ Ռոյ Չաթերսլիի սյունակում արված պնդմանը (էջ 27, 31 հոկտեմբերի), ինքը երբեւէ չի ասել, թե «ծխելու համընհանուր արգելքին վարչապետի դեմ լինելը քաղաքացիական ազատություններին նրա նվիրվածության արդյունք է»: Պ-ն Քելլին ասում է, թե ինքը ծխելու վերաբերյալ վարչապետի հայացքների մասին ընդհանրապես չի խոսել որեւէ լրագրողի հետ, պաշտոնապես կամ առանց ձայնագրիչի:

\*

«Վնասվածքների կլինիկա» նյութում (G2, էջ 27, 21 նոյեմբերի), մենք տարիքով մարդկանց առաջարկել էինք օրական 3 անգամ 30-ական րոպե ակտիվ վարժություններ կատարել: Պետք է լիներ՝ շաբաթը երեք անգամ:

\*

«Ալ Ջազիրա» ալիքը «արեւմտյան պատանդներին գլխատող դիմակավոր ահաբեկիչների» պատկերող տեսագրություններ չի ցուցադրել, թեպետ մենք այդպես էինք գրել Ալ Ջազիրայի մասին պատմող առաջնորդողում: Ալ Ջազիրան իրականում ոչ մի գլխատում ցույց չի տվել:



\*

«Ինչո՞ւ չենք կարող ավելի շատ գրիպի պատվաստանյութ արտադրել» հողվածում (էջ 8, «Գիտություն»), մենք ասել էինք, թե հավի ձվի մեջ անցք է բացվում, վիրուսը ներս է սրսկվում, ապա անցքը մոմով փակվում է: Այդ ձվերն ապա 10 օր ինկուբացվում են՝ մինչեւ վիրուսն աճի: Իսկ իրականում, պատվաստանյութ ստանալու համար, հավի ճուտ տալու ընդունակ ձվերը մոտ 10 օր ինկուբացվում են, որից հետո դրանց վիրուսի ցանքս են պատվաստում, ապա դրանք, գրիպի վիրուսն իրենց մեջ, 24-ից 36 օր նորից ինկուբացվում են:

\*

Եթե կլինայի փոփոխության եւ Քարթերե մարջանային կղզիների մասին մեր հաղորդումից (էջ 3, 25 նոյեմբերի), այն տպավորությունն է ստեղծվել, թե Պապուա Նոր Գվինեան Ինդոնեզիայի մաս է կազմում, կուզենայինք ասել, որ այդպես չէ եւ երբեք այդպես չի եղել: Նոր Գվինեա կղզու արեւմտյան մասը Ինդոնեզիայի մեջ է մտնում, սակայն նույն այդ կղզու արեւելքում գտնվող Պապուա Նոր Գվինեան անկախ երկիր է:

\*

Մենք սխալվել ենք՝ Մոնղոլիան չափի առումով համեմատելով Ֆրանսիայի հետ («Մոնղոլները գալիս են», էջ 2, G2, 22 նոյեմբերի): 1.6 միլիոն քառ. կմ տարածք զբաղեցնող Մոնղոլիան համարյա երեք անգամ Ֆրանսիայից մեծ է:

\*

Butter bean-ի բաղադրատոմսի մեջ («Պանցետա եւ հազրեվարդի մածուկ», էջ 104, 26 նոյեմբերի) մենք մոռացել էինք պանցետայի մասին: Դրանից պետք է վերցնել 125 գրամ:

\*

Մենք առանց դիտավորության վիրավորել ենք լեյբորիստների գլխավոր վիպի Յիլարի Արմսթրոնգին (*ժամ - վիպը ամերիկյան ու բրիտանական կուսակցություններում այն պաշտոնյան է, որ հետետում է, որպեսզի կուսակցականները մասնակցեն ու քվեարկեն կառավարության կարեւոր բանավեճերի ժամանակ*), ասելով, թե նա համարյա կրկնակի մեծ է պահպանողականների առաջնորդ Դեյվիդ Քամերոնից («Թորինե-

րը առաջ են անցնում մինչ Համայնքների պալատը կռիվ է տալիս Բլերի դեմ», էջ 4, երեկ): Իրականում Քամերոնը 39 տարեկան է, իսկ Արմսթրոնգը 60, այնինչ 39-ի համարյա կրկնակին համարյա 78 է անում:

\*

Մենք ասել էինք, թե արտիստ Թրեյսի Էմինի ինստալացիան՝ «Բոլորը ուն հետ երբեւէ քնել են» խորագրով, նրա բոլոր սեքսուալ նվաճումների անուններից կարված մի վրան էր: Իսկ իրականում այդ խորագիրը պետք էր հասկանալ ոչ թե իբրեւ էվֆեմիզմ, այլ բառացի, եւ ինստալացիան ներառում էր այն բոլոր մարդկանց անունները, ուն հետ Թրեյսին պառկել էր նույն անկողնում, այդ թվում իր ընտանիքի անդամներից:

\*

Մենք գրել էինք, թե Թուրքիայի Չանակկալեն կանգ առնելու հարմար քաղաք է նրանց համար, «ովքեր ուզում են այցելել Գալիպոլի եւ Ռարդանելի նեղուցի վրա գտնվող այլ պատմական վայրեր, ուր առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ասի են իջել զորքերը» («Հոլիվուդից ընծա ուղարկված ձիուց հորդաները նորից Տրոյա են ներխուժում», էջ 19, 20 նույնքերի): Իրականում բրիտանա-ֆրանսիական ծովային զորախումբը դուրս է մղվել նեղուցներից եւ չի կարողացել ասի դուրս գալ այնտեղ: Չորքերի ասի դուրս գալու վայրերը Գալիպոլի թերակղզու արեւմտյան մասում էին (Անգաք եւ Սուվլա), ինչպես նաեւ Հելլեն հրվանդանի մոտ, որ դրա հարավային ծայրին է:

\*

Ժակլին Ռոզի հետ հարցազրույցում (էջ 24, G2, 28 նույնքերի) մենք նրա նոր՝ «Սիոնի հարցը» գրքի մասին ասել էինք, թե այն «փորձում է զուգահեռ անցկացնել Իսրայելի կողմից պաղեստինցիների հանդեպ վերաբերմունքի եւ հրեաների հանդեպ նացիստական Գերմանիայի վերաբերմունքի միջեւ»: Իրականում, թեւ հեղինակը կապ է տեսնում ազգի մասին նացիոնալ սոցիալիստների եւ Իսրայելի ըմբռնումների միջեւ, նա մերժում է զուգահեռը նացիստների կողմից հրեաների ոչնչացման եւ սիոնիզմի միջեւ:

\*

«Սիրելի Ձերեմի» սյունակը, («Աշխատանք», էջ 4, 3 դեկտեմբերի), տպագրել էր մի կնոջ նամակ, ուր վերջինս հարց էր տալիս՝ արդյո՞ք ինքը աշխատանքի ընդունվելիս պետք է ասի, թե հղի է: Մենք նրան խորհուրդ էինք տվել ասել ճշմարտությունը, իսկ եթե ընկերությունը դրանից հետո մերժի նրան աշխատանքի ընդունել, անել իր եզրակացությունը տվյալ ընկերության ստանդարտների մասին: Մենք պետք է ասած լինեինք, որ հղիության պատճառով աշխատանքի չընդունելն անօրինական է:

\*

Հոդվածում, որ կոչվում էր «Եկուսով, բայց առանձին՝ զույգ կազմելու նոր տարբերակ» (էջ 5, 16 դեկտեմբերի), մենք գրել էինք, որ բրիտանացիների 35 տոկոսը 2021 թվականին առանձին կապրեն՝ համաձայն «Յունիլեվերի» 2005 թվի Ընտանեկան զեկույցի կանխագուշակության: Իսկ զեկույցում նշված էր, որ տնային տնտեսությունների 35 տոկոսը կազմված կլինի առանձին ապրող մարդկանցից: Ձեկույցը ոչ թե հոկտեմբերին, այլ անցած ամիս էր հրապարակվել:

\*

«Կաթ դպրոցների համար» խումբը հանրային նվիրատվությունների եւ դրամաշնորհների միջոցով ֆինանսավորվող անկախ բարեգործական կազմակերպություն է: Այն չի ֆինանսավորվում կաթնամթերք արտադրողների կողմից, ինչպես մենք էինք գրել մեր հաղորդման մեջ («Կառավարությունը կարող է դադարեցնել դպրոցներին տրվող կաթի լրավճարները», էջ 1, 4 հունվարի): Միայն «Դպրոցներում կաթի շաբաթ» նախաձեռնությունն է, որ մասամբ ֆինանսավորվում է կաթնամթերք արտադրողների կողմից:

\*

Իոսիֆ Ստալինը ոչ թե կաթոլիկ սեմինարիա է հաճախել, ինչպես մենք էինք սխալմամբ գրել, այլ ռուս ուղղափառ սեմինարիա («Խաչի նպատակ», էջ 25, 7 հունվարի):

Մարդկային սրտի կշռի մասին խոսելիս սխալմամբ գրել էինք միլիգրամ՝ գրամի փոխարեն («Ժամանակակից մահ», էջ 23, 14 հունվարի): Գրեյի «Անատոմիայի» համաձայն, «տղա-

մարդու սիրտը կշռում է 280-ից մինչև 340 գրամ, իսկ կնոջ սիրտը՝ 230-ից 280 գրամ»:

\*

Բույսերից մեթան ստանալու ուղղությամբ կատարվող հետազոտությունների մասին պատմող հոդվածի վերնագիրը՝ «Գլոբալ տաքացում. մեղավորը անտառներն են», չափազանցության էր հասցրել հոդվածում ավելի զգուշավոր կերպով արտահայտված այն տեսակետը, թե ջերմոցային էֆեկտն առաջացնող գազի՝ մեթանի մոտ 30 տոկոսը Երկրի մթնոլորտ է արտանետվում բույսերի կողմից (էջ 12, 12 հունվարի): Գիտնականները նոր են հայտնաբերել այս հանգամանքը, բայց սխալ կլիներ դա համարել կլիմայի տաքացման նոր պատճառ:

\*

Չողվածում, որ կոչվում էր «Բողոքներ չինական պաշտպանիչ ծրագրերը պաշտպանելու «Գուգլի» քաղաքականության դեմ» (էջ 3, 25 հունվարի) եւ պատմում էր Չինաստանում առկա ինտերնետային գրաքննության մասին, մենք «Ֆալուն գոնգը» անվանել էինք աղանդ: Մենք պետք է նշեինք, որ դա չինական իշխանությունների պաշտոնական տեսակետն է այդ շարժման մասին:

\*

Ամբիծ հղացման դոկտրինը ուղղակի ոչ մի կապ չունի Հիտլերի ծննդյան հետ, թեև «Սրբերը պետք է նոր սուպերհերոսներ լինեն» նյութում (էջ 36, G2, 24 հունվարի), հակառակն էր գրված: Ինչպես արդեն երեք անգամ ասել ենք մեր ուղղումներում, այդ դոկտրինն այն մասին է, որ Մարիամն ինքը իր մոր՝ սուրբ Աննայի կողմից հղացվել էր անբիծ՝ մաքուր նախնական մեղքից: Քրիստոսի՝ առանց մարդ-հոր ծնվելու մասին դոկտրինը կուսական ծննդյան դոկտրինն է:

\*

Շոստակովիչի 15-րդ սիմֆոնիայում օգտագործված է հատված Ռոսինիի «Վիլյան Թել» ուվերտյուրայից, ոչ թե «Սեվիլյան սափրիչ» ուվերտյուրայից («Չարցագրույց Մարկ Էլդերի հետ», էջ 15, «Ֆիլմ եւ երաժշտություն», 27 հունվարի):

\*

Այսօրվա թերթում տպագրված սունկերի ցանկում «հսկա ձագարագլխիկը»՝ *Clitocybe gigantea*-ն ներկայացված է իբրև ուտելի: Այնինչ, այդ հարցում այլ կարծիք նույնպես կա: Թեև այս սունկը հիմնականում ուտելի է համարվում, դ-ր Մայքլ Կուլոն՝ «100 ուտելի սնկեր» գրքի հեղինակը (Միչիգանի համալսարանը շուտով այն կիրատարակի), պնդում է, թե որոշ մարդկանց համար այն թեթևակի թունավոր է: Անծանոթ սնկերը ուտելուց առաջ պետք է ստուգվեն մասնագետի կողմից: Մի շարք ընթերցողներ նաև նշում են, որ երեքշաբթի եւ չորեքշաբթի օրվա ցանկերում նշված որոշ թռչունների ու թիթեռների հնարավոր չի հանդիպել Բրիտանական կղզիներում, այնինչ այնտեղ տարածված շատ տեսակներ, հակառակը, ցանկում չկան: Իրականում այդ ցանկում նշված էին եվրոպայի տարբեր շրջաններում հանդիպող տեսակները, որոնց մի մասը նաև Բրիտանիայում կա. սրա մասին մենք պետք է հստակ նշեինք: Թիթեռների ցանկում նշված էին նաև ցեցերի մի քանի տեսակ, ուստի ցանկը պետք էր վերնագրել՝ «Թիթեռներ ու ցեցեր»: Ցանկում պատկերված երկու թիթեռ ներկայացված էին իբրև «փոքրիկ պղնձաթիթեռներ»: Իրականում դրանցից մեկը, որի գիտական անունը ճիշտ էր նշված՝ *Lycaena virgaureae*, փաստորեն «հազվագյուտ պղնձաթիթեռ» էր:

\*

«Զգուշացեք կենդանիներից» բաժնում (էջ 10, G2, երեկ), մենք հաղորդել էինք, որ Բանգլադեշում առյուծը 40 գյուղացու է սպանել: Բայց նյութից էլ երեւում էր, որ դեպքը Տանզանիայում է տեղի ունեցել:

\*

Տանզանիայի որսորդ-հավաքչությամբ զբաղվողների ցեղը ոչ թե Հաձա է կոչվում, այլ Հագդա («Գաղափարների հարցազրույց», էջ 24, G2, երեկ):

\*

«Շարիաթի օրեօր. մտքներովը չանցնի» վերնագրված երեկվա նյութում (էջ 16), մենք գրել էինք, թե Կանադայի Օնտարիո նահանգում թուլատրվում է շարիաթը որպես օրենք

կիրառել քաղաքացիական վեճերում, եթե կողմերը դրան համաձայն են: Իրականում այդպես չէ, 2004-ին դրան հասնելուն ուղղված քայլեր են արվել, բայց հետո դադարեցվել են:

\*

Հողվածում, որ կոչվում էր «Ինչպես ուժեղ գույներ ստանալ», («Ուիքենդ», էջ 62, 10 սեպտեմբերի, 2005) մենք խոսել էինք Թիմոթի Էվերեսթի տան ձեւավորման մեջ օգտագործված գույների մասին եւ ասել, որ ներկերի մեծ մասը «Ֆարոու եւ Բուլ»-ինն էին: Այնինչ մասնագետ-ներկարար Ռիչարդ Քլարկը, որը վերածեւավորել է Էվերեսթի տունը, խնդրում է նշել, որ ինքն այդ ներկերը չի օգտագործել, եւ բոլոր գույներն ու ներկային էֆեկտները իր սեփական աշխատանքի արդյունքն են: Մենք հաճույքով ենք անում այս պարզաբանումը:

\*

Իրաքին վերաբերող հաղորդումը, վերնագրված «Բուշը դա առաջընթաց է անվանում...» (էջ 19, 20 մարտի), ուղեկցվում էր ծանուցմամբ, ուր զոհված իրաքցիների մասին հրապարակի վրա եղած թվերը ներկայացվում էին այսպես՝ «զգուշավոր 30 հազարից մինչեւ ենթադրյալ 100 հազար»: «Ենթադրյալ» բառը օգտագործելը սխալ էր: Այդ թիվը հիմնված է ուսումնասիրության վրա, որից մեջբերում էր արված նոյեմբերի 20-ի «Լանսետում»: Մենք ոչ մի դիտավորություն չունեինք ակնարկելու, թե թիվը ուռճացված է:

\*

Դիջեյ եւ երաժիշտ Գոլդին չի մասնակցի C4-ի «Խաղերին», ինչպես գրել էինք նրա մասին պատմող մեր «Հավասարակշռված» հոդվածի ներքեւում: («Ուիքենդ» հանդես, էջ 57): Նա ջարդել է իր ոտքը՝ երբ հանդեսն արդեն լույս էր տեսել:

\*

Երեկվա էջ 2-ում տպագրված քարտեզում Եգիպտոսը սխալմամբ մեծացված էր՝ Իսրայելի ու Հորդանանի տարածքների հաշվին:

\*

Մենք սխալվել էինք, ասելով, թե Դահաբի ռմբահարումների մասին նյութի քարտեզում Եգիպտոսը մեծացված էր Իսրայելի ու Չորդանանի տարածքների հաշվին (Ուղղումներ, էջ 28, 26 ապրիլի): Քարտեզում Եգիպտոսը ճիշտ էր պատկերված, սակայն Իսրայելին ու Չորդանանին պատկանող տարածքների մի մասի վրա գրված էր՝ Սաուդյան Արաբիա:

\*

«Ուեմբլի» ստադիոնի պատմությունը շարադրող մեր հոդվածում (էջ 12, G2, 14 մարտի), մենք հիշատակել էինք աշխարհի 1966 թվի գավաթը, որի ժամանակ Անգլիան հաղթել էր Գերմանիային «ռուս եզրային դատավորի թեթևակի օգնությամբ»: Այնինչ իրականում այդ եզրային դատավորը՝ Թոֆիլ Բախրամովը, ոչ թե Ռուսաստանից էր, այլ մեկ այլ սովետական հանրապետությունից՝ Ադրբեջանից, եւ ներկայումս նրա անունով է կոչվում Բաքվի ազգային ստադիոնը:

\*

Հոդվածում, ուր պատմում էինք Ուելսի ռեգբիի թիմի գլխավոր մարզիչի պաշտոնակատար Աքոթ Ջոնսոնի Ավստրալիա վերադառնալու մասին (էջ 11, «Սպորտ», 25 մարտի), մենք ասել էինք, թե նա թիմում ոչ մեկին չէր հայտնել հեռանալու իր որոշման մասին, մինչեւ որ այդ մասին մարտի 24-ի առավոտյան հայտնեց Ուելսի ռեգբիի միությունը: Իրականում միության հայտարարությունից առաջ պ-ն Ջոնսոնն այդ մասին խոսել էր բոլոր խաղացողների ու ղեկավարության անդամների հետ՝ կամ բանավոր կամ հեռախոսի վրա հաղորդում թողնելով:

\*

Մենք սխալ կերպով պնդել էինք, թե Հուդային «հայիոյուն են ավելի քան 2 հազար տարի», ինչը նշանակում էր, որ նրան չեն սիրել ծննդյան օրից ի վեր («Հուդա. ահա թե ինչ է տեղի ունեցել իրականում», էջ 1, երեկ): Մենք ուզում էինք ասել՝ «համարյա 2 հազար տարի»:

\*

«Ուլիքենդ» հանդեսի մի հոդվածում, որ վերնագրված էր՝ «Արդյո՞ք դա ռիսկ է», այսպիսի մեջբերում կար. «Այսօր արդեն միանգամայն հանոզիչ վկայություն կա այն մասին, որ օրական 200 մգ սելենիում ընդունելով՝ դուք ավելի քան երկու անգամ նվազեցնում եք շագանակագեղձի քաղցկեղ ունենալու ձեր հավանականությունը» (էջ 32, 1 ապրիլի): Պետք է գրված լիներ՝ 200 միկրոգրամ՝ [ուս] ց կամ ուոց: Օրական 400 միկրոգրամից ավելի սելենիումի օգտագործումը կարող է հանգեցնել սելենիումային թունավորման, որ կոչվում է սելենոզիս: Սննդի միջոցով քաղցկեղի կանխարգելման ԱՄՆ-ում անցկացվող փորձարկումների ժամանակ օգտագործվում էր օրական 200 միկրոգրամ սելենիում:

\*

Մենք սխալմամբ գրել էինք, թե երբ 1992 թվին էկրան բարձրացավ «Հիմնական բնագոյը», «Բիլ Քլինթոնն իր նախագահության պայծառ գարունն էր ապրում դեռ» («Մարմնական մեղքեր», էջ 9, «Ֆիլմ եւ երեժշտություն», 31 մարտի): Իրականում այդ տարվա մարտին, երբ ֆիլմը էկրան բարձրացավ, Ջորջ Բուշ Ավագն էր ապրում իր նախագահության ձմեռը: Նախագահ Քլինթոնն ընտրվել է 1992թ. նոյեմբերին եւ օծվել՝ 1993թ. հունվարին:

\*

Ալկոյը, որ Իսպանիայում է, Ալիկանտի ու Վալենսիայի միջեւ, սխալ կերպով ներկայացվել էր իբրեւ «ծովափնյա քաղաք» («Ջարմիկները մեղադրվում են Իսպանիայում բրիտանական զույգին փախցնելու եւ սպանելու մեջ», էջ 9, 29 մարտի): Իրականում այն բլրի վրա գտնվող քաղաք է, 600 կմ ծովի մակերեսույթից բարձր եւ մոտ 60 կմ ծովից հեռու:

\*

«Ռոլինգ Սթրունգի» Շանհայում տված համերգների ժամանակ արգելված երգերի ցուցակում է եղել «Սեւ շաքարը», ոչ թե «Շագանակագույն շաքարը», ինչպես գրել էինք («Ջագերը մի քիչ գովում, բայց ավելի շատ փնովում է չինացիներին՝ երգերն արգելելու համար», էջ 19, 8 ապրիլի):



\*

Սիլվիո Բերլուսկոնին պատերազմից ի վեր Իտալիայի ամենաերկար պաշտոնավարած վարչապետը չէ, ինչպես գրել էինք մեր մեկնաբանություն-հոդվածում՝ «Այսօր Իտալիան կարող է փրկել միայն իմպրովիզացիայի ազգային հանճարը» (էջ 31, 13 ապրիլի): Նա 1994-ից սկսած պաշտոնավարել է 7 ամիս, ապա 2001-ից սկսած՝ համարյա 5 տարի: Ալչիդե դե Գասպերին վարչապետ է եղել 1945-ի դեկտեմբերից մինչև 1953-ի հուլիսը: Դրանցից առաջին ութ ամիսները ներառում են հին թագավորության շրջանը, իսկ մնացած յոթ տարիները՝ հանրնդհանուր քվեարկությամբ ընտրված՝ հանրապետության առաջին կառավարությունները:

\*

«Մակդոնալդսը մեղադրվում է թալիբանի նման վարվելու մեջ» վերնագրում (էջ 21, 15 ապրիլի) չափազանցված էին «Արագ ուտելիքի ազգ»-ի հեղինակ Էրիկ Շլոսերի շատ ավելի պակաս սուր մտքերը՝ նրան իր չասած խոսքերը վերագրելու միջոցով: Հոդվածում նա ասում էր. «Ճշմարտության ջոկա՞տ: Դա ոնց որ մի քիչ թալիբանը հիշեցնի»:

\*

Քողարկիչ հագուստով մարդիկ, որ շրջապատել էին շախմատի ֆեդերացիայի հավաքը Չամբիայի Կարվե քաղաքում, ոստիկաններ էին, ոչ թե զինվորականներ («Թագավորն ու ես», էջ 29, G2, 30 մարտի):

\*

Արթուր Սոլթերի նկարին կից մակագրության մեջ սխալմամբ գրված էր, թե նա Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ իր «Ուրբաթ 13» կոչվող Հալիֆաքս BIII ինքնաթիռով մոտ 120 ռազմական կառավարել («Ուրիշ կյանքեր», էջ 31, 11 ապրիլի) : Սակայն ինչպես մահախոսականում էլ նշված է, պ-ն Սոլթերը հիշյալ ինքնաթիռներով կատարել է մոտ 30 թռիչք: «Ուրբաթ 13» կոչվող ինքնաթիռն է, ոչ թե՝ կոնկրետ օդաչուն, որ 120 թռիչք է կատարել:

\*

Ջհանգիր խանին, որ 1936-ին «Լորդսում» նետեց կրիկետի գնդակն ու ճնճղուկ սպանեց, մենք անախորոնիկ կերպով ներ-

կայացրել ենք իբրև պակիստանցի բազմակողմանի տա-  
ղանդ («Նրանք կարծում են դա Ռովեր է...», էջ 10, G2, 21 ապ-  
րիլի): Իրականում Պակիստանը կազմավորվել է միայն դրա-  
նից 11 տարի անց՝ 1947 թվականին: Այնուամենայնիվ, նա  
ներկայիս Պակիստանում, թերևս, ամենից հայտնի կրիկետ  
խաղացողների ընտանիքն է ներկայացնում՝ նրա հայրը Մա-  
ջիդ խանն է, քեռին՝ Իմրան խանը:

\*

«Գլենելզ քանդլզ» թեյարանը, որ ներկայացված էր մեր  
«Ընթերցողի ռեստորանները» բաժնում (էջ 60, «Ուլիքենդ», 6  
մայիսի), ոչնչացել է անցած նոյեմբերի հրդեհից:

\*

Ռուս խմբավար Վալերի Գերգիելը եւ Վլադիմիր Պուտինը  
միմյանց երեխաների կնքահայրերը չեն, ինչպես գրված էր  
մեր «Տիտանների բախումը» նյութում (G2, էջ 18, 16 մարտի):

---

*«Գարդիանի» քաղաքականությունն է՝ էական սխալները ուղղել որքան հնարավոր է շուտ: Խնդրում ենք նշեք անսաթիվն ու էջի համարը: Ընթերցողների խմբագրի հետ կարող եք կապվել հետեւյալ հեռախոսով՝ **+44 (0)20 7713 4736**, ՄԹ ժամանակով առավոտյան 11-ից երեկոյան 5-ը, երկուշաբթի օրվանից մինչեւ ուրբաթ, բացի տոնական օրերից:*

*Հասցեն՝ Ընթերցողների խմբագրին, 119 Ֆարինթոն փող., Լոնդոն EC1R 3ER*

***Ֆաքս՝ +44 (0)20 7239 9997.***

***Իմայլ՝ [reader@guardian.co.uk](mailto:reader@guardian.co.uk)***

*«Գարդիանի» խմբագրական կանոնագիրը ներառում է Մամուլի դեմ բողոքների հանձնաժողովի կողմից վերահսկվող խմբագիրների կանոնագիրը: Տես՝ [www.pcc.org.uk](http://www.pcc.org.uk)*

---

Ú²Ü Ø°Úé

ˆ²ò àÆè

ÀÝÃ»ñóáÕÝ»ñÇ ÈÚμ³ · ÇñÁ`  
ÁÝÃ»ñóáÕÝ»ñÇÝ

---

**Ian Mayes**

**Open Door**

*From Readers' Editor to Readers*

Ì³ í³ ÉÁª 14,125 ïä. Û³ ÛáúÉ: îä³ ï³ Ý³ ÍÁª 500

---

§ì °É²é äðÆÚî | éäÄ  
°ñ·³ Ý 375012 ï³ Ó³ ñß³ Ý 12  
Ð»é. +37410 27 38 10